«Արտաուսումնական ուսանողական գործունեության կազմակերպման ձևերի և մոդելների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն»
թեմայով հետազոտություն

Հետազոտությունն իրականացվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում

Հետազոտողներ՝

- **Նարինե Մանուկյան** - *Ազգային գիտական և կրթական ցանցի ASNET-AM խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնտեսագիտության ամբիոնի դասախոս, տնտեսագիտության ամբիոնի վարիչի տեղակալ*
- **Նարինե Վարդանյան** - ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի պետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
- **Արուսյակ Ալեքսանյան** - *ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտական բաղադրիչի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ*
- **Նենսի Մկրտչյան** - *Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի մարքեթինգի ֆակուլտետի շրջանավարտ, Էրազմուս ուսանողական ցանց Երևանի նախագահ*

***

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հրապարակման հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Երախտիքի խոսք ……3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……4

1. ԱՐՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

1.1 Արտաուսումնական ուսանողական գործունեության հասկացությունը, սահմանումը, տեսակները. մասնագիտական գրականության համառոտ ակնարկ……8

1.2 Ուսանողների ինքնակառավարումն ու մասնակցությունը բուհական կառավարմանը ……17

2. ԱՐՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

2.1 Արտաուսումնական ուսանողական գործունեության կազմակերպման ձևերը Հայաստանում ……23

2.2 Արտաուսումնական գործունեության տեսակներն ու կարևորությունը Շվեդիայի թագավորությունում ……33

2.3 Ուսանողական ինքնակառավարման առանձնահատկությունները Լեհաստանի Հանրապետությունում……39

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ԱՐՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ. ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1 Ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս -խմբային քննարկումների վերլուծություն……44

3.2 SWOT վերլուծություն……66

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……78

Գրականության ցանկ……83

Հավելված 1 ……87

Երախտիքի խոսք

Հեղինակները շնորհակալություն են հայտնում **Եվրասիա համագործակցություն հիմնադրամին** սույն հետազոտության կազմման փուլում աջակցության և թեմայի ֆինանսավորման համար:

Որակական հետազոտության անցկացման ընթացքում կարևոր դերակատարում ունեն նաև ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները: Հեղինակները շնորհակալություն են հայտնում նաև վերջիններիս՝ իրենց տրամադրած ժամանակի և հարցերին անաչառ պատասխանելու ու առաջարկներով հանդես գալու համար: Ավելին, հեղինակների կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունն անհնար կլիներ առանց Լեհաստանի և Շվեդիայի համապատասխան կառույցների կողմից տրված տեղեկատվության ու փորձի փոխանակման:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր կրթական համակարգերում ուսանողների արտաուսումնական գործունեության զարգացումը դարձել է կարևոր առաքելություններից մեկը: Ուսանողների ներգրավվածությունը արտաուսումնական գործունեության կազմակերպման տարբեր ձևերին նպաստում է նրանց՝ որպես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորմանը՝ իրենց իրավունքների և պարտականությունների խորը գիտակցմամբ:

Արտաուսումնական գործունեության տեսակները բավականին ընդգրկուն են. դրանք ներառում են ուսանողական կառավարման ոլորտը, սպորտային, ակադեմիական և մասնագիտական կազմակերպությունների ձևավորումը, ինչպես նաև կամավորական շարժումների կազմակերպումը և այլն:

Սույն **հետազոտության նպատակն է՝** պարզել ՀՀ բուհերում իրականացվող արտաուսումնական ուսանողական գործունեության կազմակերպման ձևերն ու մոդելները՝ առավելապես կենտրոնանալով ուսանողական ինքնակառավարման վրա, ինչպես նաև ուսումնասիրելով միջազգային փորձը՝ կատարել համեմատական վերլուծություն և մշակել միասնական առաջարկներ դրա տեղայնացման և Հայաստանում ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հետազոտության **խնդիրներն են՝**

1. ուսումնասիրել միջազգային ուսանողական գործունեության կազմակերպման ձևերը և մոդելները արտասահմանյան բուհերի օրինակով,
2. դիտարկել դրանց ձևավորման սկզբունքները, իրավունքներն ու գործառույթները, ֆինանսավորման սկզբունքները, իրավական հիմքերը,
3. կատարել ֆոկուս-խմբային հետազոտություն հայաստանյան բուհերի ուսանողների մասնակցությամբ՝ պարզելու համար ՀՀ բուհերում արտաուսումնական գործունեության հիմնական ուղղությունները, ֆինանսավորման սկզբունքները, ուսումնասիրել խնդրո առարկայի վերաբերյալ հիմնական շահակիցների՝ ՀՀ ուսանողության կարծիքը,
4. կատարել համեմատական վերլուծություն միջազգային և հայաստանյան բուհերում ուսանողական գործունեության կազմակերպման ձևերի և մոդելների միջև,
4. դիտարկել միջազգային ուսանողական գործունեության կազմակերպման ձևերի և մոդելների տեղայնացման հնարավորությունները Հայաստանում,

5. մշակել միասնական սկզբունքներ և առաջարկություններ հայաստանյան բուհերում արտաուսումնական ուսանողական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հետազոտության **օբյեկտը** արտաուսումնական ուսանողական գործունեությունն է, **առարկան**՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններն ու դրանց գործունեությունը Հայաստանում:

Հետազոտության հարցերն են.

- Օրենսդրական ո՞ր բացերն են բացասաբար ազդում արտաուսումնական ուսանողական գործունեության վրա Հայաստանում:
- Արտաուսումնական ուսանողական գործունեության միջազգային ո՞ր փորձն է հնարավոր արդյունավետ տեղայնացնել Հայաստանում:
- Ոլորտի ո՞ր ուժեղ կողմերի և հնարավորությունների կիրառմամբ է հնարավոր նվազեցնել թույլ կողմերի և սպառնալիքների բացասական ազդեցությունները:

Ակնկալվող արդյունքները՝

- սահմանել հայաստանյան արտաուսումնական ուսանողական գործունեության հիմնական ձևերը և մոդելների տեսակները, դիտարկել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում/նախագծում դրանց առնչվող դրույթները,
- սահմանել միջազգային և հայաստանյան արտաուսումնական ուսանողական գործունեության ձևերի և մոդելների տարբերությունները, առավելությունները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, սպառնալիքները,
- կատարել առաջարկություններ Հայաստանում միջազգային լավագույն փորձի տեղայնացման հնարավորությունների վերաբերյալ:

Մեթոդաբանական մոտեցումները

Սույն աշխատանքի մեթոդաբանությունը ներառում է հետախուզական և նկարագրողական հետազոտությունների իրականացում: Առաջինի հիման վրա ընտրվել են միջազգային ուսանողական գործունեության առավել հաջողված մոդելներից երկուսը: Հետախուզական և նկարագրողական հետազոտությունների հիման վրա ընտրվել են

Շվեդիայի և Լեհաստանի կրթական համակարգերը՝ որպես միջազգային մոդելներ և իրականացվել են վերջիններիս և հայաստանյան մի շարք բուհերի ուսանողական գործունեության կազմակերպման ձևերի և մոդելների առավել խորքային ուսումնասիրություններ՝ ներառելով դրանց ձևավորման սկզբունքները, իրավունքներն ու գործառույթները, ֆինանսավորման սկզբունքները, իրավական հիմքերը: Սույն երկրների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված երկրներում ուսանողական միավորումները մասնակցում են բուհերի կառավարմանը, իսկ Լեհաստանի դեպքում՝ նաև մեծ դերակատարում ունեն գիտակրթական ոլորտի զարգացման գործում: Լեհաստանում ուսանողական ինքնակառավարման էական առանձնահատկություններից է նաև նյութական բազան և ֆինանսա-իրավական անկախությունը կրթական հաստատության ղեկավարությունից: Համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի՝ այդ միջոցները համալսարանի բյուջեից տարեկան պարտադիր հատկացվում են ուսանողական ինքնակառավարման գործունեությանը: Այսպիսով՝ ուսանողական ինքնակառավարման մարմինները ամբողջ ուսանողական համայնքի որոշիչ ներկայացուցիչներն են և կարևոր դերակատարում ունեն բարձրագույն կրթության ոլորտում: Ուսանողական կազմակերպությունները՝ գիտական, գեղարվեստական, զբոսաշրջային, սպորտային և այլն, համագործակցելով արտերկրների նմանատիպ գործընկերների հետ դարձել են կարևոր գործոն ոչ միայն միջմշակութային ենթակառուցվածքի զարգացման, եվրոպական բուհերի միջև փորձի փոխանակման և համագործակցության զարգացման, այլ նաև Լեհաստանում բարձրագույն կրթության ժողովրդավարության զարգացման գործում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս հետազոտության միջազգային փորձի ուսումնասիրությանը նվիրված հատվածը:

Հետազոտության շրջանակում կիրառվել են այնպիսի որակական մեթոդներ, ինչպիսիք են ֆոկուս-խմբային քննարկման մեթոդը[1] և SWOT-վերլուծությունը: Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը հնարավորություն է տալիս խորքային ուսումնասիրություններ կատարել հայաստանյան բուհերի ուսանողական արտաուսումնական գործունեության կազմակերպման հիմնական ձևերի, մոտեցումների, դրանց որակի ու արդյունավետության,

[1] Սույն հետազոտության շրջանակում Ֆոկուս խմբային քննարկման մեթոդի կիրառման մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս 3. 1 «Ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս - խմբային քննարկումների վերլուծություն» բաժինը:

հիմնական խնդիրների, ուսանողների ընկալումների և պատկերացումների վերաբերյալ: SWOT- վերլուծության կիրառմամբ կատարվել է համեմատական վերլուծություն, դուրս է բերվել հայաստանյան և արտասահմանյան երկու մոդելների տարբերությունները, առավելությունները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուժեղ կողմերի և հնարավորությունների կիրառմամբ նվազեցնելու սպառնալիքները և թույլ կողմերի բացասական ազդեցությունները: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են նաև հաջողված փորձի տեղայնացման հնարավորությունները Հայաստանում:

1. ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

1.1 Արտաուսումնական ուսանողական գործունեության հասկացությունը, սահմանումը, տեսակները. մասնագիտական գրականության համառոտ ակնարկ

Արտաուսումնական ուսանողական գործունեությունը ցանկացած կրթական հաստատության բաղկացուցիչ մասն է և թիմային ոգի ձևավորելու երաշխիքը: Այդպիսի գործունեությունը ուսանողի մոտ զարգացնում է առաջնորդության, միջանձնային հաղորդակցման, թիմում աշխատելու և որոշումներ կայացնելու կարևոր հմտությունները:

Արտաուսումնական գործունեության առաջին փորձը ներդրվել է ԱՄՆ-ում 19-րդ դարում: Սկզբնական շրջանում այն ընդամենը լրացնում էր տարվա հիմնական ուսումնական դասացուցակը: Արտաուսումնական գործունեության առաջին հայտնի օրինակներից են Հարվարդի և Յելի համալսարաններում ձևավորված գրական ակումբները՝ բաղկացած տարբեր բանավեճի ակումբներից: Հետագայում դրանք իրենց տեղը զիջեցին սպորտային ակումբներին, որոնց նախաձեռնության առաջամարտիկը ևս ԱՄՆ-ն է և որոնք մինչ այսօր չեն կորցրել իրենց արդիականությունը *(Massoni 2011, 84)*:

Այսպես՝ արտաուսումնական գործունեության հիմնական նպատակներից է բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը: Հետազոտությունները վկայում են, որ ուսանողի ներգրավվումը արտաուսումնական ցանկացած տեսակի գործունեությանը դրական ազդեցություն է ունենում նրա ուսումնական առաջընթացի և զարգացման վրա *(Astin 1993; Pascarella 1991)*: Արտաուսումնական զանազան միջոցառումներում ձեռք բերված փորձը նպաստում է երիտասարդների մտավոր և սոցիալական զարգացմանը, օգնում է նրանց հասունանալ թե՛ բարոյապես, և թե՛ որպես քաղաքացի *(Zarrett et al. 2021)*: Այսինքն՝ արտաուսումնական մասնակցությունը ձևավորում է փոխազդեցության և հարաբերությունների այնպիսի միջավայր, որում ուսանողները կայանում են որպես անհատներ՝ զարգացնելով քննադատական մտածողությունը, ինչպես նաև ժամանակի կառավարման, ակադեմիական և ինտելեկտուալ կարողությունները: Այն կարևոր գործոն է ուսանողների մոտ ոչ միայն արժեքավոր հմտությունների ձեռքբերման, այլև կարիերայի առաջխաղացման համար:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չկա համընդհանուր մոտեցում և հստակ սահմանում տվյալ եզրույթի առնչությամբ, ինչը նաև իր հերթին կարող է դժվարացնել ոլորտում կատարվող հետազոտությունների իրականացումը *(Bartkus et al. 2012)*:

Փորձելով վերլուծել հասկացության բառակազմությունը («արտա» և «ուսումնական»)՝ կարող ենք նշել, որ արտաուսումնական գործունեությունը աշակերտների կամ ուսանողների կողմից իրականացվող գործունեություն է, որը որևէ ձևով արտացոլված չէ հիմնական ուսումնական ծրագրի մեջ: Այսինքն՝ այդպիսի գործունեությունը, մի կողմից ֆորմալ կրթական ծրագրից դուրս է, բայց միևնույն ժամանակ կրթական գործընթացի կարևոր բաղադրիչներից է: Եվ իրոք, մի շարք մասնագետներ *(Bîrzéa et al. 2004, 38, 40; Chia 2005, 76; Nelson et al. 2002, 278),* սահմանելով արտաուսումնական գործունեությունը, շեշտադրում են դրա՝ ֆորմալ կրթական ծրագրից դուրս լինելը և ոչ ֆորմալ կրթական ծրագրի մաս կազմելու փաստը:

Մասնագիտական գրականության մեջ մեկ այլ տարածված մոտեցում է արտաուսումնական գործունեությունը սահմանելիս և մեկնաբանելիս դրա հիմքում դնել ուսանողի ստեղծագործ որակների, հաղորդակցման, ինքնազարգացման, սոցիալիզացիայի և անձնային հատկանիշների զարգացումը *(Худяков и др. 2010, 161; Попова 2006, 113)* :

«Արտաուսումնական գործունեություն» հասկացության մեկնաբանման առավել տարածված մոտեցումներից է դրա դիտարկումն ըստ գործունեության կամ մասնակցության տեսակի՝ մասնագիտական ակումբներ, ուսանողական ինքնակառավարում, սպորտային ակումբներ և այլն, ընդ որում՝ սահմանելով, որ ուսանողների արտաուսումնական գործունեությունը սերտորեն առնչվում է ակադեմիական առաջընթացի հետ՝ դրական ազդելով վերջինիս վրա *(Barnett 2007, 316; Fredricks and Eccles 2006, 698):*

Արտաուսումնական գործունեության տեսակները բազմազան են և հիմնականում կախված են համալսարանի տեսակից և չափից: Մասնագիտական գրականության մեջ չկա միասնական սահմանում, թե բուհական համակարգի համատեքստում ինչ է իրենից ներկայացնում արտաուսումնական գործունեությունը և ինչ խմբերի է բաժանվում *(Griffiths et al. 2021)*: Այնուամենայնիվ, ուսումնասիրելով թե միջազգային, և թե տեղական համալսարանական արտաուսումնական գործունեության փորձն ու պատմությունը, այդ տեսակները կարելի բաժանել հաճախ հանդիպող 7 մեծ խմբերի՝ ուսանողական ինքնակառավարում, մարզական ակումբներ, գիտական և մասնագիտական կողմնորոշման

ակումբներ, կամավորական և հասարակական գործունեություն, արվեստի և մշակութային ակումբներ, միջմշակութային ակումբներ, արտաուսումնական գործունեության այլ տեսակներ:

- **Ուսանողական ինքնակառավարում - ուսանողական խորհուրդներ և ուսանողական գիտական ընկերություններ**

Ուսանողական ինքնակառավարումը ուսանողների ակտիվ, անկախ, պատասխանատու սոցիալական գործունեության հատուկ ձև է, որն ուղղված է ուսանողների կյանքի կարևոր խնդիրների լուծմանը, նրանց սոցիալական գործունեության զարգացմանը և սոցիալական նախաձեռնությունների աջակցմանը *(Петрова 2009, 140)*: Ուսանողական ինքնակառավարումը ուսանողների հնարավորությունների հզորացման մեխանիզմ է և առանցքային դեր ունի համալսարանական առօրյա կյանքում*:* Ուսանողական ինքնակառավարումը արտաուսումնական գործունեության ամենատարածված տեսակներից մեկն է, որը նպատակ ունի ներկայացնել ուսանողների ակադեմիական շահերը, պաշտպանել նրանց իրավունքները և տեսակետները և ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացում: Համաձայն ՀՀ «Կրթության մասին» գործող օրենքի բուհերը պետք է ստեղծեն ուսանողական ինքնակառավարման մարմիններ ուսանողներին առավել ակտիվ ներգրավելու նպատակով հաստատության կառավարման գործընթացին: Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսը պետք է լինեն ուսանողները, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ուսանողական խորհուրդը (ՈՒԽ): ՈՒԽ-ն ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման բարձրագույն ընտրովի մարմին է, որը արտահայտում է ուսանողության շահերն ու իրավունքները, ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, նպաստում է ուսանողների կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը, ինչպես նաև ակտիվ քաղաքացիական դաստիարակությանը *(ՀԱԱՀ ՈՒԽ 2021)*: Ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը հնարավորություն է տալիս տարբեր հարթակներում բարձրաձայնել ուսանողության ձայնն ու հասնել ուսանողամետ լուծումների: Սույն հետազոտության շրջանակներում հարկ է նշել, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարվող փոփոխությունների համաձայն (27-րդ

հոդված 2-րդ կետ) հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը կրճատվում է 32-ից դառնալով 12, իսկ ուսանողների ներկայացվածությունը կառավարման մարմնում մնում է հարցականի տակ, թողնելով այն ակադեմիական խորհրդի հայեցողությանը[2]: Հայաստանում ՈՒԽ-ների կանոնադրություններում հիմնականում ամրագրված են ՈՒԽ հիմնական լիազորությունները և գործունեության պայմանները, որոնց հիմնական նպատակն է ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ուսանողների ինքնաարտահայտումը, ուսանողների խնդիրների ու հարցերի բարձրացումը և խթանումը, մասնագիտական և էթիկական սկզբունքների ու նորմերի կիրառման ապահովումը: Համալսարանի ուսանողական խորհուրդը կոչված է իրականացնելու ուսանողության հետ տարվող աշխատանքների կազմակերպումը, ուսանողների առաջարկների, պահանջների քննարկումը, և դրանք համալսարանի ղեկավարությանը ներկայացնելուն: Ուսանողական խորհրդի գործառույթներից է նաև ուսանողների ժամանցի, հանգստի, ներհամալսարանական կյանքի կազմակերպումը *(ՀՊՄՀ ՈՒԽ 2016)*: Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմինը և քանի որ ՈՒԽ-ների կանոնադրությունները հաստատվում են պետական լիազորված մարմնի ընդունած օրինակելի կանոնադրության հիման վրա էական տարբերություններ կանոնադրություններում չկան:

Ուսանողական գիտական ընկերությունը ուսանողներին և ասպիրանտներին միավորող համալսարանական ինքնակառավարվող հասարակական միավորում է, որի նպատակն է խթանել և համակարգել ուսանողների և ասպիրանտների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությունը: Բուհական երեք՝ պետական, մասնավոր և միջազգային պայմանագրերի հիման վրա կատեգորիաներում առանձնացնելով արտաուսումնական գործունեության նմանությունները՝ կարելի է նշել, որ բոլոր կրթական հաստատություններում մեծամասամբ առկա են ուսանողական ինքնավար մարմիններ, ինչպիսիք օրինակ՝ ուսանողական խորհուրդ/խորհրդարան (ՈՒԽ), ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ): Այդ կառույցների գործունեության մեջ մտնում են՝ կազմակերպել

[2] Ավելի մանրամասն տե՛ս «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր, քննարկվել է 25.10.2021 - 10.11.2021: Վերջին մուտքը՝ 16.01.2022: https://www.e-draft.am/projects/3663/about.

տեղեկատվական միջոցառումներ, ներկայացնել ուսանողական ձայնը բուհական համակարգի ու բուհական կառավարմանը: Իսկ ավելի արդյունավետ կառավարման նկատառումներով պետական բուհերում այդ կառույցներն ունենում են ֆակուլտետային ներկայացուցչություններ և առանձին հանձնաժողովներ: Ամենախոշոր ուսանողական ինքնակառավարման կառույցով աչքի է ընկնում մայր բուհը. այն ունի 21 ֆակուլտետային ՈՒԽ և ՈՒԳԸ-ներ:

- **Մարզական ակումբներ**

Ֆիզիկական կուլտուրան և սպորտը դիտարկվում են որպես ակադեմիական կարգապահության գրավականներից մեկը *(Griffiths et al. 2021; Serorez and Navka 2014)*: Ուսանողական մարզական և սպորտային ակումբները պահանջում են բավականաչափ ժամանակ և էներգիա մարզվելու և մրցելու համար: Միջբուհական սպորտային մրցումները և միջոցառումները հնարավորություն են տալիս բոլոր ուսանող մարզիկներին մրցել հասակակիցների հետ և ամրապնդել համալսարանական ոգին: Սովորաբար համալսարաններում ուսանողական մարզական ակումբները առաջարկում են թեթև աթլետիկայի մի քանի տարբերակներ, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս և այլն:

Որպես գործունեության երկրորդ տեսակ՝ առանձնացրել ենք հայաստանյան բուհերում առկա մարզային ակումբները, որոնք կարող են գործել բուհերի ներսում ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից ևս, օրինակ՝ ՈՒԽ-ն կազմակերպում է սպորտային միջոցառումներ, իսկ Հայաստանում ամերիկյան համալսարանն ունի ուսանողների կողմից ստեղծված մասնագիտացված թենիսի, շախմատի և այլ մարզաձևերի ակումբներ:

Առանձնացրել ենք նաև Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիան (մանրամասն՝ https://bit.ly/3EYaGXt), որն ակտիվ աշխատանքներ է տանում համաշխարհային համալսարանական սպորտի ֆեդերացիայի և Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիայի հետ, որոնց հետ համատեղ անցկացվում են ուսանողական մարզական խաղեր և այլն:

- **Գիտական և մասնագիտական կողմնորոշման ակումբներ**

Գիտական և մասնագիտական ակումբները օգնում են ուսանողներին մասնագիտական կողմնորոշման հարցում և հանդիսանում են կարևոր գործիք գիտության և

հետազոտության նկատմամբ հետաքրքրության մեծացման ուղղությամբ, նաև նպաստում են կրթական ծրագրերի և անհատական ուսումնառության գործընթացի զարգացմանը:

ՈՒԳԸ գործունեությունից զատ, որը նպատակ ունի կազմակերպելու նստաշրջաններ, գիտական քննարկումներ և այլն, գոյություն ունեն ուսանողներին գիտության հետ ավելի մոտեցնելու այլ հնարավորություններ, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ԱՄԲԵՐԴ ուղեղային կենտրոնը, որն իրականացնում է հանրային քաղաքականության և տնտեսության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտություններ, վերլուծություններ և մշակումներ: Գիտական ակումբի օրինակ է նաև ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կազմում գործող Հոգեբանական դիտարանը, որը կազմակերպում է մասնագիտական քննարկումներ, խորհրդակցություններ, փորձի փոխանակման ծրագրեր:

- **Կամավորական և հասարակական գործունեություն**

Կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքը կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց գործունեություն կամ աշխատանք է, որը մշտապես եղել և մնում է քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում: Կամավորական գործունեությունն ունի բավականին լայն շրջանակ. այն ընդգրկում է փոխօգնության և ինքնօգնության ավանդական ձևերը, քաղաքացիական մասնակցության զանազան այլ ձևեր, որոնք իրականացվում են ի շահ հասարակության լայն շերտերի և, իհարկե, ինքնակամ: Ըստ էության, կամավորական հանրօգուտ աշխատանքը համարվում է սոցիալական և մասնագիտական աճի ու դրսևորման գործոն: Առանցքային դրույթ է այն, որ կամավորությունը պետք է լինի յուրաքանչյուր անհատի ազատ ցանկությունը:

Բուհերի ներսում ուսանողական տարբեր նախաձեռնությունների, ինքնակազմակերպման և ինքնաիրացման հիմքում, ըստ էության, ուսանողական կամավորությունն է: Կամավոր կարող են լինել նաև պրակտիկա անցնող ուսանողները, որոնց շարժառիթներն են՝ ինքնաիրացում, մասնագիտական ունակություն, դիպլոմային կամ գիտական աշխատանքի պատրաստում:

Բացի այդ, կամավորության շնորհիվ ուսանողները ձեռք են բերում ոչ ֆորմալ կրթություն և փափուկ հմտություններ, ինչպիսին են՝ թիմային աշխատանք, բանակցություններ, քննադատական մտածելակերպ, ինչպես նաև միջազգային

ասպարեզներում ներկայանալու փորձ: Նմանատիպ հնարավորություններ ընձեռնում են նաև հասարակական ոլորտում ուսանողակենտրոն կազմակերպություններն ու հիմնադրամները: Դրանցից են օրինակ՝ «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը (մանրամասն՝ https://www.facebook.com/restartfoundation), որը սկիզբ առավ 2018 թ-ին՝ որպես ուսանողական շարժում 13 բուհերի ներսում, այն այժմ հանդես է գալիս որպես գիտակրթական հիմնադրամ:

2004 թվականից ի վեր Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի (մանրամասն՝ https://www.facebook.com/ansaarmenia) հիմնմամբ հնարավորություն ընձեռվեց պաշտպանել հայ ուսանողների կրթական, սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքները ոչ միայն տեղական, այլև միջազգային մակարդակներում ի շնորհիվ Եվրոպական ուսանողական միության անդամակցության: Վերջինիս շնորհիվ ուսանողական ակտիվ գործունեության ու իրավունքների պաշտպանության բազմաթիվ նախաձեռնությունները միջազգային տարածում են ունեցել: Նման օրինակ է՝ 2018թ. ԵՊՀ ուսանողների կողմից իրականացված ջատագովության ակցիան ուղղված համալսարանականական բարելավումների թե ուսանողների, թե դասախոսական, թե վարչական անձնակազմի համար (մանրամասներ՝ https://www.esu-online.org/?news=armenian-students-fighting-better-campus): Ավելին՝ 2020թ. պատերազմի ընթացքում Եվրոպական ուսանողական միության Գլխավոր ժողովի ընթացքում համերաշխության կոչ է արվել եվրոպական կառույցներին և երկրներին՝ դատապարտել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շարունակվող խախտումները (մանրամասներ՝ https://www.esu-online.org/?policy=bm79-solidarity-in-calling-upon-the-european-institutions-and-countries-to-condemn-the-ongoing-violations-by-turkey-and-azerbaijan):

Այսպիսով՝ միջազգային երիտասարդական ու ուսանողական ցանցերի ներկայացուցչությունների Հայաստանում ապահովելու շնորհիվ ավելի բարձր մակարդակներում հնարավոր եղավ բարձրաձայնել ուսանողության ձայնն ու հնարավորություն ընձեռվեց ուսումնասիրել արտերկրի լավագույն փորձը: Նմանատիպ կազմակերպությունների շարքում են՝ 2010 թվականին հիմնված Երևանի եվրոպական ուսանողների ֆորումը (մանրամասն՝ https://www.facebook.com/AEGEE.Yerevan/), որի նպատակն է կազմակերպել տեղական, տարածաշրջանային և եվրոպական ծրագրեր, ակտիվացնել Հայաստանի դերը եվրոպական երիտասարդության շրջանում, տեղեկացնել հայ երիտասարդներին եվրոպական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասին, նրանց

հնարավորություն տալ ծանոթանալու տարբեր մշակույթների հետ, ինչպես նաև ուսումնասիրել Եվրոպայի լավագույն փորձն ու կիրառել այն Հայաստանում: Հաջորդը 2012 թվականին ստեղծված Եվրոպական երիտասարդական խորհրդարան Երևանն է՝ (մանրամասն՝ https://bit.ly/2YwJEr) նպատակադրելով հզորացնել հայ երիտասարդներին և պատրաստել ապագա առաջնորդներ ոչ ֆորմալ կրթության միջոցով՝ ձգտելով ստեղծել գաղափարների, փորձի և ժողովրդավարական արժեքների փոխանակման հարթակ: Եվ վերջերս՝ 2021 թվականին որպես պաշտոնական անդամ հաստատված Էրազմուս ուսանողական ցանց Երևանը (մանրամասն՝ https://www.facebook.com/esnyerevancs/), որը միավորում է Էրազմուս+ եվրոպական միջազգային ծրագրի մասնակիցներին Հայաստանում՝ համագործակցելով ծրագիրն իրականացնող բուհերի հետ:

- **Արվեստի և մշակութային ակումբներ**

Ուսանողական մշակութային ակումբները նպաստում են ուսանողների համակողմանի զարգացմանը, խթանում են ուսանողների ակտիվ մասնակցությունը մշակութային կյանքին: Արտաուսումնական գործունեության այս տեսակի շրջանակներում ուսանողները, ըստ նախասիրությունների, ներգրավվում են բազմազան խմբակների մեջ՝ կերպարվեստ, երգարվեստ, թատերարվեստ, պարարվեստ, ինչպես նաև խեցեգործության, քանդակի և խճանկարների դասընթացներ և արհեստանոցներ և այլն:

Արվեստի և մշակութային ակումբներ. նմանատիպ գործունեություն իրականացնում են բոլոր բուհերի ՈՒԽ-ները կամ մշակույթի գծով հանձնաժողովները, սակայն դրանցից դուրս կան բաց ակումբներ, որոնց հնարավոր է անդամակցել, այդպիսի օրինակ է Հայաստանում ամերիկյան համալսարանի ֆիլմ-դիտումների ակումբը:

- **Միջմշակութային ակումբներ**

Միջմշակութային գործունեությունը կենտրոնանում է տարբեր մշակույթների, էթնիկ և ռասայական տարբերությունների մասին իրազեկվածության և ըմբռնման բարձրացման վրա:

Միջմշակութային ակումբների բուհական վառ օրինակներից է ԵՊՀ Ֆրանկոֆոնների ակումբը, որը նպաստում է ֆրանսախոս աշխարհի զարգացմանը և ակտիվացնում ֆրանսախոս ուսանողների մշակութային կյանքը: Այն ունի առանձնացված հանձնաժողովներ իր գործունեության արդյունավետ տարածման համար: Միջմշակութային

հաղորդակցությունների ակումբը գործում է նաև ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի օտար լեզուների ամբիոնին կից: Խոսքը Անգլիական ակումբի մասին է: Ակումբն առաջարկում է դասավանդման արդիական ձևեր, անհատական ուսուցումը խթանող միջոցներ, որոնք նպաստում են լեզվական նյութի սահմաններում ընթերցած կամ ունկնդրած տեքստերը հասկանալուն: Դասընթացներն ընդգրկում են խոսքային գործունեության բոլոր 4 հմտությունները՝ կարդալ, գրել, լսել, խոսել (մանրամասն՝ https://isec.am/english-club.html):

- **Արտաուսումնական գործունեության այլ տեսակներ**

Բացի վերը նշված տեսակներից, համալսարաններում գործում են բազմաթիվ այլ ակումբներ և խմբակներ, օրինակ, քաղաքական, կրոնական և այլն: Նաև լայն տարածում ունեն համալսարանական մեդիա ակումբները, որոնք զբաղվում են տպագիր, հեռուստատեսային և ռադիոկայանների գործունեությամբ և ներգրավում են ուսանողներին այդ գործունեության մեջ: Օրինակ՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործում է 2018թ. ձայնագրման և ձայնային մոնտաժի նորագույն սարքավորումներով հագեցած «Մուլտիմեդիա» լաբորատորիա, որը թույլ էլ տալիս ապագա լրագրողներին գործնական հմտություններ ձեռք բերել (մանրամասն՝ http://www.ysu.am/news/hy/Opening-the-radio-studio): Նմանատիպ օրինակ է նաև Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հաջողության բանաձև» երիտասարդական, ժամանցային ու միևնույն ժամանակ կրթական հեռուստանախագիծը, որը ցուցադրվում է հեռուստաալիքով (մանրամասն՝ https://www.facebook.com/formulaofsuccesstv):

1.2 Ուսանողների ինքնակառավարումն ու մասնակցությունը բուհական կառավարմանը

Կրթական համակարգի արդիականացման համատեքստում ուսանողական ինքնակառավարման զարգացումը ապագա մասնագետների պատրաստման կարևոր գործոններից է: Ուսանողական ինքնակառավարման զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմքում դրվող անհրաժեշտ պայմաններից է համակարգային մոտեցումը: Այն ենթադրում է ծրագրային, օրենսդրական և ռամզավարական մոտեցումների ու դրույթների մշակում, ամբողջացում և ներդնում ոլորտի զարգացմանը:

Ինչպես արդեն նշել ենք, ինքնակառավարումը ուսանողների ինքնուրույն, պատասխանատու և նախաձեռնողական գործունեություն է իրենց կրթության կազմակերպման, ժամանցի և առօրյա խնդիրների լուծման գործում: Ուսանողների ինքնակառավարումը անհրաժեշտ գործոն է երիտասարդների հասարակական գործունեության ձևավորման և զարգացման համար: Եվ այս առումով ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության հիմնական նպատակներն են պաշտպանել երիտասարդների իրավունքները, ապահովել ուսանողների քաղաքացիական և հասարակական կարողությունների ձևավորումը և ուժեղացումը: Ուսանողական ինքնակառավարումը կարելի է դիտարկել որպես՝

- ուսանողների նպատակաուղղված գործունեություն,
- դաստիարակչական գործունեության ձև,
- երիտասարդական քաղաքականության ուղղություն:

Բուհում ուսանողական ինքնակառավարումը ամբողջական համակարգ է, որով ուսանողները մասնակցություն են ունենում բուհական գործընթացների կառավարմանը և իրենց անմիջական հիմնահարցերին և խնդիրներին վերաբերող որոշումների ընդունմանը: Իրավամբ, վերջին տասնամյակներում բավականին արդիական է դարձել բարձրագույն կրթության հիմնահարցերի քննարկմանը և կառավարմանը ուսանողների մասնակցության հարցը: Այս առումով նշենք նաև, որ Բոլոնիայի գործընթացում այս հիմնահարցը ևս կարևորվում է. ուսանողները ճանաչվում են այն հիմնական շահառուները, որոնք պետք է մասնակցեն իրենց կրթության ձևավորմանը: Մասնավորապես Պրահայի կոմյունիկեն *(Prague Communiqué 2001)* սահմանում է, որ ուսանողները կրթական համայնքի լիիրավ անդամներ են և շեշտադրում է նրանց՝ համալսարաններում և բարձրագույն ուսումնական այլ հաստատություններում որոշումների ընդունման գործընթացին մասնակցության անհրաժեշտությունը: Իսկ 2018 թ. Փարիզի կոմյունիկեն *(Paris Communiqué 2018)* ուսանողների մասնակցությունը դիտարկում է որպես Բոլոնիայի գործընթացի հիմնարար և կարևոր արժեքներից մեկը *(European Students' Union 2020)*:

Գծապատկեր 1

Ուսանողների մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը



Ուսանողների մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը կարող է տարբեր լինել ըստ մասնակցության տեսակների և ինտենսիվության/խորության

մակարդակների: Դրանք են՝ ուսանողի մասնակցությունը ակադեմիական ինքնակառավարմանը, ինչպես նաև ուսանողական ինքնակառավարման կառույցներին և ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացին, մինչդեռ խորության մակարդակները ներառում են՝ տեղեկատվության հասանելիությունը, խորհրդատվությունը, երկխոսությունը և գործընկերությունը*:* Վերջինս ենթադրում է ուսանողների մասնակցությունը բուհի որոշումների ընդունման գործընթացին: Այս առումով նշենք, որ բարձրագույն կրթության կառավարումը և որոշումների ընդունումը տեղի է ունենում մի քանի մակարդակներում՝ սկսած ծրագրային մակարդակից, ընդհուպ մինչև վերազգային մակարդակ (տե՛ս Գծապատկեր 1) *(Jungblut 2011, Klemenčič 2011, Acharya 2015)*: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը (ԵԲԿՏ) բարձրագույն կրթության վերազգային կառավարման օրինակներից է, և ուսանողները, որպես շահառուներ կարող են մասնակցել ևս այս մակարդակում:

Առհասարակ ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը կարևոր է նշված բոլոր հինգ մակարդակներում, քանի որ բոլոր որոշումները ուղղակի կամ անուղղակի ձևով ի վերջո անդրադառնում են ուսանողների վրա, առնչվում են նրանց կրթության որակին և կազմակերպման գործընթացին, այնուամենայնիվ, նշվածներից, թերևս, ամենակարևորն է ուսանողների մասնակցությունը համալսարանի՝ ինստիտուցիոնալ մակարդակում: Այստեղ որոշումների ընդունումը առավել անմիջական և արագընթաց ազդեցություն ունի ուսանողների վրա:

Վերին բուրգի մակարդակները կարելի է դիտարկել նաև օրենսդրական կարգավորումների տեսակետից: Այն է՝ թե բուրգում նշված մակարդակներից յուրաքանչյուրում որքանով է կարևորում և օրենսդրորեն/իմպերատիվորեն ամրագրվում ուսանողների մասնակցությունը կամ այդ մասնակցության մինիմալ ստանդարտները: Այստեղ բարձրագույն կրթության կառավարմանը ուսանողների մասնակցության մակարդակները հատկանշական են նրանով, որ վերևից ներքև շարժվելիս այդ մասնակցության ձևաչափը և խորությունը առավել փոփոխական է դառնում: Օրինակ՝ ազգային մակարդակում սահմանված օրենքի հոդվածները բարձրագույն կրթության կառավարմանը ուսանողների մասնակցության ընդհանուր ձևաչափեր և ստանդարտներ կարող են պարունակել, սակայն ինստիտուցիոնալ մակարդակում դրանք հստակեցվում են բուհի կանոնադրությամբ, որը համալսարանից համալսարան կարող է տարբեր լինել: Այսպես՝ օրինակ, ԵՊՀ-ի

կանոնադրության *(ԵՊՀ 2014)* 29-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի անդամների 25%-ը կազմում են սովորողները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ուսանողական խորհուրդների կողմից: Նույնը կարող ենք հանդիպել ՀԱԱՀ *(ՀԱԱՀ 2016, հոդված 26, կետ 2)*, *(ՀՊՃՀ 2014, հոդված 26)* և պետական այլ բուհերի կանոնադրություններում: Միևնույն ժամանակ, օրինակ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի և ՀՖՀՀ-ի կանոնադրության համաձայն՝ կառավարման մարմիններին վերաբերող IV-րդ բաժնում (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, 2012) և 6-րդ հոդվածում (ՀՖՀՀ, 2003), համապատասխանաբար, հոգաբարձուների խորհրդի անդամների կամ կառավարման մարմինների ցանկում ուսանողները նշված չեն և, ըստ այդմ էլ, վերոնշյալ փաստաթղթերով չի սահմանվում նրանց մասնակցությունը բուհի կառավարման գործընթացին: Մինչդեռ տեղին է նշել, որ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի պարագայում, օրինակ, ամբողջ գիտական խորհուրդը, ներառյալ ուսանողության ներկայացուցիչները հաստատվում են լիազոր մարմնի՝ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ, իսկ ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահները ի պաշտոնե ԳԿՄԿ գիտական խորհրդի անդամ են:

Նշենք նաև, որ ուսանողների մասնակցությունը բուրգերից որևէ մեկի բարձրագույն մակարդակներում նպաստելու կամ խորացնելու է նրանց մասնակցությունը մյուս բուրգի բարձրագույն մակարդակում: Բուրգերի մակարդակների այսպիսի փոխկապակցվածությունը վերաբերում է մասնակցության բոլոր տեսակների ձևաչափերին:

Խոսելով բարձրագույն կրթության կառավարմանը ուսանողների մասնակցության օրենսդրական կարգավորումների մասին՝ տեղին է նշել, որ դեռ 2007թ. Լոնդոնի կոմյունիկեում *(London Communiqué 2007)* ընդգծվել է, որ ԵԲԿՏ շատ պետություններում իրավական նախաձեռնություններ են իրականացվում՝ ուղղված ուսանողների մասնակցության ապահովմանը: Եվրոպական ուսանողական միության կողմից 2020 թ.-ին կատարված հետազոտության արդյունքների համաձայն *(European Students' Union 2020)*՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի բոլոր պետությունները, բացառությամբ մեկի, իրավական տեսակետից ունեին նվազագույն ամրագրումներ ուսանողների մասնակցության համար: 39 պետություն ունեին ուսանողների մասնակցության համապատասխան օրենսդրական կարգավորումներ և՛ ազգային, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում: 7 պետություն ուսանողների մասնակցության իրավական կարգավորումները ամրագրել էին միայն ինստիտուցիոնալ մակարդակում: 22 պետության իրավական կարգավորումները ապահովվում էին միայն ծրագրային մակարդակով: Մեկ պետություն՝ Շվեդիան ուներ միմիայն

ազգային մակարդակով կարգավորվող օրենսդրություն, իսկ ինստիտուցիոնալ մակարդակով իրավական կարգավորումների իրավասությունը պատկանում էր կանտոններին *(European Students' Union 2020, 13; 2018*, 19): Պետք է նշել, որ նշված հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է մասնակցության մակարդակների վերաբերյալ իրավական մի քանի կարգավորումների գոհունակությունը (European Students' Union 2020, 13; 2018, 13), որից պարզ է դառնում, որ անկախ մասնակցության մակարդակից՝ այդ հարցի առնչությամբ ընկալումները շատ տարբեր են: Բոլոր դեպքերում կարևոր հանգամանք է, որ ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը չկրի ձևական բնույթ, իսկ նշաձողը այս հարցում պետք է լինի այդ մասնակցության ապահովումը օրենսդրական բոլոր մակարդակներով՝ գործընկերային մասնակցության խորությամբ, որը ենթադրում է ուսանողների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին՝ ներառյալ մասնակցությունը նախապատրաստական աշխատանքներին:

2. ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

2.1 Արտաուսումնական ուսանողական գործունեության կազմակերպման ձևերը Հայաստանում

Օրենսդրական մակարդակում արտաուսումնական գործունեության որոշակի տարրեր կարելի է գտնել «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում: Այսպես՝ ինչպես հայտնի է այս պահին կրթության և գիտության ոլորտը օրենսդրական փոփոխությունների փուլում է, ուստի նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»[3] այս պահին գործող օրենքին, որի 3-րդ՝ *«Ուսումնական գործունեության սուբյեկտները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում»* Գլխի Հոդված 17-ում («**Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողները**») մեր խնդրո առարկայի մասով մասնավորապես գրված է.

«3. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի՝

4) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ …:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ»:

Ուսանողական ներկայացվածությունը բուհի կառավարման գործընթացում ամրագրում է «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ), որը սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են» :

[3] «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք: Վերջին մուտք՝ 10 . 01. 2022: https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820.

Արտաուսումնական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում որևէ դրույթ չկա, սակայն դա չի նշանակում, որ այն չի կարող ֆինանսավորվել բուհի ղեկավարության կողմից այնպես, ինչպես ֆինանսավորվում են ուսանողական տարատեսակ նախաձեռնությունները: Ֆինանսավորման հատկացման կարգը սահմանվում է յուրաքանչյուր բուհի համապատասխան կանոնադրություններով կամ կանոնակարգերով, իսկ տարեկան ֆինանսավորման չափը ամրագրվում է տվյալ տարվա բյուջեի նախագծով, օրինակ՝ ԵՊՀ-ն 2020 թվականի նախահաշվով ուսանողական խորհրդի միջոցառումների համար տրամադրել է 8.500.000 ՀՀ դրամ, իսկ ուսանողական գիտական ընկերության միջոցառումների համար՝ 1.600.000 ՀՀ դրամ *(ԵՊՀ 2019)*, իսկ, օրինակ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական նախահաշվից երևում է, որ 2021 թվականին ուսանողական խորհրդի գործունեության համար նախատեսվել է 8.000.000 ՀՀ դրամ *(ՀՊՏՀ 2020, 15)*, իսկ ահա Գավառի պետական համալսարանը 2021 թվականի նախահաշվով ընդամենը 650.000 ՀՀ դրամ է հատկացրել ինքնակառավարման մարմինների գործունեության համար *(ԳՊՀ 2021)*:

Այսպիսով՝ կարող ենք ամրագրել, որ որևէ օրենքով ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսավորման պարտադիրությունն/պահանջ ամրագրված չէ, և ֆինանսավորման չափն ու ծավալը թողնված է բուհի հայեցողությանն ու բարի կամքին: Օրենքի նախագիծը ևս այդ բացը չի լրացնում, ավելին. այստեղ անգամ «արտաուսումնական գործունեություն» բառակապակցությունը չկա:

Ըստ էության, այս պահի դրությամբ մնացած կարգավորումները սահմանվում են արդեն յուրաքանչյուր առանձին բուհի համապատասխան կանոնակարգերով:

Հետազոտության շրջանակում արտաուսումնական գործունեության տեսակները ուսումնասիրվել են ընտրված մի քանի հայաստանյան պետական, մասնավոր և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող բուհերի հիման վրա (ընդհանուր առմամբ 16 բուհ): Արտաուսումնական գործունեության տեսակների ամփոփ տեղեկատվությունը՝ տե՛ս ստորև:

Պետական բուհեր՝

1. **Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)**
   - ՈՒԽ

Կազմակերպում է ուսանողական մրցույթներ, բանակում, ֆորումներ, խաղեր, սեմինարներ: Ունի 21 ֆակուլտետային ՈՒԽ-ներ և 10 հանձնաժողովներ՝ արտաքին կապեր,

գիտակրթական, իրավական, սոցիալական, սպորտի, մշակույթի և այլն (կայքէջ՝ http://ysu.am/sc/):

- ՈՒԳԸ

Կազմակերպում է գիտաժողովներ և նստաշրջաններ: Ունի 21 ֆակուլտետային ՈՒԳԸ-ներ և 4 հանձնաժողովներ՝ արտաքին, տեղեկատվական, ընդհանուր և թարգմանչական (կայքէջ՝ http://www.sss.ysu.amկա/):

- ԵՊՀ Ավագների խորհուրդ

Տարածում է ինֆորմացիա ուսանողության շրջանում՝ ուսանողական միջոցառումներին, ներհամալսարանական և արտհամալսարանական ծրագրերին ուսանողական լայն ներգրավվածություն ապահովելու, ինչպես նաև կուրսավագների համալսարանական գործունեությունը կանոնակարգելու և նրանց համար ուսանողական ակտիվության նոր հարթակ ստեղծելու համար (կայքէջ՝ https://www.facebook.com/ysu.leaderscouncil/):

- ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն

Աջակցում է ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (ՈՒԽ, ՈՒԳԸ) և ռեկտորատի հետ համագործակցությանը: Միաժամանակ կենտրոնը կոչված է աջակցելու ուսանողական կազմակերպությունների գործունեությանը՝ նրանց անդամների համար պարբերաբար կազմակերպելով տարբեր դասընթացներ և այլ կրթական միջոցառումներ (կայքէջ՝ https://bit.ly/3oaTwQ1):

- ԵՊՀ Իրավաբանական կլինիկա

Մատուցում է անվճար իրավաբանական ծառայություններ՝ ձեռնարկելով հնարավոր բոլոր միջոցներն իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դիմող անձանց իրավունքների և օրինական շահերի համապարփակ պաշտպանությունն ապահովելու համար (կայքէջ՝ https://bit.ly/3ogf79x):

- ԵՊՀ Ֆրանկոֆոնների ակումբ

Նպաստում է ֆրանսախոս աշխարհի զարգացմանը և ակտիվացնել ֆրանսախոս ուսանողների մշակութային կյանքը: Ունի 4 հանձնաժողովներ՝ գիտակրթական, արտաքին կապերի, մշակույթի, լրատվական (կայքէջ՝ https://www.facebook.com/ysuclubdesfrancophones):

- ISTC հիմնադրամ

Միավորում է ուսանողներին, դասախոսներին, հետազոտողներին և սկսնակ էնտուզիաստներին՝գլոբալ խնդիրների նորարարական լուծումներ ստեղծելու համար (կայքէջ՝ https://www.istc.am/hy):

- ԵՊՀ հեռաուսուցման լաբորատորիա

Ապահովում է կրթության մատչելիությունը՝ բաց, ճկուն և բարձրորակ հեռաուսուցման ծրագրերի իրականացման միջոցով՝ ինչպես տեղաբնակ, այնպես էլ օտարերկրյա ուսանողների համար (կայքէջ՝ https://bit.ly/3kmRprc):

- «Մուլտիմեդիա» լաբորատորիա

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերել ձայնագրման և ձայնի մշակման հմտություններ անմիջապես մասնագետներից, ինչն ապագա լրագրողներին թույլ կտա գործնական հմտություններ ձեռք բերել և հետագայում աշխատաշուկա մուտք գործել առավել մրցունակ (կայքէջ՝ http://www.ysu.am/news/hy/Opening-the-radio-studio):

2. **Երևանի պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ)**

- ՈՒԽ

Կազմակերպում է ուսումնական, ազատ ժամանց, մշակութային միջոցառումներ: Ունի 4 ոլորտներ՝ Ուսումնակրթական և գիտական, լրատվության և տեղեկատվության, մշակութային և մարզական, սոցիալական և առողջապահական (կայքէջ՝ https://bit.ly/3lQP3Ce):

- ՈՒԳԸ

Հանդիսանում է Ուսանողական խորհրդարանի հանձնաժողովներից մեկը, կրում է տեղեկատվական բնույթ (կայքէջ՝ https://bit.ly/3lRzTg1):

- TedXYSMU

Կազմակերպում է մոտիվացնող խոսնակների ելույթներ (կայքէջ՝ https://www.facebook.com/TEDxYSMU/):

- Իրավաբանական կլինիկա

Ուսանողներին տրամադրել անվճար հիմունքներով անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն ներհամալսարանական կրթական կյանքում ծագող և իրավական լուծում պահանջող զանազան հիմնախնդիրների վերաբերյալ (կայքէջ՝ https://bit.ly/3EYLr7D):

- BIL Armenia

Համագործակցում է ԵՊԲՀ և ԵՊԲՀ ուսանողական խորհրդարանի հետ համատեղ՝ կազմակերպելով կոնֆերանսներ շահագրգիռ կողմերի համար (կայքէջ՝ https://bit.ly/3yn57A3):

3. **Գիտակրթական միջազգային կենտրոն (ԳԿՄԿ)**

- ՈՒԽ

Բացահայտում է ուսանողական խնդիրներն ու կարիքները (կայքէջ՝ https://bit.ly/3n1OapD):

- ՈՒԳԸ

Կազմակերպում է գիտաժողովներ, բանավեճեր, ինտելեկտուալ խաղեր ու քննարկումներ (կայքէջ՝ https://bit.ly/3pagUzb):

- Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբ

Կենտրոնի և այլ բուհերի ուսանողներին, ինչպես նաև անգլերեն սովորել ցանկացողներին ապահովում է հաղորդակցման համար անհրաժեշտ գործիքակազմով (կայքէջ՝ https://isec.am/english-club.html):

- Հոգեբանական դիտարան

Կազմակերպում է մասնագիտական քննարկումներ, խորհրդակցություններ, փորձի փոխանակման ծրագրեր (կայքէջ՝ https://www.isec.am/hogebanakan_ditaran):

- Բիզնեսի կառավարման լաբորատորիա

Կազմակերպություններին և անհատներին մատուցում է բիզնես-խորհրդատվական ծառայությունները (կայքէջ՝ https://isec.am/business-consulting):

4. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)**

- ՈՒԽ

Ներկայացնել ու պաշտպանել ուսանողների շահերը: Ունի 6 ֆակուլտետային ՈՒԽ-ներ և 8 հանձնաժողովներ՝ արտաքին կապեր, մամուլ, Նժդեհ, մշակույթ, սպորտ, թատերական (կայքէջ՝ https://bit.ly/3FYXHGS):

- ՈՒԳԸ

Դեռևս կազմավորման փուլում է, կազմակերպել է նստաշրջաններ և համագործակցում է մեծամասամբ Ամբերդ հետազոտական կենտրոնի հետ:

- ԱՄԲԵՐԴ

Հայաստանի առաջատար ուղեղային կենտրոններից է, որն իրականացնում է հանրային քաղաքականության և տնտեսության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտություններ, վերլուծություններ և մշակումներ (կայքէջ՝ https://asue.am/am/amberd):

- «Փոփոխությունների կառավարում» (Change Lab) լաբորատորիա

Զարգացնել ուսանողների կառավարչական կոմպետենցիաները (կայքէջ՝ http://www.changelab.am/):

5. **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)**

- ՈՒԽ և ՈՒԳԸ

Ունեն հանձնաժողովներ (մամուլի և լրատվության), իրականացնում են բանակումներ/բանալսումներ ու տեղեկատվական միջոցառումներ (կայքէջ՝ https://www.facebook.com/polytechSC):

- Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաներ

Ընդլայնել կրթական կարողություններն ու ընդլայնել հետազոտությունների իրականացման ներուժը (կայքէջ՝ https://anel.am/hy):

6. **Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ)**

- ՈՒԽ

Կամավորության սկզբունքով ձևավորված ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է (կայքէջ՝ https://bit.ly/3klRdZh):

- ՈՒԳԸ

Իրականացնում է տարաբնույթ կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ: (կայքէջ՝ https://bit.ly/3km0pN4):

- Ավագների խորհուրդ

Գործում է ՈՒԽ-ին կից, որտեղ ներգրավված են ԵՊԼՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր խմբերի ավագները: Ամիսը մեկ անգամ կազմակերպվող հանդիպումների ժամանակ ավագները ԵՊԼՀ ռեկտորի խորհրդականին են ներկայացնում խմբերում առաջացած տարաբնույթ հարցերն ու խնդիրները, առաջարկում դրանց լուծման եղանակները:

- Համալսարանական շարունակական կրթություն

Բավարարում է հասարակության տարբեր խմբերի կրթական և մասնագիտական պահանջները (կայքէջ՝ https://bit.ly/30470Vh):

- «SMART Caffe» ձեռներեցության կենտրոն

Առաջարկում է համակարգչային և ծրագրային լիարժեք աջակցություն, դասընթացներ, մենթորություն, համագործակցային ցանցեր՝ առկա գաղափարները զարգացնելու համար (կայքէջ՝ https://bit.ly/3D2EaTN):

7. **Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ)**

- ՈՒԽ

Արտահայտում է ուսանողության շահերն ու իրավունքները, ապահովում ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, նպաստում նրանց կրթական ու գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական ու հոգևոր զարգացմանը, ինչպես նաև ռազմահայրենասիրական, ակտիվ քաղաքացիական դաստիարակությանը, կազմակերպում է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը: Ունի 5 ֆակուլտետային և 5 հանձնաժողովներ՝ սպորտ, մշակույթ, էկոլոգիական, սոցիալական, ինտելեկտուալ ակումբ (կայքէջ՝ https://bit.ly/3FT70rJ):

- ՈՒԳԸ

Կազմակերպում է ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ, օգնում երիտասարդ գիտնականներին, հետազոտողներին ու ուսանողներին հրատարակելու իրենց գիտական հոդվածները: Ունի 5 ֆակուլտետային ՈՒԳԸ-ներ (կայքէջ՝ https://anau.am/student-life/science-society/):

- ՀԱԱՀ գյուղատնտեսական ինկուբատոր

Հնարավորություն է տալիս նորաստեղծ ընկերություններին հանդիպել և կապ հաստատել տեխնոլոգիական և ագրո ոլորտի կայացած ներկայացուցիչների հետ, և գտնել գործընկերության նոր հնարավորություններ (կայքէջ՝ https://anau.am/impact-aim-anau-agritech-incubator/):

8. **Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ՀԳՊԱ)**

- ՈՒԽ

Նպաստում է ուսանողների հասարակական ակտիվությանը,ստեղծագործական զարգացմանը,դասախոսների հետ հարաբերությունների դյուրացմանը, ինչպես նաև ապահովել ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման գործում (կայքէջ՝ https://bit.ly/31AQTPI):

9. **Երևանի պետական կոնսերվատորիա (ԵՊԿ)**

- ՈՒԽ

Իրականացնում է մշակութային ու համերգային հրավերներ (կայքէջ՝ https://www.facebook.com/YSCStudentCouncil/):

Մարզային պետական բուհեր

10. Շիրակի պետական համալսարան (ՇՊՀ)

- Նոր ՈՒԽ

Կազմակերպում է դպրոցականների ու ուսանողների հետ առողջապահական միջոցառումներ (կայքէջ՝ https://www.facebook.com/ShSUstudents):

- ՈՒԳԸ

Կազմակերպում և մասնակցում է ուսանողական գիտաժողովների (կայքէջ՝ https://www.facebook.com/sss.shsu/):

11. Վանաձորի պետական համալսարան (ՎՊՀ)

- ՈՒԽ

Ստեղծում է կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, ինչպես նաև գործող երիտասարդական կազմակերպությունների հետ: Ունի 4 ֆակուլտետային ՈՒԽ-ներ և 5 հանձնաժողովներ՝ սպորտի և ազատ ժամանցի, լրատվության և քարոզչության, գիտաուսումնական, արտաքին կապերի, ուսանողների իրավունքների պաշտպանության (կայքէջ՝ https://bit.ly/31FGNgx):

12. Գավառի պետական համալսարան (ԳՊՀ)

- ՈՒԽ և ՈՒԳԸ

Կազմակերպում և մասնակցում է գիտաժողովների (կայքէջ՝ https://bit.ly/3jaQdGU):

Մասնավոր բուհեր

13. Եվրասիա միջազգային համալսարան (ԵՄՀ)

- ՈՒԽ

Տարածում է տեղեկատվություն ուսանողների շրջանում (կայքէջ՝ https://bit.ly/3BSlEwP):

- Իրավաբանական կլինիկա

Նախաձեռնում է իրավագիտության մասնագիտացման ուսանողների համար պատկերավոր դարձնել իրենց ապագա մասնագիտությունը՝ ֆիլմդիտումների, դատավարություններ այցելությունների և այլ նախաձեռնությունների միջոցով (կայքէջ՝ https://bit.ly/3qnkZk0):

14. Գլաձոր համալսարան (ԳՀ)

- ՈՒԽ

Կազմակերպում է կրթական-մշակութային միջոցառումներ, բանավեճեր (կայքէջ՝ http://www.gladzor.am/Student-Council

Միջազգային պայմանագրերի հիմա վրա գործող բուհեր

15. **Հայաստանում ամերիկյան համալսարան (ՀԱՀ)**

- ՈՒԽ

Նպաստում է ուսանողների ընդհանուր հետաքրքրությունների զարգացմանն ու բարեկեցությանը. բարելավել ՀԱՀ ուսանողական կյանքի որակը (կայքէջ՝ https://aua.am/student-council/

- Ուսանողական ակումբներ

ՀԱՀ ուսանողներին խրախուսվում է ներգրավվել ուսանողական ակումբների կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումներում՝ SpeakUp,Otaku, KBH, Storytelling, C4 Chess Club, Tennis, Finance,Volunteers League և այլն (կայքէջ՝ https://bit.ly/3ww9Q1w):

- TedXAUA

Ստեղծում է նոր գաղափարների տարածման համայնք (կայքէջ՝ https://www.facebook.com/TEDxAmericanUniversityOfArmenia/):

- EPIC

Համալսարանի ինկուբատոր է, որն օգնում է ՀԱՀ ուսանողներին, շրջանավարտներին և այլ ձեռնարկատերերին առաջ տանել իրենց ձեռներեցությունը՝ գաղափարից մինչև հաջողություն (կայքէջ՝ https://epic.aua.am/)

16. **Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀՀ)**

- ՈՒԽ

Ներկայացնում է ուսանողների շահերն ու խնդիրները (կայքէջ՝ https://bit.ly/3FXp5oD):

- ՀՖՀՀ Ուսանողական ձեռնարկություն

Զարգացնում է ուսանողների ձեռնարկատիրական ունակությունները, ինչպես օրինակ՝ ուսանողական «Սրճարանը» (https://www.instagram.com/le_cafe_ufar/) (կայքէջ՝ https://www.facebook.com/ufarjuniorentreprise/):

- Alumni Association շրջանավարտների ցանց

Միավորում է հաջողակ պատմություններ (կայքէջ՝ https://www.facebook.com/UfarAlumni/):

- Աքսելերատոր 28

Ձեռնարկությունների ստեղծմանը, վերականգնմանը և զարգացմանը նվիրված կենտրոն, որտեղ կարելի է զարգացնել ձեռնարկատիրական ջիղը ուսանողների և շրջանավարտների մոտ (կայքէջ՝՝ https://bit.ly/3oaZksS):

Այսպիսով՝ համառոտակի դիտարկելով և վերլուծելով հայաստանյան բուհական համակարգում ընդունված արտաուսումնական գործունեության տարատեսակ ձևերն ու միջոցները՝ կարելի է արձանագրել, որ

ա/ արտաուսումնական գործունեությունը կարևոր տեղ է զբաղեցնում ուսանողության կյանքում

բ/ Հայաստանյան տարբեր բուհերում կան և գործում են արտաուսումնական գործունեության տարբեր ձևեր /կամավորական, ինքնակառավարման, միջմշակութային, մարզական և այլն/

գ/ ամենատարածված տեսակը, որը հանդիպեց մեզ բոլոր բուհերում՝ ուսանողական ինքնակառավարման տեսակն է՝ ի դեմս ՈՒԽ-ների և ՈՒԳԸ-ների:

2.2 Արտաուսումնական գործունեության տեսակներն ու կարևորությունը Շվեդիայի թագավորությունում

Ակադեմիական, գիտական ու մշակութային ավանդույթները բարձր են գնահատվում Շվեդիայում, որտեղ ուսուցման գործընթացներն իրենց ֆորմալ ու ոչ ֆորմալ տեսանկյուններով բավականին տարբերվում են աշխարհի տարբեր կետերի ու բարձրագույն ուսումնական հաստատությունների գործելակերպից: Այս ամենի մասին վկայում է այն փաստը, որ ամենամյա միջազգային Նոբելյան մրցանակները շնորհվում են շվեդական ու նորվեգական ինստիտուտների կողմից ակադեմիական, մշակութային և գիտական ձեռքբերումների համար, իսկ հանձնման արարողությունները տեղի են ունենում Շվեդիայում մեզ բոլորիս հայտնի պատճառով. մրցանակները սահմանվել են 1859 թվականին շվեդ գիտնական Ալֆրեդ Նոբելի կտակի համաձայն:

Շվեդիայի բարձրագույն կրթության ակտի[4] ուսանողներին վերաբերող գլխի ուսանողական ինքնակառավարման մարմինների դրույթների համաձայն՝ ուսանողական միության կամ այլ ինքնակառավարման մարմնի կարգավիճակ ձեռք բերելու համար գոյություն ունեն հստակ ընթացակարգեր[5]: Շվեդիայում ուսանողական ինքնակառավարման մարմիններն են ուսանողական միություններն ու ազգերը: Վերջիններս ուրույն դեր ու նշանակություն ունեն թագավորության բոլոր համալսարանների համար:

Միությունները հայկական կրթական մակարդակում կարելի է համեմատել ուսանողական խորհուրդների հետ: Սակայն տվյալ միությունները պետք է հաստատվեն բուհի կողմից, այսպիսով, միություններն իրենց հիմնական նպատակների ու ծրագրերի փաթեթով դիմում են ներկայացնում տվյալ բուհին հաստատվելու համար: Փաթեթը ներառում է՝

- միության նպատակներն ու գործունեության ոլորտը,
- մարմնում որոշում կայացնողների ինքնությունը և ընտրության կարգը,
- ինչպես պետք է ընդունվեն և հրապարակվեն որոշում կայացնողների և խորհրդի առաջարկները,
- ինչպես պետք է տեղի ունենա միության անդամակցությունը և դուրս գալը,
- ինչպես խորհուրդը պետք է ազատվի պատասխանատվությունից,
- ինչպես պետք է փոփոխություններ կատարվեն դրույթներում, և
- ինչպես պետք է լուծարվի տվյալ միությունը:

Ուսանողական միության ակտով կարգավորում են նաև վերջինների լիազորություններն ու պարտականությունները՝ շեշտելով, որ միությունը պետք է լինի ժողովրդավարական ձևով կազմակերպված և կարողանա ներկայացնել ուսանողներին միության գործունեության ոլորտում:

Ուսանողական միությունն ինքն է վարում անդամակցությունը, սակայն հաշվետու է տվյալ ուսումնական հաստատությանը: Այսինքն՝ ուսանողական միությունն իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատությանը և ներկայացնում է, թե քանի ուսանող է անդամագրվում

[4] The Swedish Higher Education Act (1992:1434), Chapter 4 Students, June, 2021. Accessed December 15, 2021. https://www.uhr.se/en/start/laws-and-regulations/Laws-and-regulations/The-Swedish-Higher-Education-Act/#chapter4.

[5] Ordinance on Students' Unions (2009:769), Section 3, January, 2020. Accessed December 15, 2021. https://www.uhr.se/en/start/laws-and-regulations/Laws-and-regulations/ordinance-on-students-unions-2009769/#transitional.

հստակ ժամկետներում: Բարձրագույն ուսումնական հաստատության պահանջով ուսանողական միությունը հաստատությանը տրամադրում է իր անդամների ռեգիստրը:

Այսպիսով՝ թե՛ հայկական, թե՛ շվեդական ուսանողական կառույցներն էլ անդամակցությամբ կազմակերպություններ են, որոնց նպատակն է ներկայացնել ուսանողների ընդհանուր շահերը: Դիտարկենք Շվեդիայի հայտնի համալսարաններից մեկի՝ Լունդի ուսանողական միության օրինակը: Ընդհանուր առմամբ, Լունդ համալսարանի ուսանողական միությունը (ԼՀՈՒՄ) Լունդի համալսարանի մոտավորապես 45,000 ուսանողների հավաքական ձայնն է ներկայացնում: Լունդի համալսարանի բոլոր ուսանողական միությունները համագործակցում են ԼՀՈՒՄ-ի հետ՝ համալսարանական բոլոր մարմիններում ուսանող ներկայացուցիչներ նշանակելու համար: Այն համագործակցում է թե՛ համալսարանի, թե՛ քաղաքապետարանի, թե՛ ռեգիոնալ ու ուսանողական կարևոր այլ շահագրգիռ կողմերի հետ:

Միության կառուցվածքը, որը տեղ է գտել համալսարանի ուսանողական ձեռնարկում *(Lunds University 2018, 6)* բաղկացած է գլխավոր ժողովից (որոշումների կայացման բարձրագույն մարմին) նախագահի խորհրդից (քաղաքականություն մշակող կազմ) , նախագահող հանձնաժողովից (գործադիր մարմին բաղկացած նախագահից ու փոխնախագահից) և խորհրդից, որն ունի կազմակերպչական գործառույթ:

Միության ուսանող ներկայացուցիչները նույնպես մի շարք պարտավորություններ ունեն: Որպես ուսանողական միության ներկայացուցիչներ՝ նրանք եզակի հնարավորություններ ունեն ազդելու իրենց համալսարանի բարեփոխումների վրա, որն ամրագրված է համալսարանի «Ուսանողական ազդեցության քաղաքականության ու կարգավորումների» *(Lunds University 2012, 1)* մեջ: Սույն գործունեությունը պատվաբեր առաջադրանք է ուսանողների համար: Լունդի համալսարանում ուսանողներն ազդեցության լծակները կյանքի են կոչում ֆակուլտետային ուսանողական և դոկտորանտական միությունների միջոցով՝ հասնելու համալսարանի գերագույն նպատակին՝ կրթության և հետազոտության բարձրագույն որակին: Որակի ապահովման նախապայմաններից մեկն ուսանողների իմաստային ներգրավվածությունն ու իրական ազդեցությունն է բոլոր մակարդակներում: Ուսանողներն ունենում են հնարավորություն զարգացնելու առաջնորդական հմտությունները: Եվ այս ամենի շնորհիվ համալսարանն ամրապնդում է իր

ապրանքանիշը, որը դրական ազդեցություն կարող է ունենալ ուսանողների հավաքագրման ժամանակ:

Այսինքն, ապագա դիմորդների գրավման նպատակով համալսարանը ներդրում է կատարում իր ներկայիս ուսանողների որպես ակտիվ առաջնորդ զարգացման վրա, որը սակայն նկատելի չի եղել հայաստանյան բուհերի արտաուսումնական գործունեությունն ուսումնասիրելիս: Ցավոք, ակներև են ուսանողական միություններին տրվող լիազորությունների շրջանակների ու կարգավորումների դաշտերի տարբերությունները եվրոպական ու տեղական մակարդակներում: Դրանց դեռևս անդրադարձ կկատարվեն հետազոտության շրջանակներում արված համեմատական վերլուծության մեջ:

Շվեդական կրթական համակարգում հաջորդ եզակի դասակարգումը ուսանողական ինքնակառավարման մարմիններում, որոնց շատ հազվադեպ է հնարավոր հանդիպել անգամ եվրոպական կրթական հաստատություններում, ուսանողական «ազգերն են: Ուսանողական ազգերը (շվեդերեն՝ nationer (*Gnewski 2020)*) Լունդի և Ուփսալայի համալսարաններում անդրանիկ ուսանողական համայնքներից են Շվեդիայում:

«Ազգ»/ “Nation” կարգավիճակը վայելում են Ուփսալայի համալսարանի և Լունդի համալսարանի «ազգերը»,

- որոնց ուսանողները պետք է միանային մինչ 2010 թվականի հուլիսի 1-ը գործող կանոնակարգերի համաձայն, և որոնք ապահովում էին ուսանողների բարեկեցության միջոցառումները,
- որի հիմնական նպատակն էր աջակցել «ազգին» պատկանող ուսանողներին և առաջ տանել նրանց ուսումը ուսանողների բարեկեցության միջոցառումների ապահովման միջոցով,
- որոնք աջակցում են ուսանողներին՝ ապահովելով ուսանողների բարեկեցության միջոցառումներ:

Ազգերին միանալու համար պետք է ուսումնասիրել այդ երկու համալսարանների ուղեցույցները: Օրինակ՝ Ուփսալայի համալսարանում ուսանողական ազգերը (կայքէջ՝ https://www.uu.se/en/admissions/study-and-live-in-uppsala/the_student_nations/) ստեղծվել են 17-րդ դարում և այդ ժամանակվանից ի վեր ծառայել են որպես երկրորդ տուն Ուփսալայի համալսարանի ուսանողների համար: Մի ազգում կարող են սուրճ խմել և ընթերցել թերթեր, սովորել, գրքեր վերցնել ազգի գրադարանից կամ նվագել և երգել բազմաթիվ ուսանողական

երգչախմբերից և նվագախմբերից մեկում: Մի խոսքով, սա այն վայրն է, որտեղ ուսանողները կարող են գնալ սովորելու և ժամանակ տրամադրելու տարբեր միջոցառումների:

Ազգերն ունեն իրենց ուսանողական բնակարանները, որոնք վարձով են տրվում ազգի անդամներին, և յուրաքանչյուր ազգ ունի նաև կրթաթոշակներ, որոնց համար կարող են դիմել ազգերի անդամները:

Ազգերի հետ մեկտեղ կան ուսանողական միություններ, ասոցիացիաներ և քաղաքական կուսակցություններ, որոնք աշխատում են Ուփսալայի համալսարանի ուսանող լինելու ժամանակը հնարավորինս արժևորված դարձնելու նպատակով: Այս բոլոր խմբերը նաև հնարավորություն են տալիս ակտիվ դերակատարություն ունենալ համայնքում: Օրինակ, կարելի է միանալ ուսանողական միության ուսումնական խմբերից մեկին, հոդված գրել ուսանողական միության թերթում կամ դառնալ սպորտային ակումբի անդամ: Շատ ու շատ նմանատիպ հնարավորություններ են տրվում ուսանողներին:

Ֆինանսական տեսանկյունից Ուփսալայի ուսանողական ազգերը համաճարակի ընթացքում ճգնաժամ են ունեցել: Ըստ այդմ՝ Ուփսալայի համալսարանը հատկացրել է 8 միլիոն շվեդական կրոն (գրեթե 443 մլն դրամ) չափի, իսկ Ուփսալայի քաղաքապետարանը՝ 2,4 միլիոն շվեդական կրոն (գրեթե 133 մլն դրամ) չափի աջակցություն *(Uppsala University 2021)*:

Երկրորդ մեծ ազգերի օրինակ է՝ Լունդի համալսարան ազգերը (կայքէջ՝ https://www.lunduniversity.lu.se/student-life/studentlund/student-nations): Դրանք մեծ, հյուրընկալ սոցիալական ակումբներ են, որոնք կազմում են Լունդում ուսանողների արտահամալսարանական կյանքի սիրտը: Նրանք առաջարկում են գործունեության և ծառայությունների շատ լայն շրջանակ, ներառյալ լանչեր, նախաճաշեր, փաբեր, բնակարանային հնարավորություններ, սպորտ, գիշերային ակումբներ, պաշտոնական պարահանդեսներ և ավանդական տոնակատարություններ: Գործողությունները սովորաբար տեղի են ունենում ազգի «տանը» (ազգի գլխամասում) և շրջակայքում, որտեղ գտնվում է ազգի գրասենյակը և որտեղ ապրում են նրա որոշ անդամներ:

Ուսանողները ղեկավարում են ազգերը, և նրանցից շատերը դա անում են կամավոր հիմունքներով: Ակտիվ լինելը ազգի մեջ հնարավորություն կտա մասնակցելու գործունեության լայն շրջանակի և շվեդներին, և շվեդական մշակույթին ծանոթանալու հնարավորություն:

Ուսանողական 13 ազգերը համագործակցում են՝ նպատակ ունենալով ապագայում ծավալել առավել լայն գործունեության:

Սակայն դժվար է առանձնացնել հայաստանյան ուսանողական ակտիվում նմանատիպ կառույց, որը համեմատական եզրեր կունենա ազգերի հետ: Այդ պատճառով ուսումնասիրվել են Շվեդիայում երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունները, որոնք հնարավոր կլիներ համեմատել Հայաստանում գործող կազմակերպությունների հետ: Եվրոպական կազմակերպությունների բազմաբնույթ քարտեզում ուրույն տեղ են գրավում ուսանողական ասոցիացիաները, որոնց հիմնական դերակատարությունը համալսարանների ուսանողների շահերը ներկայացնելն է՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ասպարեզներում: Ուսանողական ամենամեծ ու ուսանողների իրավունքները ջատագովող կառույցներից, որոնք գործում են եվրոպական ու ոչ եվրոպական չորս տասնյակից ավել երկրներում, ներառյալ Հայաստանում, կարող ենք նշել՝ Եվրոպական ուսանողական միության անդամակից Ուսանողների շվեդական ազգային միությունը, որը (կայքէջ՝ https://sfs.se/en/om-sfs/) հիմնադրվել է 1921 թվականին: Ուսանողների շվեդական ազգային միությունը (շվեդերեն՝ Sveriges Förenade Studentkårer, SFS) ներկայացնում է Շվեդիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների 50 անդամ ուսանողական միությունների ու կորպուսների 350 ուսանողներ և դոկտորանտներ: Հետևաբար SFS-ը եզակի հնարավորություն ունի խոսելու ուսանողական խմբի անունից որպես ամբողջություն: Սա նշանակում է, որ SFS-ը համարվում է կարևոր զրուցակից որոշում կայացնողների համար, ովքեր որոշում են բարձրագույն կրթությանը և ուսանողներին վերաբերող հարցերը, ինչպիսին է Շվեդիայի կառավարությունը:

Հաջորդ կազմակերպությունը մեզ արդեն ծանոթ Էրազմուս ուսանողական ցանցի Շվեդիայի ներկայացուցչությունն է (կայքէջ՝ https://esnsweden.org/about-us/), որն աշխատում է միջազգային ուսանողների համար, ովքեր իրենց համալսարանական ուսումնառության մի կամ ամբողջական մասն անցկացնում են մեկ այլ երկրում, ինչպես նաև օգնում է վերադարձող փոխանակման ուսանողներին վերաինտեգրվել իրենց ուղարկող համալսարանական կյանքում: Ներկայումս, համանուն ցանցի Շվեդիայի ներկայացուցչությունը համախմբում է 15 բարձրագույն ուսումնական հաստատություններ Շվեդիայում: ESN Շվեդիայի ազգային ներկայացուցչությունը բաղկացած է խորհրդի յոթ անդամներից և չորս համակարգողներից: Անդամներն ընտրվում են զարնանը՝ մեկ տարի ժամկետով:

Վերոնշյալ երկու ցանցերն ու իրենց անդամակից կազմակերպությունները համարվում են շահույթ չհետապնդող, որոնց ֆինանսավորման աղբյուրներն են *(European Students' Union 2015, 10, 29, 31; Erasmus Student Network 2020, 49, 60)*՝

1. անդամակցության վճարներ անդամների կամ ներկայացուցիչ կառույցների/ հաստատությունների կողմից,
2. դրամաշնորհային ծրագրեր,
3. նվիրատվություններ:

2.3 Ուսանողական ինքնակառավարման առանձնահատկությունները Լեհաստանի Հանրապետությունում

Լեհաստանում վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցած դրական փոփոխությունների նշանակալի ցուցանիշներից է բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների զարգացումը: Ուսանողական խորհուրդների իրավական կարգավորումը կատարվում է 2018 թվականին ընդունված "Կրթության և գիտության մասին" օրենքով[6]: Ուսանողական ինքնակառավարումը ֆինանսավորվում է կրթական հաստատությունների կողմից, ինչպես նաև ուսանողները որոշակի գումար են վճարում ուսանողական ինքնակառավարման մարմինների կարիքների համար:

Լեհաստանում ուսանողական ձայնը ներկայացնում է Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանը (ԼՀՈՒԽ): ԼՀՈՒԽ-ն գործում է Լեհաստանի Հանրապետության «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի[7] և ԼՀՈՒԽ-ի կանոնադրության դրույթների[8] հիման վրա և ունի իրավաբանական անձի կարգավիճակ: ԼՀՈՒԽ-ի մարմիններն են՝ պատվիրակների համագումարը, ուսանողական խորհուրդը, նախագահը, գործադիր խորհուրդը, ստուգիչ հանձնաժողովը և ուսանողների օմբուդսմենը:

---

[6] "Prawo o szkolnictwie wyższym i nauce", Act 2.0, Chapter 4, Article 110, 111.

[7] Տե՛ս "The Law on Higher Education and Science," ACT of 20 July 2018: Վերջին մուտք՝ 15. 12. 2021: https://konstytucjadlanauki.gov.pl/content/uploads/2020/06/act-of-20-july-2018-the-law-on-higher-education-and-science.pdf.

[8] Տե՛ս "Statut Parlamentu Studentów Rzeczypospolitej Polskiej": Վերջին մուտք՝ 15. 12. 2021: https://psrp.org.pl/statut-psrp/.

ԼՀՈՒԽ-ն կազմված է համալսարանների ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից և համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի» ԼՀՈՒԽ-ն ներկայացված է Լեհաստանի բոլոր ուսանողների կողմից:

Լեհաստանում ազգային ուսանողական շարժման ստեղծումը պայմանավորված էր 1990 թվականի բարձրագույն կրթության մասին օրենքում առաջին անգամ ներառված ուսանողական ազգային կազմակերպության ստեղծման և գործունեության դրույթներով: Այդ ժամանակ ստեղծվեց ուսանողների միությունների ազգային համաձայնագիրը, որը 1995թ. վերափոխվեց Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանի (ԼՀՈՒԽ): Այդ պահից ի վեր կազմակերպությունը ծավալում է ակտիվ գործունեություն ոչ միայն ակադեմիական միջավայրում, այլ նաև ազդում է քաղաքական որոշումների վրա՝ հօգուտ ուսանողների: ԼՀՈՒԽ-ը լայնակառույց կազմակերպություն է, որը զբաղվում է ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով և ակտիվորեն մասնակցում է ուսանողական կյանքի ձևավորմանը պետական բարձրագույն կրթության կառավարման մարմինների հետ զուգահեռ: ԼՀՈՒԽ-ն իրավունք ունի կարծիք հայտնել ուսանողներին առնչվող նորմատիվ իրավական փաստաթղթերի նախագծերի, հատկապես այն օրենքների նախագծերի վերաբերյալ, որոնք ընդունվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի հիման վրա: ԼՀՈՒԽ-ն ուսանողների ձայնն է ամբողջ Լեհաստանում և երկրի բուհական ուսանողական կազմակերպությունների հետ համատեղ լոբբինգ է անում ուսանողների համար բարենպաստ օրենսդրական դրույթների ստեղծման գործում, իսկ բանակցությունների ազգային մակարդակով խորհրդի ներկայացուցիչները հավասար մասնակիցներ են և ներկայացված են հետևյալ պետական մարմիններում և կառույցներում՝

- Լեհաստանի հավատարմագրման կոմիտե, https://www.pka.edu.pl/
- Լեհաստանի ակադեմիական փոխանակման ազգային գործակալություն, https://nawa.gov.pl/en/
- Գիտության և բարձրագույն կրթության գլխավոր խորհուրդ, https://rgnisw.nauka.gov.pl/
- Գիտության և բարձրագույն կրթության կենտրոնական խորհրդի կարգապահական հանձնաժողով
- Լեհաստանի Հանրապետության նախագահին առընթեր երիտասարդական խորհուրդ

ԼՀՈՒԽ-ում գործում է ուսանողների օմբուդսմենի ինստիտուտը, որը միջամտում է բուհերում ուսանողների իրավունքների խախտման դեպքերին և իրականացնում բազմաթիվ

կանխարգելիչ գործողություններ՝ ուղղված ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության բարձրացմանը: ԼՀՈՒԽ-ն իրականացնում է ուսանողների գործունեության հետ անմիջականորեն առնչվող գործունեության հովանավորչություն (patronage): Հովանավորչությունը տրվում է ուսանողական, համալսարանական կամ երիտասարդական կազմակերպություններին, ինչպես նաև ուսանողական ոչ ֆորմալ խմբերի նախաձեռնություններին, որոնք դրական ազդեցություն ունեն ողջ ուսանողական համայնքի վրա: Կրթական հաստատության մակարդակով գործում են տեղական ուսանողական ինքնակառավարման մարմինները:

Լեհաստանում հանրային բուհի կառավարման մարմիներն են՝ բուհի խորհուրդը, ռեկտորը և սենատը, մասնավոր բուհի՝ ռեկտորը և սենատը, իսկ ընտրական մարմին է ընտրողների կոլեգիան: Բուհի խորհուրդը կազմված է սենատի կողմից նշանակված 6 կամ 8 անդամից և ուսանողական խորհրդի նախագահից: Ընտրողների կոլեգիայի կազմը և անդամների ընտրության կարգը սահմանվում է բուհի կանոնադրությամբ, որի անդամների առնվազն 20%-ը ուսանողներ են և դոկտորանտները: Ուսանողների և դոկտորանտների ներկայացվածությունը որոշվում է յուրաքանչյուր խմբի համամասնությամբ՝ ներկայացված լինելով առնվազն մեկ ներկայացուցչով: Համալսարանի սենատում էլ ուսանողները պետք է ներկայացված լինեն սենատի կազմի 20%-ից ոչ պակաս: Ուսանողական ինքնակառավարման մարմինը կրթական հաստատության ուսանողական միջավայրի միակ ներկայացուցիչն է, որը բաշխում է բուհի կողմից սահմանված ուսանողական գործունեության համար միջոցները: ԲՈՒՀ-երը նաև տրամադրում են անհրաժեշտ նյութական միջոցներ ուսանողական ինքնակառավարման մարմնի գործունեության համար: Լեհաստանի համալսարաններում գործում են հսկայական թվով ուսանողական կազմակերպություններ և համայնքներ, որոնք ունեն հասարակական, քաղաքական, մասնագիտական, կրոնական և գիտական ուղղվածություններ: Ըստ իրենց պատկանելության՝ դրանք բաժանվում են միջազգային, ընդհանուր լեհական, տեղական ուսանողական կազմակերպությունների և Լեհաստանի որոշակի տարածքից ներգաղթյալների եղբայրությունների և այլն: Ուսանողական կազմակերպությունները համալսարանում ունեն սեփական տարածքներ՝ հագեցած կահույքով և գրասենյակային տեխնիկայով: Եթե ուսանողական որոշակի կազմակերպություն ցանկանում է ֆինանսական աջակցություն ստանալ բուհի ուսանողական ինքնակառավարման գործունեության համար հատկացված միջոցներից, ապա պետք է

գրանցվի և տարեկան հաշվետվություն ներկայացնի իր գործունեության մասին: Դրամաշնորհ ստանալու համար ուսանողական կազմակերպությունը պետք է ներկայացնի լրացված դիմում-հայտ՝ միջոցներ ստանալու համար:

Լեհաստանում ուսանողական ինքնակառավարման էական առանձնահատկություններից է նյութական բազան և ֆինանսա-իրավական անկախությունը կրթական հաստատության ղեկավարությունից: Համաձայն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի՝ այդ միջոցները համալսարանի բյուջեից տարեկան պարտադիր հատկացվում են ուսանողական ինքնակառավարման գործունեությանը: Հատկացված միջոցները ծախսվում են կենտրոնական ինքնակառավարման ուսանողական գործունեության վրա, մասնավորապես՝ տարածքների և աշխատակազմի պահպանման համար, բաժիններում և ֆակուլտետներում գործող ինքնակառավարման մարմինների վրա, որոնք ինքնուրույն տնօրինում են հատկացված միջոցների մի մասը, համալսարաններում գործող ուսանողական միություններին և ասոցիացիաներին դրամաշնորհներ տրամադրելու համար և այլն: Այսպիսով՝ ուսանողական ինքնակառավարման մարմինները ամբողջ ուսանողական համայնքի որոշիչ ներկայացուցիչներն են և կարևոր դերակատարում ունեն բարձրագույն կրթության ոլորտում: Ուսանողական կազմակերպությունները՝ գիտական, մշակութային, կամավոր և հասարակական, սպորտային և այլն, համագործակցելով արտերկրների նմանատիպ կառույցների հետ դարձել են կարևոր գործոն ոչ միայն միջմշակութային ենթակառուցվածքի զարգացման, եվրոպական բուհերի միջև փորձի փոխանակման և համագործակցության զարգացման, այլ նաև Լեհաստանում բարձրագույն կրթության ժողովրդավարության զարգացման գործում:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՌՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ. ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1 Ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս -խմբային քննարկումների վերլուծություն[9]

Արտաուսումնական գործունեության դրսևորման Հայաստանյան փորձի առավել խորքային ուսումնասիրությունների համար կատարվել է դաշտային հետազոտություն, այն է՝ կազմակերպվել են ֆոկուս խմբային քննարկումներ հիմնական շահառուների՝ տարբեր բուհերի ուսանողների հետ: Ֆոկուս խմբային քննարկման մեթոդի ընտրությունն ու կիրառումն առավել նպատակահարմար էր, քանի որ այն թույլ է տալիս վերհանել որոշակի ընդհանրություններ ունեցող մարդկանց փորձը, բացահայտել նրանց դիրքորոշումներն ու հեռանկարները: Ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են հետազոտության մեթոդաբանության տրամաբանական շրջանակներում և թույլ են տվել վերհանել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում արտաուսումնական գործունեության հիմական ձևերը, դրական դինամիկան ու առկա խնդիրներն ու խոչընդոտները՝ ըստ քննարկումների մասնակիցների կարծիքների ու ասոցիացիաների: Քննարկումն ընթացել է նախապես կազմված ուղեցույցի օգնությամբ՝ հավատարիմ մնալով հարցազրույցի վարման կանոններին: Շատ կարևոր է փաստել, որ նման մեթոդով տեղեկատվության հավաքումը թույլ է տալիս տարանջատել օբյեկտիվ իրականությունը հետազոտվողների սուբյեկտիվ մեկնաբանություններից:

Հարկ է նաև նշել, որ ֆոկուս խմբերի մասնակիցների անհրաժեշտ քանակն ապահովվել է՝ ելնելով տեղեկատվության հավաքման արդյունավետությունից: Անցկացված երեք ֆոկուս խմբային քննարկումներից յուրաքանչյուրում ընդգրկվել են 7-10 մասնակիցներ, ինչը համարվում է արդյունավետ թվաքանակ հագեցած ու բազմակողմանի տեղեկատվություն ստանալու համար: Հաշվի առնելով այն, որ ֆոկուս խմբերի անցկացման հաջողության կարևորագույն պայմաններից է խմբի որոշակի կառուցվածքի ապահովումը, ուշադրություն է դարձվել նաև մասնակիցների ընտրության չափանիշներին: Հետազոտության մեթոդաբանությունն ինքնին լուծում է խմբային համասեռության հարցը, ինչը արդյունավետ

[9] Սույն բաժնում տեղ գտած բոլոր մեջբերումների աղբյուրն են 2021 թվականի նոյեմբերի 13-ին, 14-ին և 18-ին իրականացված ֆոկուս խմբային քննարկումները, տե՛ս Հավելված 1:

զրույց ծավալելու գլխավոր նախապայմաններից է: Բոլոր խմբերում ընդգրկվել են ուսանողներ տարբեր բուհերից կամ ուսանողական/երիտասարդական կառույցներից: Խմբերը ձևավորվել են բազմաշերտ սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս համեմատելու տարբեր խմբերի կարծիքներն ու դիրքորոշումները:

Բազմաշերտությունն ապահովվել է խմբային քննարկումներում ներառելով ՀՀ պետական, մասնավոր և միջպետական, ինչպես նաև մայրաքաղաքի ու մարզերի տարբեր բուհերի ուսանողներին:

Այսպիսով՝ տվյալ հետազոտության երեք ֆոկուս խմբային քննարկումներում ընդգրկված են եղել հետևյալ բուհերի և ուսանողական կառույցների ներկայացուցիչներ.

- ԵՊՀ
- ՀՊՏՀ
- ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ
- ՇՊՀ
- ԲՊՀ
- ՀՖՀՀ
- ՃՇՊԱՀ
- ԳԿՄԿ
- ՎՊՀ
- ՀԱՀ
- ՀՈՒԱ
- Ռեստարտ Գյումրի
- Ամերիկյան ակումբ
- Ուսանողական ձեռնարկություն
- ՈՒֆառի գիտական ակումբ
- Էրազմուս ուսանողական ցանց Երևան
- Միավորող կամուրջ ՀԿ

Ֆոկուս խմբային քննարկման համար կազմված *հարցաշարը՝ ստորև.*

1. *Ի՞նչ է ձեզ համար ուսանողական արտառուսումնական գործունեությունը:*

2. Բուհում առկա ուսանողների արտաուսումնական գործունեության այլ ինչ տեսակնե՞ր են ձեզ հայտնի (օր.՝ մարզական, մշակութային ակումբներ), որքա՞ն ակտիվ են նրանք գործում:

3. Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում ի՞նչ կարևոր խնդիրներ և բացեր կնշեք:

4. Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում վերջին ժամանակներում տեղի ունեցած ինչպիսի՞ դրական փոփոխություններ կարձանագրեք:

5. Ինչպիսի՞ փոփոխություններ դուք կառաջարկեք, որոնք կարևոր են և անհրաժեշտ ոլորտում առավել արդյունավետ գործելու համար:

6. «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են», ի՞նչ եք կարծում բավարար է այդ տոկոսը ուսանողների՝ բուհի կառավարմանը լիարժեք մասնակցության համար, այն պետք է ավելի բարձրացնել, գուցե նվազեցնել:

7. Դիտարկելով գծապատկեր 1-ը (մոդերատորը պետք է մանրամասնի, բացատրի գծապատկերում ներկայացված տեղեկատվությունը)՝ խնդրում եմ նշել.

ա) ձեր բուհում մասնակցության ո՞ր տեսակներն են գործում,

բ) ուսանողների իրական մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը ինչպիսի՞ խորությամբ է իրականացվում,

գ) և ո՞ր մակարդակներում է իրականացվում:

8. Եվրոպական մի շարք բուհերում գործում է ուսանողական օմբուդսմենի գրասենյակը, ինչ կարծիքի եք մեզ մոտ դրա կարիքը կա՞:

9. Ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները եվրոպական որոշ երակներում հիմնականում ձևավորվում են Կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցներից, բուհի արտաբյուջեից, ուսանողական անդամավճարներից: Ինչպես է ֆինանսավորվում ուսանողական արտաուսումնական գործունեությունը ձեր բուհու՞մ, ձեր գործունեությունն իրականացնելիս ի՞նչ աղբյուրներից եք ֆինանսավորվում, արդյո՞ք այն ձեզ գոհացնում է:

10. Արտաուսումնական գործունեության ֆինանսավորման այլ ի՞նչ ձևաչափեր են ձեզ հայտնի, ինչ նախընտրելի տարբերակ կնշեք կամ կառաջարկեք, որն ըստ ձեզ ավելի արդյունավետ կարող է լինել:

Հարց 1. Ի՞նչ է ձեզ համար ուսանողական արտաուսումնական գործունեությունը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ է նշանակում արտաուսումնական գործունեությունը քննարկման մասնակիցների համար, քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ այն շատ բազմակողմանի և տարբեր կերպ ընկալվող երևույթ է: Քանի որ հարցը շատ ընդհանուր է, էական տարբերություններ չեն ընդգծվում պետական և միջպետական բուհերի ուսանողների կարծիքներում: Նրանց պատկերացումներում արտաուսումնական գործունեությունը պարտադիր նախատեսված դասերից դուրս ուսանողական գործունեության տարբեր ձևերն են, հիմնականում՝ ոչ ֆորմալ բնույթի.

«…Ուսանողական գիտական ընկերությունը տարբեր հանդիպումներ կամ միջոցառումներ է կազմակերպում, որոնք բուն ուսումնական գործընթացի հետ կապված չեն, այսինքն՝ էն ամեն ինչը, որ մենք անցնում ենք կոնկրետ ուսումնական տարվա ընթացքում, դրանից դուրս ունենում ենք տարբեր հանդիպումներ, տարբեր միջոցառումներ, որոնք կազմակերպվում են տարբեր ընկերությունների կողմից, օրինակ՝ Ուսանողական խորհուրդ…»:

Միևնույն ժամանակ քննարկման մասնակիցները ուղղակի կամ անուղղակի կերպով տարբերակում են արտալսարանական և արտահամալսարանական գործունեության ձևերը: Արտալսարանական գործունեությունը հիմնականում կանոնակարգվում, կազմակերպվում և իրականացվում է բուհի ներքին ուսանողական կառույցների միջոցով, մասնավորապես՝ ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի միջոցով, ինչպես համալսարանական, այնպես էլ ֆակուլտետային մակարդակով, որտեղ էական նշանակություն ունեն տարբեր հանձնաժողովները: Արտահամալսարանական գործունեությունն իր բնույթով նույնն է, ինչ արտալսարանականը, սակայն այն կազմակերպվում և իրականացվում է համալսարանից դուրս:

Կարևոր տարբերակումներից մեկն այն է, որ արտաուսումնական գործունեության նպատակային ուղղվածությունը լինում է գիտական /մասնագիտական, ժամանցային և որոշակի հմտությունների ձեռքբերմանն ուղղված: Գիտական բնույթի արտաուսումնական գործունեության տակ քննարկումների մասնակիցները առանձնացնում են տարբեր

սեմինարները, մասնագիտական քննարկումները, փորձի փոխանակումը մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների հետ: Այստեղ կարևորում է մասնագիտական և կրթական որակների բարելավումը, նոր գիտելիքի ձեռքբերումը և նոր հմտությունների զարգացումը: Այստեղ առավել աչքի է ընկնում Ուսանողական գիտական ընկերությունը՝ որպես բուհի ներսում ուսանողական կառույց, իսկ Ուսանողական խորհուրդը նման բնույթի արտաուսումնական գործունեությունն ապահովում է, օրինակ, գիտակրթական հանձնաժողովների միջոցով:

«…Արտաուսումնական գործունեությունն ինձ համար ուսումնական պրոցեսից դուրս ակտիվությունն է, այսինքն՝ ուսանողությունը իր մեջ ընդգրկում է ոչ միայն ուսումնառության պրոցեսը, այլ նաև ակտիվությունը, նախաձեռնողականությունը, շատ կոնֆերանսների կամ միջոցառումների կազմակերպումը …»:

Ժամանցային բնույթի արտաուսումնական գործունեությունը կարևորվում է ոչ թե նոր մասնագիտական գիտելիքների ձեռքբերման, կրթական որակների բարելավման տեսանկյունից, այլ այն ուսումնական գործընթացից դուրս տարբեր հանդիպումների, խաղերի կազմակերպումն է ուսանողների շրջանում, ինչը առավելապես միտված է լիցքաթափմանը, հանգստանալուն, դասերից դուրս ուսանողական շփումներին: Այստեղ մեծ դերակատարում ունեն ուսանողական ոչ ֆորմալ կառույցները և Ուսանողական խորհուրդները.

«…արտահամալսարանական միջոցառումները, որ կազմակերպվում են, համ էլ նրա համար են, որ ուսանողները մի քիչ ցրվեն իրանց deadline-երից, իրանց նույն առաջադրանքներից, քննություններից, առհասարակ, որ մարդիկ ոչ միայն առավոտից իրիկուն մենակ դաս անեն, այլ նաև համալսարանի կյանքից դուրս իրար հետ կարողանան շփվեն, մոտիկական, ընկերներ ձեռք բերեն, ինչպես նաև զվարճանան, թեթևանան..»:

«…ես հավասարապես ուսումնական պրոցեսից զատ կարևորում եմ նաև ժամանցը, որովհետև մեր ուղեղը ընդհանրապես հանգստանալու կարիք ունի, որպեսզի կարողանա պատշաճ աշխատել և ըմբռնել ուսումնական պրոցեսում ստացած գիտելիքները…»:

Կարևոր է ընդգծել, որ ժամանցային արատուսումնական գործունեությունը կարող է լինել ինչպես ինտելեկտուալ բնույթի միջոցառումների կազմակերպմամբ, այնպես էլ ոչ ինտելեկտուալ:

Արտաուսումնական գործունեության մյուս ուղղվածությունը խմբի մասնակիցների պատկերացումներում և ասոցիացիաներում «21-րդ դարի պահանջներին համարժեք»

հմտությունների ու կարողությունների ձեռքբերումն է, օրինակ՝ հաղորդակցման, առաջնորդության, նախաձեռնողականության և այլ հմտություններ: Այստեղ մեծ դերակատարում են ունենում տարբեր հասարակական կազմակերպությունները, ուսանողական նախաձեռնությունները, ինչպես նաև բուհի ՈՒԳԸ-ի կամ ՈՒԽ-ի կազմակերպած միջոցառումները, որոնք նման հմտությունների ձեռքբերմանը այս կամ այն կերպ նպաստում են: Միևնույն ժամանակ այստեղ էական են կամավորությունը և վերապատրաստումները, որոնք նույնպես նման հմտություններ են ձևավորում կամ զարգացնում:

«…գործունեություն, որը որ կապ ունի առհասարակ մասնագիտության հետ և հնարավորություն է տալիս ավելի հմտանալու, զարգանալու և արդեն դու աշխատում ես և հնարվորություններդ ես զարգացնում մասնագիտական դաշտում, և երկրորդը, որ մենք բաժանել ենք և շատ սիրում ենք ասել, դա հասարակական ակտիվությամբ կամ հասարակական գործունեությամբ զբաղվելն է, որը որ առհասարակ կապ չունի մասնագիտության հետ, բայց շատ մեծ հնարավորություններ է ընձեռնում ուսանողին՝ տարբեր աշխատանքներ իրականացնելիս հմտանալ…»:

Կազմակերպման տեսանկյունից արտաուսումնական գործունեությունը հետազոտության մասնակիցների դիրքորոշումներում անհատական և խմբային կամ կազմակերպական բնույթ ունի: Այսինքն՝ գործունեության որոշակի ձևը (խաղը, հանդիպումը, քննարկումը, նույնիսկ ակումբը) կարող են նախաձեռնել անհատները կամ ուսանողական կառույցները, հասարակական կազմակերպությունները: Այս ամենը միաժամանակ տարանջատվում է ֆորմալ և ոչ ֆորմալ մակարդակներում: Առաջին դեպքում հանդես են գալիս ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն, իսկ երկրորդ դեպքում՝ ավելի շատ արտահամալսարանական կառույցներն ու նախաձեռնությունները:

Միևնույն ժամանակ կազմակերպման և ուսանողների ներգրավվածության առումով արտաուսումնական գործունեությունը լինում է վերևից ներքև և ներքևից վերև ուղղվածությամբ: Առաջինի դեպքում ուսանողներն իրենք են նախաձեռնում գործունեության որոշակի ձև և դիմում բուհի ուսանողական կառույցներին, ՀԿ-ներին, այլ կազմակերպություններին իրենց գաղափարն իրագործելու համար, իսկ երկրորդ դեպքում արդեն գոյություն ունեցող ուսանողական կառույցներն ու կազմակերպություններն են

նախաձեռնողի և կազմակերպողի դերում, և նրանք են վերևից ներառում ուսանողությանը: Այստեղ կարևոր են տեղեկույթի փոխանակման միջոցներն ու աղբյուրները:

Այսքանով հանդերձ՝ պետք է նշել, որ ուսանողները արտաուսումնական գործունեություն իրականացնելիս շարժվում են առավելապես նպատակային և ռացիոնալ մոտեցմամբ: Այսինքն՝ իրենք այդ գործընթացներում ունեն սուբյեկտիվ շահեր, որոնք վերաբերում են ներհամալսարանական ու արտահամալսարանական կապերի ձեռքբերմանը, սոցիալական կապիտալի կուտակմանը, ինչը ռացիոնալ է սուբյեկտիվ շահերի առումով, և նպատակային է հեռանկարների տեսանկյունից (հետագայում աշխատանքի տեղավորում, սեփական հմտությունների զարգացում և այլն): Պետք է փաստել, որ այս ամենը իրացվում կամ իրագործվում է խմբային շահի առաջնորդման տեսանկյունից: Այսինքն՝ սուբյեկտիվ նպատակային և ռացիոնալ գործողությունը գործնականում դրսևորվում է խմբային շահն առաջ տանելու մեկնաբանմամբ: Օրինակ՝ խմբի մասնակիցներից մեկի մեկնաբանումը կամավորության մասին՝ որպես արտաուսումնական գործունեություն, սուբյեկտիվ շահի վառ արտահայտված դրսևորում է.

«…այդ skill-երի զարգացմանը օգնում են ավելի շատ networking-ը ու տարբեր սֆերաներում ինքդ քեզ փորձելը, այսինքն՝ տարբեր intership-եր անել, տարբեր գործընթացների մեջ ներգրավված լինել՝ այստեղ կամավորություն անել, այնտեղ կամավորություն անել, ու այդ skill-երը զարգացնել…»:

Շատ կարևոր է ընդգծել նաև, որ արտուսումնական գործունեությունը առանձնանում է գործունեության մյուս ձևերից պարտականությունների բացակայությամբ, այսինքն՝ ուսանողները ներգրավվում են գործունեության այդ ձևերում, քանի որ նրանք այդտեղ որևէ պարտավորություն չունեն և այն բխում է իրենց սեփական ցանկություններից ու մոտիվացիայից.

«…Ես անում եմ այդ ամեն ինչը՝ ելնելով զուտ նրանից, թե արդյո՞ք ուզում եմ դա, թե՝ ոչ ու արդյո՞ք իմ վրա չեմ զգում լրացուցիչ պարտավորություններ կապված համալսարանի հետ…»:

«…այդ ամեն ինչը՝ կարա լինի աշխատանք, կարա լինի ինչ-որ կամավորական ակտիվություն, ցանկացած բան, որ քո վրա ոչ մի պարտավորություն չի դնում, դու մտնում ես այդ ամեն ինչի մեջ քո կամքով…»:

Երեք ֆոկուս խմբերի մասնակիցների քննարկումներում առանձնացված կարծիքների հիման վրա դուրս է բերվել գծապատկեր 2-ը, որը ցույց է տալիս նրանց՝ արտաուսումնական

գործունեության մասին նախնական մեկնաբանությունների սխեմատիկ պատկերը: Պետք է ընդգծել, որ բոլոր մակարդակները փոխկապված են, օրինակ և՛ ներհամալսարանական, և՛ արտահամալսարանական գործունեության ձևերը կարող են իրականանալ ֆորմալ և ոչ ֆորմալ մակարդակներում, դրանք կարող են լինել ժամանցային կամ գիտական, կարող են կազմակերպած լինել առանձին անհատները կամ կազմակերպությունները և այլն:

Գծապատկեր 2.

Արտաուսումնական գործունեությունը՝ ըստ քննարկման մասնակիցների նախնական պատկերացումների



Հարց 2. Բուհում առկա ուսանողների արտաուսամնական գործունեության այլ ինչ տեսակներ են ձեզ հայտնի:

Այն հարցին թե բուհում առկա ուսանողների արտաուսամնական գործունեության այլ ինչ տեսակներ են ձեզ հայտնի, մասնակիցները նշեցին թատերական, սպորտային (առանձին նշելով թենիսի, մարտական պատրաստվածության ակումբները), մշակութային խմբակները, առանձին երաժշտական և ազգային պարերի խմբակները, ռուբիկ-կուբիկի, բանավեճի, գրական ակումբները, ընթերցանության, ֆիլմ դիտելու, կամավորների, մաֆիայի, խմբագիրների, լեզվական հմտությունների զարգացման հետ կապված ակումբները (speaking, creative writing clubs) և այլն:

Տեղին է նշել, որ մասնակիցների մի մասը այս հարցին պատասխանելիս չտարբերակեց դրանք բուհի ներսում առանձին ինքնուրույն գործող ակումբներ ու խմբակներ էին, թե ուսանողական խորհրդի գործունեության շրջանակում կազմակերպված միջոցառումներ են: Իհարկե, առանձին մասնակիցներ եղան, որ հարցին տարբերակված մոտեցում ցուցաբերեցին

նշելով, որ «Ուսանողական խորհուրդն էլ առանձին կազմակերպում է սպորտային, թատերական, մշակութային և այլ միջոցառումներ: Այդպիսի միջոցառումներից է նաև ուսանողների համար ընթերցանության երեկոների կազմակերպումը», «Ուրախների և հնարամիտների ակումբը»: Գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչը չմտաբերեց որևէ առանձին ակումբ/տեսակ, սակայն նշեց, որ «Ուսանողական խորհրդի շրջանակներում շատ ակտիվ գործունեություն է ծավալել մշակութային, կրթական, սոցիալական» և այլ ոլորտներում միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Մասնակիցները նշեցին նաև, որ «ուսանողական խորհուրդն իր ներսում ունի հանձնաժողովներ ու ամեն մեկն իր ներսում փորձում է կազմակերպել իրենց մասի ծրագրերը … օրինակ՝ մաֆ քլաբ…» : ՀՊՏՀ-ի և ԵՊՀ-ի ուսանողները համապարփակ տեղեկատվություն ներկայացրեցին այդ մասով՝ հստակ նշելով ՈՒԽ-ի շրջանակում գործող հանձնաժողովների բազմազանությունը «ուսումնագիտական հանձնաժողովը, արտաքին կապերի հանձնաժողովը, ռազմահայրենասիրական, սոցիալական կապերինը, մշակույթի, գիտակրթական հանձնաժողովները…» :

Արտաուսումնական գործունեության մասին խոսելիս ուսանողները նշեցին նաև ֆակուլտետների ներսում ձևավորված ակումբների մասին, օրինակ՝ գրքասերների, մաֆիայի ակումբները, էկոնոմիկայի վերաբերյալ ուսումնասիրությունների խմբակը, «որոնք արդեն ոչ թե համալսարանական են, այլ ֆակուլտետային են» :

Առանձին տեսակների մասով նշվեց, որ ԵՊՀ-ում գործում է մշակույթի կենտրոնը, որն ունի իր երգչախումբը, ինչպես նաև իրականացվում է զինվորական հետաքրքրություններ ունեցողների համար ծրագիր: Ծրագրերի և նախագծերի մասով ուսանողներից արձանագրեցին նաև, որ բուհում հեղափոխությունից հետո «Ռեստարտ» (ԵՊՀ-ի «Ռեստարտ»-ի հետ չխառնել) և «Ռեֆորմ» նախագծեր են ձևավորվել, որոնք միտված են ուսանողների շահերն ու խնդիրները բարձրաձայնելուն: Հնչեց կարծիք, որ կա տարբերություն ԵՊՀ-ի և իր մարզային մասնաճյուղերի միջև «Ուսխորհուրդը շատ ակտիվ աշխատում ա, ու ինչ-որ բաներ կազմակերպվում են, բայց դա չի հասնում մասնաճյուղ»:

Շարունակելով արտաուսումնական գործունեության տեսակների մասին թեման, մասնակիցների կողմից նշվեց նաև առանձին կառույցների մասին: Օրինակ՝ իր հետաքրքիր փորձով կիսվեց ՀՖՀՀ-ի մասնակիցը, ով մի կառույցի տնօրենն է, որը համարվում է տվյալ համալսարանի դուստր ընկերությունը և հայերեն թարգմանաբար նշանակում է

ուսանողական ձեռնարկություն: Կառույցը զբաղվելով արտահամալսարանական գործունեությամբ՝ ուսանողներին ապահովում է աշխատատեղերով: Նույն Ֆրանսիական համալսարանում գործում է նաև «Գիտական զարգացման ակումբը», որը համալսարանի մաս չի, սակայն տարբեր սեմինարներ և գիտաժողովներ է կազմակերպում:

Այսպես՝ վերլուծելով հնչեցված կարծիքներն ու մոտեցումները՝ կարելի է արձանագրել.

- ✓ վերոնշյալ հարցին պատասխանելիս ուսանողների մի մասը ոչ թե թվարկում էր արտաուսումնական գործունեության ինչ տեսակնե՛ր գիտի, այլ միջոցառման ինչպիսի տեսակներ են կազմակերպվում միևնույն կազմակերպության (հիմնականում ՈւԽ-ի կողմից),
- ✓ հարցին պատասխանելիս մասնակիցների մի մասը չտարբերակեց դրանք բուհի ներսում առանձին ինքնուրույն գործող ակումբներ ու խմբակներ էին, թե ուսանողական խորհրդի գործունեության շրջանակում:

Տրված պատասխաններից պարզ է դառնում, որ ՈւԽ-ի և ՈւԳԸ-ի գործունեությունից դուրս այլ տեսակների մասին ուսանողների մի մասի մոտ պատկերացումները թույլ են:

Ամփոփելով բուհերի ներկայացուցիչների կարծիքները արտաուսումնական գործունեության թվարկված տեսակների և միջոցառումների մասին՝ կարելի է առանձնացնել մասնակիցների կողմից դրանց տարբերակման մի քանի մոտեցում (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Արտաուսումնական գործունեության տեսակները՝ ըստ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցների կարծիքների



Հարց 3. Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում ի՞նչ կարևոր խնդիրներ և բացեր կնշեք:

Քանի որ ֆոկուս խմբային երեք քննարկումներին մասնակցած ուսանողներն ու շրջանավարտները ներկայացնում էին բուհեր ինչպես Երևանից, այնպես էլ ՀՀ մարզերից, այդ իսկ պատճառով պատկերը նույն հարցի շուրջ որոշ դեպքերում տարբեր է եղել: Հիմնականում առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ✓ **օնլայն կամ հիբրիդային ուսուցում**,
- ✓ **քաղաքական ազդեցությունները նախկինում՝ հատկապես պետական բուհերի դեպքում**,
- ✓ **թափանցիկության ու հետադարձ կապի բացակայությունը,**
- ✓ **անվստահությունը,**
- ✓ **ժամանակի տրամադրումը,**
- ✓ **կադրերի կամ անդամների ընտրությունը,**
- ✓ **գիտակցված ներգրավվածության առկայությունը,**
- ✓ **բազային ներգրավվածության հետ կապված խնդիրները,**
- ✓ **մոտիվացիայի ցածր դրսևորումը,**
- ✓ **անտարբերությունը,**
- ✓ **փորձի փոխանակումը,**
- ✓ **գիտական ուղղվածությունը,**
- ✓ **ֆինանսավորման պայմաններն ու հանգամանքները:**

Որպես առաջնային խնդիր՝ նշվեց համավարակի հետևանքով **առցանց կամ հիբրիդային ուսուցման անցումը**, որի պատճառով ուսանողները վստահ չէին, թե ինչ ձևաչափով անցկացնել միջոցառումները, որպեսզի ներգրավեն թե՛ Երևանաբնակներին, թե՛ մարզաբնակներին: Իսկ մշակութային, սոցիալական, ժամանցային բնույթի միջոցառումների շնորհիվ համակուրսեցիները հնարավորություն են ունենում միմյանց ճանաչելու: Առաջարկ հնչեց, որ կարելի է *«օգտվել այդ խնդիրներից, սարքել դրանք հնարավորություններ ու ավելի լավ մասնագետ դառնալ, մանավանդ էս տուրբուլենտ ժամանակներում»:*

Ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ու ուսանողների կողմից բազմիցս նշվեց **քաղաքական հայացքներ ունենալու** վերաբերյալ, սակայն նշվեց նաև , որ այդ երևույթն այլևս նախկինում է՝ առավել ևս պետական բուհերի դեպքում, որտեղ ամենաշատն էին դրանք նկատելի:

Հաջորդ խնդիրը **թափանցիկության ու հետադարձ կապի ապահովմանն էր վերաբերում**, որի ուղղությամբ առաջարկվում է ավելի արդյունավետ հաղորդակցություն ու բովանդակություն ապահովել համալսարանի ու ուսանողների միջև:

Վերոնշյալ խնդիրներին մեկտեղվում է ուսանողների շրջանում **անվստահությունը** այդ կառույցների նկատմամբ, չնայած այն փաստին, որ վերջիններս ակտիվ ներկայացնում են ուսանողների ձայնը: Այս առիթով նշվեց, որ անվստահությունը «քարոզվում է» շատ հաճախ դասախոսների կողմից, ովքեր ասում են, թե ուսանողների համար *«ավելի կարևոր է այդ միջոցառումներին մասնակցելը, քան դասերին ներկա գտնվելը»:* Իհարկե, այս թյուրըմբռնումը հնարավոր է հարթել դասախոսների հետ համագործակցությունը խթանելով:

Բացի արտաքին միջավայրի ազդակների հետևանքով առաջացած խնդիրներից, ուսանողները ցանկացած կարգավիճակում բախվում են հետևյալ ներքին խնդիրներին: Օրինակ՝ թե՛ մեծ, թե՛ սահմանափակ թվով ուսանողական կառույցների անդամները պետական ու միջպետական բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինները վկայում են, որ ակադեմիական կյանքին զուգընթաց **դժվար է ժամանակ տրամադրել** որևէ հանրային խնդրի լուծում տալու կամ առաջարկին արձագանքելու ու բովանդակային փոփոխություն մտցնելու համար:

Շարունակելով խոսել ներքին խնդիրներից՝ **կադրերի կամ անդամների ընտրությունը** չափազանց կարևոր է ներքին խնդիրներից խուսափելու համար: Իսկ ֆակուլտետային ընտրությունները որակական հիմունքով չեն անցկացվում, քննարկման հարթակներ ստեղծվում են, սակայն ուսանողները դրանց լրջորեն չեն վերաբերում ու առաջնորդվում են գնահատականների կամ կուրսի ավագի ակտիվությամբ:

Գիտակցված ներգրավվածության մասով՝ մասնակիցները նշեցին, որ միջոցառումներին ուսանողների մասնակցությունը շատ ժամանակ գիտակված չի լինում, քանի որ այն պայմանավորված է լինում ընկերոջը պարզապես ընկերակցելու կամ նմանատիպ այլ հանգամանքներով: Առաջարկվել է խմբերը ձևավորել նախնական հարցումներ կատարելով կամ ուսանողների կարծիքները հաշվի առնելով՝ նախքան որևէ միջոցառում կազմակերպելը: Հակառակ դեպքում միջոցառումները միայն ձևական բնույթ կկրեն: Սակայն, մյուս կողմից, **բազային ներգրավվածության** մեծ խնդրի առաջ են կանգնած ակտիվ ուսանողական համայնքների առաջնորդները, որի պատճառները իրենք ինքին չեն կարողանում հասկանալ:

Ներքին ու արտաքին վերոնշյալ խնդիրների կողքին շատ անգամներ նշվել է ուսանողների կողմից **մոտիվացիայի ցածր դրսևորումը**: Սակայն դժվար է հասկանալ մոտիվացիայի ցածր մակարդակի պատճառները բոլոր բուհերում: Ենթադրվում է, որ ուսանողները նախաձեռնող չեն և հարկավոր է մոտիվացնող միջոցառումներ կազմակերպել այդ խնդիրը շտկելու համար:

Վերոնշյալ երկու խնդիրներին՝ բազային ներգրավվածությանն ու մոտիվացիայի ցածր դրսևորմանը գումարվում է նաև **անտարբերությունը** արտաուսումնական գործունեության նկատմամբ, որի պատճառներից կարող են լինել մասնագիտական ու ակադեմիական զբաղվածությունը:

Մարզերում հիմնական խնդիրը **փորձի փոխանակման պակասն է**: Անկախ արտաուսումնական գործունեության ծավալից ու քանակից կամ բուհական պատկանելիությունից՝ մարզերի ուսանողները կարիք ունեն ավելի լայն շփման ու փորձի փոխանակման:

Ի վերջո, քննարկումների մեծ մասը ծավալվում էին ուսանողական միջոցառումների կազմակերպման ու ներգրավման շուրջ, սակայն պակասում էր **գիտական ուղղվածությունը**՝ չնայած այն փաստին, որ ֆոկուս խմբային քննարկումներին հրավիրված էին Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ տարբեր բուհերից: Ոմանք նշեցին ցավով, որ այդ կառույցը հիմնավորված չէ իրենց մոտ:

Կարևորագույն խնդիրների շարքում անհնար էր չնշել **ֆինանսավորման պայմանների ու հանգամանքների մասին:** *«Ուսանողական խորհուրդները ունեն ինչ-որ բյուջե, չնայած որ, եթե ինչ-որ միջոցառում պետք լինի կազմակերպել կարող են դիմում գրել և ռեկտորից կամ չգիտեմ այլ մարդուց, ով պատասխանատու է, ստանալ: Դա խնդիր է իմ կարծիքով,* -նշում է մասնակիցներից մեկը,- *դա խնդիր է ավելի լայն միջոցառումներ անելու համար, և երկրորդ խնդիրը սրա մյուս կողմն է՝ պիտի վերահսկողություն դրվի, թե այդ բյուջեն ինչպես պիտի ծախսվի, այսինքն հսկիչ հանձնաժողով պիտի լինի, որ Ուսանողական խորհուրդը կոռուպցիոն ռիսկեր չունենա, չչարաշահի և ճիշտ ծախսի իր ռեսուրսները»:*

Մյուս կողմից, ուսանողները նախաձեռնողականություն չեն դրսևորում ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներին դիմելու ուղղությամբ, որը կնպաստեր իրենց արտաուսումնական գործունեությունն արդյունավետ կազմակերպելուն:

Հարց 4. Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում վերջին ժամանակներում տեղի ունեցած ինչպիսի՞ դրական փոփոխություններ կարձանագրեք:

Ըստ ուսանողների՝ դրական փոփոխությունների թվում են՝ բուհերի ապաքաղաքականացումը, որը թույլ տվեց լուծարել քաղաքականացված ՈՒԽ-ն և ունենալ նոր ու ինքնավար ուսանողական ինքնակառավարում: Նախկինում ոչ քաղաքականացված բուհերի դեպքում ևս նկատելի է եղել Ուսանողական խորհրդում ներգրավվածության հետաքրքրություն, որը տեսանելի էր ընտրությունների անցկացման ընթացքում ակտիվ մրցակցող թեկնածուների միջև:

Որպես արդյունավետ կառավարման մեթոդ, որը ևս որպես դրական ցուցիչ կարելի է վերագրել, կանոնակարգված աշխատանքն է, որը նպաստում է ՈՒԽ-ի սահուն գործունեությանը:

Թվելով դրական փոփոխությունները՝ կարևոր է նշել, որ Ուսանողական խորհրդի գործունեության շնորհիվ *«…ներկա պահին մենք ունենք առավել ինքնակառավարված, ինքնահիրազեկված, ինչպես նաև իրազեկված ուսանողներ»:*

Անմասն չմնացին օնլայն ներգրավվածության մասին դրական քննարկումները, որ Zoom հարթակը յուրահատուկ ճկունություն է հաղորդել աշխատանքային հանդիպումներին և այլն:

Ուսանողական խորհրդի աշխատանքի շնորհիվ ակադեմիական առումով դրական տեղաշարժեր ևս նկատելի են կապված քննությունների, միավորների ու բողոքարկումների հետ:

Ի վերջո, դրական տեղաշարժերի կամ խնդիրների մասին տեղեկանալու լավագույն տարբերակներից է որակի ապահովման գործընթացն ու անանուն հարցաթերթիկները ու գնահատման թերթիկները, որտեղ նշվում են զոհունակություններն ու դժգոհությունները:

Ֆակուլտետային մակարդակով ԵՊՀ-ում փորձել են խնդրին լուծում տալ ու արդյունքում դրական տեղաշարժ ունենալ «Երբ բանախոսում են ուսանողները» խորագիրը կրող մի ծրագրի շնորհիվ, որը հնարավորություն տվեց դասախոսների կողքին բանախոսել նաև ուսանողներին: *«… Եվ դա իսկապես դրական տեղաշարժ էր այնքանով, որ մինչ այդ ուսանողներից շատերը չէին ցանկանում դասախոսի կողքին..՝ փոքր-ինչ թերագնահատում էին իրենց գիտելիքը, անկեղծ լինեմ, հիմա մենք ուսանողներ ունենք, ովքեր դասախոսի կողքին հավասար բանախոսում են»:* Շատերի հավաստմամբ՝ նմանատիպ ծրագրերը, որոնք

բարձրացնում են ուսանողների ներգրավվածությունը և վստահությունը սեփական ուժերի հանդեպ, կարող են դրական մեծ փոփոխությունների ալիք լինել:

Հարց 5. Ինչպիսի՞ փոփոխություններ դուք կառաջարկեք, որոնք կարևոր են և անհրաժեշտ ոլորտում առավել արդյունավետ գործելու համար:

Այս հարցին պատասխանելու համար շատ առաջարկներ նշվել են խնդիրները վերհանելիս, կարող ենք առանձնացնել նաև պատասխան-առաջարկների հետևյալ կետերը, որոնք ուղղված են կրթական ոլորտի հետևյալ շահառուներին՝

Ուսանողներին՝

- Գիտակցել, որ իր *«…ձայնը որոշիչ է»,*
- Ունենալ տարբեր ուսանողական ինքնակառավարման մարմիններ,
- Լինել ավելի նախաձեռնող:

Ուսանողական ինքնակառավարման մարմիններին՝

- Անդամների ընտրությունների թափանցիկ ու արդար անցկացում,
- Որակի ճիշտ վերահսկում, աշխատանքի ճիշտ բաժանում ու պասիվ մասնակցիների հեռացում, օրինակ ՈՒԽ-ից,
- *«… ավագ ավագները կրտսեր ավագների հետ փորձի փոխանակման կարճ դասընթացներ ունենան թեկուզ,*
- Բանավեճերի կազմակերպում բուհերի ինքնակառավարման համար տարբեր համալսարանների միջև, դա կլինի թե՛ Ուսանողական խորհրդի, թե՛ Ուսանողական գիտական ընկերության, թե՛ այլ ակտիվ ուսանողների մասնակցությամբ:

Բուհերին՝

- Լինել ավելի ուսանողակենտրոն, վարել ավելի ճկուն կառավարման համակարգ,
- Զարգացնել կրթություն- աշխատաշուկա կապը,
- Վերադառնալ հիբրիդային կրթության,
- Մշակել խրախուսման մեխանիզմներ,
- *«…կամավորության մասին ինչ- որ դասախոսություններ լինեն, կամավորությունը դառնա ինչ-որ կրեդիտ հավաքելու միջոց պետական համալսարաններում ևս, այդ դեպքում ուսանողները ավելի շահագրգռված կլինեն թե՛ կամավորություն անելու, թե՛ իրենց արտառուսումնական կյանքը բարելավելու համար»:*

Հասարակական ոլորտին՝

Բոլոր բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինները համակարգող կառույցի վերահիմնում ու դերի բարձրացում, որը նախկինում ստանձնում էր Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան: Առաջարկվում է *«…վերջինս էլ կարողանա իր հնարավորությունների ներսում և դրանից դուրս նաև օգնի և աջակցի բուհերին՝ իրենց նախաձեռնություններում, առաջարկություններում և տարբեր գործընթացներում»:*

Պետական ու օրենսդիր մարմնին՝

- ուսանողական ինքնակառավարման մարմինները մուտք գործեն իրավական դաշտ,
- <<պետությունը պետք ա լինի ավելի ուսանողակենտրոն, այսինքն՝ ոչ միայն համալսարանը պետք ա լինի, այլ նաև պետությունը, ու ավելի շատ ուշադրություն դարձնել պետությանը, ոչ միայն բուհի ներսում, այլ նաև բուհից դուրս՝ դպրոցներում>>:
- Կամավորության դերի ու նշանակության բարձրացում՝ *«…ոչ ֆորմալ կրթության կոմպոնենտը՝ որպես մեծ բաժին լցվի ԿԳՄՄՆ աշխատանքներում և իրենք փորձեն միքսել այդ ամեն ինչը, որպեսզի ուսանողները կարողանան պարտադիր կերպով ինչ-որ մի կամավոր աշխատանք կատարել»:*

Հարց 6. «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են», ի՞նչ եք կարծում բավարար է այդ տոկոսը ուսանողների՝ բուհի կառավարմանը լիարժեք մասնակցության համար, այն պետ՞ք է ավելի բարձրացնել, գուցե՝ նվազեցնե՞լ:

Այն հարցին, թե բուհի կառավարմանը ուսանողների՝ օրենքով սահմանված 25% մասնակցությունը բավարար է, թե ո՛չ՝ ոչ պետական բուհերի ներկայացուցիչներից նշեցին, որ սույն խնդիրը վերաբերում է միայն պետական բուհերին, օրինակ՝ Ֆրանսիական համալսարանի պարագայում հոգաբարձուների խորհրդում ուսանողական կազմից ներկայացուցիչ չկա: Միևնույն ժամանակ, ինքնակառավարման գործընթացին ուսանողները մասնակցում են գիտխորհրդում ունենալով քվեարկության ձայնի իրավունք և հանդես գալով տարբեր առաջարկություններով:

Ընդհանուր առմամբ քննարկման մասնակիցները տարակարծիք էին՝ բուհերի գիտական և հոգաբարձուների խորհուրդներում ուսանողների 25% ներկայացվածությունը բավարար է, թե ոչ:

Մասնակիցների մի մասի կարծիքով՝ նշված շեմը բավարար է, սակայն բավարար չէ կառավարմանը մասնակցող և այդ 25%-ը կազմող ուսանողների «որակը», քանի որ «մի մասն այնտեղ ուղղակի ֆիզիկապես է նստած»: Որակյալ մասնակիցների պարագայում ուսանողների խնդիրները հավուր պատշաճի կարող է ներկայացվել և սահմանված շեմն այդ իմաստով բավարար կլինի:

Մյուս մասի կարծիքով սահմանված շեմը բավարար չէ, քանի որ բուհի հիմնական շահառուներն ուսանողներն են, և «հետևաբար ուսանողի կարծիքը, ուսանողի կարիքները պետք է բարձրաձայնվեն ուսանողների կողմից և նրանց ներգրավվածությամբ, որը նաև բուհը ավելի ներառական է դարձնում… բազմակողմանի ներգրավվածությունը նաև բուհի արդյունավետությանն է նպաստում»: Եվ այդ առումով կառավարման մարմիններում ուսանողների ավելի մեծ քանակի մասնակցությամբ նրանց ձայնն ավելի լսելի կլինի:

Հարց 7. Դիտարկելով գծապատկեր 1-ը (մոդերատորը պետք է մանրամասնի, բացատրի գծապատկերում ներկայացված տեղեկատվությունը)՝ խնդրում եմ նշել.

ա) ձեր բուհում մասնակցության ո՞ր տեսակներն են գործում,

բ) ուսանողների իրական մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը ինչպիսի՞ խորությամբ է իրականացվում,

գ) և ո՞ր մակարդակներում է իրականացվում:

Ուսանողների՝ բուհական համակարգի կառավարմանը մասնակցելու տեսակներից խոսելիս (տե՛ս Գծապատկեր 1) ՇՊՀ-ի, ԳԿՄԿ-ի, ԵՊՀ-ի, ՃՇՊԱՀ-ի, Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ներկայացուցիչները վստահաբար նշեցին, որ մասնակցության երեք տեսակն էլ (մասնակցություն ակադեմիական կառավարմանը, որակի ապահովմանը և ուսանողական ինքնակառավարումը) գործում են: ՀՖՀՀ-ի ներկայացուցիչների կարծիքներն, այս առումով հակասական էին, այնուամենայնիվ մեծամասնությունը ևս նշել էր, որ մասնակցության ***3 տեսակն էլ գործում են***:

Մի շարք ուսանողներ (ԵՊՀ, ՀՖՀՀ և Բրյուսով) նույնիսկ փորձեցին հիերարխիկ դասակարգում տալ ըստ մասնակցության ակտիվության՝ առաջինը նշելով ուսանողական

ինքնակառավարումը, երկրորդը՝ մասնակցությունը ակադեմիական կառավարմանը և երրորդը՝ որակի ապահովմանը:

Թերևս «մասնակցության ինտենսիվությունը/խորությունը» այն հարցն էր, որի պարագայում հնչեցված կարծիքները տարաբնույթ էին, թե առանձին բուհերի մակարդակով, թե միևնույն բուհի ներկայացուցիչների շրջանում: Մասնակիցների հարաբերական մեծամասնությունը կարծում է, որ ***երկխոսությունն*** է այն ձևաչափը, որով ուսանողները առնչություն են ունենում բուհի կառավարման գործընթացներին: Այս ձևաչափում գործընկերությունը, որը մասնակցության ինտեսիվության/խորության բարձրագույն կետն է, նշվեց միայն ԳԿՄԿ-ի և ԵՊՀ-ի մի քանի ներկայացուցչի կողմից:

Բուհի կառավարմանը մասնակցության մակարդակներին անդրադառնալով, քննարկման մասնակիցները մեծամասամբ ***ֆակուլտետային և ինստիտուցիոնալ մակարդակներն*** էին նշում: Կարծիքներ հնչեցին, որ ինստիտուցիոնալ մակարդակից դեպի ավելի բարձր մակարդակներ շարժվելու կարիք չկա, քանի որ դա այն մակարդակն է, որտեղ ուսանողների շահերն ու խնդիրները առավելապես են կենտրոնացած: Բրյուսովի համալսարանից մասնակիցն էլ նշեց, որ «Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կողմից, ես նաև ազգային ու միջազգային մակարդակում եմ ներգրավված եղել: … Բայց ընդհանուր առմամբ միասնականությունը … ավելի արդյունավետ ու ներառական է ինստիտուցիոնալ ու համալսարանական մակարդակում» :

Հարց 8. Եվրոպական մի շարք բուհերում գործում է ուսանողական օմբուդսմենի գրասենյակը, ինչ կարծիքի եք մեզ մոտ դրա կարիքը կա՞:

Այս հարցը թաքնված հարցերի շարքից է, որի նպատակն էր անուղղակի կերպով բացահայտել ֆոկուս խմբերի մասնակիցների կարծիքը ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանման գործում *(Аверьянов 1998, 31, 34)*: Ընդհանուր առմամբ երեք խմբերի մասնակիցները տարակարծիք էին օմբուդսմենի գրասենյակ ունենալ կամ չունենալու հարցում: Մասնակիցների մի մասը գտնում է, որ ելնելով սեփական փորձից, օմբուդսմենի գրասենյակ ունենալը կարևոր է և նույնիսկ խիստ անհրաժեշտ՝

«Միանշանակ կա, եթե մենք դիտարկում ենք ՈՒսխորհուրդը, որպես լեգիտիմ ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց, եթե ուսանող կա, որ ՈՒԽ-ի հետ օրինակ պրոբլեմ ունի,

կամ տեսնում ա, որ ՈՒԽ-ն ապօրինություն ա թույլ տալիս, ինքը ու՞մ դիմի էս հարցի համար, ի դեպ՝ բուհի ղեկավարությանը չի վստահում էս պարագայում։»

Մասնակիցների մյուս մասի գտնում է, որ ուսանողական օմբուդսմենի կարիքը չկա, քանի որ համալսարանների ուսանողական խորհուրդները կամ իրավաբանական բաժինները աջակցում են ուսանողներին ծագած խնդիրների լուծման հարցում:

Ներկայացվեց նաև այլընտրանքային կարծիք, այն է՝ դիմել լրատվական մարմիններին և խնդիրը լուծում կգտնի:

Միևնույն ժամանակ քննարկման մասնակիցները նշեցին, որ նման կառույցն արդեն իսկ ստեղծված է Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի ներքո և որպես կառույց պարտավորություն է ստանձնել բոլոր բուհերին միավորող, ուսանողների օմբուդսմենի գործառույթը կատարելու գործում, սակայն դիտարկվեց որ՝

«…կառույցը արդեն կա և առանձին կառույցի կարիք չկա, ուղղակի պետք է (շատ կոպիտ ա հնչում, բայց պետք է) տեր կանգնել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայում տարբեր բուհերի մանդատներին, որպեսզի կառույցի արդյունավետ աշխատանքը իրականացվի և էսպիսի խնդիր չառաջանա»

Հարց 9. Ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները եվրոպական որոշ երկրներում հիմնականում ձևավորվում են Կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցներից, բուհի արտաբյուջեից, ուսանողական անդամավճարներից։ Ինչպես է ֆինանսավորվում ուսանողական արտառուսումնական գործունեությունը ձեր բուհու՞մ, ձեր գործունեությունն իրականացնելիս ի՞նչ աղբյուրներից եք ֆինանսավորվում, արդյո՞ք այն ձեզ գոհացնում է։

Հարցվողների մի մասը գտնում է, որ բուհի կողմից տրամադրվող գումարները բավարար չեն ուսանողական խորհուրդների աշխատանքները կազմակերպելու համար, չնայած և ասացին, որ տարածված է բուհից հավելյալ ֆինանսավորվում ստանալու պրակտիկան։ Նշվեց օրինակ, որ՝ *«ԵՊՀ-ն ամենամեծ ուսանողական կառույց ունեցող մարմինն ա, ինքը իր ֆինանսավորումը կարողանում է տալ, բացի դրանից մենք ունենում ենք և կարող ենք կազմակերպել դրամաշնորհներ և նվիրատվություններ»։*

Կարծիքներ հնչեցին, որ ուսանողական ինքնակառավարման ֆինանսավորման խնդիրները գլոբալ բնույթ են, և որ ուսանողությունը ունակ է դառնալ շարժառիթ այդ հարցը բարձրացնելու և համապատասխան մարմիններում լուծում գտնելու հարցում:

Բարձրաձայնվեց նաև բուհի կողմից ուսանողական խորհուրդներին հատկացված ֆինանսավորման հաշվետվողականության թափանցիկության բացակայության մասին խնդիրը, օրինակ՝ հնչեց նման դիտարկում.

«…ինչ-որ ծախսեր արվում են ընթացիկ տարվա մեջ, բայց թե ուր են այդ ծախսերը գնում, օրինակ՝ ո՞ր ԱՁ-ից են իրենք այդ գնումը կատարում, արդյո՞ք պահպանվում են գնման պետական բոլոր պրոցեսները, մենք դրա մասին չունենք որևէ տեղեկատվություն, որովհետև Ուսանողական խորհրդի ծախսերը զետեղվում են բուհի տարեկան ծախսերի մեջ, ընդ որում՝ ոչ մանրակրկիտ, այլ ընդհանրական, իսկ երբ բուհից պահանջում ես փաստաթղթերը, ասում են բավարարվեք բուհի հաշվետվությամբ, որտեղ նաև ՈՒԽ-ի հաշվետվությունն»:

Քննարկման մասնակիցների մի ստվար զանգված գաղափար չուներ, թե ինչպես և որտեղից են ձևավորվում իրենց բուհում ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները:

Հարց 10. Արտաուսումնական գործունեության ֆինանսավորման այլ ի՞նչ ձևաչափեր են ձեզ հայտնի, ինչ նախընտրելի տարբերակ կնշեք կամ կառաջարկեք, որն ըստ ձեզ ավելի արդյունավետ կարող է լինել:

Այս հարցին քննարկման մասնակիցները նշեցին, որպես հավելյալ ֆինանսական միջոցների աղբյուր Էրազմուս+ ծրագրերը, հիմնադրամները, crowdfunding-ային արշավներ, նվիրատվություններ, ուսանողական ձեռնարկատիրական գործունեություն, կարևորեցին նաև միջազգային պրակտիկայում տարածված ուսանողական կառույցների ներքո ենթադրամաշնորհային ծրագրերը, որոնք իրականացվում են ուսանողների շրջանում, նշվեց որ՝ *«…օրինակ՝ եվրոպական համալսարաններում ուսանողը, եթե զբաղվում է գիտական գործունեությամբ, կամ չգիտեմ համալսարանի կրթության բարելավման համար ուզում է ինչ-որ բան անել, հնարավորություն կա ստանալ ենթադրամաշնորհներ, այսինքն scholarship-ի նման՝ կրթաթոշակի, բայց դու դա օգտագործում ես ինչ-որ հետազոտություն անելու համար»:*

Քննարկման մասնակիցները այս հարցի շուրջ խոսեցին նաև պատերազմի շրջանում կամավորական աշխատանքների և տարբեր միջոցառումների համար ֆինանսական

միջոցներ հայթհայթելու իրենց փորձի մասին: Այսպիսով, անդրադառնալով այն հարցին, թե ֆինանսավորման ինչ տարբերակներ կառաջարկեիք, պետք է նշել, որ առաջարկվող տարբերակները բազմազան են և ներառում են ինչպես արտահամալսարանական լուծումներ, օրինակ, ուսխորհուրդների կողմից առաջարկվող միկրո ֆինանսավորումներ կամ ուսանողական ձեռնարկատիրական գործունեություն, այնպես էլ համալսարանից դուրս տարբեր հիմնադրամների դրամաշնորհներին մասնակցելը:

3.2 SWOT վերլուծություն

SWOT-վերլուծությունը ռազմավարական պլանավորման մեթոդ է, որը ներկայումս լայն կիրառություն ունի և օգտագործվում է տարբեր ոլորտներում: Մեթոդի առավելություններից է հետազոտության օբյեկտի/ոլորտի՝ 4 առանձին կողմերից դիտարկումը, որոնք են՝ թույլ կողմերը, ուժեղ կողմերը, սպառնալիքները, հնարավորությունները՝ սահմանելով ազդեցության արտաքին և ներքին գործոնները *(Shvardak 2021; Патрахина 2015)*: Տվյալ հետազոտության շրջանակում SWOT-վերլուծության մեթոդի ընտրությամբ հնարավորություն է ստեղծվում ոչ միայն առանձին դիտարկել արտաուսումնական գործունության ոլորտը՝ առանձնացնելով դրա թույլ և ուժեղ կողմերը, սպառնալիքներն ու հնարավորությունները, այլև համեմատական վերլուծություն կատարել Շվեդիայի և Լեհաստանի արտաուսումնական գործունեության մոդելների հետ՝ փորձելով տեղայնացնել վերջիններիս փորձը և դրա հիման վրա լուծումներ առաջարկել որոշ խնդիրների առնչությամբ: SWOT-վերլուծության մեթոդը հնարավորություն է տալիս նաև կառուցել նշված չորս բաղադրիչների խաչաձևման կամ համադրման մատրիցը *(Ուժեղ կողմեր – Հնարավորություններ, Ուժեղ կողմեր – Սպառնալիքներ, Հնարավորություններ - Թույլ կողմեր, Թույլ կողմեր - Սպառնալիքներ),* որով կատարվում է առավել խորքային և հստակ վերլուծություն, իսկ *Ուժեղ կողմեր – Սպառնալիքներ և Հնարավորություններ - Թույլ կողմեր* բաժիններում ձևակերպել հստակ առաջարկներ, օրինակ՝ ուժեղ որ կողմերի գործադրմամբ է հնարավոր չեզոքացնել սպառնալիքները, կամ, որ հնարավորությունների կիրառմամբ կարելի է նվազեցնել թույլ կողմերի բացասական ազդեցությունը:

Աղյուսակ 1

Միջազգային փորձի (Շվեդիա, Լեհաստան) SWOT-վերլուծություն

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
●Շվեդիայում օրենքով (Շվեդիայի բարձրագույն կրթության ակտ) հստակ սահմանվում է ուսանողական **ինքնակառավարման կարգավիճակ ձեռք բերելու և գործունեություն ծավալելու ընթացակարգերը**: Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանը (ԼՀՈՒԽ) ևս գործում է Լեհաստանի Հանրապետության «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի հիման վրա: ●Առկա է ուսանողական ինքնակառավարման **հավաքական մարմին**՝ ԼՀՈՒԽ-ն, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ և կանոնադրություն, իրավունք ունի կարծիք հայտնել ուսանողներին առնչվող նորմատիվ իրավական փաստաթղթերի նախագծերի, հատկապես այն օրենքների նախագծերի վերաբերյալ, որոնք ընդունվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի հիման վրա, ունի օմբուդսմենի ինստիտուտ:	●Ուսանողական կազմակերպությունները կարող են **ֆինանսական աջակցություն** ստանալ բուհից՝ ներկայացնելով դրամաշնորհային ծրագիր (Լեհաստան): ●Ուսանողական ինքնակառավարման մարմիններն ունեն **ֆինանսաիրավական անկախություն** կրթական հաստատության ղեկավարությունից, քանի որ օրենքով է սահմանվում նյութական միջոցների պարտադիր տրամադրումը ինքնակառավարման մարմիններին (Լեհաստան): ●ԼՀՈՒԽ-ն ունի **ներկայացվածություն տարբեր պետական մարմիններում** (Լեհաստան): ●Ուսանողների բարձր մոտիվացիան մասնակցելու արտաուսումնական գործունեությանը: ● Արտաուսումնական գործունեության փաստաթղթաշրջանառության հստակ ընթացակարգերի առկայություն, ինչը նպաստում է որակի ապահովման գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:	●Առցանց դասեր, որոնք խոչընդոտում են արտաուսումնական ակտիվ գործունեությանը: ●Համավարակով պայմանավորված ֆինանսական միջոցների կրճատում:

● Ինքնակառավարման ոլորտում **արտաուսումնական գործունեության տեսակների բազմազանություն**, որոնք նաև տարբերվում են իրենց գործառույթներով, այդ թվում նաև ուսանողների սոցիալական հարցերի լուծմամբ (Ազգեր, ուսանողական միություններ, ասոցիացիաներ և քաղաքական կուսակցություններ - Շվեդիա)։ ● Հաշվետվողականության բարձր մակարդակ, որը իրավական հստակ ընթացակարգերով է սահմանվում։ ● Կադրերի հերթափոխություն. մանդատների տևողության իրավական սահմանված ընթացակարգերի առկայություն։ ● Պահպանողական և ավանդական մշակութային արժեքների պահպանմանն ուղղված արտաուսումնական գործունեություն։		
<u>Թույլ կողմեր</u> ● Բուհի կոլեգիալ մարմնում՝ սենատում ուսանողների մասնակցությունը առնվազն 20% է (Լեհաստան)։		

Աղյուսակ 2

Հայաստանի SWOT-վերլուծության մատրիցը

	Հնարավորություններ	Սպառնալիքներ
	● Ոլորտի օրենսդրական դաշտը քննարկման և բարեփոխումների փուլում է: ● Ուսանողական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն օրենքով չարգելված ֆինանսական այլընտրանքային աղբյուրներից օգտվել (ենթադրամաշնորհներ, ձեռնարկատիրական գործունեություն, համալսարանից դուրս դրամաշնորհներ): ● Բուհի կառավարման մարմիններում ուսանողների կողմից իրենց խնդիրների բարձրաձայնման հնարավորությունները: ● Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան (ՀՈՒԱԱ), որը նախկինում միավորում էր բազմաթիվ ուսանողական և երիտասարդական միավորումներ,	● Բուհական ինքնակառավարման/կառավարման մարմինների քաղաքականացված լինելը: ● Առցանց դասընթացները, որոնք խոչընդոտում են ինքնակառավարման գործունեության լիարժեք ծավալմանը: ● Անվստահություն ուսանողական ինքնակառավարման մարմինների նկատմամբ, թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից: ● Ինքնակառավարման մարմինների ֆինանսաիրավական կախվածություն բուհից: ● Բյուջեի ծախսերի թույլ վերահսկողություն, թափանցիկության և հաշվետվողականության բացակայություն:

	կարող է ունենալ մեծ ներուժ և առաքելություն:	●Կամավորության որպես արտաուսումնական գործունեության ճանաչման օրենսդրական դրույթների բացակայություն: ●«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծով (Հոդված 27) սահմանափակվում է ուսանողների՝ առնվազն 25 տոկոս մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներին: ●Արտաուսումնական գործունեության այլ տեսակների մասին տեղեկատվության պակաս: ●Ուսանողների շրջանում մոտիվացիայի և ներգրավվածության պակաս: ●ՈՒԳԸ-ների ոչ ակտիվ գործունեության հետևանքով հաճախ ՈՒԽ-ները ստանձնում են առաջիններիս գործառույթները:
<u>Ուժեղ կողմեր</u> ●«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով *(Հոդված 17, 4-րդ կետ)* սահմանվում է ուսանողների	***<u>Ուժեղ կողմեր – Հնարավորություններ</u>*** ●«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծով՝ ✓ ամրապնդել ուսանողների իրավունքը մասնակցել բուհի	***<u>Ուժեղ կողմեր-Սպառնալիքներ</u>*** ●ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ՝ սահմանել դրա քաղաքական ուղղվածությունը և

իրավունքը մասնակցել բուհի կառավարման մարմինների աշխատանքներին *:* ● Օրենքով է սահմանված նաև ուսանողների իրավունքը միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում *(ՀՀ օրենք «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», Հոդված 17, 7-րդ կետ):* ● «Կրթության մասին» ՀՀ օրենքը *(Հոդված 28, 10-րդ կետ)* սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են»: ● Երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունների բազմազանության առկայությունն ու դրանց ակտիվ գործունեությունը, թե՛	կառավարման մարմինների աշխատանքներին, միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում, ✓ անփոփոխ թողնել ուսանողների՝ բուհի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոս հարաբերակցությունը՝ սահմանելով դրա իրականացման նկատմամբ վերահսկողության նոր մեխանիզմներ ✓ սահմանել կրեդիտային համակարգ արտաուսումնական միավորներին ակտիվ մասնակցության համար՝ բարձրացնելով ուսանողների ներգրավվածությունը արտաուսումնական տարբեր միավորումներին:	ներկայացվածությունը պետական տարբեր մարմիններում (Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարան-ի օրինակով), որը կնպաստի ուսանողների մասնակցությանը որոշումների ընդունմանը և զերծ կպահի ուսխորհուրդների քաղաքականացված լինելու վտանգներից: ● Վերանայել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 27-րդ հոդվածը, որով սահմանափակվում է գործող օրենքով սահմանված ուսանողների պարտադիր մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներին: Եթե գործող օրենքում սահմանված է, որ բուհի կառավարման մարմիններում ուսանողներն ունեն 25% ներկայացվածություն, ապա օրենքի նախագծում այս դրույթը բացակայում է, այսինքն՝ այն կարգավորվելու է բուհի ներքին կանոնադրությամբ, և բուհի հայեցողությամբ կառավարման

տեղական, թե՛ միջազգային մակարդակներում: ● ՀՀ բուհերում առկա արտաուսումնական գործունեության տեսակների բազմազանություն՝ ✓ բուհին կից գործող կառույցներ, ✓ բուհում գործող առանձին ակումբներ, խմբակներ, կենտրոններ, ✓ ֆակուլտետների ներսում ձևավորված ակումբներ, խմբակներ, ✓ ՈւԽ-ի գործունեության շրջանակում ձևավորված տեսակներ, ✓ Բուհի առանձին ծրագրերով և նախագծերով ձևավորված տեսակներ: ● Ուսանողների մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը, ընդհանուր առմամբ, 3 հիմնական ձևաչափով էլ իրականացվում է (մասնակցություն	✓ սահմանել նոր մեխանիզմներ ուսանողների մասնակցության մակարդակների և ինտենսիվության (տե՛ս Գծապատկեր 1) բարձրացման ուղղությամբ: ● ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ առավել ակտիվացնել ուսանողների գործունեությունը տեղական և միջազգային մակարդակներում:	խորհուրդը կարող է նաև չընդգրկել ուսանողներ: Օրենքի նախագիծը (Հոդված 31, կետ 4) սահմանում է միայն, որ ուսանողները կազմում են ակադեմիական խորհրդի անդամների ընդհանուր թվի մինչև 25%-ը: Միևնույն ժամանակ նույն նախագծով (Հոդված 28, կետ 6) կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը տվյալ բուհի ակադեմիական խորհրդի անդամ է: ● Օրենքի նախագծով կամավորությունը ճանաչել որպես արտաուսումնական գործունեության տեսակ, իսկ դրա դիմաց սահմանված կրեդիտները կնպաստեն ուսանողական կամավորական աշխատանքների ակտիվացմանը: ● Մշակել ձևաչափեր, որով բուհերի կանոնադրությամբ կսահմանվի համապատասխան վերահսկողություն, կապահովվի ինքնակառավարման մարմինների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչը իր հերթին նաև կնպաստի ուսանողական

ակադեմիական կառավարմանը, որակի ապահովմանը և ուսանողական ինքնակառավարումը): ● Ըստ մասնակցության խորության/ինտեսիվության՝ երկխոսությունն է այն հիմնական ձևաչափը, որով ուսանողները առնչություն են ունենում բուհի կառավարման գործընթացներին (տե՛ս Գծապատկեր 1):		ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության աճին: ● Օգտագործելով երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը տեղական և միջազգային ոլորտներում՝ բարձրացնել տեղեկատվության մակարդակը արտաուսումնական գործունեության և դրա տեսակների վերաբերյալ, թե՛ բուհի շրջանակներում, թե՛ դրանից դուրս, ինչը նաև կնպաստի մոտիվացիայի և ներգրավվածության աճին: ● Բուհերի կանոնադրությամբ հստակ սահմանել և տարանջատել ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի գործառույթները, ստեղծել ցանցային համագործակցության հնարավորություններ կազմակերպությունների միջբուհական համագործակցության համար, ինչը կնպաստի դրանց ակտիվության բարձրացմանը: ● Ապահովվել ինքնակառավարման մարմինների ֆինանսաիրավական

		անկախությունը կրթական հաստատության ղեկավարությունից, օրենքով սահմանելով նյութական միջոցների պարտադիր տրամադրումը Լեհաստանի օրինակով:
<u>Թույլ կողմեր</u> ●Օրենքում և օրենքի նախագծում «արտաուսումնական գործունեություն» եզրույթը գործածված և շրջանառված չէ, ինչը խոչընդոտում է ոլորտի շրջանակների ձևավորմանը և դրա հստակեցմանը: ●Օրենքում և օրենքի նախագծում արտաուսումնական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ դրույթների և նվազագույն իմպերատիվ նորմերի բացակայությունը չի նպաստում ոլորտի կարգավորմանն ու հստակեցմանը: ● «Կրթության մասին» ՀՀ օրենքով (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանված	***<u>Հնարավորություններ - Թույլ կողմեր</u>*** ●«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծով՝ ✓ շրջանառության մեջ դնել «արտաուսումնական գործունեություն» եզրույթը, ✓ ձևակերպել արտաուսումնական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ դրույթներ և նվազագույն իմպերատիվ նորմեր, ✓ սահմանել ուսանողների՝ բուհի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոս հարաբերակցության պահպանման նկատմամբ վերահսկողություն՝	***<u>Թույլ կողմեր – Սպառնալիքներ</u>*** ●Ուսանողական ինքնակառավարման մարմիններում կադրերի հերթափոխության բացակայությունը հանգեցնում է անվստահության մթնոլորտի ձևավորմանը, մոտիվացիայի և ներգրավվածության նվազեցմանը: ●Գործող օրենքում առկա բացերը բացասաբար են ազդում արտաուսումնական գործունեության կազմակերպման, ակտիվացման գործընթացների, ինչպես նաև արդյունավետության վրա: ●Մարզային և քաղաքային արտաուսումնական գործունեության տեսակների միջև առկա է խիստ

ուսանողների՝ բուհի կառավարման մարմիններում 25%-ի ներկայացվածության մասով վերահսկողությունը ոչ պետական բուհերի դեպքում թույլ է: ● Չկա ուսանողական հարցերով զբաղվող օմբուդսմենի ինստիտուտ: ● Արտաուսումնական գործունեությունը՝ մասնավորապես ինքնակառավարման մարմնում աշխատանքը չի դիտարկվում որպես աշխատանքային փորձ կամ առավելություն այլ: ● Կադրերի հերթափոխության բացակայություն. մանդատների տևողության իրավական սահմանված ընթացակարգերի բացակայություն: ● Մարզային արտաուսումնական տեսակների գործունեության (այդ թվում ինքնակառավարման մարմինների) սահմանափակ հնարավորություններ: ● Գործընկերությունը որպես ուսանողների մասնակցության (ինտենսիվություն/խորություն)	մասնավորապես ոչ պետական բուհերի առնչությամբ, ✓ մշակել ձևաչափեր, որով բուհերի կանոնադրությամբ ուսանողական ինքնակառավարման մարմիններում աշխատանքը (միջինից բարձր օղակներում պաշտոններ ունենալու պարագայում) կդիտարկվի որպես աշխատանքային փորձ, ✓ սահմանել ձևաչափեր, որով բուհերի կանոնադրությամբ ինքնակառավարման մարմիններում կապահովվի կադրերի հերթափոխությունը (Շվեդիայի օրինակով): ● Նախաձեռնել ուսանողական հարցերով զբաղվող օմբուդսմենի ինստիտուտի ստեղծում ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման կազմակերպության ստեղծմամբ՝ Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանի օրինակով:	անհամաչափություն՝ ըստ ակտիվության և ներգրավվածության: ● Ոչ պետական բուհերում առավել թույլ է վերահսկողությունը ուսանողների՝ բուհի կառավարման գործընթացներին մասնակցության ապահովման և օրենքի սահմանված դրույթների պահպանման առումով:

բարձրագույն մակարդակ բուհի կառավարման գործընթացներին, մեծամասամբ դեռ չի գործում (տե՛ս Գծապատկեր 1): ● Վերազգային և ազգային մակարդակները որպես՝ բուհի կառավարմանը մասնակցության բարձրագույն մակարդակներ, դեռ չեն գործում, հիմնականում մասնակցությունը ֆակուլտետային և ինստիտուցիոնալ մակարդակներում է տեղի ունենում (տե՛ս Գծապատկեր 1): ● Ուսանողների շրջանում ֆինանսական միջոցների հայթհայթման նախաձեռնողականության պակաս:	● ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ բարձրացնել մարզային արտաուսումնական գործունեություն ծավալող ուսանողական միավորումների ակտիվությունը, ստեղծել ցանցային համագործակցություն: ● ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներում հասցնել գործընկերային, ազգային և վերազգային մակարդակների: ● Կազմակերպել հատուկ դասընթացներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Ֆինանսական այլընտրանքային աղբյուրներից օգտվելու (ենթադրամաշնորհներ, ձեռնարկատիրական գործունեություն,	

	համալսարանից դուրս դրամաշնորհներ) ուղղությամբ:	

Ամփոփելով SWOT-վերլուծության մատրիցում ներկայացված հիմնական դրույթներն ու եզրահանգումները՝ կարող ենք նշել, որ ներկայումս «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը և դրա վերաբերյալ քննարկումները առավել մեծ հնարավորություններից են ոլորտում դրական փոփոխություններ կատարելու առումով: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ մտահոգիչ է վերոնշյալ նախագծի 27-րդ հոդվածը, որով ի համեմատություն գործող օրենքի դրույթների սահմանափակվում է ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներին: Օրենքի նախագիծը պետք է առավելապես հստակեցի և զարգացնի արտաուսումնական գործունեության հետ կապված գործընթացներն ու ընթացակարգերը, նպաստի ոլորտի կարգավորմանը:

Նշենք նաև, որ SWOT-վերլուծության մատրիցում տարբեր խնդիրների լուծման ուղղությամբ ներկայացվել են առաջարկներ՝ հիմք ընդունելով ուսումնասիրված միջազգային փորձը՝ Լեհաստանի և Շվեդիայի օրինակներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտաուսումնական ուսանողական գործունեության նախապատմության, ներկայիս կազմակերպման ձևերի, մոդելների ու բացերի, ինչպես նաև բարեփոխումների վերաբերյալ հետազոտությունը վերաբերում էր հայաստանյան ու եվրոպական փորձերին: Նախապես իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել են ֆոկուս խմբային քննարկման հարցերը: Շնորհիվ ֆոկուս խմբային քննարկումների բոլոր մասնակիցների ակտիվ ներգրավմանը՝ հնարավոր դարձավ ավելի խորքային ուսումնասիրել Հայաստանի պետական, միջազգային, մասնավոր բուհերում և դրանց սահմաններից դուրս կազմակերպվող արտաուսումնական գործունեությունը և ձևավորել վերջինիս բարելավմանն ուղղված առաջարկների փաթեթ: Ամփոփելով հետախուզական ու նկարագրողական և որակական մեթոդների կիրառման հետազոտությունների արդյունքները, եկել ենք հետևյալ եզրահանգումների.

- **Օրենսդրական դաշտում առկա բացերը բացասաբար են ազդում արտաուսումնական գործունեության կազմակերպման, և արդյունավետ գործունեության վրա:**

Առաջարկություն՝

Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծով՝

- ✓ Ամրապնդել ուսանողների իրավունքը մասնակցել բուհի կառավարման մարմինների աշխատանքներին, միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում:
- ✓ Անփոփոխ թողնել ուսանողների՝ բուհի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսով հարաբերակցությունը՝ սահմանելով դրա իրականացման նկատմամբ վերահսկողության նոր մեխանիզմներ:
- ✓ Սահմանել ուսանողների՝ բուհի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսով հարաբերակցության պահպանման նկատմամբ վերահսկողություն՝ մասնավորապես ոչ պետական բուհերի առնչությամբ:
- ✓ Շրջանառության մեջ դնել «արտաուսումնական գործունեություն» եզրույթը:

✓ Սահմանել կրեդիտային համակարգ արտաուսումնական միավորներին ակտիվ մասնակցության համար՝ բարձրացնելով ուսանողների ներգրավվածությունը արտաուսումնական տարբեր միավորումներին:

✓ Ճանաչել կամավորությունը որպես արտաուսումնական գործունեության տեսակ, իսկ դրա դիմաց սահմանել կրեդիտներ, որոնք կնպաստեն ուսանողական կամավորական աշխատանքների ակտիվացմանը:

✓ Չեղակերպել արտաուսումնական գործունեության ֆինանսավորման վերաբերյալ դրույթներ և նվազագույն իմպերատիվ նորմեր:

❖ **Ուսանողական ինքնակառավարման մարմիններում կադրերի հերթափոխության բացակայությունը հանգեցնում է անվստահության մթնոլորտի ձևավորմանը, մոտիվացիայի և ներգրավվածության նվազեցմանը:**

Առաջարկություն՝

Սահմանել ձևաչափեր, որով բուհերի կանոնադրությամբ՝

✓ ինքնակառավարման մարմիններում կապահովվի կադրերի հերթափոխությունը (Շվեդիայի օրինակով),

✓ ուսանողական ինքնակառավարման մարմիններում աշխատանքը (միջինից բարձր օղակներում պաշտոններ ունենալու պարագայում) կդիտարկվի որպես աշխատանքային փորձ,

✓ բուհերի կանոնադրությամբ կսահմանվի համապատասխան վերահսկողություն, կապահովվի ինքնակառավարման մարմինների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչը իր հերթին նաև կնպաստի ուսանողական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության աճին,

✓ կապահովվի ինքնակառավարման մարմինների ֆինանսա-իրավական անկախությունը կրթական հաստատության ղեկավարությունից՝ օրենքով սահմանելով նյութական միջոցների պարտադիր տրամադրումը Լեհաստանի օրինակով:

✓ Նախաձեռնել ուսանողական հարցերով զբաղվող օմբուդսմենի ինստիտուտի ստեղծում ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման կազմակերպության ստեղծմամբ՝ Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանի օրինակով:

✓ ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ՝ սահմանել դրա քաղաքական ուղղվածությունը և ներկայացվածությունը պետական տարբեր մարմիններում (Լեհաստանի Հանրապետության Ուսանողական Խորհրդարանի օրինակով), որը կնպաստի ուսանողների մասնակցությանը որոշումների ընդունմանը և զերծ կպահի ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու վտանգներից:

❖ **Մարզային և քաղաքային արտաուսումնական գործունեության տեսակների միջև առկա է խիստ անհամաչափություն՝ ըստ ակտիվության և ներգրավվածության:**

Առաջարկություն՝

✓ Օգտագործելով երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը տեղական և միջազգային ոլորտներում՝ բարձրացնել տեղեկատվության մակարդակը արտաուսումնական գործունեության և դրա տեսակների վերաբերյալ, թե՛ բուհի շրջանակներում, թե՛ դրանից դուրս, ինչը նաև կնպաստի մոտիվացիայի և ներգրավվածության աճին:

✓ ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ բարձրացնել մարզային արտաուսումնական գործունեություն ծավալող ուսանողական միավորումների ակտիվությունը, ստեղծել ցանցային համագործակցություն:

✓ ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ առավել ակտիվացնել ուսանողների գործունեությունը տեղական և միջազգային մակարդակներում:

✓ ՀՈՒԱԱ-ի ակտիվացմամբ կամ համանման ինքնակառավարման հավաքական մարմնի ստեղծմամբ ուսանողների մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներում հասցնել գործընկերային, ազգային և վերազգային մակարդակների:

✓ Կազմակերպել հատուկ դասընթացներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Ֆինանսական այլընտրանքային աղբյուրներից օգտվելու (ենթադրամաշնորհներ, ձեռնարկատիրական գործունեություն, համալսարանից դուրս դրամաշնորհներ) ուղղությամբ:

- **Ոչ պետական բուհերում առավել թույլ է վերահսկողությունը ուսանողների՝ բուհի կառավարման գործընթացներին մասնակցության ապահովման և օրենքի սահմանված դրույթների պահպանման առումով:**

Առաջարկություն՝

- ✓ Բուհերի կանոնադրությամբ հստակ սահմանել և տարանջատել ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի գործառույթները, ստեղծել ցանցային համագործակցության հնարավորություններ կազմակերպությունների միջբուհական համագործակցության համար, ինչը կնպաստի դրանց ակտիվության բարձրացմանը:
- ✓ Սահմանել նոր մեխանիզմներ ուսանողների՝ բուհի և բուհի կառավարման մասնակցության մակարդակների և ինտենսիվության (տե՛ս Գծապատկեր 1) բարձրացման ուղղությամբ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները և կիրառելով վերոնշյալ առաջարկությունների փաթեթը՝ Հայաստանում հնարավոր կլինի արտաուսումնական գործունեության օրինակելի փորձ ունենալ: Սույն հետազոտության մեջ ներկայացված բոլոր քայլերը կարող են նպաստել երիտասարդների արտաուսումնական ակտիվ գործունեությանը, որն իր հերթին կնպաստի ֆորմալ և ոչ ֆորմալ համադրված կրթության մոդելի զարգացմանը Հայաստանում:

Գրականության ցանկ

1. ԳՊՀ. 2021. «Գավառի պետական համալսարան հիմնադրամի» 2021 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվ»: Հաստատված է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի թիվ 10 նիստում, թիվ 37 որոշմամբ: Վերջին մուտք՝ 20.12.2021: http://gsu.am.
2. ԵՊՀ. 2014. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն: Հավելված N 1 ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1408 - Ն որոշման: Վերջին մուտք՝ 20.12.2021: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf .
3. ԵՊՀ. 2019. «2020 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվ»: Հավելված ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2019 թ. դեկտեմբերի 26-ի նիստում ընդունված N 62 որոշման: Վերջին մուտք՝ 20.12.2021: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/12/nakhahashiv-2020.pdf.
4. ՀԱԱՀ ՈՒԽ. 2021. «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրություն»: Վերջին մուտք՝ 20.12.2021: https://anau.am/wp-content/uploads/2021/08/ux-kanonadrutyun.pdf .
5. ՀԱԱՀ. 2016. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կանոնադրություն: Վերջին մուտք՝ 20.12.2021: https://anau.am/wp-content/uploads/2019/06/ANAU-kanonadrutyun.pdf .
6. ՀԱՊՀ. 2014. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն: Վերջին մուտք՝ 20.12.2021. http://www.irtek.am/views/act.aspx?aid=78481 .
7. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ. 2012. «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի կանոնադրություն: Վերջին մուտք՝ 20.12.2021: https://www.isec.am/images/icons/kanonadrutyun/Kanonadrutyun.pdf .
8. ՀՊՄՀ ՈՒԽ. 2016. «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրություն»: Վերջին մուտք՝ 20.12.2021: http://hpmhux.am/?page_id=166.
9. ՀՊՏՀ. 2020. «ՀՊՏՀ 2021 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվ»: Վերջին մուտք՝ 20.12.2021: https://asue.am/upload/files/reports/budget.pdf.
10. ՀՖՀՀ. 2003. «Հայաստանի Ֆրանսիական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն:
11. Acharya, Shiva Lal. 2015. "Student participation in university governance: A comparative study between Tribhuvan University and Kathmandu University, Nepal." Thesis, Department of Education, University of Oslo.
12. Astin, Alexander W. 1993. "What Matters in College." Liberal Education 79 (4):4–15.

13. Barnett, Lynn. 2007. "Winners" and "losers": The effects of being allowed or denied entry into competitive extracurricular activities". Journal of Leisure Research, 39(2):316-341. Accessed September 19, 2021. https://www.nrpa.org/globalassets/journals/jlr/2007/volume-39/jlr-volume-39-number-2-pp-316-344.pdf.

14. Bartkus, Kenneth, Blake Nemelka, Mark Nemalka & Phil Gardner. 2012. "Clarifying the Meaning of Extracurricular Activity: A Literature Review of Definitions". American Journal of Business Education (AJBE). https://doi.org/10.19030/ajbe.v5i6.7391.

15. Birze´a, César, David Kerr, Rolf Mikkelsen, Isak Froumin, Bruno Losito, Milan Pol and Mitja Sardoc. 2004. "Education for democratic citizenship activities 2001–2004: All-European study on EDC policies (Strasbourg: Council of Europe)." Accessed September 19, 2021. https://rm.coe.int/16802f7040.

16. Chia, Yew. 2005. "Job offers of multinational accounting firms: The effects of emotional intelligence, extra-curricular activities, and academic performance". Accounting Education: An International Journal, 14(1):75–93.

17. Erasmus Student Network. 2020. "Annual Report 2019-2020." Accessed November 20, 2021. https://issuu.com/esnint/docs/annual_report_2019-2020.

18. European Students' Union. 2015. "ESU Activity Report 2015." July, Brussels. Accessed November 20, 2021. https://www.esu-online.org/wp-content/uploads/2016/06/Report2015_041.compressed.pd.

19. European Students' Union. 2018. "Bologna with Student Eyes 2018: The final countdown." May, Brussels. Accessed November 1, 2021. http://www.ehea.info/media.ehea.info/file/2018_Paris/06/0/BWSE-2018_web_lowres_952060.pdf.

20. European Students' Union. 2020. "Bologna with Student Eyes 2020." December, Brussels. Accessed November 1, 2021. https://www.esu-online.org/wp-content/uploads/2021/03/0037-Bologna-Publication-2021-WEB3.pdf.

21. Fredricks, Jennifer & Jacquelynne Eccles. 2006. "Is extracurricular participation associated with beneficial outcomes: Concurrent and longitudinal relations?". Developmental Psychology, 42(4):698-713. Accessed September 19, 2021. http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.546.5178&rep=rep1&type=pdf.

22. Gnewski, Maddi. 2020. "What Are the Swedish Student Nations?" Scnadinavian Standard, January. Accessed November 20, 2021. https://www.scandinaviastandard.com/what-are-the-swedish-student-nations/.

23. Griffiths, Kerry, Steve Bullough, Simon Shibli & Jayne Wilson. 2017. "The impact of engagement in sport on graduate employability: implications for higher education policy and practice". International Journal of Sport Policy and Politics, 9(3):431-451. DOI: 10.1080/19406940.2017.1359648.

24. Griffiths, Teri-Lisa, Jill Dickinson & Catherine J. Day.2021. “Exploring the relationship between extracurricular activities and student self-efficacy within university”. Journal of Further and Higher Education, 45(9):1294-1309. DOI: 10.1080/0309877X.2021.1951687.

25. Jungblut, Jens. 2011. "Student participation in higher education governance: A practitioner's view of the role of student organizations and higher education institutions." In *Leadership and governance in higher education for decision maker and administrators* edited by Sjur Berga and others, 2, 66-67. Dr. Josef Raabe Verlags-GmbH.

26. Klemenčič, Manja. 2011. "The public role of higher education and student participation in higher education governance." In *Higher Education and Society in Changing Times: looking back and looking forward*, edited by John Bernnan & Tarla Shah, 74-83. London: Centre for Higher Education Research and Information.

27. London Communiqué. 2007. "Towards the European Higher Education Area: responding to challenges in a globalised world." London, 18 May 2007. Accessed October 25, 2021. http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2007_London_Communique_English_588697.pdf.

28. Lunds University. 2012. "Lunds University, Policy and regulations for student influence at Lund University." September, 2012. Accessed November 20, 2021. https://www.staff.lu.se/sites/staff.lu.se/files/policy-and-regulations-for-student-influence-at-lund-university.pdf

29. Lunds University. 2018. "Lunds University Students’ Unions Associations Student Representative Handbook.” Accessed November 20, 2021. https://drive.google.com/file/d/1QLgbNvdYXo-V3gpObyJlCtrkvtWO9C6f/view.

30. Massoni, Erin. 2011. "Positive Effects of Extra Curricular Activities on Students." ESSAI: Vol. 9, Article 27:84-87. Accessed January 10, 2022. http://dc.cod.edu/essai/vol9/iss1/27.

31. Nelson, Irvin, Valaria Vendrzyk, Jeffrey Quirin, and Robert Allen. 2002. "No, the sky is not falling: Evidence of accounting student characteristics at FSA schools, 1995-2000". Issues in Accounting Education, 17(3):269- 287.

32. Paris Communiqué. 2018. "Paris Communiqué, Paris, May 25th 2018." Accessed October 25, 2021. http://ehea.info/Upload/document/ministerial_declarations/EHEAParis2018_Communique_final_952771.pdf.

33. Pascarella, Ernest T., and Patrick Terenzini, T. 1991. “How College Affects Students”. San Francisco: Jossey-Bass.

34. Prague Communiqué. 2001. "Towards the European Higher Education Area: Communiqué of the meeting of European Ministers in charge of Higher Education in Prague on May 19th 2001." Accessed October 25, 2021. http://www.ehea.info/page-ministerial-conference-prague-2001.

35. Serorez, Tatyana, Pavel Navka. 2014. “Methodical features dispensing exercise, used in extracurricular activities to improve the health of students”. Pedagogics, psychology, medical-

biological problems of physical training and sports. 18(5):60-6. https://doi.org/10.6084/m9.figshare.971065.

36. Shvardak, Marianna. 2021. “SWOT-analysis as a strategic management tool of the quality training of the future educational institution head”. İlköğretim Online, 20(1): 958-967. http://dx.doi.org/10.17051/io.2015.85927.

37. Uppsala University. 2021. "Support from the University and the municipality." May 31. Accessed November 20, 2021. https://mp.uu.se/en/web/nyheter/-/nationerna-samarbetar-for-att-sakra-framtiden.

38. Zarrett Nicole, Liu Yangyang, Vandell Deborah et al. 2021. “The Role of Organized Activities in Supporting Youth Moral and Civic Character Development: A Review of the Literature”. Adolescent Res Rev 6:199–227. https://doi.org/10.1007/s40894-020-00142-1

39. Аверьянов, Леонид. 1998. “Социология: искусство задавать вопросы”. Издание 2-е, переработанное и дополненное. Москва:31-34.

40. Патрахина, Татьяна. 2015. “SWOT-анализ как инструмент планирования стратегии образовательной организации”. Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ», Том 7, No2 (март -апрель):1-11. http://dx.doi.org/10.15862/08PVN215.

41. Петрова, Светлана. 2009. “Становление и развитие форм и содержания деятельности органов студенческого самоуправления в вузах России в пореформенный период (1860–1917гг.)”. Вестник ЧГПУ. (12):140–151.

42. Попова, Валентина. 2006. Внеаудиторная деятельность студентов педвуза: теория, опыт, перспективы. Оренбург: ОГПУ.

43. Худяков, Виктор, Елена Семушина и Флёра Симбирякова. 2010. "Роли интеграции учебной и внеучебной деятельности в профессиональном воспитании студентов". Вопросы современной науки и практики, 10-12(31):158-163.

Հավելված 1

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցներ

13 նոյեմբեր	Գոհար Գրիգորյան	ՀՖՀՀ, Ռեստարտ Գյումրի, մարքեթինգ
9 հոգի	Մայիս Ջրաղացպանյան	Ամերիկյան, ակումբի հիմնադիր
	Արման Դրոշակիրյան	ՀՖՀՀ, ՈՒԽ նախագահ ԺՊ, իրավագիտություն
	Գոռ Մուրադյան	ՇՊՀ, նախկին ուսանող, Ռեստարտ Գյումրի
	Մարիամ Հակոբյան	ԵՊՀ
	Սյուզաննա Գրիգորյան	ԵՊՀ
	Ալլա Հարությունյան	ՀՊՏՀ
	Աիդա Գաբրիելյան	ՀՖՀՀ, ՈՒսանողական ձեռնարկության ղեկավար, կառավարում
	Լիանա Խաչատրյան	ԵՊՀ
14 նոյեմբեր	Մուշեղ Կյուրեղյան	ԵՊՀ ժուռնալիստիկա, ՈՒԽ
7 հոգի	Սվետլանա Մկրտչյան	ՀՖՀՀ, ՈՒֆառի գիտական ակումբ, իրավագիտություն
	Տաթև Բալդրյան	ԲՊՀ, ԵՊՀ, ՀՈՒԱԱ
	Այդուարդ Պողոսյան	ԵՊՀ, ժուռնալիստիկա
	Էլեն Դունամալյան	ԵՊՀ Արևելագիտություն
	Աննա Հովհաննիսյան	ՀՖՀՀ, Ուֆառի գիտական ակումբ
	Նարե Կարապետյան	ՀՖՀՀ
18 նոյեմբեր	Էլեն Խաթայան	ՃՇՊԱՀ, ԷՈՒՑ Երևան, դիզայն

11 հոգի	Գոհար Մանուկյան	ԵՊՀ, ՈՒԽ Միջազգային նախագահ
	Տաթև Դունամալյան	ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ
	Հերմինե Ֆանյան	ՀՊՏՀ, Էրազմուս ուսանողական ցանց
	Լուսինե Սիմոնյան	ԳԿՄԿ, ՈՒԽ նախկին նախագահ
	Յանա Ռոմանովա	ՀՖՀՀ շրջանավարտ
	Հասմիկ Գիվարգիզյան	ՀՊՏՀ Եղեգնաձոր
	Տիգրան Աթոյան	ՀՖՀՀ առաջին կուրսի իրավաբանական ուսանող, , Եվրոպական երիտասարդական պառլամենտի կամավոր
	Մոնիկա Գոգչյան	ՎՊՀ
	Անահիտ Բաբկենյան	Ամերիկյան համալսարան, Միավորող կամուրջ ՀԿ
	Էլիզա Քեռշկարյան	ԳԿՄԿ, ավագ
27 հոգի		

Ֆոկուս խմբային քննարկում 13.11.2021

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ողջույնի խոսք, թեմայի ներկայացում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Այսպես մեզ մոտ առաջին հարցը հետևյալն է «**Ի՞նչ է ձեզ համար ուսանողական արտառուսումնական գործունեությունը»:** Մարիամը, կարծես ինչ-որ բան է ուզում ասել, լսում ենք.

Մարիամ-Ես կարծում եմ օրինակ, ուսանողական գիտական ընկերությունը, որը կա համալսարանում, ինքը տարբեր հանդիպումներ է կազմակերպում, կամ տարբեր

միջոցառումներ է կազմակերպում, որոնք բուն ուսումնական գործընթացի հետ կապված չեն, այսինքն՝ էն ամեն ինչը, որ մենք անցնում ենք կոնկրետ ուսումնական տարվա ընթացքում, դրանից դուրս ունենում ենք տարբեր հանդիպումներ, տարբեր միջոցառումներ, որոնք կազմակերպվում են տարբեր ընկերությունների կողմից, օրինակ՝ Ուսանողական խորհուրդ։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Մարիամ ջան, ավելացումներ ունե՞նք Մարիամին։

Արման-Կարո՞ղ եմ ես։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Այո՛, իհարկե։

Արման-Բարև Ձեզ, ես Ֆրանսիական համալսարանից եմ, կարծում եմ, որ այդ արտաուսումնական ակտիվ կյանք ապահովելը նրա համար ա նախատեսված, որ ուսանողները կարողանան դասերին զուգահեռ ունենան նաև ակտիվություն էն պարագայում, երբ դասերը շատ խիտ են լինում, իրանք չեն հասցնում թեկուզ դասերից դուրս ինչ-ինչ միջոցառումների մասնակցել, արդեն համալսարանի ներսում փորձում ենք էնպես անել, որ ուսանողների այդ ակտիվ կյանքը ապահովվի։ Այդ անում ենք արդեն, ինչպես նշվեց, Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված միջոցառումների շրջանակում, հենց նույն ինքը Ուսանողական խորհրդի ներսում, որովհետև ես ներկայացնում եմ Ֆրանսիական համալսարանի Ուսանողական խորհուրդը, ու մենք փորձում ենք տարբեր ծրագրեր մշակել ու իրականացնել, որպեսզի ուսանողները հետարքրքություն ունենան նաև դասերին զուգահեռ ինչ-ինչ գործունեություն իրականացնելու համար, ու փորձում ենք էնպիսի ծրագրեր իրականացնել, որը չի առնչվում այդ ուսանողական դասերին։ Ավելի շատ փորձում ենք դասերին զուգահեռ ինչ-որ բան անել, որ ուսանողները հետաքրքրություն ունենան նաև դասերին զուգահեռ համալսարանի ներսում։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ շնորհակալություն հետաքրքիր դիտարկումների համար, Մայիսը ձեռք է բարձրացրել, խնդրեմ Մայիս։

Մայիս-Բարև Ձեզ, ես Մայիսին եմ Ամերիկյան համալսարանից, արտահամալսարանական activity-ները՝ միջոցառումները, որ կազմակերպվում են, համ էլ նրա համար են, որ համ էլ ուսանողները մի քիչ ցրվեն իրանց deadline-երից, իրանց նույն առաջադրանքներից, քննություններից, առհասարակ, դրա համար էլ ա էլի նախատեսված, որ մարդիկ ոչ միայն առավոտից իրիկուն մենակ դաս անեն, այլ նաև համալսարանի կյանքից դուրս իրար հետ կարողանան շփվեն, մոտիկական, ընկերներ ձեռք բերեն, ինչպես նաև զվարճանան, թեթևանան։ Այ ամենակարևորներից մեկն էլ դա ա՝ թեթևանան*/շեշտադրական տոնով է*

ասում/, ու այդ ամեն ինչի հետ մեկտեղ նաև ուսանողներին ինչ-որ ուղղություն ցույց տան, որոշ չափով գիտելիք տան, էն ոնց են ասում, մի խոսքով, ոնց ասեմ՝ էն տրադիցիոն ձևերից զատ մարդկանց կրթություն ու գիտելիք տան, այդ էլ ա կարևոր: Այսքանը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն կարևոր ավելացումների համար: Գոհարիկ ջան, խնդրեմ, Դուք էլ ձեռք բարձրացրել, ի՞նչ կավելացնենք:

Գոհարիկ-Ողջույն, ես Գոհարն եմ Ֆրանսիական համալսարանից և ներկայացնում եմ ևս երկու կառույց՝ Ռեստարտ Գյումրի նախաձեռնությունների կենտրոնը՝ կրթական կազմակերպություն, և Տեղական ժողովրդավարության դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ եմ: Ուզում եմ ասել, որ իմ կարծիքով պիտի մի քիչ տարանջատենք ֆորմալ և ոչ ֆորմալ արտաուսումնականը: Էս դեպքում ֆորմալ առումով, ինչպես արդեն նշվեց, մենք ունենք Ուսանողական խորհուրդը, ՈԻԳԸ-ն, իսկ ոչ ֆորմալ առումով, ես կարծում եմ, որ դրանք էն բոլոր խմբակներն են, որոնք, որ գոյություն ունեն տարբեր համալսարաններում, օրինակ՝ Ամերիկյանի դեպքում, բացի Ուսանողական խորհրդից շատ-շատ այլ տարբեր ուսանողական կառույցներ կան, Ֆրանսիականը ևս ունի տարբեր խմբակներ, մյուս համալսարանների հետ կապված չեմ կարող ասել արդեն, կնշեն: Ու բացի դա նաև էն ամբողջ զբաղվածությունը հա, որ ազդում է ընդհանրապես ուսման, կրթության վրա, բայց համալսարանից դուրս է, օրինակ՝ կամավորությունը նույնիսկ կարելի է դիտարկել, կամ ինթերշիփերը, վերապատրաստումները և այլն: Այսքանը, շնորհակալություն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ձեզ շնորհակալություն, Գոհարիկ ջան: Գո՛ռ, խնդրեմ:

Գոռ-Ողջույն բոլորին, ես Գոռն եմ Մուրադյան: Ներկա պահին աշխատում եմ Ռեստարտ Գյումրի նախաձեռնությունների կենտրոնում, Educationn UA-ի CCC ծրագրի ուսանող եմ: Վերջերս դուրս եկա Շիրակի պետական համալսարանից, այսինքն՝ ներկա պահին ուսանող չեմ համարվում, բայց այդ ժամանակ էլ խնդիրներ կային այդ ուսանողների համար արտաուսումնական կյանքի կազմակերպման համար ու ես էն կարծիքին եմ, որ բացի Ուսանողական խորհրդից ու բացի էն մնացած խմբակներից, պետք է այդ ամեն ինչը նաև ուսանողի մեջից լինի, այսպես ասած, ու ինքը պետք է հետաքրքրասեր լինի ու ինքը փնտրի հնարավորություններ, թե՛ կամավորությունների, թե՛ ինթերշիփերի, և թե՛ Erasmus+ների տարբերակով, այսինքն ինքն էլ ունենա մոտիվացիա կազմակերպելու իր արտամուսնական գործունեությունը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն, Ալլա՛, խնդրեմ:

Ալլա-Բարև Ձեզ, ես ՀՊՏՀ-ից եմ՝ Տնտեսագիտական համալսարանից: Քանի որ Դուք հարցը շարադրեցիք արտաուսումնական բառի շուրջ, կարող ենք այստեղ հասկանալ ինչպես արտալսարանական, էնպես էլ արտահամալսարական գործունեություն: Արտալսարանական գործունեության պարագայում, այսինքն ինչ-որ մենք գլոբալ բուհի մեջ ենք էլի իրականացնում, կարծում եմ կարող ենք տարանջատել գործունեության երկու տեսակ՝ ժամանց և գիտակրթական որակի բարելավում, որովհետև ՈՒԽ-ի, ՈՒԳԸ-ի պես կառույցների թիվ մեկ նպատակը նաև օրենքով ուսանողների օրինական շահերի պաշտպանությունն ու ներկայացումն է վերին կառավարչական օղակներում, իսկ ուսանողի գերագույն շահը էս պարագայում, բուհի պարագայում որակյալ կրթություն ստանալն է, դրա համար ՈՒԳԸ-ն, ՈՒԽ-ն հանդիսանում են խողովակներ այդ ինֆորմացիայի փոխանակման համար, և, որպես վերջնարդյունք՝ նաև գիտակրթական որակի բարելավման համար, դրա համար, կարծում եմ, արտաուսումնական գործունեությունը հենց ենթադրում ա ուսանողների կողմից ներգրավում տարբեր գիտակրթական ծրագրերի գրման, մշակման մեջ: Երկրորդ կոմպոնենտը, իհարկե, ժամանցն է, որն ապահովում է ակտիվ ուսանողական կյանք, բայց ժամանցը կարող է լինել կրթական, էնպես էլ մշակութային, այսինքն՝ որևէ փոխշղթա չունենա ինչ-որ կրթական activity-ների հետ: Կարա նաև արտահամալսարանական լինի, ինչը ենթադրում է տարբեր հասարակական կազմակերպությունների, միջազգային ծրագրերի և, միգուցե, նաև ինչ-որ կրթական մասնավոր կամ պետական կենտրոնների հետ համագործակցություն: Սա էլ արդեն ուսանողի անձնական նախաձեռնությամբ իրականացվող կամ չիրականացվող պրոցես է, բայց արտալսարանային պարագայում, կարծում եմ, հատկապես այդ գիտակրթական որակի բարելավման պրոցեսներում, ուսանողի ներգրավվածությունը շատ էական է, քանի որ շահառուն ինքն է, և հենց ինքը պետք է ներկայացնի, թե իր համար ինչն է լավ, ինչն է վատ, ինչ է ուզում տեսնել, ինչ չի ուզում տեսնել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն, Ալլա, շատ կարևոր լրացում էր: Աիդային չենք լսել, Աիդա խնդրեմ, ի՞նչ կասեք:

Աիդա-Ողջույն, ես նույնպես Ֆրանսիական համալսարանից եմ, և էլի ներկայացնում եմ Ֆրանսիական համալսարանի ՈՒսխորհուրդը, արտալսարանական գործունեությունը իմ կարծիքով շա՛տ կարևոր բան ա ուսանողի կյանքում, որովհետև, ինչպես նշեցին մեր գործընկերները, դասերից զատ շատ կարևոր է, որ ներգրավվածություն լինի թե՛ հասարակական կյանքում, թե՛ ժամանցի մեջ, որովհետև ես հավասարապես նաև

ուսումնական պրոցեսից զատ կարևորում եմ նաև ժամանցը, որովհետև մեր ուղեղը ընդհանրապես հանգստանալու կարիք ունի, որպեսզի կարողանա պատշաճ աշխատել և ըմբռնել ուսումնական պրոցեսում ստացած գիտելիքները, ու Ալլայի ասածին եմ շատ համաձայն, որ արատաուսումնական գործընթացը ընդհանրապես պետք է տարանջատվի որոշակի բաժինների կամ մասերի, էսպես ասած, օրինակ՝ երբ, որ ասում եմ հասարակական աշխատանք, այդ կարա լինի կամավորություն, կարա լինի ինչ-որ թեկուզ դպրոցներով, օրինակ՝ մեր համալսարանում ծրագիր կա, որ ուսանողները գնում են դպրոցներ (մասնագետների հետ իհարկե) ու ներկայացնում են համալսարանը, փոքր-ինչ մասնագիտական կողմնորոշում են տրամադրում դպրոցի աշակերտներին ու այդ էլ կարող ենք մենք դասել որպես արտաուսումնական գործընթաց, ու ոլորտը շատ լայն է: Հիմնականում, իմ կարծիքով, մի բան եմ ասում, որ դեռ ոչ մեկի կողմից չի նշվել, այդ արտաուսումնական պրոցեսը կարող է լինել կազմակերպված և՛ կազմակերպությունների կողմից, և՛ անհատների կողմից: Կարծեմ Մայիսը նշեց, թե Գոռը, չեմ հիշում, որ ուսանողի մեջից պետք ա այդ լինի, այսինքն՝ եթե ուսանողը ունի նախաձեռնություն, էլի օրինակ մեր համալսարանի օրինակով եմ ասում, օրինակ՝ կան ուսանողներ, ովքեր որոշակի բաներ են կազմակերպում, օրինակ փարթիներ, օրինակ Welcome party, հենց այդ անհատ ուսանողը կազմակերպում ա կարելի ա ասել ինչ-որ արտաուսումնական միջոցառում, այսինքն և՛ կազմակերպությունները, և՛ անհատները կարող են կազմակերպել այդ արտաուսումնական միջոցառումները, այսքանը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-ահա, շնորհակալություն: Արման, խնդրեմ:

Արման-Ի հավելումը բոլորի ասածի, ես բոլորի ասածներին համաձայն եմ, բայց այստեղ, երբ մենք փորձում ենք կազմակերպել ինչ-որ արտաուսումնական կամ արտալսարանական ինչ-որ միջոցառումներ ամենամեծ խնդիրին, որ մենք բախվում ենք, ուսանողների ոչ ներգրավվածությունն ա այդ միջոցառումներին, այսինքն՝ երբ մենք ինչ-որ միջացառում ենք կազմակերպում, դա կլինի գիտական, մակարդակով, դա կլինի ժամանցային մակարդակով, տեսնում ենք միշտ, մեր համալսարանի փորձից կարամ ասեմ, ու նաև երբ որ խոսում եմ տարբեր համալսարաններում ընկերներիս հետ, կամ գործընկերներիս հետ, մենք բախվում ենք էն խնդրին, որ ուսանողների անտարբերությունը կա այդ բոլոր գործընթացներում, այսինքն՝ ուսանողները ներգրավվածություն չեն պահում էն պատշաճ մակարդակով, որ մենք ծրագիրը սկսելուց առաջ նախատեսել էինք, ու մենք հիմա հավաքվել ենք այստեղ, ոնց հասկանում եմ, բոլորն էլ ինչ-որ ուսանողական ակտիվ կյանքի ներկայացուցիչներ են

կցանկանայի լսել նաև կարծիքներ, թե ինչպես կարող ենք անել, որ ուսանողների ներգրավվածությունը մինիմալից չեմ ասում 100%-ի հասցնենք, բայց գոնե 70-80% ներգրավվածություն կարողանանք ապահովել, թե ինչ մեխանիզմներ են օգտագործում նաև մնացյալ համալսարանների ներկայացուցիչները այդ գործընթացը լավագույնս ապահովելու համար:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն Արման կարևոր հարց բարձրացնելու համար, առաջարկում եմ քննարկումը շարունակենք և եթե ձեր հարցերի պատասխանները դուրս չգան, վերջում կանդրադառնանք նաև այդ հարցերին, փորձի փոքրիկ փոխանակում է էս հանդիպումը կարծում եմ նաև Ձեզ համար:

Արման-Շատ լավ:

Ալլա-Իրականում լրիվ համաձայն եմ բարձրաձայնված կարծիքին, ես ինքս փորձել եմ վերհանել և գտնել էն արմատները, որից, որ ինքը աճում է: Հիմնականում երեք հիմնախնդիր կա.

- առաջինը՝ անվստահություն ուսանողական ինքնակառավարման մարմինների նկատմամբ, որը դրսևորվում է ուսանողների կողմից, անվստահություն ՈՒԽ-ի նկատմամբ, անվստահություն ՈՒԳԸ-ի նկատմամբ կամ ընդհանրապես սպառված ՈՒԳԸ-ի հակասություն, ինչպես օրինակ մեր համալսարանի պարագայում է, ցավոք:
- Երկրորդ հիմնախնդիրը, որ վեր ենք հանել, այն է, որ միջոցառումները կազմակերպվում են, բայց նախքան կազմակերպումը չի գնահատվում ուսանողների իրական ցանկությունները, այսինքն՝ նախնական ինչ-որ սոցիալական հարցումների կամ այլ գործիքակազմի միջոցով իրենց հետաքրքրությունները, իրենց կարիքները վեր չեն հանվում, պարզապես կազմակերպվում են միջոցառում՝ կազմակերպելու համար:
- Եվ երրորդ հիմնախնդիրն այն է, որ ուսանողների մեջ չի սերմանում մոտիվացիա, այսինքն ինչ-որ մի գործընթաց ծավալվում է, բայց թե ինչ վերջնանպատակ է հետապնդում տվյալ պրոցեսը մնում է հարցական անգամ շատ մասնակիցների համար, շատ հաճախ, իրենք չգիտեն ինչ ակնկալել այդ պրոցեսից, կամ հայավարի ասած՝ իրանց «քյար»-ը այդ պրոցեսից որն ա: Այ երբ որ կարողանում ենք հստակ բացատրել և նաև մոտիվացնել այդ պրոցեսի մաս դառնալուն՝ ցույց տալով հստակ վերջնարդյունք էն պրոցեսին, որից հետո իրենք օգտվելու են, այդ ժամանակ արդեն ներգրավվածության մակարդակը բավականին աճում է, ընդ որում՝ գիտակցված

ներգրավվածության, ոչ թե մեխանիկական, ինչպես օրինակ շատ հաճախ Ուսանողական խորհրդի կազմակերպած միջոցառումներին լինում է էլի. «ընկերուհիս գնում է, ես էլ եմ միանում, ընկերս ա գնում, ես էլ եմ հետը գնում»: այդպես ավելի լավ ա ընդհանրապես չմասնակցել, քան թե պարզապես ֆիզիկական, գլխաքանակ ապահովել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Դուք էլ կարևոր լրացում արեցիք: Շատ հետաքրքիր է ձեր կարծիքները լսել, Դուք բոլորդ տարբեր խնդիրներ առաջ քաշեցիք, ինչ-որ տեսակներ ներկայացրիք, հիմա ուզում ենք ուղակի հասկանալ բուհում առկա արտաուսումնական գործունեության այլ ինչ տեսակներ գիտեք, բացի ձեր նշվածներից, օրինակ՝ մարզական, մշակութային ակումբներ, և խնդրում եմ նշեք, թե դրանք, որքան ակտիվ են գործում: *Դադար* խնդրեմ Ալլա:

Ալլա-Տեսեք, էլի մեր համալսարանի օրինակով ասեմ, հենց ՀՊՏՀ-ի տարբերակով հա, մենք ունենք Ուսանողական խորհուրդ, որի գործունեությունը միտված է առավելապես ուսանողական ժամանցի կազմակերպմանը: Ամեն սեմեստր մեզ մոտ կազմակերպվում է ուսգարուն, ուսամառ, ուսաշուն, ուսձմեռ, էսպես չորս սեզոններին, սպորտային, սպորտամշակութային խաղեր, ֆակուլտետները իրար մեջ մրցում են, հետո հայտարարվում ա ՀՊՏՀ լավագույն ֆակուլտետը, իրականացվում ա, օրինակ, ՀՊՏՀ լավագույն ուսանող մրցանակաբաշխությունը, որտեղ հաշվի են առնվում ուսանողների ինչ-որ նվաճումները՝ մասնագիտական, կրթական և այլն, և այդպես ընտրվում ա ՀՊՏՀ լավագույն ուսանողը տարբեր անվանակարգերում: Կան նաև սպորտային խմբակներ, բայց դա ավելի շատ բխում է հենց բուհից, բուհի ֆիզկուլտուրայի ամբիոնից, որտեղ հենց կարող է կազմակերպվել, օրինակ, շախմատի խմբակ, սուսերամարտի խմբակ, տարբեր, չգիտեմ, տարբեր խմբակներ, նաև փորձեր են կատարվել մշակութային մասով, ՈՒսխորհրդից դուրս ռեկտորի խորհրդականի նախաձեռնությամբ թատերական խմբակի վարման, վերջերս «Իմ անուշ տղան» ներկայացումն էին բեմադրել մի քանի անգամ ու բավականին լավ դահլիճ էին լցրել, երեխեքին հետաքրքիր էր ու դերասաններն էլ հենց ուսանողներ էին: Նու Ուսանողական գիտական ընկերության մասը բավականին թույլ է մեզ մոտ, Ուսանողական գիտական ընկերությունը չունի կազմակերպաիրավական կարգավիճակ, չի ծավալում մշտական ամենօրյա գործունեություն, պարզապես տարեկան մեկ անգամ կազմակերպվում է Ուսանողական գիտական ընկերության նստաշրջան, որի ընթացում բուհի բոլոր ուսանողները հնարավորություն ունեն ներկայացնելու գիտական հոդված, մրցելու իրար հետ և զբաղեցնելու երեք մրցանակային

տեղեր, բայց, ցավոք սրտի, այդ գործընթացը ՈՒԽ-ն է կարգավորում, համակարգում, ինչը որ շատ աբսուրդային է, որովհետև ՈՒԳԸ և ՈՒԽ դրանք իրարից շատ տարբեր կառույցներ են ու պիտի իրարից անկախ գործեն: Մեզ մոտ, չգիտես ինչի, ՈՒԽ-ն խառնվում է ՈՒԳԸ-ի հարցերին, նախագահ էլ չունի ՈՒԳԸ-ն: Հիմնականում էսպես: Անհատական միջոցառումները մեզ մոտ այդքան էլ հարգի չեն, եթե անկեղծ ասեմ, ավելի շատ էն կարծրատիպն է արմատավորվել, որ եթե ՈՒԽ-ն չի անում, չարժի այդ տեղը գնալը, ուսանողների շրջանում ինչ-որ նմանատիպ մտածողություն է ձևավորվել, հավանաբար հենց կառույցի կողմից տարվող մտածողություն է: Կարող է ինչ-որ բան բաց եմ թողել, հետո հիշեմ կասեմ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Ալլա ջան, Արման, լսում ենք:

Արման-Մեր ուղղվածության մասին, եթե խոսեմ, մեր Ուսանողական խորհուրդը, բացի ժամանցային և այլ գործունեություն իրականացնելուց, նաև ինքը հենց իրա հիմնական նպատակային հարելով, դառնումա օղակ՝ կապելով ուսանողներին ու համալսարանին, այսինքն՝ մենք անում ենք ամեն բան, որ համալսարանի անձնակազմի մոտ, վարչական կազմի մոտ բարձրաձայնենք էն խնդիրները, որին որ ուսանողները բախվում են ուսումնառության գործընթացում: Միշտ փորձում ենք այդ հարցերին պատշաճ ու արդյունավետ լուծումներ տալ, ու համագործակցում ենք համալսարանում ուսումնական գծով տնօրենի հետ ու փորձում ենք իր հետ բարելավել ուսումնառության որակը: Եթե մենք խոսում ենք, որ ուսանողները ինչ-ինչ չափով կարող են անվստահություն ունենալ ինքնակառավարման մարմիններին, որոնցից մեկն էլ Ուսանողական խորհուրդն ա, ու չվստահեն և այլն, և այլն, մենք ունենք փորձ, երբ ուսանողի «քյարի» (Ալլան լավ բառ նշեց այստեղ) համարա լինում, ուսանողները բարձր ակտիվությամբ մասնակցում են այդ ամեն ինչին: Երբ որ անցած տարի մենք խնդիր ունեինք քննությունների օֆլայն ու օնլայն կազմակերպման հետ, ու համալսարանի դիրքորոշումը միանշանակ օֆլայն տարբերակով էր, մենք կազմակերպեցինք հարցում, որին մասնակցեց 1300 ուսանող,որը չլսված նախադեպ էր մեր համալսարանում, որովհետև ցանկացած ինչ-որ հարցում, որ մենք կազմակերպում ենք, դա կլինի դասընթացի գնահատում կամ այլ, երբ որ որակի ապահովման բաժինը ուսումնական մասի հետ փորձում ա հասկանալ առկա խնդիրը, թե՛ դասախոսական անձնակազմի հետ, թե՛ վարչական անձնակազմի հետ, ու մենք ունենք այդ գնահատման գործընթացը, մենք տեսնում ենք, որ ուսանողների նվազ մակարդակ ունենք, որ մասնակցում են այդ հարցմանը, բայց՝ ինչ-ինչ, էն որ ասումա՝ պատի հետևում կանգնած միշտ բողոքում են տարբեր խնդիրներից, բայց երբ գալիսա բարձրաձայնման պահը (մենք թեկուզ

հարցումն անցկացնում ենք անանուն, որ ոչ մի ուսանող չմտածի, որ իրա անունը տեսան, դասախոսը կիմանա և այլն, դրանից բխող ինչ-որ խնդիրներ), բայց հետո որ մենք խոսում ենք անվստահությունից, ուսանողները երբ որ գիտեն իրանց պետքա՝ միշտ Ուսանողական խորհրդի կողքին են, բայց երբ որ պետք չի՝ նրանք Ուսանողական խորհրդի կողքին չեն։ Ուսանողի կարծիքի հետ կապված. երբ որ մենք ինչ-որ միջոցառում ենք իրականացնում, դրա նախորդ ամսվա ընթացքում, որ մենք ծրագրում ունենք այդ ծրագրի կազմակերպումը, մենք տեսնում ենք ի՞նչ, որ անընդհատ մենք ուսանողների հետ քննարկումներ ենք ունենում, փորձում ենք հասկանալ սենց բան անենք՝ կցանկանա՞ս մասնակցես, սենց բան կազմակերպենք՝ կմասնակցե՞ս։ Այսինքն՝ մենք սկզբնական ունենում ենք, որ մեզ թև են տալիս, որ «հա, կլինի, կլինի», բայց երբ հերթը գալիս ա, որ մենք պիտի կազմակերպենք այդ, արդեն մասնակցություն չկա, ուսանողները չկան, արդեն էս մեկին հարմար չի, էս մեկին հարմար չի և այլն, և այլն։ Իսկ Ուսանողական խորհուրդը իրա ներսում ունի հանձնաժողովներ ու ամեն մեկը իրա ներսում փորձում են կազմակերպել իրանց մասի ծրագրերը, ու արդեն ունենք խմբակներ, ունենք, օրինակ, մաֆ քլաբ, որ ուսանողները, թեկուզ լիցքաթափվելու և մնացյալի համար, իրանք այդ խաղն էլ սիրում են, կազմակերպում ենք, և ինչ-որ մուվի նայթ ենք կազմակերպում, ու այդ ամեն ինչը անում ենք, որ ուսանողները ցրվեն, դասերից անկախանան, հա մենք էլի կազմակերպում ենք մասնագիտական ու ոչ մասնագիտական ինչ-որ ինտելեկտուալ մրցույթներ և այլն, բայց այդ դեպքում ընդհանրապես մենք կարանք մի ամիս կազմակերպենք, հարցերով ամեն ինչով, թեկուզ որոշել ենք կազմակերպենք «Ի՞նչ-Ո՞րտեղ-Ե՞րբ» խաղը, բայց գրանցման ցուցանիշը գալիսա 3-4 հոգի 1300 ուսանողի կտրվածքով։ Ու ամենամեծ խնդիրը այդ ա։ Մեր համալսարանը Ուսանողական գիտական ընկերություն չունի, այդ, ունի բայց ինքը համալսարանը էսպես ասեմ, թույլատրություն չի տալիս, որ ուսանողը իրականացնի այդ գործունեությունը, դրա համար, երբ, որ խոսքը գնում ա ինչ-ինչ գործունեության մասին, Ուսանողական խորհուրդն ա արդեն զբաղվում Ուսանողական գիտական ընկերության գործերով, բայց ամեն դեպքում ինչ-ինչ ծրագրեր կազմակերպելիս, ինչ-ինչ քննարկումներ կազմակերպելիս, առաջնային մենք հաշվի ենք նստում ուսանողների հետ, որպեսզի հասկանանք, թե իրանց հաճելի կլինի ինչ-որ սենց բան կազմակերպելը, թե՝ ոչ, հետո նոր արդեն փորձում ենք այդ թույլատվությունը ստանալ համալսարանի հետ, որովհետև մեր մոտ մի քիչ բարդ գործընթաց ա, պետք ա էս բաժինը թույլ տա, էն բաժինը թույլ տա և այլն։ Կամ երբ մենք տեսնում ենք, որ այդ բաժինները արդեն ունեն կազմակերպված, արդեն

ուսումնական գծով տնօրենը կցում ա մեզ այդ բաժնին, մենք ամեն մեկս փորձում ա այդ մասով ինչ-որ մասնակցություն ունենալ: Ամեն դեպքում ես կարծում եմ, որ երբ այդ կառույցը ուսանողին պետք ա, ուսանողը միշտ մոտիվացիա էլ ունի, ուսանողը միշտ համակարծիք ա համալսարանի Ուսանողական խորհրդի հետ, ու միշտ ինքը ակտիվ մասնակցում ա, երբ ինքը դրան հասնելու ցանկություն ունի, բայց երբ մենք կազմակերպում ենք զուտ արտալսարանական ինչ-որ գործունեություն, տեսնում ենք, որ ունենք նվազ մասնակցության մակարդակ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ Արման, եկեք լսենք Մայիսին, վաղուց ձեռք է բարձրացրել:

Մայիս-Ուրեմն մեր համալսարանում միջոցառումները կազմակերպվում են երկու կառույցների կողմից, մեկը, որ համալսարանի հենց բուն ղեկավարությունն ա, այսինքն՝ ամեն բաժին առանձին նույնպես կազմակերպում ա, ու Ուսանողական խորհուրդը: Ու մեկ էլ լրիվ առանձին ուսանողները իրենք կազմակերպում են փարթիներ, խնջույքներ, այդ լրիվ առանձին ա: Հիմնականում, ուսանողները մասնակցում են Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող միջինացումներին, որովհետև ասենք, որ ֆակուլտետները կազմակերպում են, ավելի գիտական են, ուսանողներն էլ այդքան հետաքրքրված չեն այդ միջոցառումներով, չգիտեմ: Վերջերս ֆիլմի դիտում էր՝ փաստագրական, ռեժիսորն էլ եկել էր, բայց համարյա մարդ չէր եկել, իսկ հետո կազմակերպեցին ինչ-որ ուրիշ միջոցառում՝ անիմե կլուբ, միանգամից բոլոր ուսանողները «իրար գլխի տալով», խառը միանգամից բոլորը գալիս էին մասնակցելու, այսինքն՝ ուսանողները ավելի շատ ներգրավված չեն էն միջոցառումներում, որի հիմքում ընկած են ուսանողներին ավելի շատ կրթելը, ինչ-որ բան բացատրելը: Մեր խնդիրը պետք ա ավելի շատ էն լինի, որ ուսանողներին բացատրենք, որ արտաուսումնական միջոցառումներին մասնակցելը միայն այդ հավեսը չի ու գիտելիք էլ ա պետք ստանալ, կրթություն էլ, որոշ չափով կողքից ինֆորմացիա ստանալ, և միայն հավեսի համար չենք կազմակերպում այդ միջոցառումները:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-իսկ եթե խոսենք այդ տեսակների մասին՝ արտաուսումնական գործունեության, Դու ի՞նչ տեսակներ կառանձնացնեք:

Մայիս-Ակումբներ, համալսարանում կա ուսանողական միություն, որտեղ կան տարբեր ակումբներ՝ 20-ից ավելի ակումբ և այդ ակումբները բացվում են ուսանողների կողմից, ղեկավարվում և վարվում: Կան այդպիսի ակումբներ, բայց առանձին մշակութային, առանձին ֆիզկուլտուրա չկա, կա թենիսի ակումբ, ռուբիկ կուբիկի ակումբ, ամեն մարդ կարա իրա

ակումբը բացի: Ակտիվությունը կախված է ակումբից: Էս պահին ակումբներն այդքան ակտիվ չեն, որովհետև հիմա միջանկյալների շրջան է սկսվել, բայց երբ որ կարևոր միջոցառում է լինում բոլոր ակումբները միանգամից սենց հավաքվում են բոլորով համախմբված, փարթիներ, խնջույքներ, որ կազմակերպվում են, ուսանողները միանգամից գնում են, լցվում են այդ խնջույքներին, բայց հենց որ հետաքրքրիր, ինֆորմացիոն մի հատ բան ա լինում՝ չկա ուսանող, օրինակ մտնում ես ինչ-որ մի դասընթաց՝ չկա ուսանող: Դասընթացներն էլ նրա մասին են, որ օրինակ ինչպես CV կազմել, ինչպես ճիշտ ռեզյումե կազմել, մեր խնդիրը էն ա, որ այդ կարևոր ինֆորմացիա տվող դասընթացներին ուսանողները չեն մասնակցում, հետաքրքրություն չեն ցուցաբերում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն, եկեք լսենք նաև Գոհարիկին:

Գոհարիկ-Արմանը՝ ֆրանսիականից, արդեն նշեց մեր հիմնական գործունեությունը ինչ-որ հիմնականում իրականացվում ա, բայց ես ուզում եմ այլ բանի անդրադառնալ. ՀՀ-ում գոյություն չունի համահայկական, համահայաստանյան ինչ-որ մեծ իվենթներ, այսինքն՝ ես Գյումրից եմ ու Շիրակի մարզի բոլոր կրթական հաստատությունները, օրինակ՝ Շիրակի պետական համալսարանը, Ժողի մասնաճյուղը, պոլիտեխնիկի մասնաճյուղը, իրենք արդեն ունեն նման ստեղծված հարթակ, որ բոլոր ուսանողական խորհուրդները միասին են ու իրականացնում են արտաուսումնական միջոցառումների կազմակերպում: Դա նոր է ստեղծվել և բնականաբար այդպես ակտիվ չէ, բայց չկա հիմա նման պիլոտային ծրագիր, բայց շատ լավ կլիներ, որ համահայկական, համամարզային ուսանողական միությունները իրար հետ համագործակցեին ու ինչ-որ մեծ մասշտաբի ծրագրեր իրականացնեին, որովհետև այդ փորձի փոխանակումը, օրինակ՝ տարբեր մարզերում տարբեր ձև է դասավանդում ու շատ հետաքրքիր կլիներ լսել, օրինակ, այդ մասին այլ համայնքում, մարզում սովորող ուսանողից, այսինքն՝ մենք ունենք այդ ամեն ինչի պակասը, որը կարծում եմ շատ կարևոր է, ուղղակի այդ հանգամանքը կցանկանայի նշել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լսենք նաև Սյուզաննային.

Սյուզաննա-Ես մի փոքր ուշացումով միացա, Ես Սյուզին եմ ԵՊՀ-ի միջազգային հարաբերություններ ֆակուլտետից և ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահն եմ: Լսում էի, թե ինչ էին խոսում ու գրեթե բոլոր խնդիրներին բախվել եմ: Նախ՝ անվստահության մասով ասեմ, որ շատ-շատ մեծ անվստահություն է ուսանողների կողմից, օրինակ, Ուսանողական խորհրդի մասով խոսեմ, բայց ամեն դեպքում անվստահություն կա և

մոտիվացիայի պակաս, ընդ որում՝ ես դա կապել եմ նաև օնլայն/օֆլայն կրթության հետ, որովհետև երբ որ փոխվեցինք օնլայնի, երեխեքի մեծամասնությունը, հատկապես առաջին կուրսեցիները, փորձում էր արտահամալսարանական կրթության ձգտեր, ու ոնց որ թե ավելի շատ ներգրավվածություն կար, քան հիմա, բայց, երևի, մոտ 3-4 տարի է Ուսանողական խորհրդում եմ, պաշտոնապես կես տարի եմ Ուսանողական խորհրդի նախագահ, բայց տարեցտարի նկատվում է երեխեքի հետաքրքրվածության նվազում: Կոնկրետ մեր համալսարանում մենք ունենք բանավեճի ակումբ, որը մեծ մասշտաբների հասավ անցած տարվա ընթացքում ու երեխեքի հետաքրքրվածությունը, ու այդ մասով էլ էի ուզում նշել, որ մեր ֆակուլտետի ուսանողները ավելի շատ մասնագիտական ոլորտում են մեծ ցուցանիշներ ու մեծ հետաքրքրվածություն ցուցաբերում, քան օրինակ ժամանցային մասով, չգիտեմ ինչով ա դա պայմանավորված, երևի ֆակուլտետով: Ունենք բանավեճի ակումբ, ունենք մարտական պատրաստվածության ակումբ, որը նույնպես, ճիշտ ա վերջին շրջանում ակտիվությունը նվազել ա, բայց ինքն էլ ա մեծ գործունեություն իրականացնում, ունենք նաև գրական ակումբ, չգիտեմ այդ ուղղությամբ մեծ գործունեություն է ծավալվում, բայց ուսանողների հետաքրքրվածության ու ոնց, որ մոտիվացիայի պակասը, թեկուզ էս ակումբներին մասնակիությունը, շատ քիչ ա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ալլա, Ձեզ ենք լսում:

Ալլա-Ես ուզում եմ ավելացնել, որ նաև համալսարանում նախաձեռնություններ էին ձևավորվել, որ օրինակ հեղափոխությունից հետո «Ռեստարտ» նախաձեռնությունը ի հայտ եկավ հենց ՀՊՏՀ-ում (ԵՊՀ-ի «Ռեստարտ»-ի հետ չխառնեք), իրենք փորձում էին ուսանողի շահերը ներկայացնել, կարելի է ասել ուսանողական ընդդիմություն էին, այսինքն՝ իրենք վեր էին հանում ուսանողների խնդիրները, բարձրաձայնում էին ու փորձում էին ինչ-որ ձևաչափով դրանց լուծում տալ, հետագայում նաև փոխելու ենք: Հետագայում ի հայտ եկավ նաև «Ռեֆորմ» նախագիծը, որը միտված է էլի այդ բոլոր խնդիրների չեզոքացմանը, որոնց պատճառով կոնկրետ մեր համալսարանում Ուսանողական խորհրդի նկատմամբ կա որոշակի անվստահություն ու այդ անվստահությունը նույնիսկ կարելի ա արտահայտել փուլերով: Մեր համալսարանում մոտ 7000 ուսանող ա սովորում, որից մաքսիմում 600-ն են Ուսանողական խորհրդի հետ սերտ համագործակցության մեջ, երևի թե ևս 600-ը ունեն ինչ-որ միջին համագործակցություն ՈՒսխորհրդի հետ, իսկ մնացած ուսանողների մի մասը կա՛մ լիովին չեզոք են, այսինքն՝ ոչ մի բանի ոչ մի կերպ չեն խառնվում, կա՛մ ունեն խիստ բացասական

կարծիք տվյալ կառույցի նկատմամբ ու համապատասխանաբար դուրս են մնում ՈՒԽ-ի կողմից կազմակերպվող բոլոր արտաուսումնական գործընթացներից: Ես սկզբից նշեցի, որ մեր համալսարանում այդքան հարգի չի այլ կառույցների կամ անհատների կողմից կազմակերպվող միջոցառումները, հիմնականում եթե ՈՒԽ-ն ա անում ուրեմն լավ ա. եթե ՈՒԽ-ն չի անում, ուրեմն վատ ա: Հենց նման վերաբերմունքի պատճառով ու նաև ուսանողների մի ստվար զանգվածի անվստահության, նրանց մի մասը դուրս ա մնում, պատկերացրեք՝ 4000 ուսանող:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լսենք նաև մեր մյուս ընկերներին, Աիդա խնդրեմ:

Աիդա-Ես խնդիրներից բնականաբար էլ չեմ խոսում, Արմանը գրեթե բոլոր կառույցները նշեց, որ մեզ մոտ արտաուսումնական գործունեություն են ծավալում: ինչպես նախորդ խոսքումս նշեցի, մեզ մոտ արտաուսումնական գործունեություն ծավալում են նաև անտառները, ինչպես՝ Ամերիկյան համալսարանում: Ունեմ միայն երկու ավելացում. համալսարանում գործում է կամավորների ակումբ, ճիշտ է՝ կամավորների ակումբը դեռ, մինչև այս պահը, փորձ ունի մասնակցելու միայն համալսարանի միջոցառումներին՝ կամավորներ ապահովելով ու այդ գործընթացը կազմակերպելով, բայց, ամեն դեպքում, ունենք այդ ակումբը ու շատ ակտիվ է գործում: Եվ ունենք մի կառույց, որ մեր համալսարանի անունով համարվում է համալսարանի դուստր ընկերություն և հայերեն թարգմանաբար նշանակում է ուսանողական ձեռնարկություն, որը հիմնադրվել է հենց մեր համալսարանն արդեն ավարտած շրջանավարտների կողմից (այս պահին ես դրա տնօրենն եմ), ու այդ կառույցը ևս զբաղվում է արտահամալսարանական գործունեությամբ ու ապահովում է ուսանողների համար թափուր աշխատատեղեր ու նրանց համար շանս, որ կարողանան և՛ աշխատել (որովհետև հենց համալսարանի ներսում է կառույցը գործում), և՛ իրենց դասերը համատեղել, այսինքն սովորելու ընթացքում ունենում են նաև աշխատանք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Աիդա, Գոռ Ձեզ չլսեցինք, խնդրեմ եթե ինչ-որ ավելացում ունեք:

Գոռ-Ինչ-որ ավելացում չկա, համամիտ եմ ասված կարծիքների հետ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ- Մարիամ Դուք ի՞նչ կնշեք:

Մարիամ-Կարծում եմ, ես ավելացնելու բան չունեմ, որովհետև մյուսներն իրենց փորձով ավելի լավ կարողացան ներկայացնել էն ամեն ինչը, ինչ գոյություն ուներ կրթական համակարգում ու ընդհանրապես արտաուսումնական գործընթացում կարելի էր կազմակերպել, դրա համար նրանց նաև շնորհակալ եմ, որովհետև ես էլ հսկայական տեղեկատվություն ստացա նրանցից:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, եկեք հիմա ավելի կոնկրետ խոսենք խնդիրներից, ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում ի՞նչ կարևոր խնդիրներ և բացեր կնշեք: Աիդա, լսենք Ձեզ:

Աիդա-տեսեք, իրականում, արդեն, քանի որ ես ու Արմանը լրիվ նույն գործունեության մեջ ենք, գործընկերներ ենք համարվում բոլոր նշված կառույցներում, ինքը արդեն նախորդիվ նշեց բոլոր խնդիրները և բացերը: Հիմնական խնդիրը մեզ մոտ ուսանողների ներգրավվածությունն է, որովհետև ինչքան ուզում ա հետաքրքրիր լինի, թեկուզ օրինակ բերեմ, որ ասեցին Ամերիկյան համալսարանում, եթե ինչ-որ ժամանցային բան ա լինում, ուսանողները մասնակցում են, եթե ոչ ժամանցային՝ չեն մասնակցում, մեզ մոտ խնդիր կա երկուսում էլ ու մենք թեկուզ, եթե ժամանցային բան ենք կազմակերպում, որ ուսանողները գան լիցքաթափվեն ու հաճույք ստանան, էլի ուսանողները շատ քիչ են մասնակցում: Ես չգիտեմ, ընդհանրապես չեմ կարողանում հասկանալ, թե ինչի հետ ա կապված, որովհետև օրինակ նշեցին այդ օնլայն և օֆլայն կրթության հետ ա կապված միգուցե, միգուցե անվստահության հետ ա կապված, բայց մեր պարագայում ես չեմ կարող ասել, որ այդ օնլայն-օֆլայն կրթություն ա, որովհետև մենք քիչ ներգրավվածություն ունենք և՛ օֆլայն, և՛ օնլայն կորության ժամանակ: Այսինքն այդ հաստատ խոչընդոտ չի, որ միջոցառումներին մասնակից չունենանք ու նաև այդ վստահության պահով ասեմ, որ եթե չլիներ թեկուզ Ուսխորհրդի կամ այլ կառույցների հանդեպ վստահությունը, երբ որ բոլորին պետք էր, որ քննությունները լինեին օնլայն, իրանք էլի մեզ չէին վստահի, ու չէին միանա մեր շարժմանը, այսինքն՝ երևի հենց ուսանողների մեջ ա խնդիրը: Հիմնական խնդիրը էնա որ մենք չենք կարողանում վերհանել այդ ազդակը, թե ինչն ա պատճառը որ ուսանողները չեն մասնակցում միջոցառումներին կոնկրետ մեր համալսարանում, որովհետև ինչպես նշեցի ուսանողական ձեռնարկությունը, չեմ կարող ասել, այս պահի դրությամբ չունեմ ինֆորմացիա, թե արդյոք կա այլ համալսարան, որ ունի այդպսիսի կառույց, որ հենց համալսարանի ներսում է գործում, որի տնօրենը հանդիսանում ա համալսարանի ուսանող և աշխատողները բացառապես պետք է լինեն համալսարանի ուսանողներ ու շատ լավ շանս ա այդ տալիս ուսանողներին, որովհետև մենք գործունեություն ենք ծավալում և՛ մասնագիտական ոլորտում, և՛ ծրագրերի ղեկավարման ոլորտներում, և՛ ոչ մասնագիտական, օրինակ՝ ուղղակի ադմինիստրատիվ աշխատանքներ կատարելու ոլորտում, բայց էլի ուսանողների ներգրավվածությունը շատ քիչ ա, այսինքն ես միշտ ունեցել եմ տպավորություն, որ ուսանողը պիտի ոգևորված լինի, որ իր ստացած գիտելիքը կարողանա հենց միանգամից կիրառել փորձի

մեջ, որովհետև մենք հիմնականում բոլոր համալսարաններում ստանում ենք լեկցիաների տեսությունը, ու չենք կիրառում գիտելիքը, ու այդ շատ լավ շանս ա, բայց էլի մենք չունենք մասնակցություն, անգամ աշխատատեղերի համար, մենք շատ դժվար ենք գտնում աշխատողներ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Արման եկեք լսենք Ձեզ:

Արման-Կխոսեմ մի փոքր հստակ կարևորի մասին: Նայե՛ք, նախկինում ունեինք մենք խնդիր հենց ուսանողների հետ կապված, որ համալսարանը չէր տալիս էն համապատասխան, ու էն չափի ուշադրություն ուսանողներին, որը անհրաժեշտ էր արտաուսմնական գործընթացը կազմակերպելու համար: Մենք մեր գործունեության ընթացքում արեցինք մեզնից բխող ամենաանհնարին բաները, որ հիմա էսօր համալսարանը մի քիչ տենց «մեզ հետ հաշվի ա նստում» ինչ-ինչ հարցերում: Էս պահով կարող եմ ասել, որ այդ հարցը լուծեցինք, բայց ինչը որ վերաբերում ա ուսանողներին՝ ինչի իրանք ներգրավված չեն, այդ հարցին մենք անկեղծ ասած ոչ մի պատասխան չենք կարողանում մինչև օրս գտնել, որովհետև անընդհատ մենք մտածում ենք՝ կարողա ինչ-որ խնդիր մեր մեջ ա, բայց չէ, որովհետև ինչ էլ կազմակերպենք, ինչ էլ անենք, մեկ ա ուսանողները ներգրավված չեն լինում: Բայց ասեմ նաև, որ մեր Ուսանողական խորհուրդը մեր ուսանողների համար համալսարանում կատարում ա դասղեկի գործողություն, որը դասղեկը դպրոցում անում էր աշակերտների համար: Այսինքն՝ ուսանողը ինչ խնդիր ունի, ինչ խնդիր չունի, այդ ամեն ինչով մենք ենք ներգրավված այդ ուսանողների հետ կապված հարցերի մեջ: Բայց ես չեմ հասկանում, մի բան էլ արագ ասեմ, մենք սեպտեմբեր ամսին կազմակերպել էինք ադապտացիայի ծրագիր առաջին կուրսի ուսանողների համար, մենք հստակ դասացուցակով նախատեսված դասաժամերով մտանք լսարաններ՝ սկսեցինք ուսանողների հետ դասեր վարել թե ինչպես ճիշտ կողմնորոշվեն համալսարանական գործունեության մեջ, դասերի սովորման, քննական պրոցեսում և այլն, և այլն: Մենք այդ ժամանակ էլ, եթե չշեշտադրեինք, որ այդ հանդիպումներ լինելու են բացառապես ներկա-բացակա անելով ու հանդիպումների արդյունքները տրամադրվելու են համալսարանին, մենք ուսանողների կողմից էլի ակտիվ մասնակցություն չէինք ունենա, քանի որ էն ուսանողները, ովքեր չմասնակցեցին այդ դասերին, էսօր էլի նույն հարցերով, որը մենք անվերջ կրկնել ենք 5 ֆակուլտետից 700 ուսանողի համար, իրանք էս պահին էլի նույն հարցերով մոտենում են էլի, այդ ա առաջնային ու միակ խնդիրը, որ մենք, մեր համալսարանը ունի:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ Արման, Գոհարիկին լսենք:

Գոհարիկ-Շնորհակալություն, ուզում եմ ասել, որ խնդիրներից մեկը շատերը նշեցին վստահության պակասն է Ուսխորհրդի հանդեպ, ուզում եմ նշել, որ, երևի, Ֆրանսիական համալսարանը պիտի տարբերվի, որովհետև ես կոնկրետ ՈՒսխորհրդից չեմ, ուսանող եմ որպես խոսում, կամ էնպես չի որ շատ ակտիվ եմ, որովհետև ես էլ արդեն իսկ ունեմ իմ զբաղվածությունը, բայց Ուսանողական խորհրդի հանդեպ ունեմ չափից դուրս բարձր վստահություն, ու դա նաև կապված է օրինակ կոնկրետ մեր ֆակուլտետի Ուսանողական խորհրդի ներկայացուցչից, այսինքն՝ պատահական մարդիկ այնտեղ չեն հանդիպում, ամեն ինչ տեղի է ունենում արդար ընտրությունների միջոցով, մենք ընտրում ենք մեր ներկայացուցչին ու դա շատ կարևոր է: Ինչ վերաբերում է ինքնավարության հարցին, պիտի նշեմ, որ շատ համալսարաններ, այդ թվում՝ մարզային համալսարանները ունեն քաղաքականացված վիճակ, այսինքն՝ դա խնդիր է Ուսանողական խորհրդի համար: Երբ որ ի սկզբանե համալսարաններում Ուսանողական խորհուրդները ստեղծվել են, որպեսզի ծառայեն իշխանության շահերին, ու այդ սխեման մինչև հիմա աշխատում է, այսինքն՝ եթե իշխանությունը փոխվում է, նախկին ստեղծման պատճառները դուրս են գալիս ու մարզային համալսարաններում շատ մեծ է այդ ազդեցությունը, որովհետև Ուսանողական խորհուրդը դիտարկվում է որպես օրինակ չգիտեմ ընտրություններին ավտոբուսներով ուսանողներին ընտրության վայր տանող ինչ-որ օղակ, ու էս վերջերս շատ դժվար է փոփոխությունները էնպիսի մասշտաբով մտցնել, որ կարողանան քո հանդեպ վստահություն բերեն, այսինքն՝ մենք ունենք քաղաքականացված լինելու փոքր-ինչ խնդիր, չնայած էս դեպքում էլի պիտի անդրադառնամ Շիրակի մարզին և ասեմ, որ էս պահին նման խնդիր չունենք: Ինքնավարության հետ կապված այդ էր, իսկ ուսանողների անտարբերությունը ասեմ ինչի հետ է կապված, եթե վերցնենք էն, որ Երևանում, օրինակ՝ մարզերից բոլորս ներքին միգրացիայով գալիս ենք Երևան ու փորձում ենք այստեղ գտնել մեր հետաքրքրությունները, արդեն հիմնականում ուսանողների մեծ մասը ունի բավականին մեծ զբաղվածություն, չգիտեմ օրինակ համալսարանում գրեթե հիմնական մասը ուսանողների մարզից են , այսինքն՝ բնիկ երևանցիներ մենք շատ քիչ ունենք, ովքեր որ սովորում են համալսարանում, ինչ-որ ժամանակաշրջանում եկել են) ու իրենք արդեն իսկ ունեն խնդիր աշխատելու, որ վճարեն տան վարձը և այլն, և այլն, կամ ունեն այլ զբաղվածություն և ինչ-որ առումով էլ ժամանակ չի մնում մասնակցելու, իսկ մարզայինի դեպքում, երբ օրինակ իմ դասարանցիները, կամ շատ շատերը, հիմնական զանգվածը, որ ընդունվում են իրենց համայնքում ինչ-որ բուհում ու գիտեն որ

կրթությունը այնտեղ լավ չէ, արդեն իսկ հիասթափված են ու մտածում են զուտ՝ «գնամ գամ դիպլոմը ստանամ, հասկանամ ինչ եմ անելու հետո»: Այսինքն՝ իրենց համար «մնալ համայնքում, սովորել մարզային բուհում» նշանակում է վերջ բոլոր տեսակի զվարճանքներին, հաճույքներին, չգիտեմ ուսանողական կյանքին, ու սա իմ խաչն, որ ես պիտի կրեմ ու չկա ոչ մի հետաքրքիր բան: Արդեն էլ չեն էլ հետաքրքրվում, կարող ա ինչ-որ հետաքրքիր բան կա, թե չկա, կամ շատ քիչ տոկոսն է: Դա խնդիր է ու դա լուծելու համար համակարգային փոփոխություններ են պետք, այսինքն ենթակառուցվածքները պիտի աշխատեն էս դեպքում ԿԳՄՄՆ-ն, որը պիտի ռեֆորմներ անի ու ոչ ֆորմալ կրթությունը ֆորմալ կրթության հետ մեկտեղ կարողանա արդյունավետ ձևով իրականացնի ու դրվի օրինակ պահանջ, որ յուրաքանչյուր ուսանող պարտավոր է իր սովորելու ընթացքում ինչքան ժամանակ օրինակ՝ ծախսել էս ինչ բանի վրա, ավելի պրոֆեսիոնալ չեմ կարող ասել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, առաջարկներին դեռ կանդրադառնանք, եկեք լսենք Գոռին:

Գոռ-Ես կխոսեմ իմ օրինակով, երբ ընդունվել էի Շիրակի պետական համալսարան ըստ նոր Ուսանողական խորհրդի կանոնադրության ես կարող էի ընդգրկվել այդ կազմում առանց մոգի: Կանոնադրությունը այդպես էր, այնտեղ հենց առաջին կուրսի երկու ամիսը ես եղել եմ Ուսանողական խորհրդի անդամ, ու հենց կարող եմ նշել, որ Ուսանողական խորհրդի անդամ ու կարող եմ նշել, որ անվստահությունը առաջանում էր նաև հենց դասախոսական կազմից, այսինքն՝ նաև էն դասախոսները, ովքեր որ ավտարիտետ էին համալսարանում (մի քիչ կոպիտ է հնչում), իրենք ասում էին՝ «ի՞նչ գործ ունեք Ուսանողական խորհրդի հետ», կամ այդպես բաներ էին իրենց ուսանողների շրջանում սերմանում, որը իմ կողմից էլի անընդունելի է: Երևի, այսքանը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն Գոռ, Ալլա լսենք Ձեզ:

Ալլա-Տեսեք, ես ՀՊՏՀ-ի օրինակով կխոսեմ, նու ես նախկին ՀՊՏՀ ՈՒսխորհրդի անդամ եմ, իրականում մեր բուհում մի քիչ ցավալի իրավիճակ է էս վերջին տարիների ընթացքում (շատ չեմ ուզում ներքին խոհանոցի մեջ խորանալ) կոնկրետ կառույցը եռակի, քառակի ստանդարտներ է դրսևորել ուսանողների նկատմամբ. մի կողմից փաստում են, որ մեր կողքին են, մեր շահն են պաշտպանում, մյուս կողմից էլ, օրինակ, ճնշում են ուսանողներին, ճնշում են ուսանողների ձայնն ու կարծիքը էն հարցերի շրջանակներում, որոնք որ ձեռք չեն տալիս բուհի ղեկավարությանը, կամ անձամբ կառույցին և կառույցի նախագահության անդամներին: Մենք հենց էս պահին նման խնդրի ենք առնչվել, նույնիսկ հիմա կա ուսանողների ձայնի ճնշում,

ուսանողների պահանջի վրա ինչ-որ էսպես հոգեբանական բռնության ենթարկման դեպքեր, որոնք, որ նույնիսկ փաստերով ապացուցելի են: Բացի դա ուսանողների համար նույնիսկ ամենաօրհասական պահերին մեր Ուսանողական խորհուրդը կանգնել ա ղեկավարության կողքին, նույնիսկ երբ ղեկավարությունը սխալ ա եղել, ու շատ սխալ մոտեցում ա դրսևորել: Նույնիսկ հստակ օրինակով ասեմ, ուսանողության 70%-ը կանգնում ասում ա, որ «մենք ուզում ենք դաս լինի», բայց բուհում գործադուլ ա, Ուսանողական խորհուրդը սկզբում կանգնում ա ղեկավարության կողքին, հետո երբ որ ղեկավարությունը կարծիքը փոխում ա, անմիջապես հայտարարում ա, որ՝ «չէ մենք կողմ ենք, որ դաս լինի»: Ինչ-որ նմանատիպ երկակի, եռակի ստանդարտների խնդիր կա, որից բխում ա ուսանողների կողմից այդ անվստահությունը: Չէ, էլի հարցեր եղել են, երբ որ օրինակ իրանք ասել են՝ քննությունների կրճատումն են բարձրացրել, հիմա օրինակ մենք ենք միակ բուհը Հայաստանում, որ օֆլայնա, բարձրացրել ենք որ օնլայն դառնանք, բայց դա էսպես ինչ-որ պատեհապաշտական մոտեցում ա, երբ որ արդեն ուսանողների բողոքը պայթյունավտանգ ա, արդեն իրենք (ով գիտի՝ նաև ղեկավարության հետ համաձայնությամբ) ինչ-որ նման քայլ են անում, որ այդ բողոքը զսպեն, բայց շատ եռակի քառակի ստանդարտներով են աշխատում: Մեր բուհում էլ է Ուսխորհուրդը քաղաքականացված եղել, հիմա, իհարկե, բուհի ներսում այդ այդքան զգացնել չի տալիս, ավելի շատ բուհից դուրս է զգացնել տալիս իրանց քաղաքական մոտեցումը, բայց հիմա էլ խնդիրը վերաձևավորվել ա ու դարձել ա ծառայամիտ խնդիր արդեն ուղղված բուհի ղեկավարությանը: Ինքնակառավարման առումով խնդիրն էն ա, որ ուսանողությունը ներգրավված չէ, ՈՒսխորհուրդը հեռու ա պահում էն ուսանողներին, ովքեր ՈՒսխորհրդական չեն և ՈՒսխորհրդի կարծիքը չեն կիսում բուհի ինքնակառավարման պրոցեսներից, օրինակ՝ ես Ուսխորհրդի անդամ չեմ, իմ հնարավորությունը՝ բարձրաձայնելու ինչ-որ խնդիրներ, կամ այդ խնդիրների դեմ պայքար մղելու, մի տասնյակ, քսան անգամ քչացել են, որովհետև ամեն պայման ստեղծվում ա, որ ձայնը քիչ լսելի լինի, եթե կառույցի կարծիքի հետ չի համընկնում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ Ալլա, ջան. շատ շնորհակալություն, եկեք լսենք Մարիամին:

Մարիամ-Ես, ճիշտն ասած բոլորը նշում էին հենց իրենց համալսարանների տեսանկյունից, բայց ես՝ կոնկրետ Երևանի պետական համալսարանի ուսանող լինելով կասեմ, որ դա միայն իրենց համալսարանների ներսում չէ, որ կա, այսինքն՝ բոլոր բուհերում էլ կարծում եմ այդ խնդիրը կա, նախ էն կառույցներին, որ մենք անդամակցում ենք՝ ՈՒԳԸ կամ ՈՒԽ, երբ այդ կառույցները ինչ-որ միջոցառումներ են սկսում իրականացնել, ուսանողները շատ հաճախ չեն

կարողանում դրանց շատ մասնակցություն ունենալ այն պատճառով, որ դասախոսների հետ են ինչ-որ խնդիրներ ունենում, այդ մասին նշեցին մյուս ուսանողները՝ տարբեր համալսարաններից, դա ևս կարծում եմ խնդիր ա, այսինքն՝ ինչ-որ չափով այդ կառույցները պետք է սերտ փոխհարաբերությունների մեջ լինեն նաև դասախոսների հետ: Այսինքն, չնայած, որ նրանք նշում են, օրինակ, բացակա չեն դնի, եթե ինչ-որ միջոցառմանը մասնակցես և այլն, բայց շատ հաճախ դասախոսներն են ասում, որ «ձեր համար ավելի կարևոր է այդ միջոցառումներին մասնակցելը, քան դասերին ներկա գտնվելը»: Կարծում եմ, որ կարևոր է նաև դասախոսների մոտեցումը, թե նրանք ինչ մոտենում են ունենում կոնկրետ ուսանողների արտաուսումնական գործընթացին մասնակցելու առումով: Դրանից բացի կարծում եմ հիմա խնդիրը ավելի շատ երիտասարդության մեջ է, իրանք ինչ-որ հետաքրքրություն չեն դրսևորում տարբեր միջոցառումների նկատմամբ, կարծում եմ վերջին ժամանակներում մեր հասարակության մեջ կրթական մակարդակի ցածր լինելն է այստեղ, որովհետև յուրաքանչյուրը փորձում է կենտրոնանալ միայն իր մասնագիտության վրա, և չի փորձում սովորելու ընթացքում օրինակ մեկ այլ հետաքրքրություն ձեռք բերի ու դրան մասնակցություն ունենա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք հիմա էլ լսենք Լիանային

Լիանա-ԵՍ ՀՊՏՀ-ից եմ, նշեցին, որ եթե Ուսանողական խորհրդի անդամ չենք, չենք կարող մեր խնդիրները բարձրացնել ՈՒսխորհրդում, ես հակառակ կարծիքի եմ, քանի որ ես ՈՒսխորհրդի անդամ եմ, նկատել եմ դեպքեր, որ էն մարդիկ ովքեր ՈՒսխորհրդի անդամ չեն, եկել են իրենց խնդիրը բարձրաձայնել են ու մենք իրանց խնդրին կարճ ասած լուծում ենք տվել: Ու հետո եթե հաշվի առնենք Ալլայի ասածը, որ Ուսանողական խորհուրդը առաջինը ղեկավարության կողքին ա, ես հակառակը կասեմ, առաջինը հենց ուսանողի կողքին է, ոչ թե ղեկավարության, որովհետև ինչքան ժամանակ ա մենք բարձրացրել ենք հարց, որ ՀՊՏՀ-ի օնլայն դասերը փոխարինվեն օֆլայնի, որովհետև իրականում շատ բարդ ա օնլայն դասերը կատարելը, հետո երևի կարելի է ասել այսքանն էին խնդիրները:

Գոհարիկ-Եթե կարելի ա ես մի ավելացում անեմ, ստեղ ես երկու խնդիր էլ ավելացնեմ, առաջինը, ոնց որ դա, Ֆրանսիականի դեպքում ես ինչքան, որ տեղյակ եմ Ուսանողական խորհուրդը չունի սեփական բյուջե համալսարանից, կան համալսարաններ, որտեղ Ուսանողական խորհուրդները ունեն ինչ-որ բյուջե, չնայած որ, եթե ինչ-որ միջոցառում պետք լինի կազմակերպել կարող են դիմում գրել և ռեկտորից կամ չգիտեմ այլ մարդուց, ով

պատասխանատու է ստանալ, դա խնդիր է իմ կարծիքով, դա խնդիր է ավելի լայն միջոցառումներ անելու համար, և երկրորդ խնդիրը սրա մյուս կողմն է՝ պիտի վերահսկողություն դրվի, թե այդ բյուջեն ինչպես պիտի ծախսվի, այսինքն՝ հսկիչ հանձնաժողով պիտի լինի, որ Ուսանողական խորհուրդը կոռուպցիոն ռիսկեր չունենա, չչարաշահի և ճիշտ ծախսի իր միջոցները: Եվ մյուս խնդրի մասին, որ կուզեի ասել, մենք ունենք այստեղ օրինակ անընդհատ օնլայնի և օֆլայնի խնդիր, երբ որ ես երկրորդ կուրսում էի, պայքարում էի և շատ էի ուզում, որ դասերը լինեն օֆլայն, բայց հիմա ես կարծում եմ, որ օնլայն տարբերակը ավելի լավ է, որովհետև ես կարծում եմ, որ երկու տարին բավարար է ինչ-որ տեսական գիտելիքներ ստանալու համար և երրորդ կուրսում արդեն պիտի պրակտիկայի անցնենք, այսինքն գնանք արդեն այդ ամեն ինչը հասկանալու, թե ինչ ենք սովորել էս երկու տարվա ընթացքում, ու կարելի է օգտվել այդ խնդիրներից, սարքել դրանք հնարավորություններ ու ավելի լավ մասնագետ դառնալ, մանավանդ էս տուրբուլենտ ժամանակներում: Այսքանը, շնորհակալություն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Արմանը ձեռք է բարձրացրել, լսենք Արմանին:

Արման-Ես Գոհարիկի ասածին արձագանքեմ, որ ինքը ճիշտ նշեց Ֆրանսիական համալսարանի Ուսանողական խորհուրդը մինչ այս տարի բյուջե չի ունեցել համալսարանի կողմից նախատեսված, բայց ցանկացած ծրագրի իրականացման համար մենք ծրագիր ենք կազմել, ֆինանսական ծրագիր ենք կազմել, դիմում ենք գրել, սենց մի հատ բարդ գործընթացով կարողացել ենք ինչ-որ գումար վերցնել ինչ-ինչ ծրագրեր իրականացնելու համար, բայց էս տարի մենք հասանք նրան, որ համալսարանը տրամադրեց ուսանողական խորհրդին բյուջե, բայց արդեն իր ծրագրի հիման վրա: Այդ մասով էր մեր խնդիրը, որ անցանք արդեն: Մենք խոսում ենք Ուսանողական խորհրդի գործունեության մասին հենց էս օնլայն-օֆլայն դեպքում, երբ մենք պետք ա նշենք օրինակ՝ մեր ավանդական տոները կամ օրինակ ուսանողների միջազգային տոն և այլն, և այլն, երբ մենք այդ ամեն ինչը պատրաստվում ենք շուքով նշենք, որ ուսանողներն էլ հաճույք ստանան, ասեն՝ ուսանողների տոնն էր, էս էս էս եղավ, նախկին տարիներին արել ենք, ներգրավվածությունը եղել ա, ոչ մի բան չեմ կարա ասեմ, բայց արդեն մենք չենք կարողանում իրականացնել էն պատշաճ գործունեությունը արտալսարանական, որը պետք ա լինի ուսանողների համար, այդ արդեն մեր խնդիրը չի, ոչ էլ համալսարանի խնդիրն ա, բայց երբ որ մենք արդեն ունենում ենք ինչ-որ միջոցառումներ, որ պետք ա

ուսանողները օնլայն հարթակում մասնակցեն դրան, ասեմ Ձեզ, որ ուսանողները դասերին անգամ պատշաճ մակարդակով չեն մասնակցում, ուր մնաց մեր կազմակերպած միջոցառումներին:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք հիմա քննարկենք, թե արտաուսումնական գործունեության ի՞նչ ձևաչափեր են ձեզ հայտնի, ի՞նչ նախընտրելի տարբերակ կնշեք կամ կառաջարկեք, ո՞րն է ձեզ համար ավելի ընդունելի, կամ արդյունավետ կարող է լինել արտաուսումնական գործընթացների տեսանկյունից: Գոռ խնդրեմ:

Գոռ-Կոնկրետ իմ կարծիքով, ես ինչքան տեղյակ եմ, որպես այդպիսին, Ուսանողական խորհուրդը կարող է նաև բյուջե ունենալ, այսինքն՝ համալսարանի բյուջեից ինչ-որ մասը հատկացվի Ուսանողական խորհրդին: Ինձ հայտնի են Էրասմուս+ի ծրագրերը, որոնք որ ֆինանսավորվում են հենց Էրասմուս+ի կողմից, ու նաև մտածում եմ, որ կարլի է օգտագործել crowdfunding-ի միջոցը՝ որպես ֆինանսավորման ձև:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Գոհարիկ ջան, խնդրեմ:

Գոհարիկ-Ես կուզենայի խոսել ենթադրամաշնորհների մասին, այսինքն՝ օրինակ՝ եվրոպական համալսարաններում ուսանողը, եթե զբաղվում է գիտական գործունեությամբ, կամ չգիտեմ համալսարանի կրթության բարելավման համար ուզում է ինչ-որ բան անել, հնարավորություն կա ստանալ ենթադրամաշնորհներ, այսինքն, scholarship-ի նման՝ կրթաթոշակի, բայց դու դա օգտագործում ես ինչ-որ հետազոտություն անելու համար, ես ինչքան գիտեմ Հայաստանում Ամերիկյանն էլ ունի նման մի հնարավորություն, ոնց որ տալիս են ենթադրամաշնորհներ ինչ-որ մի բան անելու համար, բայց մեր Ֆրանսիականի դեպքում չեմ կարող ասել, չեմ հետաքրքրվել այդ ամեն ինչի հետ կապված: Հայաստանում այդ չի աշխատում և շատ լավ կլիներ, օրինակ, որ ուսանողական կառույցները կարողանային այդ ենթադրամաշնորհային ծրագրեր իրականացնել ուսանողների շրջանում, որը հաստատ կմոտիվացներ, որ ուսանողները կմոտիվացվեին ու հաստատ ավելի ակտիվ կլինեին:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, եկեք լսենք Ալլային:

Ալլա-Ֆինանսավորման տեսակների մեջ կառանձնացնեմ բուհի կողմից տրվողը, որը նաև օրենքով է սահմանված, նաև նվիրատվություններ՝ դրսից եկող, այդ ինչ-որ անժամկետ նվիրատվություններ և այլն, բայց մեզ մոտ միայն այդ առաջին տարբերակից են օգտվում: Նաև

crowdfunding-ային արշավները ես կընդգծեի, որ ենթադրենք ինչ-որ ծրագիր ես գծում ու թեկուզ միայն քո համալսարանի ներսում իրականացնում ես դրամահավաք այդ պլատֆորմի միջոցով ու արդյունքում այդ ծրագիրը կյանքի ես կոչում, բավականին լավ մեթոդ է: Բայց չգիտեմ, թե ինչքանով ա արվում, Հայաստանում հաստատ չի արվում, լսած կլինեինք, արտասահմանում կա այդպիսի բան : Մեկ էլ ձեռնարկատիրական գործունեության ինչ-որ տարատեսակներ կան, որոնք թույլատրելի են շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար, օրինակ՝ գիտեմ որ արտասահմանյան շատ բուհեր նման բաներ անում են, թեկուզ ուսանողական ինքնավար մարմիններ, կամ հենց բուհերը՝ ուսանողների ներգրավմամբ էլի:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, եկեք նաև Արմանին լսենք:

Արման-Ես էլ Ալլայի կարծիքին համաձայն եմ, որ օրենքով սահմանված այդ չափաբաժինը, որը կա դա հատկացվի ուսանողներին, դա հատկացվում ա ուսանողի քանակի հետ կապված, (այսքան տոկոս ուսանողա….դա արեն մեզ չի վերաբերում, արդեն համապատասխան բաժիններ կան, որ դրանով զբաղվում են), բայց նաև այդ ինչպես ասվեց անհատ ձեռներեցների կողմից, որոնք ինչ-որ նվիրատվություններ են անում, բարեգործական հիմնադրամների կողմից ինչ-որ նվիրատվություններ են իրականացնում, ու արդեն որ Ալլան նշեց ինչ-որ ձեռնարկատիրական գործունեությունը, մեր մոտ արդեն, որ Ալլան նշել էր, որ ունենք ուսանողական ձեռնարկությունը, ուսանողական ձեռնարկությունը իրա ծրագրերը իրականացնելուց իրա ստացած շահույթից որոշ չափաբաժին օրենքով սահմանված կարգով կարա հատկացնի Ուսանողական խորհրդին ինչ-ինչ գործողություններ իրականացնելու համար: Էս հարցը գլոբալ ա, մենք ունենք բազում խնդիրներ դրա հետ կապված, որովհետև օրենքի նախագծեր են ընդունվում ու չեն ընդունվում, որը վերաբերվումա Ուսանողական խորհրդին ու իրա ֆինանսավորմանը, այդ հարցը գլոբալ ա ու մենք ոնց որ կարանք դառնանք շարժառիթ այդ հարցը բարձրացնելու համար, որ համապատասխան մարմինները լուծեն այդ խնդիրը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք խոսենք այն մասին, թե ինչ դրական փոփոխություններ կարձանագրեք ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում վերջին ժամանակներում:

Արման-Ինչպես արդեն նշեցի, որ մենք ունեինք խնդիր, որ նախկին տարիներում համալսարանի վարչակազմը չէր տալիս համապատասխան ուշադրություն ու հաշվի չէր նստում Ուսանողական խորհրդի, ուսանողի կարծիքի հետ, դա գալիս էր նաև նրանից ասեմ,

ձեզ, որ մեր մոտ ռեկտորը ազգությամբ ֆրանսիացի ա լինում ինքը շատ ժամանակ չի կարողանում հասկանալ էն մենթալիտետը, որով շարժվում են մնացյալ բուհերը ու մնացյալ բուհերի ղեկավար մարմինները: Մի խնդիրը դա էր, բայց մենք կարողացանք այդ խնդրին արդյունավետ լուծում տանք: Ինչպես տարբեր համալսարանների ներկայացուցիչները նշեցին, ունեինք նաև խնդիր, որ դասախոսները պատշաճ վստահություն չեն ներշնչում ուսանողին Ուսանողական խորհրդի մասին: Ես կարող եմ ասել, որ մենք այդ խնդիրն էլ ենք արդեն լուծել, որովհետև մեր դասախոսներից արդեն շատ դասախոսները, նաև դեկանները, երբ ինչ-որ խնդիրներ կան առաջնայինը ուսանողի կարծիքը իմանալու համար խոսում են Ուսանողական խորհրդի հետ: Նախորդ շաբաթ մենք ունեինք հանդիպում հենց բուհերի ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական փոփոխությունների հետ կապված, որ գիտխորհրդի կազմն էր փոխվել և այլն, մեր դասախոսներից մեկը կլոր սեղան քննարկում էր կազմակերպել և ես՝ որպես Ուսանողական խորհրդի անդամ, հրավիրված էի այդտեղ մեր համալսարանի դիրքորոշումը ներկայացնելու ուսանողի տեսանկյունից: Ինքնակառավարման գործունեության հետ կապված մի դրական փոփոխություն էլ կարամ առաջարկեմ, ասեմ, որ մենք ինչքան էլ մատնանշում ենք, որ ուսանողների նվազ ներգրավվածություն ունենք ծրագրերին, բայց էս տարի ի շնորհիվ Ուսանողական խորհրդի գործունեության առաջին կուրսերի շրջանակում մենք տեսանք մասնակցության շատ բարձր մակարդակ Ուսանողական խորհրդի ընտրությունների շրջանակում: Եթե մենք վերցնենք առաջին կուրսի ուսանողների շրջանակը, ապա պետք է նշեմ, որ մեր մոտ Ուսանողական խորհրդի անդամ ընտրվում են ընտրությունների միջոցով կուրսն ընտրում է երկու Ուսանողական խորհրդի անդամ (մեր մոտ հայտը բաց չի էլի, որ ով ցանկանա մտնի Ուսանողական խորհուրդ), ու մենք տեսանք, որ առաջին կուրսեցիներից ֆակուլտետներ կային, որ 10-15 թեկնածու ենք ունեցել ու ակտիվ մրցակցություն ա գնացել, թե ով պետք ա դառնա Ուսանողական խորհրդի անդամ: Դա փաստում ա նրա մասին, որ մեր գործունեության արդյունքում ա այդ ամեն ինչը այդպես ստացվել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, եկեք Գոհարիկին լսենք:

Գոհարիկ-Ես կուզենամ երկու այլ համալսարանների մասին խոսել: Առաջինը ուզում եմ խոսել Շիրակի պետական համալսարանի Ուսանողական խորհրդի մասին, որը վերջին երկու տարիների ընթացքում կարողացավ նախկին քաղաքականացված Ուսանողական խորհուրդը

լուծարել ու ստեղծել նոր Ուսանողական խորհուրդ, որտեղ, որ յուրաքանչյուր բաժնից ուսանողները մասնակցություն էին ունեցել և քվեարկել էին, այսինքն՝ ժողովրդավար ընտրություններ էին տեղի ունեցել: Ու երկրորդ տարբերակը ինքնակառավարման դրական փոփոխության հետ կապված, երևի 3 տարի առաջ Բրյուսովում էր տեղի ունեցել, երբ որ ամբողջ ուսանողության 50 և + ձայնը ընտրել էր նոր Ուսանողական խորհուրդ և կարծում եմ, որ այդ երկու համալսարաններում ունենք ինչ-որ ինքնավար վիճակ՝ Ուսանողական խորհուրդների:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ալլային լսենք:

Ալլա-Իմը շատ հակիրճ ա ՝ոչ մի դրական փոփոխություն չենք արձանագրել, այլ հակառակը՝ ավելի լճացման ենք գնացել մեր բուհի պարագայում: Ես համեմատում եմ նախքան քովիդը և հիմա, հիմա շատ ավելի վատ ա մեր վիճակը՝ թե՛ ուսանողների նկատմամբ տարբեր հարցերում հաշվետվողականության տեսանկյունից, թե՛ իրենց դրսևորված վերաբերմունքի ու շատ այլ հարցերում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք նաև Գոռին լսենք:

Գոռ-Ես ինքս պետք է բերեի Գոհարիկի օրինակը, որ հենց այդ համալսարանից եմ դուրս եկել, երևի էլ բան չկա ավելացնելու:

ՄՈԴԵՐԱՏՈՐ- «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են», ի՞նչ եք կարծում բավարար է այդ տոկոսը ուսանողների՝ բուհի կառավարմանը լիարժեք մասնակցության համար, այն պետք է ավելի բարձրացնել, գուցե նվազեցնել:

Գոհարիկ-նախ կուզեի ասել, որ դա վերաբերում է միայն պետական համալսարաններին, Ֆրանսիական համալսարանի դեպքում հոգաբարձուների խորհրդում ուսանողական ներկայացուցիչ չկա, իսկ եթե անգամ անհրաժեշտ է լինում Ուսանողական խորհրդից է ինչ-որ մարդ գնում, առանձին հոգաբարձուների խորհրդի ընտրություններ չեն լինում՝ ուսանողական ներկայացուցիչների: Ինչ վերաբերում է օրենքին, այսքան տարի՝ 30 տարի, այդ նույն օրենքն է եղել, եթե արդյունավետ է եղել, ուրեմն լավ է: Ես կարծում եմ, որ եթե արդյունավետ չի եղել այսքան տարի, ուրեմն ավելի լավ է, որ կա՛մ ավելացվի, կա՛մ պակասեցվի, ինչ-որ

փոփոխություն տեղի ունենա, այսինքն՝ փորձեն երկու մյուս դեպքերն էլ, որ հասկանան, թե որն է ավելի լավը։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ, Ալլա լսում ենք Ձեզ։

Ալլա-Ես համարում եմ, որ լիովին իրենց բացառել չի կարելի, նու մենք պետական բուհ ենք, մեզ մոտ 25% թե՛ կառավարման խորհրդի կազմում ա, թե՛ գիտական խորհրդի կազմում, իրենց լիովին բացառել չի կարելի ու այդ թվաքանակը կարող է պահպանվել, բայց պարտադիր պետք է գործընթացներ վարվեն այդ 25%-ը կազմող ուսանողների որակի բարելավման ուղղությամբ, որովհետև մի մասը այնտեղ ուղակի ֆիզիկապես նստած է….

Արման-Ես էլ եմ նույն Ալլայի կարծիքին, որ 25%-ը բավարար ա, բայց ուսանողների որոշները պետք ա գնան նստեն, չհասկական ինչ ա այդտեղ կատարվում, ուղակի արձանի պես նստեն անունի համար, որ իրանք հոգաբարձուների խորհրդի անդամ են և այլն, կամ կառավարման խորհրդում ինչ-որ գործունեություն են ծավալում, մեր համալսարանը, քանի որ համարվում է միջպետական բուհ՝ այդ փոփոխությունը մեզ չի վերաբերում, մեր մոտ հոգաբարձուների խորհրդի նախագահը, եթե օրենքով սահմանվում ա, որ ռեկտորը պիտի լինի, մեր մոտ արդեն հոգաբարձուների խորհուրդն ա որոշում, տվյալ պահին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանն ա՝ մեր հոգաբարձուների խորհրդի նախագահ, իսկ ուսանողները ինքնակառավարման գործընթացին մասնակցում են գիտխորհրդում ունենալով մասնակցության, քվեարկության, ձայնի իրավունք և այլն, ու մենք միշտ առաջարկություններով ենք հանդես գալիս այդ կառույցի նիստերի ժամանակ էլի։

Գոռ-Ես նույնպես համամիտ եմ այդ 25%-ը պահելու հետ, բայց որակի վրա պետք է աշխատել, այսինքն այդ մարդկանց ընտրել նաև իրանց որակական հատկանիշների համար ու հետո հենց այդ 25%-ը ժամանակ առ ժամանակ ինչ-որ հանդիպումներ ունենա Ուսանողական խորհրդի, ուսանողների հետ, այսինքն իրանք համալսարանի ներսում հանրային լսումներ անեն և ինչ-որ ձևով պահպանեն կապը։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, այժմ էսպիսի մի հարց. Եվրոպական մի շարք բուհերում գործում է ուսանողական օմբուդսմենի գրասենյակը, ինչ կարծիքի եք մեզ մոտ դրա կարիքը կա՞։

Ալլա-Միանշանակ կա, շատ հակիրճ, եթե մենք դիտարկում ենք ՈՒսխորհուրդը, որպես լեգիտիմ ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց, եթե ուսանող կա, որ ՈՒԽ-ի հետ

օրինակ պրոբլեմ ունի, կամ տեսնում ա, որ ՈՒԽ-ն ապօրինություն ա թույլ տալիս, ինքը ու՞մ դիմի էս հարցի համար, ի դեպ՝ բուհի ղեկավարությանը չի վստահում էս պարագայում, նախարարությունն էլ ասում ա՝ բուհը ինքնավար ա, ես բուհի հարցերին չեմ խառնվում, առավել ևս ՈՒԽ-ի հարցերին չեմ խառնվում: Ես սա ասում եմ որպես մարդ, ով ռեալ առնչվել ա այդ խնդրի հետ ու դրա կարիքը միանշանակ կա:

Գոհարիկ-Կարծում եմ, որ հայկական պետական համալսարաններում դրա կարիքը անպայման կա, իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիական համալսարանին, մեր Ուսանողական խորհուրդը, բացի ուսանողի ձայնից ոչ մի բան չի նայում, Ֆրանսիականի դեպքում կարիք չեմ համարում օմբուդսմենի լինելու հանգամանքը, բայց հայաստանյան մյուս բուհերում, անպայման, անհրաժեշտ ա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-լավ, Արման, խնդրեմ:

Արման-Ես Համոզված եմ, որ այդ անհրաժեշտությունը կա, ու պատասխանեմ, որ մենք հենց Ուսանողական խորհրդի ներսում ունենք իրավաբանական հանձնաժողով, ով որ առաջնային գործունեությունը ծավալում ա միայն ուսանողի խնդիրների բարձրաձայնմամբ հարցին պատշաճ լուծում տալու համար ու արդեն ներքին կանոնակարգերում ու մնացած հարցերում առկա խնդիրները, որը, ի դեպ, ի շահ չի ուսանողին, փորձում ենք լուծումներ գտնել, բայց նաև եթե վերցնենք Ալլայի ասածը համալսարանի իրավաբանը էն մարմինն ա, որ կարա հարցին պատշաճ լուծում տա, որովհետև ես գիտեմ, որ երբ ինչ-որ բուհերում դու բողոք ունես, ասում ես ու ձայն չի բարձրանում, մի հատ ասում ես հեսա մի հատ լրատվականին կասեմ, կամ ինչին, ինչին էս խնդրով կդիմեմ ու միանգամից այդ հարցը արագ լուծվում ա էլի: Ես չգիտեմ մնացած համալսարաններում ոնց ա, մեր մոտ կա համալսարանի իրավաբան, որի հետ կարաս այդ ցանկացած հարցերով խորհրդակցես: Երբ ասում են ի դեմ Ուսանողական խորհրդի գործունեության, ես չեմ կարա ասեմ այդ մարմինը ոնց կարա իրա գործունեությունը իրականացնի, որովհետև մեր մոտ մենք փոխկապակցված ենք համալսարանի վարչական անձնակազմի հետ, բայց նենց չի, որ իրանք փեշը փռել են մեր վրա ու մենք նստած ենք, կամ՝ հակառակը: Մեզ վատն էլ են ասում, լավն էլ են ասում, նկատողություններ էլ և այլն և այլն:

Գոռ-ես էլ եմ համամիտ մյուսների հետ, որ պետական բուհերում դրա կարիքը շա՛տ կա, ու բացի այդ կարա Ուսանողական խորհրդին կից գործի ինչ-որ մարդու իրավունքների հանձնաժողով, որը ևս կզբաղվի այդ հարցերով:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-շնորհակալություն, ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները եվրոպական որոշ երակներում հիմնականում ձևավորվում են Կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցներից, բուհի արտաբյուջեից, ուսանողական անդամավճարներից: Ինչպես է ֆինանսավորվում ուսանողական արտաուսումնական գործունեությունը ձեր բուհու՞մ, ձեր գործունեությունն իրականացնելիս ի՞նչ աղբյուրներից եք ֆինանսավորվում, արդյո՞ք այն ձեզ գոհացնում է:

Ալլա-ես այդ մասով ասեմ, մեզ մոտ ուրեմն ուսանողների վարձավճարներից տրվող մասնահանումներն են, գիտական խորհրդի կողմից էլ հաստատված ա կարծեմ բուհի ամբողջ բյուջեի 1%-ի չափով Ուսանողական խորհրդին տարեկան ֆինանսավորում տալ, որը մեր բուհի պարագայում կազմում ա 8 միլիոն դրամ, ցավոք մեզ մոտ հաշվետվողականության մասն է բավականին թույլ, ինչն ինձ ընդհանրապես չի գոհացնում: Այսինքն՝ հա, զգացվում ա որ ինչ-որ ծախսեր արվում են ընթացիկ տարվա մեջ, բայց թե ուր են այդ ծախսերը գնում, օրինակ՝ ո՞ր ԱՁ-ից են իրենք այդ գնումը կատարում, արդյո՞ք պահպանվում են գնման պետական բոլոր պրոցեսները, մենք դրա մասին չունենք որևէ տեղեկատվություն, որովհետև Ուսանողական խորհրդի ծախսերը զետեղվում են բուհի տարեկան ծախսերի մեջ, ընդ որում՝ ոչ մանրակրկիտ, այլ ընդհանրական, իսկ երբ բուհից պահանջում ես փաստաթղթերը, ասում են բավարարվեք բուհի հաշվետվությամբ, որտեղ նաև ՈՒԽ-ի հաշվետվությունն է: Ու ընդհանարպես երբ, որ օրինակ ՈՒսխորհրդին էլ ֆինանսավորման մասով ինչ-որ հարցրեր ես տալիս իրենք խուսափում են պատասխանել, երբ որ խորանում ես, թե ինչ ԱՁ-ներից են օգտվում, պարզվում ա, որ մի ԱՁ-ն, օրինակ, կարա իրանց սպասարկի 100 տեսակ ապրանք ձեռք բերելու առումով՝ երշիկից մինչև դուռ, այ էս տարբերակով էլի, ինչը որ էլի բազմաթիվ հարցեր ա առաջացնում էլի, հատկապես ես որ տնտեսագետ եմ ու ֆինանսիստ եմ, իմ մոտ առաջացնում ա: Հաշվետվողականությունը շատ էական ա, որը չի պահպանվում ընդհանրապես:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-լավ, եկեք լսենք Գոռին:

Գոռ-դե հա էն բուհից, որից դուրս եմ եկել, ինչքան տեղյակ եմ իրա ֆինանսավորումը ինքը ստանում էր հենց համալսարանի բյուջեից ինչ-որ մաս, բայց եթե չեմ սխալվում անցած տարի իրենք հաստատել էին, որ Ուսանողական խորհրդին իրենց բյուջեից բան չի հասնում, որը, իհարկե, վրդովմունք է առաջացնում ՈՒսխորհրդի ու ուսանողների մոտ: Այդ դեպքում

կարծում եմ, որ հենց բուհի ռեկտորատը պետք է ուշադիր լինի բուհի Ուսանողական խորհրդին բյուջե տրամադրելու հարցում, ոչ թե խուսափողական վարք ցուցաբերի:

Արման-Մենք ոնց որ խոսում ենք առկա խնդիրների մասին, ես ոնց որ միկրոֆոնը միացնում եմ ու ասում եմ, որ մենք ունենք դա: Բայց ես ճշմարտությունն եմ ասում, մենք նախկինում ֆինանսավորվել ենք համալսարանի կողմից, մենք օրենքով չենք ֆինանսավորվել, որ ինքը տալիս ա մեկ տոկոս, մեզ մոտ եղել ա՝ ծրագիր ունես, դիմում ես, գումարը հատկացնում են, հետո մենք ներկայացնում ենք հաշվետվությունը, հաշվետվությունը կազմվում ա հետևյալ կերպ՝ մենք ինչ ենք ձեռք բերել, գույքը, պարենը, ինչը մենք ձեռք ենք բերում մենք ներկայացնում ենք դա, այդ գնման ակտը մենք ներկայացնում ենք համալսարանի ՀՀՎ-ն, մենք այդ կոդով ենք մեր գործարքներն անում, ու մեզ հետ աշխատող կառույցներն էլ գիտեն արդեն, որ զանգում ենք արդեն գիտեն, որ չեկը պետք ա այդ ՀՀՎ-ով լինի, եթե դրանով չեղավ հետվերադարձ են անում, որովհետև եթե ուսանողի անունով գումարը դուրս գրվեց, որ տվյալ ուսանողին հատկացվել ա օրինակ 100 000 դրամ, ուսանողը եթե հստակ այդ տնտեսական բաժնի հետ այդ գնման ակտը չբերեց չներկայացրեց, այդ գումարը մնում ա ուսանողի հաշվին ու ուսանողի վարձավճարի պես ուսանողը պետք ա մարի այդ գումարը, այդ կոռուպցիոն ռիսկեր բան, այդ սաղ համակարգվում ա ըտեղ, բայց էս տարի արդեն համալսարանը Ուսանողական խորհրդին բյուջե ա տրամադրել այդ ծրագրերը իրականացնելու համար ու ոնց որ ասեց Ալլան, երբ Ուսանողական խորհրդին հարցնում ես՝ ո՞նց եք ձեր ֆինանսական գործունեությունը իրականացնում, մենք այդ առումով էլ բաց ենք, Գոհարիկը ինձնից առաջ նշեց, որ ինքը գիտեր համալսարանի Ուսանողական խորհուրդը բյուջե չունի, ու ինչ որ գումար ունենալու համար մենք պետք ա բարդ բաների միջով անցնենք՝ էս դռնից էն դուռը գնանք, որ կարողանանք ինչ-որ մի բան իրականացնենք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ: Հիմա մի գծապատկեր ցույց կտամ, և կխնդրեմ հերթով պատասխանենք այդ հարցերին: *Մոդերատորը ցույց է տալիս գծապատկերը և խնդրում, որ հակիրճ պատասխանեն:*

Ա. Ձեր բուհում մասնակցության ո՞ր տեսակներն են գործում:

Գոռ-երևի թե երեքն էլ գործում են

Գոհարիկ-ես ուզում եմ առանձնացնել ուսանողական ինքնակառավարումը ու որակի ապահովումը, իսկ ակադեմիական ինքնակառավարումը դրվում է միայն ԿԳՄՄՆ-երի վրա, այսինքն՝ հիմնական 98,9% գործառույթը իրենք են կատարում և չեմ կարծում, որ մենք այդտեղ ազդեցություն ունենք:

Ալլա-դե ֆակտո բոլորն էլ գործում են, իսկ դե դեյուրե որակի և ակադեմիականի վրա մենք շատ քիչ ենք ազդում, ամենաշատը, երևի, ուսանողական ինքնակառավարումն է գործում, բայց էլի էսպես 50-50 էն հարցերում, որոնք որ բուհին ձեռք են տալիս, այսինքն բուհի ղեկավարության համար օքեյա, Ուսանողական խորհրդի համար որպես կառույց օքեյա, բայց ուսանողության համար՝ չէ:

Արման-մեր մոտ երեքն էլ թե՛ դե ֆակտո, թե՛ դե դեյուրե գործում են, մենք համ մասնակցություն ունենք ակադեմիական ինքնակառավարմանը, ուսանողական ինքնակառավարմանը և որակի ապահովման գործընթացներին: Երեքի մասին էլ շատ կարճ ասեմ, ես ասեցի, որ մենք գիտխորհրդի կազմում ունենք ձայնի իրավունք՝ ինչը վերաբերում ա օրինակ ՄԿԾ-ներին, ուսումնական պլաններում փոփոխություններ, լրացումներ կատարելու համար մենք ունենք կամընտրական առարկաներ (ինքը ինքնին շատ սուղ էր էլի, մենք առաջարկեցինք ամեն ֆակուլտետ ունենա հստակ կամընտրական առարկա, որը կարա խթան հանդիսանա ուսանողի հետաքրքրվածությանը՝ մասնագիտական առարկաներից զատ այդ հարցն էր մեր մոտ, որ միաձայն ընդունվեց ու արդեն սկսեցին նոր կամընտրական առարկաներ սահմանել), հաջորդ կետով ասեմ, որ որակի ապահովման համար, երբ որ համալսարանը հիմա հավատարմագրման գործընթացի մեջ ա, հիմա մասնակցում ենք որակի ապահովման այդ գործընթացին, որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համատեղ այդ ծրագրերը մենք մեր ներգրավվածությունն ունենք: Գոհարիկի հետ էլ մասնակցել ենք այդ հանդիպմանը, քննարկմանը, պարոն Թոփչյանի հետ և այլն, և այլն ու սենց կոնկրետ ասեմ՝ ամեն ինչ ունենք, ամեն ինչի մեջ ներգրավված ենք:

Մարիամ-վերջին կետը /*նկատի ունի որակի ապահովման գործընթացները/*մի փոքր անծանոթ էր: Ակադեմիական ինքնակառավարումը և ուսանողական ինքնակառավարումը ուսանողական գիտական ընկերության շրջանակներում շատ հաճախ է հանդիպում, ակադեմիական ինքնակառավարումը ընդհանուր ուսանողական գիտական ընկերության շրջանականում է կատարվում: Կարող եմ ասել, որ առաջին երկուսը առկա են:

Բ. ուսանողների իրական մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը ինչպիսի՞ խորությամբ է իրականանում:

Արման-մեր մոտ բոլորը 100 տոկոս մակարդով գործում են:

Գոհարիկ-ես Արմանի հետ համաձայն եմ, մեր համալսարանում գործընկերության աստիճանին ենք հասել:

Ալլա-երկխոսություն, բայց բաց թողնելով տեղեկատվության հասանելիության մակարդակը, այսինքն՝ երկխոսություն կա, բայց տեղեկատվություն չկա:

Գոռ-տեղեկատվության հասանելիությունը, իհարկե, կա, բայց գործընկերության մակարդակին շատ դժվար է հասնելը, ինչքան էլ Ուսանողական խորհուրդը փորձում էր, բայց կարող եմ ասել, որ այդ գործընկերությունը շատ դժվար ա ռեկտորի և ուսանողների միջև հաստատելը:

Մարիամ-մեզ մոտ տեղեկատվության հասանելիությունը կարծում եմ բավականին բարձր մակարդակի վրա է գտնվում, եթե այստեղ տարանջատենք: Կարծում եմ, որ գործընկերության մակարդակին դեռ չի հասել, ավելի շատ խորհրդատվություն, ինձ թվում է:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, շնորհակալություն: Եկեք անցնենք այս հարցին, Ո՞ր մակարդակում է իրականացվում..

Ալլա-երևի թե համալսարանի/ինստիտուցիոնալ մակարդակով էլի: Կան ուսանողներ, ում դեպքում ազգային մակարդով շատ հոյակապ առաջ ա գնում, բայց մեծամասամբ համալսարանի, բայց բաց թողնելով ֆակուլտետի մասը, որովհետև մեզ մոտ հիերարխիկ կապը քանդված ա, մեր մոտ ուսանողը փոխանակ գնա իրա դեկանին դիմի՝ ֆակուլտետային մակարդակով, միանգամից գնում ա ռեկտորին ա դիմում, որովհետև այդ հիերարխիկ կապը քանդված ա:

Արման-մեր մոտ էլ էլի կարող եմ ասել, որ այդ ֆակուլտետներ կան, որ դեկանների ներգրավվածությունը 100% մակարդակի են, ֆակուլտետներ կան, որ դեկաններ կան որ ոչ, այդ արդեն կախվածա մի քիչ աշխատելաոճից և մնացյալից, այստեղ մեր մոտ օրինակ կրեդիտային համակարգը ի շահ ուսանողի ա գործում, իսկ ուրիշ բուհեր գիտեմ, երբ որ իմ գործընկերների

հետ խոսում եմ, կրեդիտային համակարգը ի վնաս ուսանողի ա և այլն և այլն, կարող եմ ասել, որ էս բոլոր 5 կետերը մեզ մոտ ապահովված են:

Մարիամ-կարծում եմ Երևանի պետական համալսարանում էս բոլորը ևս կազմակերպված են ու ուսանողները ներգրավվում են դրան:

Գոհարիկ-իրականում ես չեմ ուզում մակերեսային պատասխան տամ, որովհետև այդ պրոցեսներում շատ ինտեգրված չեմ, դրա համար կխնդրեի, որ Արմանը պատասխաներ որպես ՈՒսխորհրդի ներկայացուցիչ: Ես հավակնում եմ Արմանի պատասխանին:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ, շնորհակալություն:

Գոռ-Կուզենայի ասել, որ էն համալսարանը, որտեղ ես սովորում էի ֆակուլտետային մակարդակում էր ու շատ դժվար էր ձայնդ հասանելի դարձնել, ուր մնաց՝ կրեդիտային մակարդակով: Մի քիչ ձգում էր համալսարանին:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Մի փոքր անդրադառնանք առաջարկներին, ի՞նչ առաջարկներ ունեք ընդհանուր ոլորտի գործունեությունը ավելի լավացնելու համար:

Ալլա-Տեսեք իրականում էսպիսի մի կարևոր խնդիր մենք ունենք, որ նաև ուզում էի բարձրաձայնել, բայց չհասցրի, էն որ մեր ընդհանարապես ուսանողական ինքնակառավարման մարմինները չեն մտնում իրավական համակարգի մեջ, իրանք իրավական տեսանկյունից կարգավորված չեն, այդ հարցը կրթության փոխնախարարի հետ էլ ենք քննարկել, չկան օրինական կարգեր: Հստակ մտցնել իրավական դաշտ ու, վերջապես, արդեն մշակել այդ բոլոր կարգերը, որ նախարարությունը փորձի համակարգի: Իսկ իմ երկրորդ առաջարկս էն է, որ բուհերը չսահմանափակվեն միայն մի ինքնակառավարման մարմնով, փորձեն ձևավորել մի քանիսը և մրցակցային դաշտ ձևավորվի, որովհետև հատկապես պետական բուհերում հիմա ուսանողական ինքնակառավարումը մոնոպոլիզացված է մեկ Ուսանողական խորհրդի կողմից, որովհետև ընկերը ընկերոջը իշխանությունը փոխանցելով տարիներ շարունակ գործում են: Ու երրորդ առաջարկը, հավանաբար, այդ ձեր օմբուդսմենի հարցի հետ ա ավելի շատ կապված, բայց ես կառաջարկեի բուհերից դուրս ստեղծել լիովին անկախ կառույց, որը նաև կղեկավարի բոլոր ՀԿ-ները Հայաստանի, բոլոր էն կառույցները, ովքեր զբաղվում են ուսանողների, երիտասարդության հիմնահարցերով և իրավունքներով և տալ այդ կառույցին լիազորություն՝ խառնվելու բուհի

ինքնակառավարմանը էն ժամանակ, երբ որ ուսանողները փաստացի հարց են բարձրացնում, որը այդ կառույցների աշխատանքի հետ ա կապված, խնդիրները էլի:

Գոհարիկ-Շնորհակալություն, ես իրականում ուզում եմ ասել, որ կրթության մասին օրենքում շուտով կարծես, թե փոփոխություններ են լինելու, որոնք հնարավորություն կտան բոլոր համալսարաններում ունենալ այլ ուսանողական խմբավորումներ: Մենք տեսանք, որ կան տարբեր խմբակներ, որոնք ակտիվ չէին: Մենք ունենք Ուսանողական խորհուրդ պետական համալսարաններում, չգիտեմ կանոնադրական, ակտիվ չեն, ոչ մի դեպքում ակտիվ չեն, ես առաջարկում եմ փոխել մենթալիտետայինը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-իսկ դա փոխելու համար ի՞նչ պետք է արվի, ի՞նչ առաջարկ ունեք:

Գոհարիկ-դրա համար ես առաջարկում եմ ոչ ֆորմալ կրթության կոմպոնենտը՝ որպես մեծ բաժին լցվի ԿԳՄՄՆ աշխատանքներում և իրանք փորձեն միքսել այդ ամեն ինչը, որպեսզի ուսանողները կարողանան պարտադիր կերպով ինչ-որ մի կամավոր աշխատանք կատարել:

Արման-Մեր ոլորտում գործունեությունը, որպես այդպիսին, եթե մենք վերցնենք համալսարանի մակարդակով, խնդիրը, որ մենք ունենք ու խնդրի լուծման համար ես մեր համալսարանի օրինակը բերեմ, որը ամբողջացնում ա բոլոր համալսարանների գործունեությունը. էս տարի ապրիլ ամսին մենք կազմակերպեցինք գիտաժողով, որին հրավիրեցինք բոլոր պետական ստատուս ունեցող համալսարանների Ուսանողական խորհուրդների նախագահներին, փոխնախագահներն և համանախագահներին, թվով երեք հրավեր ուղարկեցինք, որ իրանք գան՝ քննարկենք էս բուհերի հետ կապված օրենքի նախագիծը, փորձենք միասնական ծրագրեր իրականացնել, բայց մենք 25-30 համալսարանից ստացել ենք ընդամենը 2 համալսարանից հրավերի դրական պատասխան, մանացած բոլոր համալսարաններից չենք ստացել պատասխան, ոչ անգամ դրական, ոչ անգամ բացասական, ոչ անգամ շնորհակալություն: Առաջարկ չկա, առաջարկը միայն էն կլինի, որ մենթալիտետ փոխվի , որովհետև ես հետո կողքից լսում եմ, որ ասում են՝ «դե հենա Ֆրանսիականը արեց, խի՞ մենք գնանք մասնակցենք»: Մենք էնքան փոքր սուբյեկտներ ենք, որ կարողանանք ինչ-որ ազգային մենթալիտետ փոխենք, հա կարանք սկզբնաղբյուր դառնանք: Ես կարծում եմ առաջինը գալիս ա ընտանիքից, ես երբ ասում եմ Ուսանողական խորհրդի անդամ եմ, մյուս հարցը առաջանում՝ ա ի՞նչ հավվես ունես գնացել ես ձրի աշխատում ես ուսանողների կամ մնացածի համար: այդ եթե փոխվի, որ ուսանողը հասկանա, որ կամավորական ու

ուսանողական գործունեությունը, որը իրանից շահ չի ենթադրում, կարա ազդակ դառնա ինչ-որ փոփոխությունների, այդ ժամանակ կարանք ասենք, որ մենք էս հարցում գոնե ինչ-որ հաղթողի դերում ենք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ Արման, եկեք նաև Գոռին լսենք:

Գոռ-Ես կարծում եմ, որ կամավորության մասին ինչ-որ դասախոսություններ լինեն, կամավորությունը դառնա ինչ-որ կրեդիտ հավաքելու միջոց պետական համալսարաններում ևս, այդ դեպքում ուսանողները ավելի շահագրգռված կլինեն թե՛ կամավորություն անելու, թե՛ իրենց արտաուսումնական կյանքը բարելավելու համար: Մոտիվացիա ա պետք իրանց ուղակի:

Արման-Էս կամավորության գործունեության հետ կապված ես արդեն 4-5 տարի բախվում եմ էն խնդրին, որ եթե պետք ա կամավորություն, ի՞նչի համար ա պետք՝ որ ունենան ուսանողները սերտիֆիկատ, որպեսզի դիմեն Ամերիկյան համալսարան բուհ ընդունվելու համար: Դրանցի, բացի , ես այսքան ժամանակ չեմ տեսել… իմ շրջապատում եղած երիտասարդների 80%-ի մոտ խնդիրը այդա, որ իրանք ձեռք բերեն սերտիֆիկատներ, որպեսզի կարողանան դիմել Ամերիկյան համալսարան, կամ ասենք միջազգային բուհ:

Գոհարիկ-Կամավորությունը ինստիտուցիոնալ առումով ամրագրվի, ԿԳՄՄՆ-ն կամավորությունը դարձնի պարտադիր ուսանողների համար, այսինքն՝ ֆորմալ կրթությունը միքսեն ոչ ֆորմալին ու դառնա այդ ամեն ինչը պարտադիր ու հետագայում արդեն սովորական բան բոլոր ուսանողների համար: Այսինքն՝ մենթալիտետ այդպես ենք փոխելու, իսկ առհասարակ մեր մենթալիտետը 5000 տարի սենց եղել ա, սենց գնալու ա, ինձ թվում ա, շատ դժվար ա էլի հայի գենը փոխել, բայց պիտի փորձենք:

Ալլա-Ես էլ մի առաջարկ ունեմ մենթալիտետի մասով, համարում եմ, որ մեր սերունդը սիրում ա վերցնել օրինակ՝ դիմացից, հատկապես եթե դիմացինը ունի լծակների, կամ իշխանության կամ, թեկուզ, ավելի շատ անցած ճանապարհ: Առաջարկում եմ, որ էն մարդիկ, ովքեր մեզ համար հանդիսանում են օրինակ՝ ՈՒԽ նախագահները, կառավարման խորհրդի անդամները, իրենք իրոք օրինակ լինեն, այսինքն՝ մարդիկ, ովքեր իրոք կայացած են և ոչ թե մարդիկ, որ պատահական կամ ԽԾԲ-ով են այնտեղ ընկել: Այ դա ահավոր ապամոտիվացնող ա, դրա համար ուսանողությունը չի համարում, որ ինքը ուզում ա այդ ամեն ինչի մաս դառնա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն ձեզ ժամանակ տրամադրելու, ակտիվ քննարկելու համար:

…….

Ֆոկուս խմբային քննարկում 14.11.2021

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ողջույնի խոսք, թեմայի ներկայացում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մոդերատոր-Խնդրում եմ առաջին հարցին պատասխանելուց առաջ նաև ներկայացեք հա: Այսպիսով՝ խնդրում եմ նշեք, թե ինչ է Ձեզ համար ուսանողական արտաուսումնական գործունեությունը: Լսում ենք Սվետլանա:

Սվետլանա-Ես Ֆրանսիական համալսարանից եմ, սովորում եմ իրավաբանական ֆակուլտետում՝ 3-րդ կուրսում, Ուսանողական խորհրդի իրավաբանական հանձնաժողովից եմ և վերջերս «Գիտական զարգացման ակումբ»՝ գիտակրթական հասարակական կազմակերպության համահիմնադիր: Ինչ վերաբերում է ուսանողների արտաուսումնական գործունեությանը, 2 ֆակտոր կնշեմ: Առաջինն էն ա, որ ուսանողները հիմնականում էն երիտասարդ մասսան են, ովքեր պատրաստ են փոփոխությունների ու ովքեր շատ պոտենցիալ ունեն, ու 2-րդը, որ ուսանողների այդ արտաուսումնական գործունեության արդյունքում զարգանում ա նաև…այսինքն ոչ միայն ուսաողներն են, որ ինչ-որ փոփոխություններ են անում, այլ նաև իրանք զարգացնում են կառույցները, որոնք որ ներկայացնում են: Կոնկրետ

Ուսանողական խորհրդի մասով ասեմ, Ուսանողական խորհրդում ներգրավված լինելը տալիս է ոչ միայն անձնական փորձ և այլն, այլ նաև համալսարանի տեսանկյունից շատ ներքին կազմակերպական հարցեր ենք լուծում, օրինակ՝ կանոնակարգերի փոփոխություն՝ կանոնակարգերում լրացումներ կատարել՝ ի շահ ուսանողի: Այսինքն՝ նպաստում ենք և՛ ուսանողների, և՛ համալսարանի պատշաճ գործունեության ապահովմանը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Սվետլանա ջան, լսենք մյուսներին.

Տաթև-Ես Տաթևն եմ, բակալավրն ավարտել եմ Բրյուսովի համալսարանում, հիմա սովորում եմ Երևանի պետական համալսարանում «Մարդու իրավունքներ և դեմոկրատիզացիա» ծրագրով և մյուս շաբաթ ավարտում եմ մագիստրատուրաս: Ի՞նչով ա ինձ համար հետաքրքրել ուսանողական ներգրավվածությունը բուհի տարբեր գործընթացներում, դե սկզբում ուղղակի անձնական փորձն էր, որ մտածում էի շատ կարևոր ա բուհում ներգրավված լինելը, բայց հետո հասակացա թե ինչքան կարևորա Ուսանողական խորհուրդներում դասերից հետո մնալը, ինչքան կարևոր ա մնալ բուհում, մասնակցել այդ քննարկումներին, ու հետագայում արդեն անձնական փորձով հասակացա, թե դա ինչ առավելություններ ունի՝ սկսած նրանից, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում բուհում դասերից բացի, թե դա որքանով ա օգնում նաև քեզ՝ որպես ուսանող՝ մնացած գործընթացներդ կազմակերպելիս, տեղեկանալիս, տարբեր ինֆորմացիաներ ինքդ քո համար հավաքելիս, և արդեն դրանք օգտագործելիս արդեն ուրիշներին օգնելիս ու օգտակար լինելիս, դրա համար էս պահին կարող եմ ասել, որ էն գործընթացները, որոնք ես եմ մասնակից եղել շատ կարևոր են ու ոչ միայն որպես ուսանող՝ ինքդ քո գործընթացը կազմակերպելիս, այլ նաև հասկանալիս, թե այդ գործընթացները ինչպես են տեղի ունենում ու թե տարբեր խնդիրները, որ համալսարանում կան ինչպես կարող ես լուծես, ինչպես խմբակային տարբեր խնդիրների բարձրաձայնմանը մասնակցելիս:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ շնորհակալություն Տաթև, լսենք Այդուարդին:

Այդուարդ-Եվս մեկ անգամ ողջունում եմ ձեզ, ես Այդուարդն եմ, սովորում եմ Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում, թերևս առաջին կուրսի ուսանող եմ ու էն կարծիքը, որ պետք ա հայտնեմ, թերևս նոր ձևավորվող կարծիք ա, ու ընդամենը նոր ինչ-որ Ուսանողական խորհուրդներից եկած ազդակների հիմքի վրա է ձևավորված: Ուսանողի արտաուսումնական գործունեությունը ես շատ եմ կարևորում, հատկապես դպրոցից նոր տեղափոխվելով համալսարան, երբ դպրոցում արդեն որպես

աշակերտ այդ գործընթացը և գործունեությունը շատ խիստ սահմանափակված է, շատ խիստ վերահսկվում ա, համալսարանում ես դրան ականատես չեղա, դեռևս գոնե չեմ եղել: Ինչ վերաբերում ա ձեր բուն հարցին, թե ես որպես ուսանող ինչ եմ հասկանում դա ասելիս. ես որպես ուսանող էն տեսակետն ունեմ, որ դա բուհի կառավարմանը մասնակից լինելու նաև խնդիրները, որոնք են անհանգստացնում դրանք բարձրաձայնելու ու դրանց փոփոխությունները լինելու հարթակ ա, ինչը կարծում եմ շատ արդյունավետ ա, ու դրան մասնակից լինելը շատ անհրաժեշտ ա, ու յուրաքանչյուր անհատ ուսանող կարծում եմ կուզի որ խնդիրները, որոնք իրեն են անհանգստացնում փորձի դրանց լուծումը գտնել, այլ ոչ թե ինչ-որ մեկին սպասի, որ դրանք լուծեն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Աննա, խնդրեմ, Դուք ուզում էիք ինչ-որ բան ասել:

Աննա-Հա,Աննան եմ Հովհաննիսյան՝ Ֆրանսիական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետից, ինչպես նաև «Գիտական զարգացման ակումբ» գիտակրթական ՀԿ-ի անդամ եմ: Ասածս հիմնականում փոքր լրացումներ են, որովհետև հիմնականում ամեն ինչ ասվել ա, զուտ կցանկանայի նշել, որ արտաուսումնական գործունեությունը ուսանողին տալիս ա դինամիկություն, դինամիկություն՝ իր խնդիրները լուծելիս, ինչպես նաև էն խնդիրները, որ մենք տեսնում ենք համալսարանում, համալսարանի ներսում, ոչ միայն այդ խնդիրները տեսնելուն, այլ նաև այդ խնդիրների լուծմանը ձեռնամուխ լինելու հարցում: Ու իմ կարծիքով էս գործունեությունը էն միջոցներն են, որոնց օգնությամբ մենք հետագայում կարողանում ենք ունենալ մեր ճանապարհային քարտեզը՝ road map-ը, թե՛ մեր գործունեությունը ծավալելիս, թե՛ մեր ճանապարհին հայտնված խնդիրները լուծելիս:

Նարե-Ես Նարեն եմ Հայաստանում Ֆրանսիական համալսարանից, նաև՝ Ուսանողական խորհրդի անդամ, մարքեթինգի հանձնաժողովի նախագահ: Ես, երևի թե, կլրացնեմ բոլորի խոսքերը, կարևորում եմ էս ամեն ինչը ինչո՞վ, որ ոչ միայն համալսարանում, այլ կյանքում, երբ դու ինչ-որ բանով զբաղվում ես, դու պետք է լրիվ մասնակցություն ունենաս դրան, էս դեպքում համալսարանը նման գործունեությամբ մեզ հնարավորություն ա տալիս անմիջական կապ ունենալ մեր իսկ կյանքի գործընթացի հետ: Ուսանողական խորհրդում լինելով, ես ինքս մասնակցում եմ համալսարանի և՛ ներքին, և՛ արտաքին խնդիրների լուծմանը, հետևաբար ավելի շատ բան եմ իմանում, թե ինչ է ինձ սպասվում, օրինակ՝ հաջորդ տարի: Դրանով ես ինքս ինձ եմ օգնում, ու նաև համակուրսեցիներիս, որովհետև, օրինակ՝ առաջին կուրսեցիները, որ

գալիս են համալսարան, շատ բանից տեղյակ չեն լինում, իսկ երբ որ լինում են Ուսանողական խորհրդի անդամ և նման գործերին մասնակցած ուսանողներ կամ երիտասարդներ, նրանց գործառույթը շատ օգնում ա մյուսներին, որպեսզի ավելի շուտ ադապտացվեն տվյալ իրենց կյանքի փուլում: Այսքանը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Հիմա ուզում եմ հարցնել, թե բուհում առկա ուսանողների արտաուսումնական գործունեության այլ ինչ տեսակնե՞ր են ձեզ հայտնի (օր.՝ մարզական, մշակութային ակումբներ), որքա՞ն ակտիվ են նրանք գործում:

Տաթև-Հա, ես ԵՊՀ-ում այդքան էլ տեղյակ չեմ, որովհետև էս ընթացքում դասերս հիմնականում օնլայն են եղել, բայց Բրյուսովում կային սպորտային խմբակներ և ովքեր, որ սպորտով հետաքրքրված էին շատ ակտիվ մասնակցում էին տարբեր մրցաշարերի նաև, բացի դրանից ունեին նաև բանավեճի խմբակ, որը շատ ակտիվ գործում էր համալսարանի ներսում, նաև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող բանավեճերի ակումբների մրցույթներին էր մասնակցում՝ որպես արդեն համալսարանը ներկայացնող, տարբեր այդպես մշակութային միջոցառումների էլ էին մասնակցում, գիտեմ, որ հիմա էլ շարունակում են ակտիվ լինել ու փորձում են տարբեր համալսարանների արդեն Բրյուսովում ներգրավել: Ես դա շատ կարևորում եմ: Ուսանողական խորհրդում գիտեմ, որ էլի տարբեր միջոցառումներ են կազմակերպում հենց ուսանողների համար՝ ընթերցանության երեկոներ, տարբեր էսպիսի էլի մշակութային տրամաբանության մեջ կազմակերպվող միջոցառումներ: Եթե չհաշվենք էն ուսանողներին, ովքեր Ուսանողական խորհրդում են ու էսպես ասած իրանց մասնակցությունը «ցանկալի պարտադիր» ա էսպիսի միջոցառումներին՝ որպես ուսխորհրդականներ, ուսանողների կողմից հետաքրքրությունը ու մասնակցությունը բավականին բարձր է, որովհետև հաշվի առնելով, որ նաև ինչ-որ մասնագիտական թեմաներ են քննարկվում, այստեղ իրենց մասնագիտական հետաքրքրություններն են հաշվի առնվում, բավականին մեծ է այստեղ ուսանողների հետաքրքրվածությունը, բայց կախված թեմաներից՝ մշակութային, գիտական, ժամանցային, բնականաբար ժամանցային ու մշակութային ծրագրերն ավելի շատ հետաքրքրականություն ու ներառականություն են ունենում, քան՝ օրինակ՝ գիտական միջոցառումները ու էլի ուսանողների համար կազմակերպվող:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-խնդրեմ այդուարդ;

Այդուարդ-Այն ինչ ասեց Տաթևը նաև Երևանի պետական համալսարանի Ուսանողական խորհրդում ա գործում, նույն Բանավեճի ակումբը, սպորտային ակումբները, ու նաև ԵՊՀ-ում

գործում ա զինվորական հետաքրքրություններ ունեցողների համար ծրագիր, ու ինքը բավականին ակտիվ ա ու ինչքան գիտեմ շատ մեծ դիմելիություն կա ու ուսանողները ցանկանում են մասնակցել այդ ծրագրին: Այդ նույն բանավեճի ակումբը, ես ինքնս եղել եմ բանավեճի ակումբից, էս երկու ամսվա մեջ հասցրել եմ դա անել, ու երևի թե դրանից խոսեմ ու ասեմ, որ ինքը շատ պահանջված ա ու իսկապես ուսանողները սպասում են դրա մեկնարկին ու որ արդեն բանավեճի ակումբը սկսի իր գործառույթները իրականացնել: Գիտեմ, որ բացի նաև էս հիմնական ոլորտային խմբակներից նաև ուսանողական խորհրդին են կից գործում այդպիսի հանձնաժողովներ, որոնք միշտ ապահովում են ռիթմի պահպանումը ուսանողական կյանքում ու ուսանողների համար:

Սվետլանա-Բացի Ուսանողական խորհրդին կից գործող կամ խորհրդում գործող խմբերից, որոնք կարծում եմ չպիտի տարանջատեմ ուսխորհրդից, ֆրանսիական համալսարանում գործում է նաև երաժշտական խմբակ, իհարկե օնլայն դասերի հետ կապված, որ արդեն համալսարանում չենք լինում խմբակի գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է, բայց մինչև դա միջոցառումների կազմակերպման կամ ինչ-որ այլ որպես ֆրանսիական համալսարանում բենդ, էսպես ասած, ունեցել ենք: Ունենք նաև գրքերի քննարկման հետ կապված ոչ թե ավելի շատ բանավեճի, այլ ընթերցանության ակումբ, ունենք խմբագիրների ակումբ, ովքեր ուսանողական առաջին թերթի հենց խմբագիրն են եղել, և ունենք մաֆիայի ակումբ՝ որպես ժամանցի ինչ-որ միջոց: Վերջերս էլի օնլայն դասերի արանքում մի հատ հասցրեցինք կազմակերպեցինք, բայց մինչև այդ էլի գործել է: Բավականին ակտիվ են գործում, ընթերցանության ակումբը շատ ակտիվ է գործում, մաֆիայի ակումբը՝ այսինքն՝ էն հաճախականությամբ ինչ-որ Ուսխորհուրդը կկազմակերպի, մասնակցությունը շատ է լինում, երաժշտական ակումբին էլ կոնստանտ է, այսինքն՝ սահմանափակ է, բայց էլի բոլորը մասնակցում են:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Աննային լսենք:

Աննա-Շնորհակալություն, ուղղակի, քանի որ նույն ֆրանսիական համալսարանից ենք, նույն խմբակներն են: Կարամ արդեն հավելեմ, որ ինչպես արդեն նշեցինք մեր «Գիտական զարգացման ակումբը» գործում ա նաև համալսարանին կից, չնայած համալսարանի մաս չի ու տարբեր սեմինարներ ու գիտաժողովներ ա կազմակերպում, բայց արդեն սա խմբակի տեսքով չի ավելի շատ:

Նարե-դե մեր Ֆրանսիական համալսարանի հետ կապված երևի ամեն ինչ արդեն Սվետլանան և Աննա նշեցին, ես անձամբ ինքնս այս տարվա սկզբից սկսեցի զբաղվել մեր երաժշտական ակումբի զարգացմամբ, սկսեցինք ավելի նոր գործիքներ հավաքագրել, նոր ուսանողների հավաքագրել դրան ու հասակացա, թե ինչքան կարևոր են դրանք ու ինքը շատ ուսանողներին շեղում ա ուսումնական, էսպես ասած, դասային փուլից, ու ավելի շատ հետաքրքրություն ա իրանց տալիս համալսարանի կյանքի հանդեպ ու սկսում են ուսանողները ավելի բուռն հետաքրքրությամբ հաճախել համալսարան։

Մուշեղ-Բարև Ձեզ, կներեք ուշացման համար, ստեղ ծրագրային խնդիր էր իմ մոտ առաջացել, ես Մուշեղն եմ Կյուրեղյան Երևանի պետական համալսարան Ուսանողական խորհրդի նախագահության անդամ՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետից։ Երևի սենց ասեմ, որ շատ ուսանողների մոտ, նու ավելի ճիշտ դրսի մարդկանց մոտ, Ուսանողական խորհուրդը ավելի շատ ասոցացվում ա դեպի ավելի շատ ժամանցային և դեպի այլ միջոցառումների կազմակերպմանը, այսինքն ուսանողներին ցրելուն, բայց բոլորս էլ գիտենք, որ Ուսանողական խորհուրդը դրա համար չի ստեղծված։ Բայց եթե խոսում ենք արտաժամյա ուսումնական գործընթացների մասին, ապա ասեմ, որ մենք ունենք Ուսանողական խորհրդի գիտակրթական հանձնաժողովին կից, որը արդեն մի քանի տարի գործում էր, մեր 44-օրյա պատերազմի հերոս Գևորգ Արշակյանն էր բացել այդ բանավեճի ակումբը, իսկ հիմա նորից շարունակում ենք, արդեն հիմա երկրորդ փուլն ենք սկսում, այսինքն՝ անցած տարի մի անգամ կազմակերպեցինք հիմա երկրորդն ենք կազմակերպում։ Ու նորից վերաբացում ենք մեր «Ուրախների և հնարամիտների ակումբ»ը ու նաև վերջերս ունեցանք «Գիտելիքի տոն» հանդիպումների շարքը, որը ներկայացնում էին տաս ուսանող մասնագետներ, ովքեր մյուս ուսանողներին կսովորեցնեն օրինակ տեղեկատվական անվտանգություն, ռազմական հոգեբանություն, օրինակ՝ «Ճանաչելով թուրքիան», «Ճանաչելով Իրանը», նման վերնագրերով դասընթացների շարք էր գնում ու ակտիվությունը ահավոր մեծ էր՝ շա՜տ։ Բացի իմ նշվածներից, չգիտեմ մյուս համալսարաններում կան, թե չէ, մեր համալսարանում կա նաև մշակույթի կենտրոն ասվածը, որտեղ ունենք մենք շատ մեծ մասնակցություն, ունենք պարի դասեր՝ մի քանի տեսակի պարի, ունենք երգի խմբակ՝ Երևանի պետական համալսարանի երգչախումբը, նաև Ուսանողական խորհրդի մշակույթի հանձնաժողովը ունի հայրենասիրական պարերի ակումբ։ Չենք կարող համեմատական տանել ակտիվության առումով, որովհետև «Ուրախների և հնարամիտներ»-ի մեր համալսարանի ակումբը լավագույնն էր ու հիմա դեռևս հայտը նոր ենք բացել և անգամ ես

տեղյակ չեմ, թե մասնակցությունն ինչպիսին է: Բանավեճի ակումբի ակտիվությունը շատ մեծ էր, «Գիտելիքի տոնը» մեր պատկերացումից առավել մեծ էր, որովհետև մենք ինչքան էլ ունեինք մինիմալ քանակ, բայց ակտիվությունը դրանցի էլ շատ էր, այսինքն՝ մենք երբ որ դրեցինք մինիմալ քանակ, որ օրինակ խմբերում պետք է լինեն տաս հոգի, այդ տաս տեղերը ավելի շուտ լրացա , քան մենք կարծում էինք: Նաև՝ Ուսանողական ռազմական բանակումը, Ուսանողական ռազմական բանակում միշտ Արցախում էինք անում, հիմա էլ չենք անում, քանի որ Արցախում էլ չենք կարող անել

ՄՈԴԵՐԱՏՈՐ- Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում ի՞նչ կարևոր խնդիրներ և բացեր կնշեք:

Նարե-դե էս վերջերս ծագած ամենամեծ խնդիրը, երևի թե, օնլայն ուսուցումն էր, որ առաջ քաշվեց, ու դրա հետ մեկտեղ եղան բազում խնդիրներ համալսարանի և ուսանողության մեջ, որովհետև առաջ քաշվեցին օնլայն քննությունները, որից ուսանողները չկարողացան դուրս գալ:

Մուշեղ-բոլորս էլ գիտենք, որ բուհերի ինքնակառավարման մարմիններում, այսինքն՝ բուհերի գիտական խորհուրդներում և հոգաբարձուների խորհուրդներում ուսանողներն ունեն որոշակի ներկայացվածություն՝ 25%, այսինքն՝ մեր դեպում 5 ուսանող հանդիսանում է հոգաբարձուների խորհրդի անդամ: Բայց հաշվի առնենք նաև այն փաստը, որ բոլորը մտածում են, թե Ուսանողական խորհուրդը կոռումպացված և քաղաքական ուղղվածություն ունեցող մարմին է, բայց Ուսանողական խորհուրդը հենց մեկը մեր Ուսանողական խորհուրդը չունի կոռումպացված և քաղաքական որևէ հայացքներ, հենց դա է խնդիրը: Մենք մի քանի անգամ հայտարարություններ տարածեցինք 25% զեղչերի վերաբերյալ, մենք տարածեցինք հայտարարություններ մի քանի բաների վերաբերյալ, և երբ որ կոչ արեցինք բուհերին միանալ մեզ և 25% ուսման վարձի փոխհատուցում, մեզ ոչ մի բուհ չմիացավ:Մենք միայն քայլերթ կազմակերպեցինք Երևանի պետական համալսարանից դեպի ակառավարություն և մեզ միացան այլ բուհերից ուսանողներ, բայց պաշտոնական որևէ Ուսանողական խորհուրդ չմիացավ մեզ: Մենք փոխանցեցինք մի քանի 1000-ի հասնող ստորագրությունների թերթ Նաիրի Սարգսյանին՝ վարչապետի օգնականին, բայց մեր այդ նամակիմեր ուզածի որոշ չափը հասավ տեղ: Կոռումպացված լինելու մասին պատկերացումն է խնդիր, և ինչու չէ նաև, եթե դու օրինակ ուզում ես օրինակ օգտվել ինչ-որ մի բանից դու պետք է լինես Ուսանողական խորհրդի անդամ:

Տաթև-հա ես, քանի որ նաև Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայում եմ եղել էս ինքնակառավարման խնդիրը ինձ համար շատ կարևոր էր, ես այստեղ առանձնում եմ Բրյուսովի օրինակը: Արդեն ինչպես խոսվեց քաղաքական ու քաղաքականացված լինելու մասին, կարող եմ վստահաբար ասել, որ նախկինում ինքնակառավարման հետ կապված եղած հիմնական խնդիրներից մեկն էր, որը որ Բրյուսովը էս պահին չունի: Երկրորդ խնդիրը, որ ինքնս նկատել եմ գիտական խորհրդում ու ֆակոլտետի խորհրդում լինելուց էն ա, որ այլ ուսանողների շահերը ներկայացնող ուսանողները այս խորհուրդներում հիմնականում այդքան էլ լավ չեն պատկերացնում, թե ինչու են իրանք այդտեղ: Սա էն հիմնական խնդիրներից ա դառնում, թե ինչու՞ ու ի՞նչ ձևով են ներգրավված դառնում ուսանողներն էս մարմիններում ու ինչ ազդեցություն են ունենում ու որակական ինչ արդյունքներ են բերում ուսանողների համար: 3-րդ խնդիրը որ առանձնացնում եմ, դա ուսանողներին լուրջ չընդունելն ա բուհի կառավարման խորհուրդներում ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, ինչը նաև պատճառ ա հանդիսանում, որ ուսանողները զերծ մնան կարծիք արտահայտելուց, վախենան կարծիք արտահայտելուց ու սա նաև ոչ ուղիղ՝ պասիվ ագրեսիվ, ճնշումների արդյունքում ա տեղի ունենում, քան որ՝ «դուք ուսանողներ եք, մենք ավելի շատ փորձ ունենք, ձեր կարծիքը այդքան էլ կարևոր չի», սա էն հիմնական խնդիրներից ա, որ էս մարմիններում ներգրավված ուսանողները նաև հետադարձ կապի խնդիր են ունենում նաև այլ ուսանողների ներկայացնելու, թե ինչ-որոշումներ են կայացվում և ինչ խնդիրներ են քննարկվում բուհի կառավարման խորհուրդներում, որովհետև եթե արդեն իրենց ձայնը լսելի չի՝ որպես ներկայացնող ու ներկայացուցիչ մարմին, հետադարձ կապի համար, բովանդակային կապի համար նյութերը շատ քիչ են, եթե ոչ բացառվում են ու սա էլ հիմնականում խնդիր ա շատ մեծ, ոչ միայն Բրյուսովում, այլ կարծում եմ նաև մնացած բուհերում ևս, ինչքան էլ որ կառավարման մարմիններում ընդգրկված մարդիկ փորձում են կապը պահել, ամեն դեպքում կապի թափանցիկության, կապի արդյունավետության, բովանդակության խնդիրը շատ կարևոր ա: Օրինակ, երբ որ ես էի Բրյուսովի կառավարման խորհրդում, հիմնական խնդիրներից մեկը նաև, քանի որ ուսանողները տարբեր ֆակուլտետներից են ներգրավված լինում, այստեղ նաև ուսանողների մեջ համագործակցության խնդիր կար, ինչպես ասեցի ուսանողների մեծ մասը չի էլ հասկանում, թե իրանք ստեղ ինչի, ինչու են: Ու քանի որ մեծ մասը սա օգտագործում է իր անձնական հարաբերությունները դասախոսների, դեկանների հետ լավացնելու համար սա նաև հենց ուսանողների որոշում կայացնելու ու այդ որոշումով առաջ շարժվելու խնդիր ա

առաջացնում և ուսանողների ձայնը լսելի դարձնելու խնդիր ա առաջացնում որպես վերջնական արդյունք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լսենք նաև մյուսների կարծիքը, Աննա՝ խնդրեմ:

Աննա-Ես կցանկանայի ասել, որ խնդիրներից մեկը հենց բուն ինքնակառավարվող մարմնի թիմ նա, այսինքն՝ եթե մյուսները նշում են արտաքին խնդիրները, կցանկանայի ուշադրություն դարձնել նաև ներքին խնդիրների վրա: Ներկայացնեմ էսպիսի մի սիտուացիա, երբ որ թիմը տեսնում ա խնդիր, համախմբվումա ու ամբողջ ուժով նպատակաուղղված ա այդ խնդիրը լուծելուն: Օրինակ թիմը կազմված ա X թվով անդամներից, երբ գալիս ա վճռական պահը, որ պետք ա գործողություններ ձեռնարկեն, խմբի մեծ մասը, լավ, համենայն դեպս՝ նվազագույնը՝ կեսը հետ ա կանգնում: Ու խնդիրը բուն հարաբերությունները չեն, այլ, որ շատ մարդիկ ցանկանում են ինչ-որ բան անել, բայց չգիտեն՝ ինչ անել: Երևի, թե կասեմ, որ ինչ-որ խնդիր լուծելիս (էլի թիմի տեսանկյունից եմ ուզում նայել) մինիմալով չբավարարվելու հարցն ա, այսինքն, որ զուտ մինիմալը չանեն բավարարվելու համար, խնդիրը լուծելու համար, որովհետև դեպքեր կան, երբ որ գործողությունները զուտ ֆորմալացված բնույթ են կրում:

Սվետլանա-Մի դիտարկում էի ուզում ուղղակի անել, որ քննարկման ընթացքում նկատեցի, մեր համալսարանի ոնց որ էսպես ասած տաբերությունը էնա, որ մենք Ուսանողական խորհրդի համար ունենք կազմակերպված ընտրություններ ու սահմանափակ ա թիվը, այդ առումով, թե ինչի համար են հավաքվել՝ այդ խնդիրը մի քիչ նվազում ա, որ իմանում են, թե ինչի համար են հավաքվել, այդ իմաստով, իսկ առհասարակ, օրինակ՝ ես ինչին եմ բախվել, որ Ուսանողական խորհրդի գործունեությունը պատշաճ իրականացնելու համար պահանջվում է ահռելի մեծ ժամանակ ու եթե պահնաջվում ա պատշաճ իրականացնենք, ոչ թե Աննայի ասածի պես՝ անում են անելու համար: Դե առաջին խնդիրը, որը որ կոնկրետ ինձ համար էր չգիտեմ ուրիշների համար ինչպես, ինձ համար մի փոքր խոչընդոտ էր ժամանակի հարցը, որ չափազանց ժամանակատար ա եթե ուզում ես պատշաճ կատարես, և բացի դրանցի ներկայացվածության խնդիրը, որը ճիշտ ա նշվեց, բայց ես ուզում էի ասել, որ Ուսանողական խորհրդի ներկայացվածությունը պետք ա լինի բովանդակային, իսկ այդ դեպքում քիչ թվով ներկայացվածությունը կամ ներկայացվածության ոչ բովանդակային լինելը ուղղակի ներկայացվածության համար, իմ համար այդ խնդիր ա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Այդուարդ, Ձեզ ենք լսում:

Այդուարդ-Ճիշտ ասած ես ևս ուզում եմ ոչ թե արտաքին, այլ ներքին խնդիրներին անդրադառնալ. նախ մի հատ շատ փոքր լրացում անեմ Ուսանողական խորհուրդների քաղաքականացված լինելու վերաբերյալ, ես կարծում եմ, որ դեռևս մենք գտնվում ենք անցումային փուլում, այսինքն՝ ընդամենը մի քանի տարի առաջ բուհերի Ուսանողական խորհուրդները քաղաքականացված էին ու մենք ընդամենը նոր ենք սկսում այդ ամենից ինքնամաքրվելու գործընթացը, իսկ ինչ վերաբերում ա կոնկրետ էն խնդրին, որին ուզում էի անդրադառնալ, ես էն տպավորությունն եմ ստացել, որ ուսանողական խորհուրդներում շատ խանգարում են այդ խորհրդի անդամներին այդ պաշտոնների տրամադրումը, այսինքն՝ չգիտեմ ՝ հանձնաժողովի նախագահ, ինչ-որ քարտուղար և դրանք խիստ անդրադառնում են ուսանողի որպես անձ, իրա ինքնագնահատականը դրանից շատ բարձրանում ա, զուցե դա խիստ բնական ա: Զուտ այդ պաշտոնների մասով էի ուզում ասել, որ դրանք շատ վատ անդրադարձ են ունենում հետագայում նաև վարքագծերի դրսևորման հարցում, զուտ դա էի ուզում նշել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, շնորհակալություն, Մուշեղ, Ձեզ ենք լսում:

Մուշեղ-Ես ուղղակի մեկ ընդհանուր լրացում էի ուզում անել, տեսեք օրինակ՝ Այդուարդը նշեց պաշտոնների մասին, եթե չեմ սխալվում Աննան նշեց կադրերի բանը, այդ խնդիրները գալիս են նրանից, որ սխալ մարդկանց ենք ընտրում, մենք՝ չէ, կուրսը ընտրում ա էն կադրերն, օրինակ, ով աչքի ա ընկնում, կամ ինչ-որ մեկը, որ կուրսի մակարդակով բարձր ա սովորում, իրան ընտրում են կուրսի ավագ: Կադրերի խնդիրն ա, որ մենք սխալ կադրեր ենք տալիս: Իսկ ինչ վերաբերում ա նրան, որ Ուսանողական խորհրդում ներկայացվածությունը կառավարման մարմիններում համախմբվածություն չի տալիս, դա էն պատճառով ա, որ ուսանողներն իրար հետ ընդհանրապես քննարկումների չեն մտնում, որովհետև օրակարգը մի քանի օր առաջ դրված ա լինում ու կարող ես օրակարգին մի քանի օր առաջ ծանոթանալ, որովհետև օրինակ ԵՊՀ-ում ուսանողները գնալուց առաջ օրակարգին մի հատ ծանոթանում են, թե ինչ օրակարգ կա, ինչպես են քննարկելու, ուսանողի կարծիքը ինչպես ա լինելու տվյալ հարցի շուրջ, նոր մտնում են քննարկման: Բացի դրանից կան անհատական կարծիքներ, ինչպես նաև ընդհանուր վերջնական ուսանողների կարծիքը՝ X հարցի շուրջ, այսինքն՝ բոլորը քննարկվում ա նոր ներս են մտնում:

Նարե-Լսեցի բոլորի կարծիքները, որովհետև սկզբից հարցը ոնց որ սխալ էի հասկացել, բայց սենց կասեմ: Երկու տարիների ընթացքում, որ սովորում եմ համալսարանում, երևի, փառք

Աստծո ասեմ, որ ինչ-որ խնդրի առաջ չեմ կանգնել, դրա համար չեմ կարող մանրամասն խնդիրների մասին խոսել, որովհետև որ խոսվեց ՈՒԽ-ի ներսում կատարվող ներքին խնդիրների մասին օրինակ, այդ ամեն ինչը մեր համալսարանում չի եղել, կադրերի սխալ ընտրություն ևս չի եղել: Խնդիրներ չեմ նշում, որովհետև չեմ առնչվել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն բովանդակալից պատասխանների համար, ուզում եմ խոսենք նաև ձեր ոլորտում տեղի ունեցած դրական փոփոխությունների մասին, ի՞նչ դրական փոփոխություններ կառանձնացնեք ինքնակառավարման գործունեության ոլորտում:

Սվետլանա-Ինչպես Նարեն նշեց (մենք նույն համալսարանի ուսխորհրդից ենք), մենք այդ առումով բավականին, եթե համեմատենք նախորդ Ուսխորհուրդների հետ էսպես ասած, կառուցակարգային փոփոխություններ են մտցվել, մասնավորապես, ինչպես գիտենք Ուսանողական խորհուրդները գործում են կանոնակարգերի հիման վրա, ու այդ կանոնակարգերը մաքսիմալ էսպես, որ Ուսանողական խորհրդի գործունեությունը սահուն ընթանա՝ նպաստել են բավականին: Իսկ ինչ վերաբերում ա նախորդ կարծիքին, որ պետք չի առանձնացնել ինչ-որ պաշտոններ և այլն, դրա հակառակ կողմն էլ կա, օրինակ՝ նույն մեր համալսարանում, մենք ունենք առանձին հանձնաժողովներ, որոնք ՈՒԽ-ի մեջ են մտնում, ՈՒԽ-ի կազմի մեջ են, և յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահ կամ յուրաքանչյուր հանձնաժողով, որ ունի իրա քարտուղարը, չգիտեմ էս, էս, էս անդամները, իրանք համակարգվածություն են մտցնում, օրինակ՝ եթե համեմատենք երկու տարի առաջվա Ուսանողական խորհրդի հետ՝ Ֆրանսիական համալսարանի, կտեսնենք, որ ներքին դասավորվածությունը ինչքան էլ կարողա հոգեբանական ասպեկտով ճիշտ լինել, բայց կազմակերպվածության ու ինստիտուցիոնալ առումով բավականին արդյունավետ է:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ Սվետլանա,

Մուշեղ-Հա ես չատում, որ գրել էի, մոռացա ասեմ, որ ես ուզում եմ ավելի շատ խոսեմ ինքնակառավարման մասին, տեսեք ի՞նչ է իրանից ներկայացնում ինքնակառավարումը, դրանք առաջին կուրսեցիներից ընտրվում են ուսանողներ, ովքեր ցանկանում են մասնակցել և իրենց ունակությունների հիման վրա նրանք արդեն ինքնակառավարման, այսինքն՝ ինչպես բուհի կառավարման, այնպես էլ ուսանողների իրավունք-պարտականությունների մասով, և սա բերելու է արդեն ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացման և մենք գնացել ենք նրան, որ ներկա պահին մենք ունենք առավել ինքնակառավարված, ինքնաիրազեկված, ինչպես նաև իրազեկված ուսանողներ: Այսինքն՝ եթե ժամանակին

ուսանողները գալիս էին մեզ ասում՝ «գիտեք մեզ ցածր են գնահատել, մենք ո՞նց կարանք անենք», բայց արդեն ասում ենք, որ դու քննությունից արդեն դուրս ես եկել ու բանավոր քննության բողոքարկումը պետք է լիներ տեղում, հիմա իրանք, եթե դժգոհ են լինում միանգամից բողոքարկում են ու դուրս են գալիս: Մենք կարողացանք էս 44-օրյա պատերազմից հետո դրական միտումն այն էր, որ ուսանողների բարձրացրած խնդիրները և առաջարկներն ավելի շատ ընդունելի դարձան, երբ որ մենք կենտրոնականի 5-րդ հարկի գրադարանը անվանակոչեցինք մեր ուսանողներից մեկի անունով, մենք ունեցանք մի քանի դրամաշնորհներ հենց Ուսանողական խորհրդի անունից, որոնք ի դրամի միջոցով տրամադրվեցին ուսանողներին: Երեկ չէ առաջին օրը տեղի ունեցավ դրա հանձնումը, Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակի հանձնումն էր: Դա էլ հենց իմ ու Դավիթի շնորհիվ հասավ ուսանողին, ու այդ ամեն ինչը, որ Ուսանողական խորհուրդը փորձել է կազմակերպել դրական միտումներով էր:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, շնորհակալություն,

Տաթև-

- Երևի, ուսանողների ներգրավվածության բարձրացումը, որը որ վերջին տարիներին Բրյուսովում գնալով ավելի մեծանում ա,
- Ուսանողների կողմից ցանկությունը ներգրավված լինելու, ոչ միայն Ուսանողական խորհրդի կողմից առաջարկները, որ ուսանողները ավելի ներգրավված լինեն, այլ հենց ուսանողների կողմից ցանկությունը, որը էլի ուսանողական ինքնակառավարման մարմիններում ու որպես ինքնակառավարվող մարմնի աշխատանքի արդյունքն ա:
- Որպես ուսանողական ինքնակառավարվող մարմին Բրյուսովի Ուսանողական խորհրդի անկողմնակալությունը ու թափանցիկությունը համագործակցության մեջ թե՛ ուսանողների, թե՛ այլ բուհերի հետ, և թե բուհի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որը նախկինում շատ խնդրային էր, իսկ վերջին տարիների ընթացքում այդ գործընթացը շատ լավ վիճակում ա:
- Երևի, ամենաակնառու կետերից մեկը Ուսանողական խորհրդի՝ որպես ինքնակառավարվող մարմնի ընդհանուր աշխատանքի պատասխանատվության և հաշվետվողականության թափանցիկությունն ա ուսանողների առաջ, որը որ ևս Ուսանողական խորհրդի թե՛ աշխատանքի, և՛ թե՛ ուսանողների կողմից վստահության բարձրացմանն ա վերջին տարիներին նպաստում:

Աննա-Երևի թե ասեմ, որ օրինակ վերջին շրջանում Zoom-ի տարածման հետ կապված, օրինակ Zoom-ը տվել ա յուրահատուկ դինամիկություն, այսինքն աշխատանքը կամ հանդիպումները ավելի հեշտ կարելի ա կազմակերպել ու Timing-ի հետ կապված էն խնդիրները չկան, ինչ-որ առաջ էին, ու անգամ տնից միանալով թեկուզ ուշ ժամի: Ամեն դեպքում մեկը Zoom-ն էր, որ բավականին մեծ օգնություն էր վերջին շրջանում: Իսկ սպեցիֆիկ մեր համալսարանի հետ կապված՝ ՈՒԽ կանոնակարգում փոփոխություններ էին արվել ու ներկայացվածությունը բարձրացվել էր, այսինքն ՈՒԽ-ում մենք կարող էինք ունենալ ավելի շատ թվով անդամներ ըստ կուրսերի ու այդ էլ եմ համարում բավականին մեծ բարելավում:

Տաթև-Կարևոր ձեռքբերումներից ուզում էի խոսել պրակտիկ օրինակով, նախկինում Բրյուսովում օրինակ, լուծարքների համար, ավելի հայտնի լիկվիդների համար, 60-ը սահմանված էր որպես շեմ, բոլորս էլ գիտենք, որ 60-ը դա նաև դրական շեմն ա ընդհանուր 100 բալանոց համակարգում: Գիտական խորհրդում ուսանողների լավ արդյունքը նաև աշխատանքի այն էր, որ կարողացանք հասնել նրան, որ այդ շեմը 60-ից դառնա 80: Եվ արդեն 1-2 տարի ա, որ Բրյուսովում, փորձում են աշխատել էն ուղղությամբ, որ անգամ այդ 80 շեմը չլինի, ուսանողները հնարավորություն ունենան անգամ լուծարքի դեպքում ստանալ էն միավորը, որը որ իրենք կարող են:

Էլեն-

1.Համալսարանը ավելի է բարելավել իր գործունեությունը , այսինքն ավելի են գնահատում և արժևորում ուսանողի դերը

2.թեկուզ հեռավար եղանակով կարողանում են արդյունավետ և ճիշտ կրթություն ապահովել

3.Ուսանողը կարողանում է համատեղել աշխատանքը և ուսումը

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք անցնենք հաջորդ հարցին, տեսե՛ք «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են», ի՞նչ եք կարծում բավարար է այդ տոկոսը ուսանողների՝ բուհի կառավարմանը լիարժեք մասնակցության համար, այն պետք է ավելի բարձրացնել, գուցե նվազեցնել:

Սվետլանա-Կարճ լինեմ՝ բավարար չի:

Տաթև-ես էլ եմ կարծում եմ, որ բավարար չի, որովհետև բարձրագույն ուսումնական հաստատությունը նրա համար ա, որ ուսանողների համար աշխատի և այնտեղ ուսանողներ լինեն, հետևաբար այնտեղ ուսանողները շատ ավելի շատ պետք ա ներգրավված լինեն կառավարման գործընթացներում ու համակարգման գործընթացներում բուհի կյանքի։

Մուշեղ-Ըստ իս բավարար ա, քանի որ (չգիտեմ մյուս համալսարաններում ոնց ա) մեզ մոտ կան կառավարման երկու մարմիններ, դրանք գիտական խորհուրդն ու հոգաբարձուների խորհուրդն են, երկուսում էլ 25%, մեկում մենք պահում ենք 5 հոգու շեմը, իսկ մյուսում՝ ավելի բարձր։

Այդուարդ-Ես ևս մտածում եմ, որ 25%-ի շեմը բավարար ա։

Աննա-Բավարար չի։ Ես կարծում եմ նվազագույն շեմը պետք ա բարձրացվի, համենայն դեպս կարծում եմ, որ ուսանողները՝ լինելով համալսարանի ամբողջ կրթության նպատակը ուղղված է հենց ուսանողներին էսպես ասած, նրանք են, որ տեսնում են բուն խնդիրները, ու նրանք են, որ պետք է սովորեն իրենց խնդիրները լուծել ու գոնե 50 տոկոսս նվազագույն շեմ եմ կարծում, որ պետք է լինի։

Մուշեղ-այստեղ, որ նշում են բավարար չի, եկեք նշենք, որ մենք գալիս ենք համալսարան ոչ թե համալսարանը կառավարելու, այլ մենք գալիս ենք համալսարան սովորելու համար ու ըստ այդ 25% ներգրավվածությունը բավականին բարձր մակարդակ ա ու ինչքան էլ մենք ուզենանք մեր խնդիրները բարձրացնենք, մենք քմահաճ ենք, այսինքն մենք ինչքան էլ ուզենանք մեր խնդիրներով շարժվենք, բուհը պետք է շարժվի հենց իր կանոնադրությամբ, այսինքն հենց մենք պետք է պահենք այդ կանոնադրությունը։ Ու հենց դրա համար 25% շեմը բավարար ա։

Տաթև-Ես ուզում էի ասել, որ համաձայն չեմ Մուշեղի մտքի հետ, որովհետև բուհի հիմնական շահառուն և՛ օրենքով, և՛ ընդհանուր բուհի տրամաբանության մեջ, ուսանողներն են, հետևաբար ուսանողի կարծիքը, ուսանողի կարիքները պետք է բարձրաձայնվեն ուսանողների կողմից և նրանց ներգրավվածությամբ, որը նաև բուհը ավելի ներառական է դարձնում այդ տեսանկյունից և բազմակողմանի ներգրավվածությունը նաև բուհի արդյունավետությանն ա նպաստում։

Մուշեղ-Ուրեմն պետք է ընտրել որակյալ կադրեր, որ արդյունավետությունը բարձրացվի, միշտ չէ, որ քանակը ապահովում է որակ։ դա էլ կարող ենք ասել։

Նարե-Դրա համար որակի վերահսկմամբ կարելի է ապահովել անհրաժեշտ քանակը։

Մուշեղ-Այ այդ ավելի լավն էր։

Նարե-Համաձայն չեմ մեկա, որովհետև եթե և՛ քանակը բարձրացվի, և՛ որակը կատարած աշխատանքի որակը իսկապես կերևա։

Մուշեղ-տեսեք Նարե ջան, այստեղ ընդամենը 25%-ա, եթե մենք օրինակ բարձրացնենք 5 հոգուն դարձնենք 10, այսինքն մենք պետք է հոգաբարձուների խորհրդի քանակը էլի շատացնենք, որը տալու ա ավելի մեծ դիսկուրսի, որը տալու ա ավելի դժվար աշխատանքի, իսկ էս դեպքում, եթե մենք ունենք 5 կամ 6 որակյալ կադր, որոնք կարան իդեալական բարձրացնեն բուհում ուսանողների խնդիրները մեզ ավելի հերիքա, քան թե եթե մենք լինենք 10 հոգի ու Ազգային ժողովի պատգամավորների նման գնանք ուղղակի կոճակ սեղմելու համար։ Կոճակ սեղմելու համար մենք չենք գնում, 10 հոգի, եթե գնան, 3-4 հոգին հաստատ գնալու են կոճակ սեղմելու համար։

Էլեն-Բավարար չէ, քանի որ ուսանողները պետք է այդպիսի գործընթացներում ավելի շատ ներգրավված լինեն

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք մեկ այլ կարևոր հարց քննարկենք։ Եվրոպական մի շարք բուհերում գործում է ուսանողական օմբուդսմենի գրասենյակը, ինչ կարծիքի եք մեզ մոտ դրա կարիքը կա, թե՞ ոչ։

Աննա-Կարծում եմ, որ մեր մոտ նրա գոյությունը պարտադիր չի, որովհետև մեր մոտ, իմ կարծիքով, նույն գործառույթները կամ համեղանային համենայն դեպս նմանատիպ գործառույթներ կարա իրականացնի նաև ՈՒԽ նախագահը, այսինքն՝ լինելով ՈՒԽ ներկայացուցիչ, ու լինելով ուսանողների թիվ մեկ ներկայացուցիչը կարա կատարի նույն գործառույթները ու առանձին մարմնի ստեղծումը դրա համար անհրաժեշտ չի։

Էլեն-ես համակարծիք եմ Աննայի հետ, քանի որ Ուսանողական խորհուրդը կարողանում է ուսանողների խնդիրները ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը, այդ պատճառով էլ կարիքը դեռևս չկա

Սվետլանա-Ես կարծում եմ, որ կոնկրետ մեր համալսարանի տեսանկյունից ասեմ, որ անհրաժեշտություն չկա, ինչի՞, որովհետև նախ ամբողջ Ուսանողական խորհուրդն ինքնին

արդեն հանդիսանում ա չակերտավոր ուսանողների իրավունքների պաշտման, չակերտավոր եմ ասում, որ ասենք մարդու իրավունքների պաշտպան չի էլի, բայց իրա գործառույթը իրականացնող ա, բնականաբար: Եվ երկրորդ մենք ունենք շատ հարցեր, որոնք լուծվում են հենց այդ սկզբունքից ելնելով, այսինքն մենք որպես ինստիտուցիոնալ կառույց չունենք էսպես ասած ուսանողների օմբուդսմեն, բայց մենք ամբողջ Ուսանողական խորհրդով, որի թիվը բավականին քիչ է: Մեկ էլ կարգապահական հանձնաժողովների հետ կապված. որ ուսանողների կարգապահական պատասխանատվության են ենթարկում համալսարանի վարչակազմի կողմից, ու այդ դեպքում Ուսխորհրդի 4 անդամ կա, ու Ուսխորհուրդը պաշտպանում ա ուսանողի շահերը:

Այդուարդ- Ես կարծում եմ, որ մեզ էսօր էսպես ասած չակերտավոր սպառնացող թիվ մեկ վտանգը չի էս ոլորտում ու որ ասեմ խիստ պարտադիր ա՝ չէ, բայց ցանկալի կլիներ, որ նման կառույց լիներ, բայց որը կրկին ոչ թե կղեկավարվեր ուսանողի կողմից, կամ նույն այդ ՈՒԽ-ներին կից կլիներ, այլ հենց ավելի կառավարչական հատվածներից կլիներ դրա ղեկավարը: Ես այս տեսակետն ունեմ:

Մուշեղ-Ես էլ եմ համամիտ, որ կարիքը չկա, քանի որ Ուսանողական խորհրդում հենց կա հատուկ հանձնաժողով, որը կոչվում ա «Իրավական հանձնաժողով», որը հենց այսպես ասած կատարում ա օմբուդսմենի պարտավորություններ: Եվ հավելում անեմ Այդուարդին, որ ասումա, որ լինի ներկայացուցիչ, որը չլինի ուսանող, մենք ԵՊՀ-ում ունենք ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն, պարոն Վարագյանն ա դրա ղեկավարը, ու հենց ինքը ուսանող չի, ինքը ԵՊՀ-ում աշխատում ա որպես «Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն»-ի տնօրեն ու պաշտպանում ա ուսանողների շահերը, բացի դրանից նաև կա Կարոլինան, ով ուսանող ա ու իրավական հանձնաժողովի նախագահն ա ու էլի ուսանողների իրավունքների պաշտպանողն ա մյուս ուսանողների հետ, բայց ղեկավարում ա Կառլենը, որովհետև ինքը իրավական հանձնաժողովի նախագահն ա՝ ամբողջ համալսարանի:

Տաթև-Կապված օմբուդսմենը՝ որպես ուսանողական կառույց, Բրյուսովում օրինակ մենք ունենք իրավատնտեսական հարցերով հանձնաժողով, որը որ նաև կատարում ա էս պաշտպանության հարցերով զբաղվելու գործառույթը, չեմ կարծում, որ առանձին կառույցի կարիք կա, որովհետև մենք օմբուդսմենի գրասենյակում ունենք կրթության հատուկ վարչությունը, որը որ արդեն մեծ խնդիրների դեպքում կարողա իր աջակցությունը

ցուցաբերել, և չեմ կարծում, ինչու՞, ամենակարևորը՝ որովհետև Հայաստանի ազգային ասոցիացիան, (որի անդամ են կազմում, իմիջիայլոց Երևանի պետական համալսարանը և Ֆրանսիական համալսարանը ևս, և այնտեղ ունեն մանդատ), ընդհանուր Հայաստանի մակարդակով իրականացնում է և պարտավորություն ունի ստանձնած որպես կառույց՝ բոլոր բուհերին միավորող, ուսանողների օմբուդսմենի գործառույթը կատարելու՝ պաշտպանություն իրականացնելու, իրազեկելու: Այսինքն՝ կառույցը արդեն կա և առանձին կառույցի կարիք չկա, ուղղակի պետք է (շատ կոպիտ ա հնչում, բայց պետք է) տեր կանգնել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայում տարբեր բուհերի մանդատներին, որպեսզի կառույցի արդյունավետ աշխատանքը իրականացվի և էսպիսի խնդիր չառաջանա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք նաև հաջորդ հարցը քննարկենք. Ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները եվրոպական որոշ երակներում հիմնականում ձևավորվում են Կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցներից, բուհի արտաբյուջեից, ուսանողական անդամավճարներից: Ինչպես է ֆինանսավորվում ուսանողական արտաուսումնական գործունեությունը ձեր բուհու՞մ, ձեր գործունեությունն իրականացնելիս ի՞նչ աղբյուրներից եք ֆինանսավորվում, արդյո՞ք այն ձեզ գոհացնում է:

Մուշեղ-բուհի Ուսանողական խորհրդի ֆինանսավորումը կարող եք տեսնել մեր բանի մեջ, հենց էջում կա, իսկ ընդհանուր բանը՝ մենք ֆինանսավորվում ենք ԵՊՀ-ից և մի քանի այլ տեղերից, բայց ասեմ, որ ամբողջությամբ հերիքում ա:

Սվետլանա-Ֆրանսիական համալսարանի Ուսանողական խորհրդի բյուջեն կազմվում ա համալսարանի կողմից ամեն տարի տրվող X քանակով սահմանված գումարից, որը ներկայացվում ա Ուսանողական խորհրդի պահանջներին համապատասխան: Այսինքն՝ մենք ներկայացնում ենք էն պահանջները, ինչը որ ունենք այդ տարվա կտրվածքով: Նաև հնարավոր ա հիմնադրամների կամ այլ աղբյուրների միջոցով ձեռք բերվի գումար, անդամավճար չկա:

Մուշեղ-Ես էլ էի ուզում ասել, որ ԵՊՀ-ում անդամավճարներ գոյություն չունեն:

Տաթև-Բրյուսովում հիմնական դրամական միջոցների աղբյուրը ուսանողական կառույցի գործունեության համար բուհն ա հանդիսանում, բուհի գիտական խորհրդում որոշում է կայացվում, թե օրինակ տարեկան կտրվածքով ինչքան գումար է անհրաժեշտ ուսանողական կառույցին աշխատանքը կազմակերպելու համար, սակայն միշտ չի որ այդ հատկացվող գումարը բավարար ա լինում ուսանողական գործունեությունը կազմակերպելու,

ուսանողների համար տարբեր ծրագրեր իրականացնելու, առհասարակ Ուսանողական խորհրդի կարիքները հոգալու համար, բայց դրա ընթացքում քննարկվող հարց է լինում, հիմնականում կարողանում ենք ընդհանուր հայտարարի գալ, բայց էլի ընթացքում գումարների տնօրինման հետ կապված խնդիրներ են առաջանում, որովհետև Բրյուսովում հիմնական եկամտի աղբյուրը՝ ուսանողական կառույցի գործունեության, հենց բուհն ա հանդիսանում, այլ տարբերակները հիմնականում դիտարկվում են, բայց արդյունավետության ու արագ համագործակցության համար բուհն ա հիմնականում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Աննա, ի՞նչ ավելացում ունեք:

Աննա-Սվետլանան ամբողջությամբ նշել ա, ոչ մի ավելացում չունեմ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Իսկ Այդուարդ, Դու՞ք:

Այդուարդ-Իմ դեպքում էլ, Մուշեղը արդեն ամեն ինչ ասել ա:

Մուշեղ-Մեկ էլ, տեսեք մի էսպիսի բան, տեսեք օրինակ՝ Տաթևը նշեց, որ ընդեղ խնդիրներ ունեն, որ չի հերիքում, դա նաև գալիս ա բուհի ունեցած ուսումնաարտադրական բազայից, այսինքն տեսեք, որովհետև իրանց գումարները իրանք կարան ծախսեն օրինակ ինչ-որ բանի համար, օրինակ կարան գնան ինչ-որ հյուրանոց վարձեն կամ և այլն, իսկ ԵՊՀ-ն այդ ամեն ինչը մեզ արդեն տալիս ա, մենք ունենք ուսումնաարտադրական բազա, օրինակ մենք հատուկ մեքենաներ, եթե ուզում ենք, մենք դիմում ենք գրում, մեզ դրանք տրամադրում են, մենք էլի ինչ-որ չափով բյուջեից գումար ենք տալիս տրանսպորտի համար, բայց հիմնական մասը ԵՊՀ-ա հոգում, ու նաև ուսումնաարտադրական բազայում մենք ունենք այն օգտագործելու լիիրավ հնարավորություն, ինչպես մենք, այնպես էլ մնացած ուսանողները՝ դիմելով ուսանողական խորհրդին կարող են օգտագործել մեր ուսումնաարտադրական բազան:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք անցնենք հետևյալ հարցին. էլի ֆինանսավորման հետ կապված. Արտաուսումնական գործունեության ֆինանսավորման այլ ի՞նչ ձևաչափեր են ձեզ հայտնի, ինչ նախընտրելի տարբերակ կնշեք կամ կառաջարկեք, որն ըստ ձեզ ավելի արդյունավետ կարող է լինել:

Սվետլանա-Բացի համալսարանի կողմից ֆինանսավորումը, հնարավոր են, նշեցի արդեն, հիմնադրամների կողմից ֆինանսավորում իրականացնել և բացի այդ պատերազմի շրջանում մենք ժամանակավոր խումբ էինք ձևավորել, որը բացի նրանից, որ հավաքագրում էր տարբեր տեսակի անհատներից կամ կազմակերպություններից դրամական միջոցներ՝ ուղղելով կամավորական աշխատանքներին և նպաստելով պատերազմի շրջանում և՛ ընտանիքներին,

և՛ ռազմաճակատ ուղարկվող տարբեր բաների ծախսերն էր օգնում, բացի դրանից մենք ունեինք նաև ծրագիր, ըստ որի պետք ա մշակութային գործունեություն իրականացվեր և դրա հասույթը էլի փոխանցվեր նույն նպատակին: Այսինքն բացի նրանից, որ մենք կարող ենք հիմնադրամներից օգտվել, այլ մենք ինքներս կարող ենք այդ ռեսուրսը օգտագործել ու ստեղծել, օրինակ մշակութային ասելով նկատի ունեինք համերգներ, որը, օրինակ մի հատ կազմակերպվեց Ֆրանսիական համալսարանի ոնց որ և՛ Ուսանողական խորհրդի, և՛ համալսարանի, և՛ ամբողջ վարչական անձնակազմի կողմից, որը էլի ուղղվեց մեր շրջանավարտներից մեկի բուժմանը, այսինքն բոլոր տեսակի ռեսուրսները հնարավոր ա օգտագործել: Դե կարծում եմ, որ Ֆրանսիական համալսարանի դեպքում առաջարկներ չկան, ինչ ռեսուրս որ ունենք օգտագործում ենք և բավարարում է:

Մուշեղ-Տեսեք Էլենը արդեն գրել էր, որ ԵՊՀ-ն կարողանում է ֆինանսավորել, այո՛, որովհետև ԵՊՀ-ն ամենամեծ ուսանողական կառույց ունեցող մարմինն ա, ինքը իր ֆինանսավորումը կարողանում է տալ, բացի դրանից մենք ունենում ենք և կարող ենք կազմակերպել դրամաշնորհներ և նվիրատվություններ:

Աննա-Կուզեի զուտ ավելացնել, որ բացի էն ՀԿ-ներից, որոնց ֆինանսավորման համար կարելի է դիմել, դրանցից բացի կան, օրինակ՝ պարտականություններ, որոնց անդամ լինելով, օրինակ՝ ուսանողի վրա պարտականություն է դրվում՝ կատարել օրինակ որևէ X միջոցառում, X սեմինար ու եթե օրինակ համալսարանի անդամ այդպսիսի ուսանողներ կան, նրանք շատ հաճախ դիմում են ՈՒԽ-ին, ու նրա միջոցով համալսարանում կազմակերպում են X սեմինարը, որը, օրինակ իրանց ֆինանսավորումով, կամ, օրինակ իրանց տրվում է որոշակի X դրամական միջոց, որոնք իրանք կարող են ծախսել համալսարանի օգտին, օրինակ ես ֆլեքս շրջանավարտ եմ: Ֆլեքսը ունի մի բան, ֆլեքս շրջանավարտների ներկայացուցիչ X, Y համալսարաններում կամ քաղաքներում: Ու ամսվա կտրվածքով մեզ տրված ա էսպիսի ֆինանսավորման շեմ ու այդ շեմի միջակայքում կարելի է դիմել ու ֆլեքսից ստանալ այդ ծրագիրը ու կարելի ա նաև այդ նույնը իրականացնել օրինակ ՈՒԽ-ի հետ համագործակցությամբ, այսինքն ֆինանսավորումը ամեն դեպքում տրվում ա, ու իհարկե, սրանք շատ հաճախ փոքր գումարներ են կազմում, բայց էլի տարբերակ ա:

Էլեն-Կարող եմ ասել, որ Երևանի պետական համալսարանը կարողանում է ֆինանսավորել ուսանողներին.Կան նաև դրամական միջոցների այլ աղբյուրներ, բայց կարծում եմ որ Համալսարանի ֆինանսավորումը ավելի հստակ է:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-հիմա մի հետաքրքիր հարց ունենք: *Մոդերատորը ցույց է տալիս հարց 7-ի գծապատկերը և խնդրում, որ հերթով պատասխանեն հարցերը:*

ա) ձեր բուհում մասնակցության ո՞ր տեսակներն են գործում

Սվետլանա-3-ն էլ գործում են, եթե կարճ ասեմ:

Տաթև-Բրյուսովի դեպքում էլ, 3-ն էլ գործում են, ուղղակի այստեղ երևի դասակարգելու տարբերակով ասեմ, թե որոնք են ավելի արդյունավետ գործում. ուսանողական ինքնակառավարումը առաջին տեղում, երկրորդում՝ մասնակցությունը ակադեմիական ինքնակառավարմանը, երրորդում նոր մասնակցությունը՝ որակի կառավարմանը, որովհետև սրա նկատմամբ հետաքրքրությունը այդքան բարձր չի ու սրա մասին համալսարանի ներսում իրազեկվածությունն ա շատ ցածր, որը նաև չի նպաստում, որ ուսանողները ավելի ներգրավված լինեն էս գործընթացին:

Մուշեղ-Միանշանակ ԵՊՀ-ում էս բոլորը գործում են, ուսանողական ինքնակառավարումն է գործում, քանի որ մենք ունենք ինքնակառավարում ծրագիրը հենց դրա շնորհիվ: Մասնակցություն՝ որակի ապահովման գործընթացին, քանի որ մենք միշտ կազմում ենք տարեկան ուսանողական ռազմավարական ծրագիրը հենց այդ նույն հարցումների միջոցով և այլն և այլն, ու նոր հետո մասնակցությունը ակադեմիական ինքնակառավարմանը, որը ԵՊՀ-ում գտնվում է շատ բարձր մակարդակի վրա:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Մուշեղ Դուք դասակարգման սկզբունքով ասացիք, թե՞ նշում էիք, որ բոլորն էլ գործում են պարզապես:

Մուշեղ-Չէ, ես դասակարգման սկզբունքով չասեցի, բայց եթե ասեի, կասեի, որ ուսանողական ինքնակառավարումը, մասնակցությունը ակադեմիական ինքնակառավարմանը, հետո նոր որակը, դա այդպես ա ԵՊՀ-ում, բայց եթե ես անձամբ իմը դնեի, կասեի ուսանողական ինքնակառավարում, մասնակցություն որակի ապահովմանը, նոր հետո մասնակցություն ակադեմիական ինքնակառավարմանը, որովհետև որակա պետք է ունենանք, որ նոր մասնակցենք ակադեմիական ինքնակառավարմանը:

Աննա-Սվետլանան արդեն նշել ա, իսկ դասակարգման պահով՝ էլի ուսանողական ինքնակառավարում, մասնակցությունը ակադեմիական ինքնակառավարմանը, ու նոր 3-րդ տեղում՝ մասնակցություն որակի ապահովմանը:

Այդուարդ-քանի որ ես ու Մուշեղն էլ ԵՊՀ-ից ենք, ինքն ամեն ինչ ասեց, ինձ թվում ա ավելորդ ա իմ ասելը էլ:

Էլեն-Ես կարծում եմ, որ ավելի առաջնային գործում է ուսանողական ինքնակառավարումը, քանի որ համալսարանում գործում է ինքնակառավարում ծրագիրը

բ) ուսանողների իրական մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը ինչպիսի՞ խորությամբ է իրականացվում

Էլեն- Կարող եմ ասել, որ բոլորը միմյանց հետ փոխկապակցված են:

Մուշեղ-ես էս բուրգը, եթե անկեղծ լինեմ կքանդեի ու բոլորը կնշեի մեկ գծի վրա, որովհետև ես նշեցի, որ պետք է ունենալ որակ, (այսինքն ես նշեցի, որ ԵՊՀ-ում շատ բարձր), այդ որակը դա էն ա, որ մենք քննարկումներ ենք անում նոր գալիս ինչ-որ բանի, նշեցի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, որը այստեղ մեր մոտ կլինի խորհրդատվությունը և երկխոսությունը, իսկ տեղեկատվական հասանելիությունը դա արդեն ինքանիրազեկման ծրագրերն են, որոնք ինչպես մեր ֆեյսբուքյան պաշտոնական էջով և այլ միջոցներով ամբողջությամբ կատարվում է: Մենք չեմ կարող ասել, որ գտնվում ենք գործընկերության մակարդակի գագաթնակետում, բայց չեմ էլ ասի, որ գտնվում ենք ստորոտում, գտնվում ենք գագաթից մի քիչ ներքև, մեր խնդիրն ա առաջանում էն ժամանակ, երբ ֆակուլտետային Ուսանողական խորհուրդների նախագահները, քարտուղարները կամ նախագահության անդամները փոփոխություն է լինում և այդ ժամանակ մենք արդեն մնացած անդամներով փորձում ենք արագ բոլորին ներգրավել, որպեսզի կարողանա մեր գործընկերությունը և երկխոսությունը արագ լինի և արդեն հասնենք խորհրդատվության և տեղեկատվական հասանելիության:

Այդուարդ-ես թե՛ կիսում եմ տեսակետը, թե՛ համաձայն եմ Մուշեղի ասածի հետ, թեպետ այդքան շատ մեծ գործունեություն սուբյեկտիվ պատճառներով չեմ հասցրել ծավալել Ուսանողական խորհուրդներում, բայց այդ ազդակները ստացել եմ, ու այդ գործընկերություն ասվածի հետ էլ համաձայն եմ, թերևս լիարժեք չեմ կարող կարծիք արտահայտել, որովհետև փորձս դեռ շատ մեծ չի:

Մուշեղ-Այդուարդ ջան, ես քեզ պաշտոնապես հրավեր եմ անում:

Այդուարդ-Ես սիրով ընդունում եմ:

Սվետլանա-Եթե էլի կարճ ասեմ մենք՝ կոնկրետ ֆրանսիական համալսարանի Ուսանողական խորհուրդը, բոլոր մակարդներին էսպես ասած հասել ա: Կարծում եմ, որ ուսանողների տեսանկյունից կարող եմ ասել, որ հասել ենք գործընկերության մակարդակին, բայց մի բան

ասեմ, որ բոլորը սրանք իրար հետ փոխկապակցված են ու ինձ թվում ա հակառակից էլ կարող ենք սկսել՝ մինչև տեղեկատվական հասանելիություն, որովհետև եթե միայն ինֆորմացիան հասանելի ա, բայց մնացած գործընթացները տեղի չեն ունենում, այդ ինֆորմացիան կարա լինի թերի, իսկ էս դեպքում ոչ թե օրինակ, եթե ոչ թե բուրգի նման լինի, այլ շղթայի նման լինի՝ բոլորը միմյանց հետ փոխկապակցված լինեն, ինձ թվում ա մեր դեպքում հնարավոր ա նաև այդպես, ինչպես նշվեց տարբեր հարթակներով ինֆորմացիան հասանելի ա դառնում՝ թվային և ոչ թվային, իսկ խորհրդատվություն, երկխոսություն, գործընկերություն, իրանք սերտ կապված են և դրանցից բխում ա արդեն տեղեկատվական հասանելիություն, որովհետև եթե մենք օրինակ՝ համալսարանի հետ ինչ-որ գործընթացների մեջ չմտնենք, ինչ-որ կազմակերպչական գործունեություն չիրականացնենք բնականաբար չի լինի տեղեկատվություն, որն էլ, հետևաբար չի կարող լինել հասանելի։

Աննա-Ընդհանուր առմամբ համաձայն եմ Սվետլանայի հետ ու իրականում շատ մտքեր արտահայտեց, իսկ բուրգը իրա տեսակով ինձ համար էլա մի քիչ խնդիրներ առաջացնում, այսինքն ես սա որպես բուրգ չէի էլ դիտարկի, չգիտեմ հլը որ էս հարցում մի քիչ խնդիրներ ա առաջացրել։ Հստակ որևէ բան կնախընտրեմ չասել տվյալ հարցի դեպքում։

Մուշեղ-ավելացնելու մի հատ փոքրիկ բան ունեի, տեսեք մենք անընդհատ խոսում էին ուսանողական ինքնակառավարման մարմինների մասին, բայց եկեք չմոռանանք, որ բացի Ուսանողական խորհրդից նաև կա մեկ այլ կառույց, որը կոչվում ա Ուսանողական գիտական ընկերություն, որը էլի բուհի կառավարման կարևոր մարմիններից մեկն է, որովհետև մենք բուհի կառավարման գիտական խորհրդում ունենք նաև ներկայացուցիչ Ուսանողական գիտական ընկերության կողմից, որը էս պահին հանդիսանում ա Մերին Փանոսյան, ով Ուսանողական գիտական ընկերության նախագահն ա, նաև մենք ունենք մասնակցություն արդեն Իջևանի մեր մասնաճյուղից, նրա նախագահը նույնպես հանդիսանում ա Երևանի պետական համալսարանի Ուսանողական խորհրդի ուսանող անդամ, այսինքն էս դեպքում մեր գործընկերությունը հասել ա դրան։ Այսինքն՝ չենք տալիս միայն գլխավորը, այլ նաև մասնաճյուղը, և ոչ միայն ուսանողական խորհուրդը այլ նաև Ուսանողական գիտական ընկերությունը։

գ) և ո՞ր մակարդակներում է իրականացվում։

Աննա-Իմ կարծիքով արդեն իրավիճակի անհրաժեշտությունից կախված ա համագործակցության մակարդակը գալիս, այսինքն սովորական վիճակում չեմ կարծում, թե

համալսարանի ինստիտուցիոնալ մակարդակից ավել շարժվելու անհրաժեշտություն լինի, եթե օրինակ մի ինչ-որ մի ծրագրի մասնակցություն չի եղել ու կրեդիտների հետ կապված օրինակ խնդիրներ չկան, իսկ համալսարանի ինստիտուցիոնալ մակարդակում, օրինակ՝ կարա լինի չգիտեմ տարեկան ծրագրերի փոփոխության հարցով առաջարկներ և այլն, օրինակ ազգային մակարդակով ես ինքս չեմ տեսել, անկեղծ ասած։

Սվետլանա-Ինչ վերաբերում ա Աննայի ասածին, համաձայն եմ, մեր համալսարանը իր ուսումնական պլանով մի փոքր տարբերվում ա, բայց կան առարկաներ, որոնք բոլորի համար են, օրինակ՝ ֆրանսերենը, անգլերենը և այլն, ու որոնց կրեդիտները բոլորի համար նույնն են, մենք դրանց փոփոխությանը մասնակցել չենք կարող, նպաստել չեն կարող։ Վերջերս մեր մոտ եղավ կամընտրական առարկաներում փոփոխություն, մենք օրինակ առաջարկներ էինք ներկայացրել, թե արդյոք հնարավոր է էս, էս, էս առարկաները ներառել որպես կամընտրական առարկա՝ Ուսանողական խորհրդի տեսանկյունից, և մի առարկայի ավելացում ունեցել ենք, բայց էն մեխանիզմը, որը գործում ա օրինակ Եվրոպայում, որ առարկաները ուսանողը ընտրում ա անձամբ, օրինակ՝ հաշվելով ուղղակի կրեդիտների համակցությունը պահելով, մեր մոտ դա չի գործում, դրա առաջարկը եղել ա, բայց համալսարանը, քանի որ էս դեպքում դեղինի վրա ենք, այսինքն ինստիտուցիոնալ մակարդակի վրա ենք, չենք կարող դրանից բարձրանալ ու համալսարանը ոնց որ իր կազմած ծրագրին հավատարիմ ա մնում, ու Ուսանողական խորհուրդը կարա էս դեպքում միայն կամընտրականների կամ կրեդիտների ինչ-որ շատ փոքր թվի փոփոխության առջարկով հանդես գա։

Մուշեղ-ըստ իս, ես կոնկրետ օրինակը բերեմ մեր ֆակուլտետի վրա, հետո նոր բարձրանամ դեպի ինստիտուցիոնալ կամ համալսարանական մակարդակ։ Ֆակուլտետում տարեկան պլանը կազմվելուց առաջ հաշվի են առնվում նախորդ տարիների փորձը, այսինքն՝ երբ որ ինչ-որ նոր առարկա է մտցվում, որ ուսանողները պիտի անցնեն, հաշվի են առնում ուսանողների մասնակցությունը տվյալ կամընտրական առարկային, եթե մենք ունենք 3 կամընտրական առարկա, տվյալ առարկան հաջորդ տարի ինչ-որ փոփոխություններով ա հանդես գալիս՝ կա՛մ առարկան դուրս ա գալիս, որը շատ քիչ դեպքերում ա լինում, կա՛մ ինչ-որ ծրագիր ա փոխվում։ Համալսարանական մակարդակում մեր դեկանը չի թողնում (չակերտավոր ասած) մեզ բարձրանալ, որովհետև տվյալ հարցը արդեն լուծվում ա ֆակուլտետի կամ դեկանի կողմից՝ ինչ-որ աշխատանքների միջոցով, ուսանողին բացատրելով և այլն, և այլն, արդեն հասնում ենք էն մակարդակին, որ ուսանողը հասկանում ա, որ այդ առարկան պետք ա, իսկ մի քանի տարի

առաջ մեզ մոտ մտցվեց նոր կամընտրական առարկա, որը Ռազմական լրագրությունն էր, որը շատ կարևոր առարկա ա մեր ժուռնալիստների համար: Ռազմական ժուռնալիստիկան հենց մտցվեց ֆակուլտետի մեջ և բարձր մակարդակ ունեցանք, իսկ ազգային մակարդակում ինձ թվում ա նույնիսկ էս մակարդակը, որովհետև մենք չենք գտնվում (ոչ միայն մենք), քանի որ մենք հենց մայր բուհն ենք ինձ թվումա ազգային մակարդակը այստեղ մեզ պետք չի: Դա կարա օրինակ համալսարանական կամ ինստիտուցիոնալ մակարդակը օգտագործվի մեր ինչ-որ մասնաճյուղը, օրինակ Իջևանի մեր մասնաճյուղը:

Տաթև-Ես ինքս բոլոր մակարդակներում էլ եղել եմ՝ որպես ուսանողական կառույցի ներկայացուցիչ ու անդամ՝ Բրյուսովի կողմից, բայց կարծում եմ, որ ընդհանուր առմամբ, ոչ թե անհատական մակարդակով, այլ թե ինչ մակարդակով ա գտնվում հիմա, դա համալսարանական ու ինստիտուցիոնալ մակարդակն ա, որովհետև ազգային մակարդակում թե՛ ուսանողների մասնակցությունը բոլոր գործընթացներին ապահովման հետ կապված որակական խնդիր կա, և մասնակցության խնդիր կա, ինչքան էլ, որ վերջին տարիներին քայլեր են ձեռնարկվում ազգային մակարդակում ևս մասնակցությունն ապապահովելու համար: Ամեն դեպքում Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կողմից, ես նաև ազգային ու միջազգային մակարդակում եմ ներգրավված եղել: Քանի որ ասոցիացիան արդեն՝ որպես քաղաքականություն մշակող ազգային մակարդակում մարմին ա, ազգային մակարդակում ու միջազգային մակարդակում ներգրավվածությունը էս տեսանկյունից փորձում ենք ապահովել: Բայց ընդհանուր առմամբ մասնակցությունը էս պահի դրությամբ ավելի արդյունավետ ու ներառական ա ինստիտուցիոնալ ու համալսարանական մակարդակում ու ֆակուլտետայինն ու ծրագրայինը արդեն՝ բնականաբար, ելնելով համալսարանական մակարդակում ներգրավվածությունից՝ Բուրգի տրամաբանությամբ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-եկեք անցնենք վերջին հարցին: Ինչպիսի՞ փոփոխություններ դուք կառաջարկեք, որոնք կարևոր են և անհրաժեշտ ոլորտում առավել արդյունավետ գործելու համար:

Սվետլանա-Էս պահին միայն մի առաջարկ եկավ մտքիս, որ միշտ մտածել եմ, որ Ուսանողական խորհրդի այդ գործունեությունը լինի խրախուսելի և այդ կբարձրացնի մասնակցության աստիճանը, նաև՝ էֆեկտիվությունը, որովհետև եթե հիմա նայեք, ասենք Ուսանողական խորհրդում գործում են շատ անդամներ, որոնց մասին հիմնականում ոչ ոք չի իմանում ու շատ մարդիկ դրանցի կարողա (որ իրանց աշխատանքը չի բացահայտվում կամ չի

խրախուսվում) մտածեն, որ մասնակցությունն անիմաստ ա և մասնակցությունն ավելի քիչ կլինի: Կարծում եմ, որ այդ խրախուսման մեխանիզմներ պետք ա մշակվեն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Տաթևիկին լսենք:

Տաթև-Կարծում եմ, որ ապաքաղաքականացումը, աշխատանքի թափանցիկությունը, իրավագիտակցությունը և առհասարակ դրա կարևորությունը, որ գիտակցենք ուսանողական ինքնակառավարման մարմինների դերը շատ կարևոր են, որ կարողանանք արդյունավետ աշխատանքը և զարգացումը այս ոլորտում ապահովենք ուսանողների ներգրավվածության:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ, եկեք նաև Աննայի առաջարկները լսենք:

Աննա-Խոսք կկապեմ կարճ՝ որակի ճիշտ վերահսկում, աշխատանքի ճիշտ բաժանում ու պասիվ մասնակիցների, օրինակ ՈՒԽ-ից հեռացում:

Մուշեղ-Ստեղ ինձ թվում ա մեզ ավելի շատ պետք ա իրավագիտակցության մակարդակի բարձրացում, որպեսզի ուսանողները հասկանան, որ իրենց կարծիքը շատ կարևոր ա բուհի կառավարման համար, եթե ինչ-որ խնդիր կա, իրանց մեջ չպահեն կամ անկյուններում ինչ-որ իրանց ընկերուհու կամ ընկերոջ հետ չփսփսան, այսպես ասած, և դա բարձրացնեն Ուսանողական խորհրդի կամ մնացած կառույցների միջոցով, որպեսզի մենք հասնենք էն մակարդակի, որ ուսանողի դերի բարձրացում լինի, այլ ոչ թե հակառակը, որ ինչպես երեխեքից մեկը նշեց՝ ուսանողին նեղում են, էսպես ասած՝ «քո կարծիքը այդքան էլ կարևոր չի և այլն, և այլն, մենք ավելի փորձ ունենք» և այլն: Այստեղ ուսանողի իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է: Ինձ թվում ա դրանք արդեն կարող ենք անել որակի ապահովման բարձրացման միջոցով, այսինքն՝ հարցումների, հանդիպումների և այլնի միջոցով մենք կարողանանք դա անել: Էսպիսի մի խնդիր էլ կա., եթե ուսանողը չուզեց, դու նրան ինչքան էլ ուզենաս համոզես ինքը չի գա, ինքը չի կարենա անել դա, այսինքն՝ այստեղ իրավագիտակցության մակարդակի բարձրացումը պետք ա գա հենց այդ ուսանողից, որ ինքը հասկանա, որ իրա ձայնը որոշիչ ա: Տեսեք ես էսպես ավելի հեշտ եմ խոսում նրա համար, որովհետև ես հասկանում եմ այդքանը, որ իմ ձայնը կարևոր ա ու ես այդքան բոլորի նշած թափանցիկությունը, որ նաև մենք ապաքաղաքական ենք, ես գիտեմ, որ մենք նաև ապա էս ինչ ենք, մենք նույնիսկ չենք համաձայնվում ռեկտորի տված բոլոր բաներին, այսինքն՝ մենք մեր կարծիքը անպայման առաջնորդում ենք, իսկ դժգոհության դեպքում՝ նաև առաջարկում ենք: Ուսանողական խորհուրդը առաջարկում ա, բայց ուսանողներ կան, որ ասեցի չեն անում, այսինքն՝ նույնիսկ, իրանց բողոքարկումը իրանք չեն անում, այսինքն այդ ամեն ինչը

իրազեկման շնորհիվ մենք պետք ա այդ ամեն ինչը անենք: Ես, քանի որ իմ նշվածները գիտեմ, ես էլ մյուսների նման չեմ մտածում *(նկատի ունի չի առաջարկում մասնակցել, բարձրաձայնել, թափանցիկ լինել և այլն),* օրինակ՝ Այդուրադի դեպքում հետաքրքիր կլիներ, ինքը ինչը չգիտեր: Էս դեպքում երեխեքից մեկը նշեց ուսանողական ասոցիացիայի մասին, էս դեպքում կարծում եմ, որ ուսանողական ասոցիացիայի դերի բարձրացումը հենց պետք էր, որ բոլոր բուհերը լինեն, նշեցին որ օրինակ Ֆրանսիական համալսարանը և ԵՊՀ-ն ունեն բարձր մակարդակով ներգրավվածություն, այսինքն էս դեպքում պետ քա նաև, որ եթե, որ ուսանողական ասոցիացիան չի կարողանում ապահովել օրինակ ամբողջ ուսանողների մասնակցությունը, ուրեմն պետք է ստեղծվի էնպիսի մարմին, որը կկարողանա բոլոր ուսանողներին միավորի: Եթե չեմ սխալվում այդպիսի մարմին Ուսանողական խորհուրդների մակարդակով կա:

Տաթև-ԱՆՍԱ-յում մանդատների տեսանկյունից էս պահին 15 բուհեր կան որպես մանդատ ունեցող, բայց դրանով նրա գործունեությունը չի սահմանափակվում, **ԱՆՍԱ**-ն Հայաստանում գործող թե՛ պետական, թե՛ մասնավոր համարյա բոլոր բուհերի հետ համագործակցում ա ու ներգրավում ա թե՛ ծրագրերում, թե՛ սեմինարների, թրեյնինգների և տարբեր զեկույցների պատրաստման համար ֆոկուս խմբերի քննարկումներում: Սա շատ կարևոր ա, որպեսզի հասկանանք, թե ազգային մակարդակում ու ազգային մակարդակից հետո միջազգային մակարդակում ինչքան կարևոր ա ԱՆՍԱ-ում տարբեր բուհերի մասնակցությունը, որպեսզի թե՛ աշխատանքը արդյունավետ լինի, և թե՛ որակապես աշխատանքը կարողանա ներառել Հայաստանում գործող բոլոր բուհերի խնդիրները ու նրանց վերաբերող բոլոր հարցերը կարողանա ներառի ու կարողանա ներկայացնի:

Մուշեղ-Տաթև ջան, իսկ ասոցիացիայի արդյունավետությունը 1-5 բալանոց համակարգով ինչպե՞ս կգնահատես:

Տաթև-Չեմ կարծում, որ մեր թեմային վերաբերում ա, բայց ասեմ, որ սուբյեկտիվ տեսանկյունից խնդիրը ոչ թե ԱՆՍԱ-ում ա, այլ բուհերի ցանկությանը ու տեղեկացվածությանը՝ որպես մանդատավոր կառույցներ անդամակցելու ու մասնակցելու, երևի ԱՆՍԱ-ի աշխատանքը կգնահատեմ 4, որովհետև մենք անում ենք առավելագույնը բոլոր բուհերին ներգրավելու համար և բոլորի հետ աշխատելու համար:

Մուշեղ-Ինչի՞ համար եմ սա ասում, որովհետև անցած տարի քովիդի համար մենք փորձեցինք էնպես անել, որ ուսանողների զեղչ լինի, և դիմեցինք թե՛ բժշկական համալսարանին, թե՛ այլին, մենք հայտը բացեցինք եղան դիմողներ այլ համալսարաններից, բայց բարձր մակարդակով,

պաշտոնական մակարդակով որևէ միացում այլ համալսարանի կամ Ձեր նշած ասոցիացիայի կողմից չեղավ:

Տաթև-Սա խնդիր ա, այո՛, որովհետև եթե ԱՆՍԱ-ի հետ համագործակցությունը բուհերի կողմից չի իրականացվում, եթե մի բանի մասին տեղյակ չես, հետևաբար չես կարող միանալ: ԱՆՍԱ-ի հետ համագործակցություն ասելով սա նկատի ունեմ, երբ ասում եմ, որ բուհերը պետք է ևս շահագրգռված լինեն համագործակցելու ԱՆՍԱ-ի հետ, որպեսի վերջինս էլ կարողանա իր հնարավորությունների ներսում և դրանից դուրս նաև օգնի և աջակցի բուհերին իրենց նախաձեռնություններում, առաջարկություններում և տարբեր գործընթացներում:

Մուշեղ-Մենք եկանք էն եզրակացության, որ այստեղ գալիս էր իմ ասած որակը: Այսինքն՝ մենք պետք է ունենանք որակյալ կադրեր թե՛ Ձեր նշած տեղում, թե՛ մյուս ուսանողական կառույցներում, որպեսզի մենք կարողանանք պահել համագործակցությունը, որովհետև եթ ես եմ X համալսարանի Ուսանողական խորհրդի նախագահը, ուրեմն՝ վսյո ես վերջն եմ, ուրեմն ես պետք է էսպես անեմ, էնպես անեմ ու ինձ պետք չէ մնացած բուհերի հետ համագործակցել: Չէ, հենց այդ ա որ մենք պետք ա ունենանք որակյալ կադրեր, որ ոչ միայն իր գործունեության մասին մտածի, այլ գտնի եզրեր, համագործակցի այլ համալսարանների հետ:

Մուշեղ-Առաջարկ, եթե կարելի է մտածել փոքրիկ բանավեճ կազմակերպել բուհերի ինքնակառավարման համար տարբեր համալսարանների միջև, դա կլինի թե՛ Ուսանողական խորհրդի, թե՛ Ուսանողական գիտական ընկերության, թե՛ այլ ակտիվ ուսանողների մասնակցությամբ:

Մոդերատոր-*Ամփոփման խոսք…*

Ֆոկուս խմբային քննարկում 18.11.2021

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ողջույնի խոսք, թեմայի ներկայացում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ողջույնի խոսք. թեմայի ներկայացում

Ի՞նչ է ձեզ համար ուսանողական արտաուսումնական գործունեությունը:

Էլիզա-Բարև Ձեզ, ողջունում եմ բոլորին, ներկայացնում եմ Գիտությունների ազգային ակադեմիան, սովորում եմ սոցիալական մանկավարժության ֆակուլտետում, մագիստրոս եմ, հանդիսանում եմ Սոցիալական մանկավարժության բաժնի ավագը: Արտաուսումնական գործունեությունն ինձ համար ուսումնական պրոցեսից դուրս ակտիվությունն է, այսինքն՝ ուսանողությունը (դե ունակաբար, այնուամենայնիվ, ինձ համար շատ լայն ա այդ հասկացությունը) իր մեջ ընդգրկում է ոչ միայն սովորելու, ուսումնառության պրոցեսը, այլ նաև ակտիվությունը, ձեռնարկելը, շատ կոնֆերանսների կամ միջոցառումների կազմակերպելը, նախաձեռնողականությունը, ակտիվությունը հասարակական կյանքին, ինչու չէ, նաև յուրաքանչյուրս մեր մասնագիտության առումով նախաձեռնողականությունը, առկա խնդիրների վերհանումը, ինչպես նաև դրանց լուծման ուղիների փնտրելը: Այսքանը: Շնորհակալություն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ձեզ ենք շնորհակալ, լսենք Անահիտին

Անահիտ-Ողջույն բոլորին, ես Անահիտն եմ, Հայաստանի Ամերիկյան համալսարանի ակտիվ ուսանող եմ և ուզում եմ ասել, որ արտաուսումնական գործունեությունն ինձ համար հնարավորություն է անձի զարգացում ունենալու, հետագայում ինչո՞ւ չէ աշխատանք և հետաքրքիր զբաղմունք գտնելու համար և դինամիկ փոփոխություններ ունենալու համար, անձնական աճի հետ կապված, լինել առաջնորդ, հնարավորություն ունենալ առաջնորդ լինելու և շատ-շատ հնարավորություններ ստանալու և ինչու չէ տարբեր ծրագրերի մասնակցելու, որոնք կզարգացնեն ուսանողներին:

Էլեն-Բարև Ձեզ, ես Խառատյան Էլենն եմ, կներկայացնեմ ՃՇԱ համալսարանը՝ Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանը, ուզում եմ նշել, որ ես ավարտել եմ 2 տարի առաջ, դրա համար կխոսեմ անցյալով: Էն ժամանակ այդ ինձ համար հնարավորություններ էր, բացի ուսման բուն մասնագիտական գիտելիքներից ձեռք բերել նաև մասնագիտական գիտելիքներից դուրս գիտելիքներ, օրինակ՝ իմ դեպքում մեր համալսարանը տալիս էր թե՛ լեզու սովորելու հնարավորություն, թե՛ պրակտիկա անցնելու հնարավորություն, իհարկե նաև խորացնելու մասնագիտական հմտությունները ու ճամփորդելու հնարավորություն: Ցանկալի ա, որ համալսարանը տա էն հնարավորությունը, որ ուսանողը կարողանա ճամփորդի և ավելի շատ հասական արտերկրում սովորելու գործընթացը:

Հերմինե-Բարև Ձեզ, ես ևս ավարտել եմ երկու տարի առաջ պետական տնտեսագիտական համալսարանը: Այժմ կարող եմ ներկայացնել Էրազմուս+ ուսանողական ցանցը: Ինձ համար արտաուսումնական ակտիվությունը իրենից ներկայացնում է առաջին հերթին մասնագիտական առաջընթացը տեսական գիտելիքներից դուրս ստանալու հնարավորությունը intership-երի, workshop-երի տեսքով, ինչպես նաև նշվեց առաջնորդությունը, առաջնորդական հմտություններ ձևավորելը թեկուզ workshop-եր կազմակերպելու տեսանկյունից, ինչպես նաև կապերի հաստատումը՝ սկզբում ոչ մասնագիտական, հետո մասնագիտական նկատառումներով կիրառելու նպատակով: Այդքանը:

Յանա-Բարև Ձեզ ես Յանան եմ, սովորել եմ Հայաստանում Ֆրանսիական համալսարանում ու կներկայացնեմ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի անունից: Կարծում եմ արտաուսումնական գործունեությունը ավելի շատ միտված ա անձնի զարգացմանը, այլ ոչ թե՝ մասնագիտական զարգացմանը: Բոլորս էլ գիտենք, որ մեր օրերում softskill-երը ավելի շատ են գնահատվում, քան hardskill-երը, որովհետև hardskill-երը յուրաքանչյուր ժամանակ հնարավոր ա ուսումնասիրել և զարգացնել, բայց softskill-երը ավելի շատ մեր անձնական նկատառումներն են, էսպես ասած, ու անձնական գործունեությունը, դրա համար հենց համալսարանական տարիներին ավելի շատ պետք ա ուշադրություն դարձնել այդ skill-երի զարգացմանը, ու այդ skill-երի զարգացմանը օգնում են ավելի շատ networking-ը ու տարբեր սֆերաներում ինքդ քեզ փորձելը, այսինքն տարբեր intership -եր անել, տարբեր

գործընթացների մեջ ներգրավված լինել՝ այստեղ կամավորություն անել, այնտեղ կամավորություն անել, ու այդ skill-երը զարգացնել:

Մոնիկա-Բարև Ձեզ, ես Մոնիկան եմ, սովորում եմ Վանաձորի պետական համալսարանում Կառավարման բաժնի երկրորդ կուրսում, ինձ հնարավորություն է տվել զարգանալ որպես բազմակողմանի զարգացած մարդ, ինչպես նաև շատ մեծ կապեր է ստեղծել, մեծ ընկերների շրջապատ եմ ձեռք բերել և իմ հետագա գործունեության համար այդ կապերը շատ օգտակար են իրոք, քանի որ, երբ հետագայում ծրագրեր եմ իրականացնում, կարողանում եմ կապվել իմ ընկերների հետ և իրենց օգնությամբ ծրագիր իրականացնել: */տեխնիկական խնդրի պատճառով, Մոնիկայի ձայնը չի լսվում/*

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Առաջարկում եմ Տաթևիկին լսենք, մինչև Մոնիկայի խնդիրը կարգավորվի:

Տաթևիկ-Ողջույն բոլորին, շնորհակալություն նման հնարավորության համար: Ես ևս, եթե խոսեմ ընդհանարապես արտաուսումնական գործունեության մասին, առաջին հերթին ես բաժանել եմ երկու մասի արտաուսումնական գործունեությունը. գործունեություն, որը որ կապ ունի առհասարակ մասնագիտության հետ և հնարավորություն է տալիս ավելի հմտանալու, զարգանալու և արդեն դու աշխատում ես և հնարավորություններդ ես զարգացնում մասնագիտական դաշտում, և երկրորդը, որ մենք բաժանել ենք և շատ սիրում ենք ասել, դա հասարակական ակտիվությամբ կամ հասարակական գործունեությամբ զբաղվելն է, որը որ առհասարակ կապ չունի մասնագիտության հետ, բայց շատ մեծ հնարավորություններ է ընձեռնում ուսանողին՝ տարբեր աշխատանքներ իրականացնելիս հմտանալ: Եթե երկու տարի առաջ ներկայացնում էի առհասարակ տարբեր կազմակերպություններ և փորձում էի կամավորական աշխատանքներ իրականացնել, ներկա պահին ես հանդիսանում եմ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության նախագահը, և պետք է նշեմ, որ մեր գործունեությունը ևս հիմնականում հիմնված է այն երկու կետերի վրա, որոնք ես նշեցի:

Հասմիկ-Բարև ձեզ, կներեք ես էսօր կլինեմ անտեսանելի: Ես Հասմիկն եմ Մալիշկայից, սովորում եմ Եղեգնաձորի պետական տնտեսագիտական համալսարանում (ընդհանրապես Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, բայց՝ Եղեգնաձորի մասնաճյուղում), 3-րդ կուրսում: Ու ինչա՞ իմ համար իրենից ներկայացնում արտաուսումնական գործունեությունը, այդ էն ամեն ինչնա, որ ես կարամ զբաղվեմ դասից

դուրս, անկախ ոլորտից, անկախ իրա արդյունքից, որը ինքը կարա ինձ բերի: Մի խոսքով էն ամեն ինչը, որ կապված չի համալսարանի, բայց կարա նաև կապված լինի, բայց ես անում եմ այդ ամեն ինչը ելնելով զուտ նրանից, թե արդյոք ուզում եմ դա, թե ոչ ու արդյոք իմ վրա չեմ զգում լրացուցիչ պարտավորություններ՝ կապված համալսարանի հետ:

Լուսինե-Բարև ձեզ, շնորհակալ եմ հնարավորության համար: Ես Սողոմոնյան Լուսինեն եմ: Ես Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Ուսանողական խորհրդի նախկին նախագահն եմ, մենք արդեն ունենք նորանշանակ նախագահ: Ընդհանրապես արտաուսումնական գործունեությունը կոնկրետ ինձ համար դա չունի ինչ-որ հատուկ ժամ, օր ու գիտելիքներ ստանալու դարբնոցը էնպիսի մի գործընթաց է, որ դու անընդհատ պետք է այն լրացնես: Իսկ արտաուսումնական գործունեությունը ավելի շատ ոչ ֆորմալ մակարդակում եմ պատկերացնում, քանի որ դու ակադեմիական կրթությունից զատ կարողանում ես ստանալ, և ազատ ես ստանալ այն հմտություններն ու ավելի ինֆորմատիկ գիտելիքները, որոնք որ կկարողանան ծառայել և որոնք, որ դու հնարավոր է չստանաս ակադեմիական կրթության շրջանակներում:

Տիգրան-Ես Տիգրանն եմ, Ես Վանաձորից եմ, սովորում եմ Հայաստանի ֆրանսիական համալսարանի առաջին կուրս՝ Իրավաբանություն, բայց առհասարակ ներկայացնում եմ Եվրոպական երիտասարդական պառլամենտը: Ի՞նչ է իմ համար արտահամալսարանական գործունեությունը, համաձայն եմ Հասմիկի հետ, որ այդ էն ամեն ինչն ա, որ տեղի ա ունենում համալսարանից դուրս քո ազատ ժամերին ու անձնային մակարդակով, եթե դիտարկենք, որ առանց կարիքից ելնելով ես անում այդ ամեն ինչը՝ կարա լինի աշխատանք, կարա լինի ինչ-որ կամավորական ակտիվություն, ցանկացած բան, որ քո վրա ոչ մի պարտավորություն չի դնում, նու մտնում ես այդ ամեն ի՞նչի մեջ քո կամքով, ու տենց այդ ամեն ինչը համարվում ա արտահամալսարանական գործունեություն: Այդքանը

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Մոնիկա, խնդրեմ շարունակեք Ձեր խոսքը և փորձեք ամփոփել:

Մոնիկա-Արտաուսումնական գործունեությունը նախ ինչպես նշեցի իմ համար անձին հնարավորություն ա տալիս բազմակողմանի զարգանալ և բազմակողմանի զարգացած դառնալ, այսինքն՝ բացի բուհական հիմնական ծրագրից, արտաուսումնական գործընթացի ժամանակ կարող ես էնպիսի բաների մասնակցել, որոնք ոչ մասնագիտական են, սակայն էլի

զարգացվածություն են ապահովում և ստացած գիտելիքների շնորհիվ հնարավորություն ես ունենում հասարակության համար օգտակար նախաձեռնություններ իրականացնել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք անցնենք հաջորդ հարցին: Բուհում առկա ուսանողների արտաուսումնական գործունեության այլ ի՞նչ տեսակներ են ձեզ հայտնի (օր.՝ մարզական, մշակութային ակումբներ), որքա՞ն ակտիվ են նրանք գործում:

Տիգրան-Իրականում հարցը սենց միանշանակ չեմ կարա պատասխանեմ բոլոր համալսարանների մասով: Մեր համալսարանում, ճիշտն ասած, վստահ չեմ ինչ կա, դրա համար ինչ լսել եմ տարբեր համալսարաններից, վաղը համալսարաններում գիտեմ, որ կան մարզական, սպորտային ինչ-որ ակումբներ, կան մաֆիայի ակումբներ, բայց ոչ բոլոր համալսարաններում են հանդիպում, նու ինչ-որ ժամանցային խմբեր, կամ որ կազմակերպում են ուսանողների ժամանցը, էլի ոչ դասերի հաշվին, այդքանն են: Ակտիվությունը էլի կախված ա համալսարանից, իմ դիտարկմամբ ով այդ ակումբներ մտնում ա, միանգամից մասնակցում ա հանդիպմանը, սա հենց նշանակում ա, որ ինքը հետաքրքրված ա ու իրա մասնակցության շարունակականություն ա ապահովում, որովհետև մեկ անգամից ավել, այսինքն մտել ա, տեսել ա ինչ են անում, իրան դուր ա եկել այդ, երկրորդ անգամ էլի ներկա ա գտնվում այդ հանդիպմանը, եթե մենք երկրորդ հանդիպմանը ունենք մասնակիցների մեծ քանակ, նշանակում ա, որ հաջողվել ա այդ:

Մոդերատոր-Շատ լավ, եկեք լսենք Անահիտին:

Անահիտ-Շնորհակալ եմ, Ամերիկյան համալսարանում ասեմ, որ կան տարբեր ուսանողական ակումբներ, որոնք ստեղծվել են ուսանողների կողմից, օրինակ՝ հենց ունենք ֆիլմ դիտելու քլաբ, ունեցել ենք (այս պահին ես արդեն համալսարանը ավարտել եմ, ես ասում եմ այն, ինչ-որ ես արդեն հնարավորություն եմ ունեցել մասնակցել), անիմե քլաբ է եղել, speak up քլաբ է եղել, որի շրջանակներում ելույթներ ենք ունեցել տարբեր public speaking-եր ենք իրականացրել, ունեցել ենք նաև creative writing club, այսինքն՝ շատ բազմազան է եղել: Ամենաակտիվ գործունեության ծավալ ունեցողներից մեկը եղել է speak up քլաբը և բավականին արձագանք է ունեցել համալսարանի ներսում, դրսում և դասախոսական շրջանակներում: Ամենաքիչ ակտիվը չեմ կարող ասել, որովհետև այդպես չգիտեմ: Volunteer link-ի մասին եմ ուզում նշել, որովհետև ինձ համար դա, օրինակ, կապեր է ստեղծել հետագայում հենց համալսարանից

դուրս, Volunteer link-ը անընդհատ տալիս է նոր հնարավորություններ, որ կարող ես գրանցվել և եթե դրա անդամ ես այդ մեյլերը դու միշտ ստանում ես:

Տաթևիկ-Ես, իհարկե, չեմ կարող ասել, թե որ ակումբներն են ներկա պահին շատ ակտիվ գործունեություն ծավալում, որովհետև ….հիմնականում ԵՊՀ-ում ծանոթ եմ ակումբներից մարտական ակումբին, որ լսել եմ շատ և ինքս էլ մասնակցել եմ նրանց կազմակերպած մի քանի բանախոսությունների և պետք ա ասեմ, որ բավականին ակտիվ գործունեություն ա ծավալում մարտական ակումբը, մշակույթի մասով կնշեմ, որ մենք Երևանի պետական համալսարանում ունենք Մշակույթի կենտրոնը, որտեղ որ ուսանողները հնարավորություն են ունենում (իհարկե, այն ուսանողները, ովքեր ունեն տաղանդ և կապ ունեն մշակույթի հետ), բոլորին հնարավորություն է տրվում, որ մասնակցեն տարբեր միջոցառումների և ներկայացնեն Երևանի պետական համալսարանը: Եվ առանձին կարող եմ ասել, որ կան ֆակուլտետներ, ովքեր ունեն տաբեր ակումբներ, այսինքն՝ դրանք ավելի շատ ֆակուլտետների ներսում ձևավորված ակումբներն են, օրինակ՝ գրքասերների ակումբը, կա նաև ինչպես մեր ընկերը նշեց մաֆիայի ակումբներ, որոնք արդեն ոչ թե համալսարանական են, այլ ֆակուլտետային են և ոչ բոլոր ֆակուլտետները ունեն: Նաև ֆիլմ դիտելու ակումբներ կան, բայց հիմնականում Երևանի պետական համալսարանի հետ կապված ես մարտական ակումբը կնշեմ:

Մոնիկա-Ես Վանաձորի պետական համալսարանից եմ ու մեր համալսարանում ընթերցանության սրահ կա, որը բավականին ակտիվ ա գործում բ կրթական ողջ ընթացքում լի ա ուսանողներով, որովհետև շատ հետաքրքիր գրքեր կան՝ ոչ մասնագիտական, ու դա ուսանողներին գրավում ա, ու ամեն տարվա վերջ ամփոփում ա լինում, ու այն ուսանողները ովքեր, որ շատ են հաճախել գրադարան, պարգևատրվում եմ գրադարանի կողմից:

Էլեն-Որպես ակումբ՝ դժվարանում եմ պատասխանել, բայց մեր մոտ շատ զարգացած էր սպորտի ուղղվածությունը, չնայած նրան, որ մեր համալսարանը Տերյանի վրա էր գտնվում, իսկ ֆիզկուլտի պիտի գնայինք Մասիվ, բայց մեր համալսարանը հայտնի էր ֆուտբոլի, բասկետբոլի թիմերով: Կար նաև լեզու սովորելու հնարավորություն, բայց դա IUF-ն էր կազմակերպում, չգիտեմ ինչքան ա հենց համալսարանական, բայց ուսանողների համար էր հենց ֆրանսերեն սովորելու համար: Մի քանի բան կազմակերպում էր նաև Ուսանողական

խորհուրդը, բայց սովորաբար առաջին կուրսեցիների համար էր, կամ էլ բարձր կուրսեցիները հետագայում չէին հետաքրքրվում, շախմատի ակումբը, այդքանը երևի։

Լուսինե-ուրեմն նշեմ, որ Գիտությունների ազգային ակադեմիան կոնկրետ ակումբ, գոնե իմ հիշելով չունի, բայց Ուսանողական խորհրդի շրջանակներում շատ ակտիվ գործունեություն է ծավալել մշակութային, կրթական, սոցիալական, անվտանգային մի շարք դասընթացների շրջանակներում, օրինակ և՛ մշակութային թեմաներով, և՛ քննարկումներ գրքասերների փոքրիկ ակումբ, և՛ այցելություններ մի շարք համերգների, օրինակ՝ կրթական, սոցիալական, անվտանգային (ոչ ֆորմալ, իհարկե մակարդակում) հրավիրել ենք մի շարք բանախոսների գիտական ոլորտի լավագույն մասնագետների, որոնք որ իրանց գիտափորձով են կիսվել։ Ու նաև նշեմ, որ այդ ժամանակներում ոչ միայն գալիս էին Գիտությունների ազգային ակադեմիայի ուսանողներ կամ շրջանավարտներ, այլ նաև հարակից բուհերից, անկախ հետազոտողներ, ուսումնասիրողներ, որոնք որ իրենց ակտիվ ներգրավվածությունն էին ունենում այդ դասընթացներին և ասեմ, որ դրանք բազմաոլորտ էին ու բազմաշերտ ու կարծում եմ, որ Ուսանողական խորհուրդը էս շրջանակներում՝ բացի ուսանողների դեսպանը լինելուց, ունի մեծ անելիք էս ակտիվությունը և համագործակցությունը պահպանելու ուսանողների միջև։

Էլիզա-Կարծես, թե Լուսինեն շատ համապարփակ ձևով ներկայացրեց։ Ինչպես արդեն նշեցինք ներկայացնում ենք Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնը, որն աչքի է ընկնում իր ակտիվ ուսանողական գործունեությամբ։ Կնշեմ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը, ովքեր ակտիվորեն աշխատանքներ են իրականացնում, ուսանողներին ներգրավում են։ Քանի որ Գիտակրթական միջազգային կենտրոնում ուսանողների մեծ մասը և՛ աշխատում են, և՛ սովորում են՝ կրթությունը իրենց շարունակում են և կարծում եմ, որ յուրաքանչյուրն իր նախասիրություններով, օրինակ՝ ես ավելի շատ գիտական, քանի որ կրթության ոլորտի մասնագետ եմ ինձ շատ ավելի գիտական ոլորտն ա ավելի հետաքրքիր, գիտական կոնֆերանսներին, միջոցառումներին մասնակցելը։ Չնայած հանձինս Լուսինեի Սողոմոնյան (նախ ուզում եմ իրեն շնորհակալություն հայտնել, որպեսի ակտիվ գործունեություն է ծավալում), իսկապես եմ ասում, երբ մտել ենք Ակադեմիա, առաջին իսկ մարդկանցից ովքեր, որ փորձել են ներգրավել ակտիվ ուսանողներին և իրենց ակտիվությամբ վարակել

մնացածներին, եղել է Ուսխորհուրդը, Ուսանողական գիտական ընկերությունը, ինչպես նաև Հանրային կապերի և կարիերայի բաժինը: Իրենք նաև մշակութային ժամանց են ապահովում, որովհետև կոնկրետ ակադեմիան ունի տարբեր թատրոնների հետ կապեր և ուսանողներին տրամադրում է տարբեր համերգների կամ ներկայացումների տոմսեր, որին որ մեծ սիրով մասնակցում ենք:

Էլեն-Ես ուզում էի ավելացնեի, որ հենց իմ սիրած գործունեություններից մեկը այն է, որ մեր համալսարան հրավիրվում էին մեր ոլորտի մասնագետներ, ովքեր որ արդեն ճանաչում ունեին իրենց ոլորտում ու իրենց արդեն ներկայացնում էին իրենց փորձը, թե ոնց են դրան հասել, առահասարակ խոսում էին գործընթացի մասին ու նենց հետաքրքիր էր անցնում, որ դասախոսներն էլ էին գալիս իրանց լսելու: Ու, հա՛, այդ գործունեությունը հենց ամենահավեսն էր: Ես կասեի փորձի փոխանակում էր, օրինակ՝ գիտեք «Բեգ բոն պրոդակշեն»-ը, իրա հիմնադիրը եկել էր, կիսվում էր իր փորձի մասին ու ինչին են իրանք նայում մարդկանց գործի վերցնելուց, ու մեզ դա հետաքրքրիր, որ հետագայում դիմելուց հետաքրքիր լինի, թե ոնց մենք այդ ամեն ինչը դասավորենք: Հենց փորձի փոխանակում էր ու թե ինչի են իրանք հասել, որ մենք էլ ոգևորվենք ու իմանանք, որ կա դա:

Յանա-Ես մի քիչ ուրիշ կողմից ներկայացնեմ, ոնց որ մեր համալսարանում ոչ բոլոր առարկաներն են ընտրովի, մենք ունենք մեկ կամ երկու առարկա, որոնք ուսումնական պլանի մեջ չեն մտնում, բայց իրանք ընտրովի առարկաներ են ու դրանց մեջից ուսանողները հնարավորություն ունեն ընտրելու ու ուսումնասիրելու: Առարկաների մեջ մտնում են չորրորդ լեզուն,, բացի հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, ընդեղ կա նաև 4-չդ լեզուն՝ դա կլինի իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, կա առարկա, որը կոչվում ա տրամաբանություն: Դրանք դասերից դուրս չենք անցնում ուղղակի իրանք տենց բավականին ոչ կարևոր բաներ են դասերի մեջ, իրանք գնահատականի մեջ չեն մտնում, իրանք պարտադիր են, բայց չեն մտնում …: Եկեք խոսենք ոչ պարտադիրի մասին, մենք ունենք էկոնոմիկայի վերաբերյալ ուսումնասիրությունների խմբակ, որը որ վարվում ա մեր Տնտեսագիտության ամբիոնի կողմից, մի ժամանակ ունեինք ազգային պարերի ակումբ, ունեինք մաֆիայի ակումբ, նու այդ ֆուտբոլ, բասկետբոլ և այլ սպորտային ակումբներ միանշանակ կային: Ավելի ակտիվ գործում էին, կարծեմ հենց ամենաակտիվը գործել ա ազգային ապրերի ակումբը:

Հերմինե-Ես ասեմ, որ մեր համալսարանում շատ ակտիվ էր Ուսանողական խորհուրդը ու ուներ բազմաթիվ հանձնաժողովներ, այդ թվում՝ ուսումնագիտական հանձնաժողովը, արտաքին կապերի, հարաբերությունների հանձնաժողովը, ռազմահայրենասիրական, սոցիալական կապերինը, ու այստեղ ամենաշատ հետաքրքրությունը ցուցաբերվում էր արտաքին կապերի ու ուսումնագիտական հանձնաժողովների նկատմամբ, որովհետև արտաքին կապերի հանձնաժողովը կազմակերպում էր այցելություններ տարբեր ընկերություններ, դրանով հետարքրքությունը շատ մեծ էր, իսկ ուսումնագիտական հանձնաժողովը աշխատաժողովներ էր կազմակերպում, որը էսպես հայցադիմումով էր, պետք ա սկզբում հոդվածներ գրեին, ինչը կարելի ա ասել բարձրացնում էր իրանց գործունեության մակարդակը, ու կար նաև արդեն սոցիալականը, որը տարբեր սոցիալական կարիք ունեցող երգախաղերի համար այցելություններ էին կազմակերպում, նաև դրամահավաքներ, նաև ներկայացնում էին, թե ինչ կրթաթոշակային հնարավորություններ կան և այլն: Դե ինչպես նշեցի ավելի ակտիվ էին ուսումնագիտական և արտաքին կապերի հանձնաժողովը, ու որ հարցնում էիք ինչ բնույթի էր ժամանցային, թե՝ ոչ: այստեղ նաև խաղերի ձևով էին փորձում ներգավել ուսանողներին, բայց խաղերը կազմակերպվում էին ինտելեկտուալ խաղերի տեսքով էլի, կարելի է այդպես ասել, հենց օրինակ ռազմահայրենասիրական ռազմական թեմայով ինտելեկտուալ խաղ, այդ բնույթի: Այսքանը:

Տաթևիկ-Ես ավելացնելու բան ունեմ, ուղղակի ես սկզբնական մասում նշեցի ԵՊՀ-ի հիմնական ակումբները, հիմնականում ես Ուսանողական գիտական ընկերության մասով մի բան ասեմ. տարբեր միջոցառումներ ենք կազմակերպում, դրանք լինում են ներֆակուլտետային և միջհամալսարանական, ու պետք է նշեմ, որ այս ընթացքում միջոցառումների բովանդակությունը տարբեր է եղել. դրանք եղել են գիտաժողովներ, արդեն մենք երրորդ գիտաժողովն ենք կազմակերպում. միջազգային գիտաժողովներ նաև հանրապետական գիտաժողովներ: Պետք է նշեմ, որ մենք բավականին մեծ թվով զեկուցումներ ենք ստանում, հայտեր և դրանք տարբեր համալսարաններից են, այստեղ պետք է նշեմ, որ հիմնականում կարևոր է նաև այդ համագործակցությունը, որ ունենքում ենք տարբեր բուհերի հետ, ու մի բան էլ նշեմ. ներկա պահին քանի որ ֆակուլտետը մի փոքր հետաքրքրություն ունի լեզուների մասով,՝ արևելագիտությունը, մենք ունենք մի ակումբ, էսպես ասեմ, ակումբ չէ, սկսեցինք մի նախաձեռնություն, դա ցավով պետք է նշեմ հետպատերազմյան շրջանում եղավ, թուրքերենի ուսուցման անվճար դասեր ենք մենք իրականացնում և մեծ թվով հայտեր ենք ստացել, անգամ

5 խմբի ենք բաժանել ու նաև միջոցառումներ, որ գիտական բնույթ ունեն, բայց գիտական բնույթի են, բայց հիմնականում դրանք կապ ունեն հետպատերազմյան շրջանի և առհասարակ տարածաշրջանային քաղաքականության հետ՝ Հայաստան և այն երկրների հետ հարաբերություններ, որոնք մենք ուսումնասիրում ենք:

Հասմիկ-Հա, ես էս հարցի շուրջ չեմ խոսել, թերևս էն պատճառով, որ մենք համալսարանում առհասարակ չունենք արտաուսումնական որևէ գործունեության ձև, որևէ խմբակ, ընդհանրապես ոչ մի ձև, դրա համար ես չգիտեմ՝ արդյո՞ք Ձեր հարցը իմ համար ակտուալ ա, թե՝ չէ: Ես, իհարկե, գիտեմ, թե ինչ ա կատարվում Երևանի ժողովում, որովհետև Ուսխորհուրդը շատ ակտիվ աշխատում ա, ու ինչ-որ բաներ կազմակերպվում են, բայց այդ չի հասնում մասնաճյուղ: Ստեղ ամեն ինչ դասի շուրջ ա էլի. դաս եղավ՝ գնացինք տուն, վերջ:

Գոհար-Ես ԵՊՀ-ից եմ, Տաթևը մի քանի բան նշեց, կներեք ես ուշ միացա: Որ ակումբներից խոսք գնաց, նախ ակումբներից խոսեմ, հետո մնացածից: Ակումբներից հիմա լայն գործունեություն ա ծավալում Բանավեճի ակումբը, որակավորման փուլ ա լինում, դասընթացներ են սկզբում անցկացնում թիմերի համար, հետո արդեն առաջնությունն ա սկսվում ու հետո հաղթողը որոշվում, դրա լավը էն ա, որ բացի զուտ մրցելուց իրանք նաև սովորում են ու լիքը հմտություններ ու ընկերներ են ձեռք բերում: Հետո կա մարտական ակումբը, այդ էլ հաճախ այցելում են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ուսումնարան, այնտեղ էլ տենց ինչ-որ դասընթացների նման բաներ են անցկացնում կամ Վազգեն Սարգսյանից են կանչում որոշ ուսանողների կամ մասնագետների: Դե, Ուսխորհրդում մի քանի հանձնաժողովներ կան, մշակույթի հանձնաժողովում, օրինակ, ազգային պարի խմբակ կա, այդտեղ էլ ազգային պար են ուսուցանում դիմում հայտ են լրացնում ու ընդունվում են, կան երեխեք, ովքեր լավ ծանոթ են, իրանք գալիս սովորացնում են, հետո կա թատերական խմբակը, բայց այդքան հաճախ իրանք չեն հավաքվում ու այդքան շատ չեմ լսել իրանց մասին: Ամենաակտիվը գիտակրթական ու արտաքին կապերի հանձնաժողովներն են: Գիտակրթական հանձնաժողովում հիմա «Գիտելիքի դպրոց» ծրագիրն ա գործում,, իրանք թե՛ ուսանողների, թե՛ տարբեր մասնագետների՝ մասնագետ դարձած ուսանողների, հրավիրում են որևիցե թեմայով դասընթաց են իրականացնում, ու այդ դասընթացի ավարտին ուսանողները փոքր քննություն են հանձնելու ու մրցանակներ են ստանալու՝ շնորհակալագրեր, հավաստագրեր և այլն: Մեկ էլ արտաքին կապերի հանձնաժողովը հիմնական կրթական ծրագրերի մասին ա իրազեկում,

կամ փոխանակման, օրինակ՝ մոտիվացիայի, ժամանակի կառավարման մասին հանդիպումներ ա իրականացնում թե՛ օնլայնով, թե՛ օֆլայնով։

Մոնիկա-Ես ավելացում ունեմ, մոռացա նշել, որ Վանաձորի պետական համալսարանում պարբերաբար դասընթացներ են կազմակերպվում, իհարկե, ռեկտորի թույլատվությամբ հայտերը կազմվում են և ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել դասընթացներին և հենց ռեկտորն էլ սոցիալական ձեռներեցության թեմայով դասընթաց է վարում և ստարտափերի դասընթացներ է վարում և ուսանողներին հնարավորություն է տալիս իրենց մտածած ստարտափերը իրագործել։

ՄՈԴԵՐԱՏՈՐ- Շատ լավ, շնորհակալություն։ Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում ի՞նչ կարևոր խնդիրներ և բացեր կնշեք.

Յանա-Իրականում կարծում եմ, որ արտաուսումնական գործունեությունը հիմա մեր շրջապատում՝ մեծամասամբ բոլոր համալսարաններում միտված ա նորից սովորելուն, այսինքն՝ ինչ-որ նոր ինֆորմացիաներ ստանալուն և այլն և այլն։ Ամեն դեպքում նշածս խնդիրը ներառվում է այդտեղ։ Ես ուզում էի նշել, որ մեծամասամբ բոլոր գործունեությունները փորձում են կենտրոնացնել նոր ինչ-որ հմտությունների ձեռքբերմանը և այլն, և այլն, և մեծ բաց ա մնում մշակութային և պետական ոլորտին միտված բաները. դա կլինի թեկուզ ազգային երգ ու պարի, ազգային մշակույթի ուսումնասիրություն, թեկուզ պատմության ուսումնասիրություն, ու ոչ միայն էն պատմության ուսումնասիրություն, որ մենք գրքով անցնում ենք ու որ պետք ա բոլոր թվերը անգիր հիշենք, այլ էն հետաքրքիր մասը, որը որ արդեն շատ-շատ երկար ժամանակ բաց ենք թողել ու այսպես ասած այդ հայկական ոգու կրթումը, որը պակաս չի, քան ինչ-որ մասնագիտական կրթությունը։

Գոհար-Էն խնդիրը, որին ես եմ բախվել մի քիչ ուսանողների մոտիվացիան ա, որ ներգրավվեն այդ կազմակերպչական աշխատանքներում, որ ավելի կրեատիվ լինեն։ Իմ հասակակիցները (ես երրորդ կուրս եմ) ավելի կրեատիվ են, ավելի ներգրավված են էս ոլորտում թե՛ կազմակերպչական աշխատանքներում, թե՛ արդեն իսկ կազմակերպված event-ներում իրենց մասնակցությունը ավելի բարձր ա, բայց օրինակ՝ առաջին, երկրորդ կուրսերում՝ գնալով նվազում ա։ Ամեն տարի, երբ որ նոր ուսանողներ են ընդունվում, իրանք ավելի պասիվ են,կարողա ուզում են ընդունվեն զուտ այդ կառույցում լինելու համար, այլ ոչ թե աշխատելու։

Այդ խնդիրը իմ համար շատ մեծ ա, ու դժվար ա էլի իրանց ակտիվացնել: Էս պահին էս հիշեցի, որ հիշեմ էլի կասեմ:

Էլեն-Մոտիվացիայի խնդրին ես էլ կմիանամ, որովհետև ուսանողների մեջ միշտ քիչ ա էն փաստը, որ իրանք ընդունվել են, որ լավ սովորեն կամ չգիտեմ ինչ: Մենք այդ հարցը, որ բարձրանում էինք, մեզ միշտ ասում էին՝ Ձեր մոտիվացիան լավ մասնագետ դառնալն ա: Բայց դա բավական չի, համալսարանը ինքն էլ պետք ա հետաքրքրված լինի, որ իրանից դուրս գան լավ մասնագետներ, բայց իրանք դրա համար ավել բան չեն անում, իրանք մենակ դա են ասում հա՝ «Դու ինքդ պետք ա հետաքրքրված լինես, ես քեզ ավել բան տալու չունեմ»: Հետաքրքրվածություն առաջացնելու համար կարելի ա կազմակերպել թեկուզ կոնկուրսներ, հատկապես իմ համալսարանում, որ արվեստի ներկայացուցիչներ ենք մեզ ավելի հետաքրքիր ա իրար հետ փորձությունների մեջով անցնել, խմբակային իրար հետ աշխատել, որովհետև աշխատանքային փորձում դա շատ պետք ա գալիս, ու համալսարանը չի տալիս մեզ էն հնարավորությունները, որը որ մենք պետք ա օգտագործենք գործի մեջ: Մեկ էլ մատուցման խնդիրն էլ կա, որովհետև շատ հաճախ լինում էին ինչ-որ պրակտիկայի հնարավորություններ, գործունեություններ, որոնց մասին դու չես իմանում, եթե դու 24 ժամ այդ պատին չես նայում, որտեղ այդ ամեն ինչը լինում ա կպցրած՝ ձեռագիր կամ տպած տարբերակով: Ես ինքս եղել եմ շատ հետաքրքրված ուսանող, ես էի գնում ռեկտորատ կամ միջազգային հարաբերությունների բաժին ու ասում էի՝ ի՞նչ ունեք, ես ուզում եմ մասնակցեմ, ես ուզում եմ արտերկիր գնամ, ստեղ-ընդեղ: Ու իրանք՝ «իմանանք կասենք»: Իմ կարծիքով նաև ընտրության հնարավորությունը կոնկրետ մեր համալսարանում, որովհետև մեր մոտ մենք չենք ընտրում առարկաները: Սենց ասեմ համալսարանական լինելու ընթացքում իմ մտքով դաժե չի անցել, որ ես ինքնս ինչ-որ մի բան կազմակերպեմ, որովհետև դրա մասին երբեք չի խոսվել ու չգիտեմ էլ՝ կա՞ հնարավորություն, որ ես ինչ-որ բան ուզեմ կազմակերպեմ ու անեմ:

Տաթևիկ-Էլեն ջան, քո հարցին պատասխանեմ՝ «Կրթության և գիտության մասին» նոր օրենքով հնարավորություն կա, բացի այն կառույցներից, որոնք որ գործում են, կարող է մի անհատ ոտքի ելնել և իր կառույցը ստեղծել: Հիմա ինչքանով, որ տեղյակ եմ կան ուսանողներ, ովքեր որ այդ գործունեությունն են ծավալում: Իսկ խնդիների հետ կապված, ինչպես դուք նշեցիք, օրինակ՝ իրազեկված լինելու խնդիրը կա շատ ու երբ, որ մենք օրինակ՝ միջոցառում ենք կազմակերպում ուսանողներից շատերը չեն հետևում օրինակ էջերին ու շատ դժվար ա

համակարգել մի միջոցառումը կազմակերպելու հետ կապված, օրինակ՝ շատ-շատ-շատ դժվար ճանապարհ ենք անցնում, եթե անկեղծ լինեմ, ավագների խմբեր ենք ուղարկում, չգիտեմ…այսինքն՝ չկա էն հարթակը, որտեղ, որ կարող ենք միանգամից ուղարկել, տեղադրել և ուսանողությունը տեղյակ կլինի: Ու ուսանողների ներգրավվածությունը քովիդով պայմանավորած շատ խնդիրներ եղան, պետք է անկեղծ լինեմ, երևի թե տեղյակ եք, որ ԵՊՀ-ն նաև հիբրիդային եղանակով անցկացրեց կրթությունը ու դա շատ խանգարեց, որովհետև կային ուսանողներ….օրինակ, երբ միջոցառում էի ես կազմակերպում չգիտեի, թե հեռավար անեմ, թե՝ առկա, որովհետև այն ուսանողները, ովքեր առկա ուսուցմամբ էին դասի գալիս, նրանք ցանկանում էին, որ առկա լինի միջոցառումը, իսկ այն ուսանողները, ովքեր որ հիբրիդային էին, չգիտեմ, կային, օրինակ՝ մարզերից ուսանողներ, հատկապես՝ Երևանին մոտ գտնվող մարզեր, նրանք գնում էին տուն ու էս դեպքում խնդիր էր առաջանում, քանի որ ուսանողները ցանկություն ունեն, որպեսզի մասնակցեն միջոցառմանը, բայց այդքան լայն հնարավորություն չկար ու մենք ստիպված մեկ միջոցառումը 2 անգամ էինք անում: Երևի թե, այսքանը:

Հերմինե-Դե ներգրավվածությունը նշվեց, դրա մասով ուղղակի կուզեի ավելացնել, որ ուսանողները շատ հաճախ փորձում են ուղղակի մասնակցել, քան իրենց ներդրումն ունենալ: Ու նաև կազմակերպվածության խնդիր կա: Էսպես ասում ենք, որ շատ բաներ ենք կազմակերպում, բայց ուսանողները իմ տարիներին երբեմն լինում էր, որ կազմակերպում էին, բայց ոչ պատշաճ ձևով ու դա հիասթափություն էր առաջացնում մասնակիցների մոտ ու հաջորդ անգամ չմասնակցելու պատճառ էր հանդիսանում: Ու, դե, նաև կառանձնացնեմ ինձ համար խնդիր կոնկրետ համալսարանի մասով, որ ուսանողները… ունեինք այսքան հանձնաժողովներ, բայց ժամանակավրեպ չէին, այսքինքն չկար այդ ձեռնարկատիրական ջիղը՝ զարգացնելուն միտված, ուսանողների շրջանում, ինչը կա բազմաթիվ արտասահմանյան համալսարաններում: Ուրիշ համալսարաններում ուսանողները հավաքվում են ինչ-որ ստարտափերի վրա են աշխատում ինչ-որ լաբերում, մեր մոտ նման բաներ ուսանողների շրջանում բացակայում է, այսինքն՝ որ իրենք ինչ-որ բանի շուրջ մտածեն, ֆինանսավորման համար դիմեն, ինչու՞ չէ՝ նաև համալսարանին կամ շրջանավարտներից ֆինանսավորում ստանալու: Այդ մասով կարծում եմ, որ մեր համալսարանը թերանում է, ոչ միայն բուն կրթական, այլ նաև արտաուսումնական տեսանկյունից:

Հասմիկ-Ես լուռ հետևում եմ բոլորին, ամեն դեպքում այստեղ ինքնակառավարման խնդիր մեր մոտ գլխավոր խնդիրը էն ա, որ նու բոլորդ գիտեք, որ Ուսանողական խորհուրդը ինքնին որպես այդպիսին անկախ կառույց ա, բայց մեր մոտ բոլոր միջոցառումները նախ իրականացվում են բացառապես Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ու միջոցով, և երկրորդ այդ միջոցառումները 99%-ով էն միախառնումներն են, որոնք անմիջական հավանություն ստանում են տնօրենությունից, այսինքն եթե տնօրենությունը հետաքրքրված չի այդ միջոցառմամբ, անելու միջոցներն ու հնարավորությունները շատ քիչ են լինում: Ընդառաջման խնդիր ունենք այստեղ, որովհետև, օրինակ՝ ես առաջարկում եմ ինչ-որ «թույն» trainer-ի բերել ու ինչ-որ «թույն» թեմայով դասընթաց ունենալ ու ինձ առաջարկվում ա այդ կազմակերպել 10 րոպեանոց դասին ու հրաժարվում են տրամադրել ավել ժամանակ դասի հաշվին, այսինքն ենթադրենք ինչ-որ մի դասաժամ հա, իսկ դասերից հետո այդ անել հնարավոր չի, որովհետև 3-րդ 4-րդ կուրսերը սովորաբար 11-ին էին գնում, իսկ 1-ին և 2-րդ կուրսերը 4-ին են դասերը վերջացնում, ու այսինքն՝ ոչ մի կերպ այդ ոնց որ հարմարեցնել չի լինում, որ հասանելի լինի բոլորին: Այդ գլխավոր խնդիրն ա: Այդքանը:

Մոնիկա-Ինչպես նշեցին օրենքով թույլ ա տրվում տարբեր խմբեր բացել համալսարանում, սակայն, ուսանողների մոտիվացիան բավականին քիչ ա խումբ բացելու ու էսպես ընկճված վիճակ ա, հա, ուսանողները չեն ցանկանում խումբ բացել՝ վախենալով մնացածի կամ ընդհանրապես հասարակության կարծիքից: Իսկ ինչը վերաբերում ա կրթությանը, իմ համար ամենամեծ խնդիրը դա այդ հնացած կրթական մեթոդիկան ա:

Մոդերատոր-Շատ լավ, եկեք խոսենք բուն արտաուսումնական գործընթացից ու ինքնակառավարման խնդիրներ, լա՞վ: Խնդրեմ Հասմիկ, Ձեզ ենք լսում:

Հասմիկ-Կներեք՝ ես կարողա մի հատ բացատրեմ, թե կապը որտեղ էր այդ ինքնակազմակերպման այդ իմ ասածի, ոնց որ դրա պատճառով ոչ մեկ, նույնիսկ այլևս փորձ չի անում ինչ-որ բան կազմակերպելու ու բոլորը իրանց համար են իրանց կյանքը շարունակում ու համախմբվածություն, միասին ինչ-որ մի բան անելու ցանկություն այլևս չի լինում:

Անահիտ-Ես ճիշտ ասած էս մասով, երևի թե ավելացնելու բան չունեմ:

Էլիզա-Անժելա ջան, լսում էի բոլորին: Տեսե՛ք, խնդիրներ միանշանակ բոլոր տեղերում էլ կան, բոլոր բուհերում: Կոնկրետ գիտե՞ք ինչն է այստեղ խնդիրը, որ ես կասեմ որպես գլոբալ խնդիր

և դա իր միկրո խնդիրներն է առաջացնում՝ հենց հեռավար կրթությունը, որովհետև ուսանողը առհասարակ տվյալ բուհի կառուցվածքի, ամբիոնների, ներսում կատարվող իրադարձությունների ու ամեն-ամեն ինչի հետ կապված իրազեկվածությունը թույլ ա, ինչքան էլ սենց իրազեկվածություն լինի բուհի պատերն անգամ, մտնել դուրս գալը, գրադարանից օգտվելը ու առհասարակ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ շփումը լրիվ այլ մակարդակի վրա է, երբ որ դա լինում ա առկա մակարդակով: Օրինակ՝ հենց ուսանողությունը…(մենք այստեղ խոսում ենք մշակութային, սոցիալական, ժամանցային ակումբներից) հենց առաջինը պետք ա նախ այդ խումբը կազմավորվի չէ, նախաձեռնողականություն դրվի, կազմակերպչական շատ հարցեր քննարկվեն: Ես ճանաչում եմ նաև մարդկանց, ովքեր, լինելով համակուրսեցիներ երբևէ իրար հետ շփում չեն ունեցել: Հեռավար հարթակը՝ որպես խնդիրների հիմք՝ իրենից բխող միկրո խնդիրները: Իսկապես դա շատ դժվարացնում է, որովհետև գուցե ներսում կան շատ ակտիվ ուսանողներ, դա բավականին դժվարացնում է աշխատանքները:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ուսանողական ինքնակառավարման գործունեության ձեր ոլորտում վերջին ժամանակներում տեղի ունեցած ինչպիսի՞ դրական փոփոխություններ կարձանագրեք:

Մոնիկա-Նշեմ, որ վերջին տարիներին՝ կապված ծրագրերի ակտիվության հետ բավականին ուսանողների ինքնակառավարման գիտակցման մակարդակը բարձրացել է և ուսանողը սկսել է կարևորել իր կարծիքը և հավատալ, որ ինքը կարող է փոփոխություն լինել և ինչու ոչ համալսարանում փոփոխություն իրականացնել: Մեր համալսարանի Ուսխորհուրդն էլ ներկայումս շատ լավ աշխատում է և դրա ապացույցն է, որ ուսանողի կարծիքը հարգում են ու ուսանողի կարծիքին նույնպես տեղ են տալիս, և յուրաքանչյուր ուսանող կարող է նոր ծրագիր բերել համալսարանին և նոր ծրագիր իրականացնել համալսարանի համար: Դեռ չեմ կարող գերազանց գնահատել, բնականաբար, շատ ուսանողների մոտ մոտիվացիայի պակաս կա, բայց դրական տեղաշարժը իրոք նկատելի է, որը եղել է ծրագրերի առումով, երբ համալսարանում սկսեցին ծրագրեր իրականացնել և ուսանողները մասնակցեցին ու հասկացա, որ իրենց ներգրավվածությունը նույնպես կարևոր է կրթական պրոցեսում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն, Էլե՞ն՝ խնդրեմ.

Էլեն-Ես, ինչպես նշեցի, երկու տարի առաջ եմ ավարտել ու էն ինչ կնշեմ որոնցից, որ տեղյակ եմ, դա միջազգային հարթակում ավելի շատ հնարավորություններին մասնակցելու

հնարավորությունն ա, օրինակ՝ Էրազմուս+ ծրագրերին մասնակցելու հնարավորությունը: Ուրիշ ավելացնելու բան չունեմ, քանի որ էլ ընդեղ չեմ սովորում:

Տաթևիկ-Ես արագ նշեմ մեկը: Եթե անկեղծ լինեմ, հիմնականում ներգրավված են եղել կոնկրետ իմ ֆակուլտետի մասով եմ օրինակ բերում, հա, ուսանողները միշտ ակտիվ էին, բայց մի խնդիր կար, որ շատ դրական տեղաշարժ եղավ, երբ մենք բանախոսություններ էինք կազմակերպում, հիմնականում հրավիրում էինք դասախոսների, այսինքն էն մարդկանց, ովքեր որ դասախոսել են երկար տարիներ և իրենք որևէ թեմայի շուրջ պետք է խոսեին, բայց երկու տարի առաջ որոշեցինք, որ ուսանողներն էլ պետք է բանախոս են, և «Երբ բանախոսում են ուսանողները» խորագիրը կրող մի ծրագիր արեցինք և հնարավորություն տվեցինք նաև ուսանողներին բանախոսելու, այսինքն՝ դասախոսների կողքին սկսեցին բանախոսել նաև ուսանողները: Եվ դա իսկապես դրական տեղաշարժ էր այնքանով, որ եթե մինչ այդ ուսանողներից շատերը չէին ցանկանում դասախոսի կողքին..՝ փոքր-ինչ թերագնահատում էին իրենց գիտելիքը, անկեղծ լինեմ, հիմա մենք ուսանողներ ունենք, ովքեր դասախոսի կողքին հավասար բանախոսում են:

Հասմիկ-Մեզ մոտ ոչ մի դրական տեղաշարժ չկա, եթե, իհարկե, հակառակ ուղղությունը չդիտարկեմ:

Գոհարիկ-Ճիշտն ասած, ինձ թվում ա փոփոխություններից մեկը էն ա, որ ավելի ազատ ենք, այսինքն համալսարանի ռեկտորատը կամ առանձին դեկանատը ավելի շատ ա թողնում, որ ինչ-որ միջոցառումներ անենք կամ բանախոսություններ կազմակերպենք, այդ առումով ոնց որ հլը մի բան էլ սատարում են, հլը մի բան էլ իրանց անունն էլ ա բարձրացնում, պատիվը բարձր ենք պահում համալսարանի և այլն, տենց ինչ-որ առումով ավելի շատ են թողնում, որ միջոցառումներ անցկացնենք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ, իսկ Հերմինեն ի՞նչ կավելացնի:

Հերմինե-Ես կավելացնեմ, որ տարիների ընթացքում ուսանողները ավելի են սկսել ներգրավել, չնայած եթե քաղաքականը առանձնացնենք, դրա պատճառով մի շրջան լավ ներգրավվածությունը նվազել էր, բայց էս պահին ուսանողները լավ ներգրավված են, ու էս պահին իրենց ձայնը ավելի լսելի ա. եթե ինչ-որ խնդիր են ունենում արագ ինքնակազմակերպվում են ու խմբով կարող են ներկայացնել ռեկտորատին:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-շատ լավ, Յանա, խնդրեմ

Յանա-Իրականում որպես այդպիսն շատ բան չունեմ ներկայացնելու, որովհետև չեմ եղել տենց շատ-շատ ներգրավված էս վերջերս ուսանողների շրջանում, բայց կարծում եմ, որ երկրի

ներքաղաքական վիճակը ամեն դեպքում ազդել ա ռեգրեսիայի ուղղությամբ, բայց միաժամանակ կարամ նշեմ, որ մոտիվացիան էլ ա ավելացել՝ ավելի շատ այլ տեսակի գործունեություն ծավալելու և ինքնակազմակերպվելու։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Լավ։

Էլիզա-դրական փոփոխություն տեսեք, այնուամենայնիվ, Ակադեմիան ունի շատ բարի, լավ ավանդույթներ, տեսեք մենք ունենք Որակի ապահովման բաժին, որտեղ կարող է ուսանողը բարձրաձայնել իր կարծիքը, գնահատել նույնիսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմին (չնայած պիտի նշեմ, որ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնում հավաքված է ՀՀ լավագույն գիտակ, կոմպետենտ մարդիկ, ինչի մասին խոսելը պարզապես ավելորդ եմ համարում), այնուամենայնիվ ունենք Որակի ապահովման բաժին, որտեղ որ անանուն, նշում եմ նորից՝ ԱՆԱՆՈՒՆ, ուղարկվում են մեզ գնահատման թերթիկներ և մենք շատ օբյեկտիվորեն նշում ենք, թե ինչն է մեզ դուր գալիս և բալային սիստեմով արդեն նշանակում ենք, թե ինչ մակարդակով է իրականացվում. դա զբաղվում է արդեն Որակի ապահովման բաժինը։ Իսկ ևս մեկ ավելի լավ հա, էսպես ուսանողների հետ կապված, մասնակցել եմ «Լինենք իրազեկ և պաշտպանված» խորագրով մասնագիտական դասընթաց իրավաբանական 3-րդ դպրոցին։

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք հիմա խոսենք հետևյալի մասին. «Կրթության մասին» ՀՀ օրենքը (Հոդված 28, 10-րդ կետ) սահմանում է, որ «բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են», ի՞նչ եք կարծում բավարար է այդ տոկոսը ուսանողների՝ բուհի կառավարմանը լիարժեք մասնակցության համար, այն պետք է ավելի բարձրացնել, գուցե նվազեցնել։

ԳՈՀԱՐ-Էս պահով ես մտածում եմ, որ իրոք արժի բարձրացնել, որովհետև թիվը այդքան էլ շատ չի, այդ 25 տոկոսը երևի գալիս ա մի 4-5 ուսանող, ու ես անձամբ ներկա չեմ եղել այդ քննարկումներին, օրինակ՝ Գիտխորհրդում կամ Հոգաբարձուների խորհրդում, բայց տեսել եմ էլի այդ քննարկումները տեսանյութով, ոնց որ՝ այդքան էլ հաշվի չեն առնում ուսանողների կարծիքը էլի.

ՄՈԴԵՐԱՏՈՐ-իսկ կարծում եք՝ եթե տոկոսը մեծանա հաշվի կառնե՞ն։

Գոհար-Ոչ թե հաշվի կառնեն, այլ ձայնի վրա կարա ազդի, ես տեսել եմ տեսանյութերով, որ մեր Ուսխորհրդի նախագահը բավականին լավ բաներ էր ասում, որ ուսանողների կարող էր օգնել չեմ հիշում ինչի ժամանակ էր։ Ու իրոք ուշադրություն չէին դարձնում իրա ասածներին,

ռեկտորը հակադրվում էր ու այդ ոնց որ անիմաստ լիներ այդտեղ ուսանողների ներկայությունը, ավելի շատ ձայնի առումով կօգնի, բայց միգուցե եթե ավելի շատ լինեն ուսանողները, իրանց կարծիքը լսեն:

Յանա-Տոկոսը բավարարից շատ է իրականում, ես մի քիչ կարողա հակասական բան ասեմ, բայց շատ կողմ չեմ ժողովրդավարությանը մանավանդ էս դարում ինչքան մարդ՝ էնքան կարծիք, ու ավելի շատ բախումներ: Ավելի ճիշտ ա ունենալ մի այսպես ասած լիդերային ինչ-որ դեմք, որը կներկայացանի ամբողջ հասարակությանը, էս դեպքում՝ համալսարանի ուսանողությանը, ում կվստահեն մեծամասնությունը ու ինքը արդեն էն մեծամասնության կողմից բոլոր հարցրերը լուծել, տանել դեպի լավը, որովհետև եթե ամբողջ ընտրությունը ու ամբողջ փոփոխությունների հիմնական մասը տրվում ա ավելի շատ մարդկանց, խնդիրը ավելի ուշ ա ստանում լուծում և ավելի ոչ ճիշտ ուղղությամբ:

Տաթևիկ-Տոկոսը բավարար է. ոչ պետք է նվազեցնել, ոչ էլ ավելի շատացնել: Ու մեկ էլ մի բան կարող եմ ասել, ես ինքս էլ հանդիսանում եմ Գիտխորհրդի անդամ և ընդհանրապես հարցի հետ կապված համակարծիք լինել-չլինելը, իհարկե, կապված է հարցից, իհարկե, Գիտխորհուրդը այն հարթակն է, որտեղ որ ծավալվում է քննարկվում և յուրաքանչյուրն ունի իր կարծիքը, ռեկտոր լինի, թե՝ դասախոս, ազատ է իր կարծիքն արտահայտելու, կոնկրետ եթե նշեմ Երևանի պետական համալսարանի Գիտխորհրդի հետ կապված, ֆակուլտետի նաև՝ Գիտխորհրդի հետ կապված…*ընդհատվեց տեխնիկական խնդրի պատճառով:*

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք լսենք Հասմիկին, մինչև տեխնիկական խնդիրները կարգավորվեն:

Հասմիկ-Ես իրականում ձայների հարաբերակցությամբ եմ, հա նայում՝ մարդկանց թվի տեսանկյունից չեմ դիտարկում, պիտի 50-50 լինի, որովհետև ցանկացած որոշում, որ կայացվում ա կառավարության կողմից, կայացվում ա ուսանողների մասին ու համար, բայց շատ հաճախ արդեն այդ տարիքում հասնելուց մարդիկ մոռացած են լինում, թե ինչ ասել ա լինել ուսանող ու շատ հաճախ այդ որոշումների ժամանակ ուսանողների շահերը, կամ, չեմ ուզում ասեմ իրավունքները, բայց ուսանողի տեսանկյունից չի դիտարկվում այդ ամեն ինչը, ուստի եթե ուզում ենք, որ ուսանողի համար էլ լավ լինի, իրանց կարծիքն էլ պետք ա հաշվի առնել, ու այդ մեդալի երկու կողմն ա, պետք ա հավասարապես այդ երկուսն էլ դիտարկենք:

Էլեն-Ես ոչինչ չասեցի էս հարցի հետ կապված, որովհետև չգիտեմ ինչ պատասխանեմ տենց, դրա համար երևի կասեմ բավականաչափ ա այդ 25%-ը հա:

Էլիզա-Շնորհակալություն, տեսեք անդրադարձանք «Բարձրագույն կրթության մասին» օրենքին և իմ կարծիքով այդ տոկոսային հարաբերակցությունը բավարար է ի՞նչ առումով, դա կախված է նաև էն կոնտինգենտից ու էն ուսանողների որակական հատկանիշներից, այստեղ քանակը չէ կարևոր, ու ոչ միայն մասնագիտական որակները, այլ նաև անձնային որակներն են կարևոր, որովհետև կարող է լինել 25%, բայց էնպիսի որակներով, որ ոչ մի բան չկարողանա բարձրաձայնեն կամ ինչ-որ խնդիր լուծեն կամ բարձրաձայնեն, բայց կարա լինի 25% և այդ 25%-ի ձայնը բավականին գերակշռող լինի, այսինքն՝ շատ ինդիվիդուալ ա, թե ինչ ուսանողական խումբ է:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Կարծես բոլորը պատասխանեցին այս հարցին: Հիմա էսպիսի մի հարց. Եվրոպական մի շարք բուհերում գործում է ուսանողական օմբուդսմենի գրասենյակը, ինչ կարծիքի եք մեզ մոտ դրա կարիքը կա՞:

Էլիզա-այո՛ կա, հակիրճ:

Էլեն-կարծում եմ այո, ցանկացած տեղ էլ պետք է լինի նման բան:

Հասմիկ-Այո՛:

Յանա-Չեմ կարծում, որ իրականում կարիքը շատ ա, բայց էն որ՝ լինի օքեյ ա, չլինի էլի օքեյ ա:

Գոհար-Ինձ էլ ա թվում, որ կարա լինի կարիքը, բայց տենց շատ պարտադիր չեմ համարում:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Ուսանողական ինքնակառավարման գործունեության համար ֆինանսական միջոցները եվրոպական որոշ երկներում հիմնականում ձևավորվում են Կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցներից, բուհի արտաբյուջեից, ուսանողական անդամավճարներից: Ինչպես է ֆինանսավորվում ուսանողական արտաուսումնական գործունեությունը ձեր բուհու՞մ, ձեր գործունեությունն իրականացնելիս ի՞նչ աղբյուրներից եք ֆինանսավորվում, արդյո՞ք այն ձեզ գոհացնում է:

Յանա-Ես բաց կթողնեմ էս հարցը: Հա, մեր համալսարանում ֆինանսավորումը իրականացվում է ռեկտորի կողմից, այսինքն ուսանող՝ կարևոր չի, թե ինքը որտեղից ա՝ Ուսխորհրդից ա, թե որտեղից ա, ուսանող, որը ունի ինչ-որ պրոեկտ, որը ինքը ուզում ա իրականացնել, գրում ա այդ պրոեկտը մոտենում ա ռեկտորի մոտ, ստանում ա հաստատումը, ստանում ա ֆինանսավորումը, ֆինանսական տնօրենի հետ էլ ամեն ինչ բանակցում ա և լուծվում ա խնդիրը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, Էլե՞ն:

Էլեն-Ճիշտն ասած չգիտեմ Ձեր հարցի պատասխանը, դրա համար ուղղակի չեմ պատասխանի:

Գոհար-ճիշտն ասած չգիտեմ այդ ֆինանսավորումը որտեղից ա գալիս, իմ իմանալով ինչ-որ ֆոնդ կա, որտեղից Ուսխորհուրդը օգտվում ա, բայց չգիտեմ այդ ֆոնդի գումարը ով ա տրամադրում:

Հասմիկ-Ես բաց կթողնեմ:

Էլիզա-Ես չեմ կարող ինչ-որ ստույգ բան ասել, գիտեմ միայն որ ինչ-որ Ուսխորհրդի կամ ՈՒԳԸ-ի գիտական մասով՝ հենց Ակադեմիան է տրամադրում՝ Գիտակրթական միջազգային կենտրոնը:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Էլի ֆինանսավորման հետ կախված մի ուրիշ հարց. Արտաուսումնական գործունեության ֆինանսավորման այլ ի՞նչ ձևաչափեր են ձեզ հայտնի, ինչ նախընտրելի տարբերակ կնշեք կամ կառաջարկեք, որն ըստ ձեզ ավելի արդյունավետ կարող է լինել: Էլե՞ն:

Էլեն-Անկեղծ էլի դժվարանում եմ պատասխանել Ձեր հարցին, որովհետև ինձ կոմպետենտ չեմ համարում նման պատասխաններ տալու, որ բավականաչափ գիտելիք չունեմ:

Գոհար-Օրինակ հովանավորների միջոցով, օրինակ՝ Ուսխորհուրդը նախաձեռնել էր հեքեթոն ծրագիրը ու դրա վերջում հաղթողը գումարային ֆոնդ էր ստանալու, ու հովանավորները ոչ թե ռեկտորատից էին, այլ անկախ անձինք կամ մասնավոր ընկերությունները, այդ գիտեմ, կամ ուրիշ թեկուզ ծրագիր, որ ինչ-որ մեկը հաղթի ու հովանավորի միջոցով ֆինանսավորեն: Այդ ֆինանսական բաներից շատ տեղյակ չեմ:

Յանա-Դե հիմա ամենատարածված միջոցը գրանտների շահումն ա, բայց դա էլի մի քիչ կենտրոնացված բան ա, այսինքն այդ կարծում եմ, որ շատ լավ կլինի, որ համալսարանը ունենա տենց հստակ ֆոնդ ու ինչ-որ մրցույթ կազմակերպի ու այդ մրցույթի հաղթողը ստանա այդ ֆոնդը ու կազմակերպի իր գործունեությունը: Օրինակ՝ մեր համալսարանում նման դեպք ունեցել ենք՝ համալսարանի լոգոն փոխելու հետ կապված: Կազմակերպվել էր մրցույթ, ու լավագույն լոգոն հաղթեց, այդ նույն ձևով կարելի ա ինչ-որ պրոեկտների կամ անհատական ինչ-որ նախագծերի համար իրականացնել դա:

Էլիզա-ճիշտն ասած էս հարցի հետ կապված շատ բան չունեմ ասելու միայն ցանկությունս կլիներ, որ հովանավորներ լինեին և ավելի շատ ուսման վարձի հետ կապված որոշակի աջակցություն լիներ:Այսքանը:

Հասմիկ-չգիտեմ իրականում արգելվում ա օրենքով, թե չէ, բայց կարծում եմ, որ ուսանողները կարող են ինչ-որ սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվել, բացի դրանից տարբեր կազմակերպությունների հետ կարելի ա կալոբրացիաներ անել ու հնարավորություն տալ հա՛մ

ուսանողներին իրանց ծրագրերում ընդգրկվելու, հա՛մ ուսանողները դրանից իրանց համար օգուտ քաղեն:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Եկեք հիմա մի շատ հետաքրքիր թեմայի անդրադառնանք: *ՄՈԴԵՐԱՏՈՐ-ը ցույց է տալիս հարց 7-ի գծապատկերը և հերթով ընդունում պատասխանները:*

ա) ձեր բուհում մասնակցության ո՞ր տեսակներն են գործում

Յանա-մեր համալսարանում գործում են 3-ն էլ:

Գոհար-մեր մոտ էլ 3-ն էլ գործում են:

Տաթևիկ-մեր մոտ էլ 3-ը:

Հասմիկ-ոչ մեկը չի գործում:

Էլեն-կարծում եմ 3-ն էլ գործում են, բայց տարբեր ակտիվությամբ, ամենաավատը՝ մասնակցություն ակադեմիական ինքնակառավարմանը, իսկ առաջին տեղում՝ մասնակցություն որակի ապահովման գործընթացին *(անվստահ տոնով է նշում պատասխանը, կարծես՝ զուտ պատասխան տալու համար):*

Էլիզա-մեր Ակադեմիայում երեքն էլ գործում են, կարծում եմ:

բ) ուսանողների իրական մասնակցությունը բուհական համակարգի կառավարմանը ինչպիսի՞ խորությամբ է իրականացվում

Գոհար-Երկխոսություն:

Տաթևիկ-Գործընկերություն, երևի թե *(անվստահ տոնով է նշում):*

Էիզա-Գործընկերություն դասախոսների հետ միանշանակ:

Էլեն-Երկխոսություն:

Յանա-Խորհրդավորության ու տեղեկատվության հասանելիության մակարդակը *(ծիծաղելով է նշում պատասխանը):*

գ) և ո՞ր մակարդակներում է իրականացվում:

Գոհար-Կրեդիտային:

Տաթևիկ-Կրեդիտային:

Էլեն-Կերն էլ կրեդիտային:

Յանա-ֆրանսիական համալսարանում էլ ա կրեդիտային համակարգ, ոչ միայն հայկական կրեդիտային համակարգին է հասել, այլ նաև ֆրանսիական, ինքը հասնելու բան չուներ, էսպես ասած «հասած իմպլամենտացիա» էր:

Էլիզա-Կրեդիտային:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շնորհակալություն բովանդակալից պատասխանների համար, ամփոփելով վերջին հարցը տամ. Ինչպիսի՞ փոփոխություններ դուք կառաջարկեք, որոնք կարևոր են և անհրաժեշտ ոլորտում առավել արդյունավետ գործելու համար:

Տաթև-Օրինակ փոփոխության առումով, տեսեք, ընդհանրապես կրթական մակարդակի մասին չենք խոսում, բայց եթե արտաուսումնական գործունեության մասին խոսեմ, իմ նպատակը նա է, որ ամենաշատը կցանկանամ դա նա է, որ կոնկրետ, որ տարբեր բուհերի ուսանողական կառույցների համագործակցություն սկսելն է, խոսքս միջազգային այլ բուհերի մասին է: Ես պետք ա նշեմ, որ հիմա մենք ունենք ծրագիր, օրինակ՝ արաբական երկրների տարբեր բուհական հաստատությունների, ինչպես նաև կոնկրետ Իրանի իսլամական հանրապետության տարբեր բուհերի հետ համագործակցություն, հիմա ներկա պահին ամենամեծ փոփոխությունը, որ կցանկանանք անել դա է, որը որ ուսանողներին կտա շատ հնարավորություն, ամենաառաջնային, որ ես նշել եմ, դա լեզվի մակարդակի բարելավումն է:

Էլեն-առաջնայիններից, որ ես արդեն նշել եմ՝ տեղեկատվության հասանելիությունը, որ ուսանողները իրենց հնարավորությունները ավելի լավ ճանաչեն, առհասարակ ուսանողներին հասցնեն էն միտքը, որ իրանք սահմանափակված չեն մենակ ուսանողական ծրագրով, հնարավորություն ստեղծել, որ ուսանողները իրենց մտքերը առաջ տան և իրագործեն, մեր դեպքում էլի որպես արվեստի ոլորտ:

Հասմիկ-Լինել ավելի ուսանողակենտրոն, վարել ավելի ճկուն կառավարման համակարգ, եթե տենց կարելի է ասել:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-իսկ ու՞մ է ուղղված Ձեր առաջարկը:

Հասմիկ-մեր համալսարանին, իհարկե: ինձ թվում ա՝ այդ երկու կարևոր բաներն են:

Յանա-Իրականում, երևի իմ առաջարկությունը ավելի շատ պետությանը կլինի, որովհետև բուհերը իրանք այդքան շատ-շատ ինքնակառավարվող մարմիններ չեն, մանավանդ՝ պետական բուհերը, հիմա ես իմ բուհի անունից չեմ կարող այդպես խոսալ, որովհետև իրականում մեր դեպքը մի քիչ ուրիշ ա, բայց ինչպես Հասմիկը ասեց, պետությունը պետք ա լինի ավելի ուսանողակենտրոն, այսինքն՝ ոչ միայն համալսարանը պետք ա լինի, այլ նաև պետությունը, ու ավելի շատ ուշադրություն դարձնել պետությանը, ոչ միայն բուհի ներսում, այլ նաև բուհից դուրս՝ դպրոցներում: Այդքանը, ուրիշ բան չեմ կարող ասել:

Էլիզա-տեսեք Ակադեմիայում եռուզեռը էնքան շատ է, որ պետք է նախ այդ ռիթմի հետ կարողանաս վազել, հետո նոր կարողանալ վազել այդ առաջարկների մասին, որովհետև

աշխատանքս այդ առումով ծանրաբեռնված է: Որպես առաջարկ մի փոքր մասնագիտական գուցե ուղղվածություն լինի, բայց էսպիսի մի բան, տեսեք մենք ունենք կրթություն ու նաև աշխատաշուկա: Մի փոքր ֆիդբեք լինի աշխատաշուկայի հետ կապված, նմանատիպ ինչ-որ բան կասեի որպես առաջարկ: Այսինքն՝ մասնագետը, որ որակավորում է ստանում և պետք է մտնի աշխատաշուկա՝ էս մասնագիտական փոփոխությունները, պահանջարկը, նմանատիպ հա, լոկ իմ մասնագիտության առումով:

Գոհար-Չգտեմ ինչքանով ա առաջարկ, բայց կուզեի, որ ավելի լսելի լինի էլի ուսանողների ձայնը, որովհետև այսքան ժամանակ շատ ա եղել, որ հարցրել ենք բարձրացրել հատկապես առցանց ուսման վերաբերյալ՝ թե՛ Ուսխորհրդի միջոցով հենց կենտրոնական Ուսխորհրդի միջոցով, թե՛ ֆակուլտետայինի միջոցով, ինչքան ուզել ենք, որ ավելի որակյալ լինի կրթությունը, մանավանդ առցանցի ժամանակ, կամ փոխենք զոնե հիբրիդային գանք:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ բարի, եկեք մի փոքր ավելի պրակտիկ դաշտ տեղափոխվենք, Դուք նկարագրեցիք, թե ինչ պետք է արվի, որ ձեր ձայնը լսելի դառնա, իսկ ինչպե՞ս պետք է դա արվի, կխնդրեմ մանրամասնեք.

Գոհար-ինձ թվում է այդքան մեզնից կախված չէ, որովհետև ինչ մեզնից գնում ա, անում ենք մենք: Դժվար է մի փոքր այս հարցին պատասխանել: Ավելի շատ բուն ղեկավարությունից ա այդ գալիս, կամ ֆակուլտետային ղեկավարությունից, մի քիչ ավելի շատ մեզ հաշվի առնեն, զուտ մեզ տեսնում են ուսանող, որ գնանք դասի գանք, ու չեն տեսնում որպես անհատներ, որ իրավունք ունեն իրենց ձայնը բարձրացնել, ավելի շատ ղեկավարությունից ա գալիս:

Յանա-Ախր դա էլ շատ անհատական ա, չէի կարող չմիջամտել չասել: Մենք այստեղ բոլորս ներկայացնում ենք տարբեր ֆակուլտետներ, տարբեր բուհեր, ու եթե ներկայացնում ենք տարբեր ֆակուլտետներ, տարբեր բուհեր, դա իրենից ենթադրում ա, որ ընդհանրապես վարչական կազմը տարբեր է բոլորի մոտ էլ, որովհետև կոնկրետ մեր ֆակուլտետում չեմ կարող ասել, չեմ կարող համակարծիք լինել, որովհետև ես առաջին կուրսից զգացել եմ, թե ինչ ուսանողակենտրոն ա ֆակուլտետը, ու չի եղել որևէ հարց, որ լուծում չստանա, չի եղել որևէ խնդիր, որ ուսանողը առաջարկի՝ չլուծվի: Երբ Գիտխորհրդում մենք ներկայացնում ենք ուսանողների ձայնը, չի եղել որևէ խնդիր կապված անգամ կրթական ծրագրի հետ, ուսանողների հետ, նաև դասախոսների հետ, որ լուծում չտրվի: Չի եղել, որ այնտեղ ասեն՝ «Դուք լռե՛ք», որովհետև այնտեղ յուրաքանչյուրը գիտի, թե ուսանողը այնտեղ ինչի համար է կամ ուսանողը ում ձայնն է ներկայացնում այնտեղ: Ու մեկ էլ մի բան կարո՞ղ եմ ասել, ես

մոռացել էի ասել այդ: Քանի որ ես արդեն կուրսում 6-րդ տարին է, որ ավագ եմ, մի սխալ կար, որ մինչ այս իրականացվում էր, մի խումբ կար՝ ավագների խումբ կար, դա իրենից ենթադրում էր, որ կուրսերի ավագները պետք է վերապատրաստվեն արդեն ավագ ավագների կողմից, դա չկա և ես շատ կուզեմ, որ նորից վերականգնվի այդ ավանդույթը, որովհետև փորձի փոխանակումը ամենակարևոր էսպես ասեմ կետերից մեկն է ուսանողական կյանքի հետ կապված ու ավագների գործունեությունն էլ, էսպես ասած, շատ կարևոր է. մեկը կուրսի համար, ընդհանրապես դասախոսների համար, ու կուզեմ այդ փոփոխությունը լինի, որ նորից վերադառնանք նրան, որ ավագ ավագները կրտսեր ավագների հետ փորձի փոխանակման կարճ դասընթացներ ունենան թեկուզ:

ՄՈԴԵՐԱՏՈՐ-Շատ լավ, շնորհակալ եմ բովանդակալից քննարկման համար: Ի՞նչ ավելացումներ ունեք:

Յանա-Շնորհակալություն, որ համբերատար լսեցիք մեզ:

Մոդերատոր-Ամփոփիչ խոսք: